



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4764-
4766

282

9-19

1868

2010

ԻՐԱԻԱԽՈՋ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵՒ
ՔՂՄԻԱԾՆԱԿԱՆ ԴԱԻԱՆՈՒԹԵԱՆՅ ՄԱԿԱԳՐԵԱԼ
ԴՐՔԻՆ ՎՐԱՅ ԲՆՆՈՒԹԻՒՆ



ՅՕՐԻՆԵՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՐՈՒՍԱՅԻ Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՏԷՐՈՅԵՆՅ

ՀԱՏՈՐ Բ.

ՏՊԵՐԼ Ի ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՏԵՐՈՅԵՆՅ

1869

10078

ՀԱՒԱՆՈՒԹԵՍՄԲ

Տ . Տ . ԳԼՈՐԳԼՅ Պ .

ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ե Ի

Ի ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ

Տ . Տ . ԵՍԼՅԵԼՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ե Ի

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ . Տ . ՊՕՂՈՍԻ Բ .

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ

ՊԱՏՐԻԱՐԹԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ



1336-2018

Յ Ե Ն Կ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

| | |
|--|------|
| | Էջեր |
| Յառաջաբան | 1 |
| Գլուխ Ա . Քրիստոս տերն մեր երկու թե մեկ բնուածիւն ունի | 11 |
| Յաւելուած . Քաղկեդոնի ժողովոյն եւ Լէոնի տոմարին վրայ | 35 |
| Բ . Հոգին սուրբ մի՞նակ 'ի Հօրէ՛ թէ նա եւ յՈրդւոյ կելի : | 45 |
| Գ . Մահուանէ ետքը հոգիք ի՞նչ վե՛՜՜՜ ճակի մէջ են . | 72 |
| Յաւելուած . Քաւարանի վրայ . | 90 |
| Դ . Վերջին օճման վրայ . | 109 |
| Ե . Անջուր պատարագելու վրայ . | 126 |
| Յաւելուած . Ա . Անջուր պատարագելը օրինականէն առնուած ըլլալուն վրայ . | 164 |
| Յաւելուած . Բ . Եկեղեցականաց ժառանգուածներ վրայ . | 196 |
| Յաւելուած . Գ . Մատաղի վրայ . | 206 |

(2)

ՀԱՌԱԶԱԲԱՆ

Հիմալոն տարբերութեանց հեղինակը հայերը
հետեւեալ կետերուն վրայ հիմնապէս շոտմէն
տարբեր դաւանութիւն ունենալ կըցուցընէ :

Ա. Տեառն մերոյ մի կամ երկու ընութիւն ու-
նենալուն վրայ :

Բ. Շողոյն սրբոյ ՚ի շօրէ միայն կամ յԱրդ-
ւոյ ալ բղխելուն վրայ :

Գ. Մահուանէ ետքը հոգւոց վիճակին վրայ :

Դ. Սերջին օծման խորհրդոյն վրայ :

Ե. Չրախառն կամ անջուր պատարագելու
վրայ :

Զ. Եստուածաշունչի կանոնական գրոց
վրայ* :

Է. Սկզբնական ու ներգործական մեղաց
վրայ :

Ը. Մկրտութեան խորհրդոյ պաշտօնէին վրայ :

*Այս գլուխէս կըսկըսի ներկայ գործոյս եր-
րորդ մասը . վասն զի հեղինակն ալ ասիկայ եւ հե-
տեւեալները մտք խնդրիւնեց անուանած է :

Թ. Գոյափոխութեան ժամանակին վրայ :
 Ժ. Ըպաշխարութեան խորհրդոյն վրայ :
 ԺԸ. Չունդրութեան խորհրդոյն վրայ :
 ԺԹ. Ըմոռանութեան կրկնուելուն վրայ :
 ԺԿ. Ըստուածային եւ եկեղեցական պատուիրանաց վրայ :
 ԺԿ. Խաչի եւ պատկերաց յարգութեան վրայ :
 ԺԼ. Ծանդեան եւ մկրտութեան վրայ :
 ԺԾ. Հոովմայ հայրապետին գլխաւորութեանը վրայ :
 ԺՂ. Ըրձանակերպ պատկերներու վրայ :
 Հեղինակն այս կէտերուս վերաբերեալ մտորութիւններ ունենալ կը կարծէ Հայաստանեայց եկեղեցւոյն համար . եւ ըսածին հաւաստիքն եւ հաստատութիւնը չէ թէ նոյն Սուրբ եկեղեցւոյ պաշտամանց գրքերէն կամ տօնած Սուրբ հայրապետներուն եւ վարդապետներուն դրածներէն կառնու , զորս քովէն լուսաւորչական հայ իրեն հաւատոյ առաջնորդ բռնած է , այլ դըպրատունները կարդացուելու սահմանուած քրիստոնէականներէն , որոնք տղայ մտաց հասողութեանը համեմատ գրուած են եւ մէջերնին հաւատալեաց վրայ աստուածաբանական բացատրութիւններ տեղի չեն կրնար ունենալ , եւ ոչ ալ եկեղեցւոյ պաշտօնեկից տրուելու հրահանգներն անոնց մէջ գրուիլ : Քանի մի ալ ժամանակիս կամ մօտ ժամանակի մարդոց գըը-

աւածներէն կառնու . որոնց մէջ թէ եկեղեցական բարձր պաշտօններով անձինք ալ կան նէ հեղինակութիւննին մինչեւ այն աստիճանը չըհասնիր որ նախնի Սուրբ հարց հաւասար Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանը թարգման սեպուիս . մինչեւ անգամ մեր եկեղեցական գրոց եւ Սուրբ հարց գրածներն անտես ընելով ասոնց գրածը իբրեւ նոյն եկեղեցւոյ դաւանութիւն բըռնուի : Եւ այս իրեն տեղեկութեանցն աղբիւր բըռնածներուն պաշտօնական կերպարանք մ'ալ կուտայ . որպէս զի անոնց դիմախօսելու իրաւունք ունեցած ըլլայ : Ըսյց մենք ըսած մտորութեանց իւրաքանչիւրոց վըրայ մեր տեսութիւնը ընթերցողաց ներկայացընելէն աւաջ բըռնած ճամբուն դէմ կըողոքեմք . եւ նշանակած քրութիւնները իբրեւ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանը հաւատարիմ թարգման չկմք ճանչնար եւ չեմք ընդունիր այն բաներուն մէջ որով մեր նախնի եկեղեցական եւ վարդապետական գրոց աւանդածէն կըտարբերին . որովհետեւ այսպիսի գրուածներն աղբային լիակատար ժողովքէ մը քննուած չեն . այնպիսի ժողովքի մը գործոց մասն չեն կացուցաներ . եւ այնպէս ժողովք մը կայ ալ նէ որ այսպիսիներն ընդունած է , անգին մէջ այն ժողովք յարգութիւն ստացած չէ . վասն զի ազգը իր նախնի հայրապետաց հաւատքըն այդպէս ժողովներու խօսքով չիոխեր . եկեղեցին միշտ նախնի աւանդութիւնը հաստատ

կը բռնէ . եւ եկեղեցւոյ դաւանութեանը եւ արարողութեանցը մէկ կէտին ալ դըպչել չը-
կըրնար ըլլալ առանց մեծ աղմուկ հանելու :
Ժամանակակից կամ մօտ ժամանակի հեղինակ-
ներու գրուածներ առ առաւելն կամ կաթու-
ղիկոսի մը հաճութիւնն առած են . որ Հայաս-
տանեայց եկեղեցւոյ գլուխ ալ է նէ՛ գոնէ ա-
ռանց իր ժողովոյն կամ Աջմիածնի սինոդին՝
Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ դաւանու-
թեանը թարգման չկըրնար ըլլալ . եւ նոյն
սինոդով մէկ տեղ ալ ծուռ բան մը իբրեւ
շիտակ հաստատէ ալ նէ՛ քանի՛ որ եկեղեցական
գիրքերը նոյնութեամբ կը մնան , այն ծուռ
բանը առժամանակեայ է . անոր հաւանողին
ազդեցութեան ժամանակն անցնելուն պէս
հինը եւ նախնականը երեւան կելլէ . ինչպէս
որ արիոսական աղանդը Աոստանդ եւ Ալաղէս
կայսերաց օրը յուռաց մէջ քանի մի անգամ
ժողովքներով հաստատել ուղղեցաւ . իրարու
ետեւէ քանի մը պատրիարքներ թէ՛ Աղէքսանդ-
րիա թէ՛ Մետիոք եւ թէ՛ Աոստանդնուպօլիս՝
նոյն աղանդոյն պաշտպան կեցան . բայց ասով
յուռաց եկեղեցին մոլորեալ չըսուեցաւ՝ այլ
բունութեան տակ ինկաւ այն ատենը . մինչեւ
մեծին թէ՛նոդոսի ժամանակն այն բունութիւն-
ներն անցան . եւ ուղղափառ՝ հաւատքն երեւան
ելաւ : Հայոց կաթողիկոսը մինակ՝ հաւատա-
լեաց վրայ վճիռ տալու իշխանութիւն բնաւ
չունի . ինչպէս որ Հոռովմայ հայրապետն ալ

առանց ժողովի այլպէս բան մը չկըրնար ը-
սել . ուստի պապն ալ Հոռովմայ եկեղեցւոյն
հաւատոց եւ դաւանութեանը թարգման չէ՛ .
եւ երբ Յովհաննէս Ա՛ երրորդ հայրապետն ի
նասին հաւատոյ մոլորութիւն քարոզեց՝ ինչ-
պէս որ հոռովմայն մատենագիրը կըսեն , ե-
կեղեցւոյն վրայ մոլորութեան աղտ չեն ձգեր
չէ՛ թէ իբրեւ գլուխ եկեղեցւոյ՝ այլ իբրեւ
մասնաւոր աստուածաբան մը մոլորեցաւ կը-
սեն : Հայոց կաթողիկոս մ'ալ կըրնայ նըմա-
նապէս իբրեւ մասնաւոր անձ մը մոլորիլ . ժո-
ղով մ'անգամ կըրնայ մոլորիլ . ինչպէս որ
մոլորեցան արիոսականներուն գումարած այն-
քան ժողովներ . բայց անոնց մոլորութենէն
եկեղեցւոյ վրայ աղա չգար :

Թէ որ կաթողիկոսի մը հաւանութեամբ
տպուած քրիստոնէականի համար այսպէս կըսեմք
նէ՛ կրօնական ժողովոյ հաւանութեամբ տպուա-
ծին համար առաւելապէս իրաւամբ կըրնամք
նոյնն ըսել : Այնչաւ կրօնական ժողովը մաս-
նաւոր ժողով մ'է , եւ ոչ աղգային ընդհանուր
ժողով . վասն զի մինակ Աոստանդնուպօլիս
գանուող եկեղեցականներէն բաղկացեալ է , եւ
անգամներն ամէն ատեն աստուածաբանական գի-
տութեանց հմուտ անձինք չեն ըլլար . վասն զի
քուէով կընտրուին . եւ քուէ տուողներն այս
գիտութեան հմուտ չեն , որ ասոր քաջավարժ
մարդիկը ճանչնան եւ քուէնին անոնց տան :
Արտաքին ճշու մէ ալ միշտ ազատ չեն ըլլար :

Հոովմայ եկեղեցւոյ դաւանութիւնն ալ անոր քրիստոնէական վարդապետութեան գրքերէն կամ տետրերէն չհասկցուիր: Յայանի է որ դրիտենդեան ժողովը հռովմէական եկեղեցւոյ աիեզերական ժողովներէն է. որուն վճիռներն անսխալ կը ծանչնայ ամէն հռովմէական: Եւս ժողովս լուծուելէն ետքը Պիոս Ե Հոովմայ հայրապետը՝ զոր լատին եկեղեցին տօնելի Սրբոց կարգն անցուցած է, Վարոլո Պօուուէօ եւ Սիրլէ կարդինալներուն ապըստրոց որնոյն ժողովոյն վճիռներէն առնելով մէկ Վրէստոնէական մը շինեն. որը շինեցին եւ հրատարակեցին. եւ Աղեմէս Բ հայրապետը կը վկայէ որ « այս քրիստոնէականը եկեղեցւոյ հասարակ կրօնական », վարդապետութիւնը կպարունակէ. եւ այս », վարդապետութիւնս անանկ կերպով մը բացատրուած է որ մոլորութեան առիթ չտար, Վրդ՝ասանկ քրիստոնէականի մը՝ զոր տիեզերական ժողովոյ մը վճիռներէն առնելով պապի մը հրամանով երկու կարդինալ կը շինեն եւ ուրիշ պապ մը հաւանութիւն կուտայ, տակաւին աստուածաբանութեան մէջ բաւական հեղինակութիւն աւնենալուն վրայ նոյն իսկ հռովմէական աստուածաբանները տարակոյս հանած են. եւ Սիոնէ քահանայն՝ օտեյէե Վրասիլէ ըստուած պարբերականին 1846 հոկտեմբեր ամսոյ տետրակին մէջ (էր. 226 — 239) անոնց արտակոյսը փարատելու համար յատուկ մէկ յօդուած մը հրատարակած է: Վրդ՝ այսպիսի

հանդամանքներով յօրինուած քրիստոնէական մը հեղինակութեան համար Հոովմայ եկեղեցւոյ իմաստուն Բատուածաբաններու մէջ տարակոյս ելլելէն ետքը ինչպէս կրնայ ըլլալ որ հռովմէական իմաստուն մը հայոց դպրոցներուն համար շինուած քրիստոնէականներուն այնպիսի հեղինակութիւն մը ենթադրէ. եւ անոնց պարունակած կէտերը Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան բացատրութիւն ծանչնայ. եւ Հոովմայ եւ Իշլէտոնէական անուանած եկեղեցիներուն մէջ երեւակայած հիմնական տարբերութիւններն ասոնց մէջէն բընտրուէ: Յիրաւի այս քրիստոնէականներուն մէջ իր ըսած տարբերութիւնները կամ չըզան՝ կամ հիմնական չեն: ինչպէս որ Լսոսքերնուս կարգովն ամէն մէկին համար պիտի տեսնեմք. այսու ամենայնիւ ասոնք մէջ բերելըն ամենեւին տեղի չունէր: Ըհ մի որ հռովմէական կղերի մէջէն ալ ուղղափառ հեղինակներու շինած քրիստոնէականներ ասկէց աւելի յարգ մը չունին. մանաւանդ թէ ԺԱ, եւ ԺԲ դարուն մէջ՝ ուղղափառ հեղինակներու յօրինած քրիստոնէականներ կան զորս կարգալու արգելած են:

Թէ որ պատրիարքական հոգեւոր կառավարութիւնը սովորութիւն կամ դիւրութիւն եւ պատեհութիւն ունենար սպուած գրքերը քննութեան առնելու եւ ըստ այնմ հրաման կամ արգելք տալու, գուցէ կրօնական ժողովոյ հաւանութիւնն առիթ մը տար հեղինակիս

այն գրքերուն մէջ գտած սխալներն ազգին վերադրելու . բայց բանն ասանկ չէ :

Եւ չկարծուի թէ այսպէս ըսելով քրիստոնէականներն իբրեւ ըստ ինքեան մոլորական կենթադրեմք : Եւ այժմ խօսքերն իս ընդհանուր է . մինչեւ հիմայ հրատարակուածներուն՝ (որոց մէջը չտեսածն իս ալ կան) . եւ ասկէց ետքը տրպուելիքներուն ալ մէկէն կ'վերաբերի . բայց մենք յանուանէ մէկն ալ այսպէս է ըսել չեմք ուզեր : Իւրաքանչիւր քրիստոնէականներուն մէջ հիմնական տարբերութեանց հեղինակին նշմարածները տեսած ատենն իս աւելի աշէկ պիտի հասկըցուի քրիստոնէականներուն խօսածին հիմնասրկամանն ըլլալը . եւ պիտի իմացուի որ այն գրքերը դիւրաւ կրնան արգարանալ . եւ մեր հոս խօսածը՝ հեղինակին իբրեւ իրեն տեղեկութեանց ազդիւր ընտրած գրութիւններուն՝ ազդիւր սեպուելու բան չըլլալն կիմացընէ :

Գրքին իրեն առարկայ ընտրած նիւթերուն մէջ կրնայինք ընտրութիւն ընել , եւ միայն անոնց վրայ խօսիլ՝ որոնք որեւէն են , եւ հաւատոյ դաւանութեան վերաբերելու կերպարանք մ'ունին . եւ ասով՝ նոյն գրքին նպատակէն ալ խտորած չէինք ըլլար , որ հայերը հերետիկոս ցուցընելու դիտաւորութեամբ՝ գրքին ճակատէն խոստացեր էր Եւրոպական եւ Կաթոլիկ եկեղեցեաց որաստուիներուն տարբերութիւնը նշանակել : Թէ որ այս ընտրութիւնս ընէինք . եւ հաւատոյ յողուածներուն ուղղակի չվերա-

բերեալ բաները մէկզի ընէինք նէ գիրքս կըպըզտիկնար եւ մեր աշխատութիւնը կըթեթեւար . վասն զի այն ատենը խօսելիքն իս միայն առաջին երեք խնդիրներուն եւ հինգերորդին վրայ ամփոփելու կըլլայինք : Բայց հեղինակը միւս խնդիրներն ալ իբրեւ հաւատալեաց վերաբերեալ ցուցընել ուզելուն համար հարկ եղաւ մեզի անոնք ալ քննել . եւ գոնէ անոնց՝ հաւատալեաց մասն չըլլալը , եւ տարբերութենէն հերետիկոսութիւն չըծագելիքը ցուցընել : Եւ այսիսի խնդիրները՝ խորհրդոց մատակարարութեան եւ եկեղեցական ծէսերու եւ արարողութիւններու վրայ կըդառնան . ուստի՝ ինչպէս որ գիրքիս պատմական մասին վերջին գլխոյն մէջ ցուցուցինք , իւրաքանչիւր եկեղեցիներու մէջ ազատ թողուած են : Բայց մենք՝ ինչ բանի վրայ հեղինակը խորհր յարուցած է նէ՝ անոնք ամէնն ալ մ ըստ միջէ պիտի տեսնենք . եւ որովհետեւ հոովմէականի հետ է խօսքերն իս՝ ամէն մէկին վրայ Հոովմայ եկեղեցոյն եւ Կատուածարանից ըսածները մէջ բերելով պիտի հասկըցընեմք որ վերապատուելի հեղինակը Հոովմայ եկեղեցոյ դաւանութեանը թարգման ըլլալու հանգամանքով չընդունելու իրաւունք ունիմք :

ԻՐԱԿԱԿՈՆ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ

ՔՆՆՈՂԱԿԱՆ

ՄԵԾ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԳԼ ՈՒԽ Ա.

Քրիստոս Տէրն մեր երկո՞ւ թէ մէկ բը-
նու թիւն ունի :



Մի՛ տեսութեան ենթակայ ըրած գըր-
քերնիս յառաջարանութիւնը վերջացուցած էր
ըսելով թէ « սկսինք այն հաւատոյ մասերէն՝
,, որոց վրայ Հայաստանեայց էջմիածնական ե-
« կեղեցին հնուցմէ կաթուղիկէ եկեղեցւոյ հետ
« վէճ ունեցած է ,, :

Երկու բան կայ հոս նկատելիք : Թե՛ որկո-
թուանի եկեղեցի ըսելով հռոմէականը կը հասկը-
նայ նե՛ հայք երբէք հնուցմէ անոր հետ վէճ
ունեցած չեն . պատճառն՝ որ հին ասեններն ա-

նոր հետ յարարեցութիւն ալ ունեցած չեն .
 թի որ կոտորելի եկեղեցի ըսելով՝ բոլոր քրիս-
 տոնեական եկեղեցիները մեկտեղ առնելով կիմա-
 նայ նե՛ հայերն այդ յանդգնութիւնդ ալ ու-
 նեցած չեն . իրենք մինակ հաւատալեաց վրայ բո-
 լոր քրիստոնէից դէմ վիճելու . Հայերը մինակ
 յունաց հետ վեճ ունեցած են . այն ալ՝ եկե-
 ղեցական ֆիսից վրայ . զոր առանձին առնելով
 կաթուղիկէ եկեղեցի անուանելու՝ հիմնական որ-
 քեցո-նիւնց հեղինակը յանձնառու ըլլայ ալ նե՛
 մենք չենք ընդունիր :

Սրբորդ նկատելիքն այս է . որ քանի մի
 խնդրոց վրայ՝ եւ մասնաւորապէս երկու կամ
 մեկ բնութեան վրայ՝ որ այս գլխոյն նպատակն
 է՝ վեճը թեպէտ ըստ արտաքին երեւութիւն այդպէս
 չէ . ուղղափառ մտքի վրայ միաբանող երկու ազգ՝
 նոյն միտքը բացատրելու կերպին վրայ կը վե-
 ճի որ ինքնին այդպէս կարեւորութիւն տալու
 արժանի լան մը չէ : Սակայն որովհետեւ վե-
 րապատուելի հեղինակն ասիկայ դաւանութեանց
 հիմնական տարբերութիւն դրեր է , մենք ալ
 յանձնառու կըլլամք տեսութիւննիս քիչ մ' ըն-
 դարձաւորէն ասոր վրայ ընելու : Աւստի առա-
 ջարկեալ խնդրոյն կըպատասխանեմք :

Սխտքը եւ իմաստն ուղղափառական ըլլա-
 լով՝ լոկ բացատրութեան եղանակի գալով՝ ՚ի Վր-
 քիստոս ֆի քոտորիւն ալ կրնայ ըսուիլ , երկու քե-
 նո-նիւն ալ : Անոր հակառակ , թէ որ միտքը եւ
 իմաստը մոլորական ըլլայ նե՛ ֆի քոտորիւն ըսե-

բացատրած դաւանութեան հակառակը . այս-
 լէն ալ հերետիկոսութիւն կըրնայ ծագիլ , եր-
 կու քոտորիւն ըսելէն ալ* . Ստիքէս ֆի քոտորիւն
 կըսէ . եւ ըսածը հերետիկոսական է . Վես-
 տոր երկու քոտորիւն կըսէ . եւ ասոր ալ ըսածը
 հերետիկոսական է : Աւստի գրեթէ միշտ մի-
 ճաբանութիւններու մէջ հայերը ֆի բնութիւն
 ըսելուն համար հերետիկոս անուանողներուն
 երկու քոտորիւն ըսելին իրրեւ նեստորականու-
 թեան նշան կը բընուէր . եւ իրաւամբ : Հայն
 իր դաւանութիւնը գիտէ . ֆի քոտորիւն կըսէ նե՛
 Աստուածային եւ մարդկային ընտրութեանց ՚ի մի
 անձն . Վրքիստոսի անշիոթ եւ առանց խտոնման
 միանալը կը հասկընայ : Այս միտքս հայոց թէ
 հին եւ թէ նոր վարդապետաց զրբերուն մէջ
 հազար անգամ բացատրուած է . զորս մէջ բե-
 րելն աւելորդ կըսեպեմք : Արդ՝ երբ մէկն այս
 մտքովս ֆի քոտորիւն ՚ի Վրքիստոս ըսելը հերե-
 տիկոսական անպէ՛ եւ հաւատոյ դաւանութեան
 հիմնական որքեցո-նիւնց կարգը դնէ նե՛ ինքն
 ի՞նչ ըսել ուզած կըլլայ . եթէ ոչ հայերուն

* իրրեւ արտավէպ՝ սա պատմութիւնս կըրնայ
 հոս տեղի ունենալ : Ժամանակ մը կաթոլիկ
 Ժողովոյեան ակննչն այնքան լեցուած էր՝ ֆի
 քոտորիւն ըսելը հերետիկոսական ըլլալուն . որ
 սմանք առ սուրբ երրորդութիւն , երեք անձինք
 եւ ֆի քոտորիւն , ըսելն վասնալով՝ երեք ան-
 ձինք երկու քոտորիւն կըսեն եղբր :

ինքն՝ թէ ՚ի Քրիստոս ելին քննութիւնսն յանձն
 Քննի մատուցելն, այլ զատ զատ են. իւրա-
 քանչիւր մնութիւն այդպէս զատ ըլլալով մէկ
 մէկ անձն կըկացուցանէ որ ՚Աստորի մոլորու-
 թիւնն է: Եւ ասոր դէմ տկար կի յնայ ըսելը
 թէ մենք մտքերնիս ուղղափառական ըլլալը
 բացառած եւ հասկըցուցած եմք. վասնզի հայն
 ալ նոյնը կըսէ. որովհետեւ նոյնը ինքն ալ
 ըրած է: Եւ թէ որ կաթողիկ հայն այս բա-
 ցատրութիւնս մտիկ չընելով տակաւին մի քն-
 նութիւն ըսողները կաթողիկէ եկեղեցւոյ դա-
 ւանութենէն հիմնապէս տարբերեալ եւ տիրա-
 կան հերետիկոս անուանէ նէ՛ հայն ալ զանի-
 կայ՝ տուած բացատրութիւնը ականջի ետեւ
 նետելով՝ նեստորական հերետիկոս կանուանէ:
 Մէկնիր հակառակորդին Վաղկեղոսի ժողովը
 կըցուցընէ նէ՛ միւսն ալ Նիստոսի ժողովը
 կըցուցընէ. եւ վէճը կըբշէ, մինչեւ որ ի-
 րարու միտք հասկընալով եւ նոյնը յարգելով
 բառերը խօսողներուն մըտքովը եւ ոչ՝ գէշի
 գործածողներուն իմաստովը հասկընալու միա-
 բանին: Եւն ատենն այս տարբերութիւնը կը
 վերնայ ինչպէս որ վերնալ արժան է. եւ շա-
 տուց ՚ի վեր վերնալու էր. եւ նոյնը ամբաս-
 տանութեանց կարգը զնոյն համար նեստո-
 րական է չըսեմք ալ նէ՛ ասոր ուղղափառական
 միտքը բացատրուելէն ետքը դարձեալ մէջ բե-
 րելովը եւ կաթողիկէ եկեղեցիէն շայաստա-
 նեայց եկեղեցւոյ հիմնական տարբերութեանց

մէկն անուանելովը՝ խօսք չըհասկըցող է՝ եւ
 ամէն փաստերու դէմ իր ըսածը քշելով ամօթ
 բան ըրած է ըսելու իրաւունք կայ. որովհե-
 տեւ յիշեալ բացատրութեամբը շայաստանեայց
 եկեղեցւոյ դաւանութիւնն ալ կաթողիկէ ե-
 կեղեցւոյ դաւանութեան հետ կընոյնանայ.
 եւ միայն նեստորականներու մոլարէ դաւանու-
 թենէն կտարբերի:

Սերպատուելի հեղինակը՝ երկու քննութիւն-
 ըսելը մնութիւն ըսելէն ադէկ ըլլալուն կը
 պնդէ. եւ ասիկայ պաշտպանելու համար կըսէ.
 « մի մնութիւն Քրիստոսի ըսելը՝ միաբնակ մը
 « յօժարութեամբ կընդունի. որովհետեւ
 « դարձեալ բաղադրեալ բնութիւն մը կիմանայ»
 (եր . 5) : Գարձընեմք սա իրեն խօսքը եւ ը-
 սեմք. երկու մնութիւն Քրիստոսի ըսելը՝
 նեստորական մը յօժարութեամբ կընդունի:
 որովհետեւ դարձեալ բաժանեալ մնութիւն
 կիմանայ. Սոր ի՞նչ պիտի ըսէ: Ի՞նչ կըսէ նէ
 կընդունիմք. եւ մեր կողմէն ալ նոյնը ըսուած
 թող սեպէ:

Խօսքը շարունակելով կըսէ. « բայց ո՞ր-
 « դաժառ եկեղեցին՝ Երբէք չէ՛ ըսած՝ մի քնն-
 « ութեան Քրիստոսի. հապա՞ մի մնութիւն բանին
 « մարմնացեալ. որովհետեւ մարմնացեալ բառը
 « բանին այն բնութեանը վրայ երկրորդ բը-
 « նութիւն մ՝ ալ կաւեցընէ, (Կանոն) : Կերե-
 « լի որ իմաստուն հեղինակս՝ առ սուրբն ՚Աեր-
 « սէս շնորհալի իւրրկուած Թէորիանէ փիլիսո-

փային իրրեւ առ նոյն սուրբ Հայրապետ խո-
 սած խօսքը կը թարգմանէ . ուր փիլիսոփայն
 այնպէս կը ցուցընէ թէ իրեն փիլիսոփայական
 եւ աստուածաբանական փաստերովն զսուրբ
 Հայրապետը համոզեր է . Ռսածնիս ցուցընե-
 լու համար Թէորիանէի տրամախօսութենէն
 այս նիւթոյս վերաբերեալ հաստուածը թարգ-
 մանեմք : « Եյն տեղն եկան՝ ուր գրուած էր
 « (սրբոյն 'Ներսէսի առ Ս' անուէլ կոյսր գրած
 « թղթոյն մէջ) . մեք կըսեմք թէ միայն մէկ
 « բնութիւն կայ 'ի Յիսուս Քրիստոս . չէ թէ
 « շիտիւնով Աւտիբէսի պէս . կամ նուազեցը-
 « նելով՝ Եպոզինարի պէս . այլ սրբոյն Աւուրդի
 « Եղէքսանդրացւոյ ուղղափառ մարովը , ինչ-
 « պէս որ 'Նեստորի գէմ գրած գրքին մէջ ը-
 « սաւ բանն մարմնացեալ՝ միայն մէկ բնութիւն
 « ունի . Թէորիանէ ըսաւ . սուրբն Աւուրդ
 « չըսաւ թէ մի բնութիւն 'ի Յիսուս Քրիստոս ,
 « եւ ո՛չ թէ մի բնութիւն Յիսուսի Քրիստոսի .
 « այլ՝ մի բնութիւն բանին . եւ մարմնացեալն
 « ալ վրայ բերաւ . եւ ձեր սրբութիւնը կըսէ .
 « մի բնութիւն 'ի Յիսուս Քրիստոս : 'Ներսէս
 « ըսաւ . երկուքը մէկ ըսել է . Թէորիանէ
 « պատասխանեց . այնպէս չէ . Քրիստոս անու-
 « նը յատկապէս երկուքն ալ կը նշանակէ .
 « Ռստուած եւ մարդ մէկէն : Եսոր համար
 « մենք կըսեմք . բանն մարմին եղեւ . եւ ո՛չ
 « թէ Քրիստոս մարմին եղեւ : Ուստի հայերբան
 « գեւն ալ ըսած չաւն . Տի բնութիւն Քրիստոս .

« սուրբն Եթանաս սուրբ Աւուրդէն առաջ ը-
 « սաւ . մի բնութիւն բանին . սյոհնքն՝ Եսա-
 « ուածային բնութիւն որդւոյն . եւ ճարճացեալ
 « բառն ալ վրայ բերելով սրբոյն Աւուրդի առ
 « Սուկեստոս (Սեկուսդոս) երկրորդ թղթոյն
 « մէջ գրածին պէս , մարդեղութեան ամբողջ
 « խորհուրդը կը բացատրուի : Եյն խօսքերեւ
 « ետքը՝ եւր սուրբն 'Ներսէս հարցոց թէ մի-
 « աւորութենէն ետքը երկու բնութի ՚ն ըսող ո՛վ
 « կայ , Թէորիանէ պատասխանեց թէ ընդունած
 « Հայրապետներդ ամենն ալ . եւ վկայութիւն
 « բերելէն առաջ՝ Գրայոս-Միւն եւ բնութիւն եւ եւ-
 « ճարճացեալն եւ ձեռն բուսեալն վրայ փիլիսոփա-
 « յական բացատրութիւն կուտայ : Եւ ասոնք ա-
 « ղէկ էին թէ որ սուրբն 'Ներսէս յիբաի այն
 « խօսքն ըսած ըլլար : Բայց մենք՝ սրբոյն 'Ներ-
 « սէսի շնորհալոյ Թէորիանէն տեսնելէն առաջ
 « թէ կայսեր փիսայ Ելէքս իշխանին եւ թէ նոյն
 « իսկ Սանուէլ կայսեր գրած Թուղթերուն մէջ
 « նոյն իմաստը բացայայտած կը տեսնեմք , (թէ
 « եւ ո՛չ ըստ բառից) . զոր Թէորիանէի տրամա-
 « խօսութիւնը կը ցուցընէ , որպէս թէ սուրբ
 « Հայրապետը չէր ընդունած : Եւ Ելէքս գրած
 « նամակին մէջ կըսէ . « մի Քրիստոսն չարչա-
 « թիւր եւ մեռանէր մահկանացու մարմնովն՝ որ
 « 'ի մէնջ . եւ կենդանի էր անմահ եւ կեն-
 « դանարար Եստուածութեամբն որ 'ի հօրէն »
 « (Ընդհանրական եր . 59 . Գալ . Կրտստոսի . 1828) :
 « Եւ Սանուէլ կոյսր գրածին մէջ՝ 'Նեստորի ալ

Երանանդան եր . 59 . Գալ . Կրտստոսի . 1828
 1336-2090

Եւ տիրէսի մուրուրութենէն միապէս հետի մնալով կըսէ . « մի եւ նոյն Վրիստոսէ մարմին . « մարմին՝ ըստ մարդկութեան ըստ զոր առ , եւ ան- « մարմին՝ ըստ Լստուածութեանն զոր ունէր , » (անդ . էր . 78) : Լսիկայ՝ յետ միաւորութեան գարձեալ երկու բնութիւն խոստովանել չէ՞ մի : Եւ յանձն Վրիստոսի բնութիւնները միացան՝ բայց առանց իրարու հետ խառնուելու ըսելն ալ նոյնն ըսել չըլլար մի . այսինքն՝ բնութիւններն երկուք էին , եւ մէկ անձին վրայ միացան : Լսիկայ սուրբ Յովհանն խմատատէր հայրապետը բացայայտ կըսէ ընդդէմ երեսուցէ կանոնաց ճառին մէջ . « զմարմինն՝ մարմին բանին « ասելով . եւ զբանն ասացեալ մարմին ունել . « զի՛նչ այլ ինչ թուիցիս ասել , եթէ ոչ՝ կըրկին , (մատենադր . էջ 65 . Խմատոս . էր . 53) * : Բայց երբ սուրբ շնորհալի հայրապետին հարկ

* Գիտնալ պէտք է որ սուրբ հայրապետը Հայոց նախնի հայրապետաց ուղղափառութիւնը Թեո- ըիանէի հասկըցընելու համար սուրբ Յովհանն օձնեցի հայրապետին այս գիրքը անոր ցուցուց : Եւ մէջէն մէկ երկու կտոր բան կարդաց . եւ մէկ օրինակն ալ անոր ասուաւ Կոստանդնուպօլիս տա- նելու : Նոյն գրքին մէջ այս խօսքը տեսնելէն եւ կարգալէն ետքը չէր կրնար սուրբ հայրապե- տը Թեոքրիանէի հարցընել Թէ յետ միաւորու- թեան ՚ի Քրիստոս երկու բնութիւն ըսող ո՞վ կայ :

եղաւ՝ Թեոքրիանէի հետ խօսակցելէն ետքը՝ եր- կու բնութիւն ըսելուն վրայ աւելի պարզա- բանել . անոր հետ առ Մանուէլ կայսր խըր- կած նամակին մէջ չէ՞ Թէ իրրեւ նոր ընդու- ծնա վարդապետութիւն մը , այլ իրրեւ առա- ջին գրածներուն առաւել պարզադոյն բացատ- րութիւն՝ կըսէ . « առաջնորդ ունելով զնոսա « (զսուրբ հայրապետս) առ ճշմարտութեան ճա- « նապարհն որ տանի առ Լստուած , ուղղապէս « եւ չազատաբար բերիմք ՚ի կրկին տեսութիւնս « բանից՝ մի ասելով բնութիւն բանին մարմնա- « ցելոյ ըստ սրբոյն Կիւրղի յաղագս անձառ « միաւորութեան . եւ երկուս՝ ըստ աստուա- « ծաբանին Վրիգորի վասն անկորուստ եւ ան- « յեղին գոլոյ բնութեանցն Լստուածայնոյն « եւ մարդկայնոյն » (ընդհանր . էր . 93) : Լ- սոնք՝ հիմնական արքեպիսկոպոսիտաց հեղինակին այս անգամ ըսածին աղբիւրը ցուցընելու համար նշանակելէն ետքը՝ ըրած փաստաբանութեանը , որով եւ Թեոքրիանէի ըսածին ալ պատասխանը տամք :

Վրիստոս ըսելով ի՞նչ կը հասկըցուի : Սուր- բըն Կիւրղի Լուգէքսանդրացի կըսէ « ասի Վրիս- տոս՝ բանն Լստուածոյ , որ վասն մեր ըստ մեզ « մարդ եւ ՚ի ծառայի կերպի . եւ օծանի մարդ- « կօրէն ըստ մարմնոյ » (Արարածանց . էլ . Լ . էր . 21) : Արիշ եղտ մ՛աւելի ընդարձակ խօս- քով կը բացատրէ . « Թէ եւ այլք ոմանք էին « օծեալք՝ կըսէ . համանունաբար նմա կոչեց-

« եալ Քրիստոսի . այլ մի է որով ամենայն՝
 « Յիուսու Քրիստոս . ոչ որպէս սոսկ մարդոյ
 « եղելոյ՝ ամենեցունց արարչագործին , այլ որ-
 « պէս Աստուծոյ բանի , որով ամենայնն՝ ի
 « գոյութիւն եկին , մերձաւորապէս մեզ հա-
 « ղորդ եղեալ արեան եւ մարմնոյ՝ եւ երեւ-
 « եալ մարդ . » (անբ . էլ . Օ . եր . 27 . 28) .
 Աւրեմն՝ յԱստուածային եւ ի մարդկային բնու-
 թեանց միաւորեալ անձին անունն է Քրիստոս :
 Ազգայաւ Վարդապետութիւնը մեզի կը սոր-
 վեցունէ թէ ի Քրիստոս երկու բնութիւնք
 են յանձն բանին միացեալ . ըսել է՝ որ այս
 երկու բնութեանց միաւորեալն է Քրիս-
 տոս . եւ ինչո՞հ համար մի բնութիւն քրիստո-
 սի պիտի չկըրնայ ըսուիլ՝ երբ իրօք ալ Քրիս-
 տոսի անձինը վրայ մէկ են : Ինքնին՝ եւ Վը-
 րիստոսի անձէն զատուցեալ մտածելով՝ երկու
 այլ եւ այլ բնութիւններ են . բայց բանին
 Աստուծոյ մէկ անձին վրայ մէկ տեղ գտնուե-
 լով , թէպէտ եւ դարձեալ իրարմէ զատ կը մը-
 տածուին եւ իրարու հետ խառնուած եւ միա-
 ցած մէկ բնութիւն եղած չեն , անոնք երկու-
 քը մէկէն կրող անձը մէկ ըլլալուն համար մէկ
 են « և ըստ էութան՝ այլ յենթակայում : Մէ Բը-
 նուսիան Քրիստոսի երբէք ըսուած չըլլալը՝ վե-
 րապատուելի հեղինակին՝ եւ անկեց առաջ թէ-
 որիանէի սասնկ ըսած ըլլալուն համար ընդու-
 նիմք . բայց կըսեմք թէ այդպէս ըսելէն մոլո-
 րութիւն մը չելլեր . առ առաւելն՝ մեկնու-

թեամբ ճուրով կըրնայ հանուիլ . որ ամէն շի-
 տակ զրուցուածներուն ալ կըրնայ նոյնն ըլլալ :
 Այդպէս ըսելը մոլորական չէ . բայց խրթնա-
 բանութեան պէս բան մ'է . եւ որովհետեւ
 Քրիստոս ըսելը եւ ճարձապէս բան ըսելը մի
 եւ նոյն են , մի բնութիւն բանին մարմնացե-
 լոյ ըսելն ու մի բնութիւն Քրիստոսի ըսելն
 ալ մէկ կըլլայ . այսինքն , ի Քրիստոս՝ որ յեր-
 կուց բնութեանց միացեալ անձն է , կամ ,
 այնպէս մէկ անձ մ'է՝ որուն վրայ երկու բը-
 նութիւն կան , որ իրարու հետ խառնուած չեն ,
 բայց երկուքը մէկ տեղ գալով Քրիստոսի ան-
 ձին վրայ են , բնութիւնները մէկ են ճարձեալ
 ճեմակայում . բայց երկուք են ճարձեալ յէութան .
 ինչպէս ճերմակութիւն ու անուշութիւնը ինք-
 նին մտածեալ՝ զատ զատ յատկութիւններ են .
 եւ երկուքն իրարու հետ չեն կըրնար խառնը-
 լիլ . բայց շարարին իրայ երկուքը մէկէն գըտ-
 նուելովսին մէկ կըրնան ըսուիլ : Այսպիսի նը-
 մանութիւն որ կը բերուի խօսքի մէջ , չէ թէ
 ըստ ամենայն պարագայից նոյն եւ նման ցու-
 ցընելու համար . այլ խօսքը գիրիմաց ընելու
 համար է : Մէ Բենուսիան Քրիստոսի , եւ մի Բենու-
 սիան Բանին մարմնացելոյ ըսելը՝ երկուքն ալ մէկ
 մտքի կուգան . եւ մէկն ըսելն օրինաւոր սե-
 պուի ՚է՝ միւսն ալ կըրնայ օրինաւորապէս ըս-
 ուիլ :

Արապատուելի հեղինակը մեզի ըսաւ թէ՝
 մի բնութիւն Քրիստոսի ըսելը միարնակը յո-

Ժարուժեամբ կընդունի . ուստի ուղղափառ եւ կեղեցիկն ասանկ ըսած չէ . այլ կըսէ՝ մի բնութիւն բանին մարմնացեալ :

Բայց թէ որ միաբնակն այդ զրուցուածքդ աւելի եւս յօժարութեամբ ընդունին՝ իմաստուն հեղինակն ի՞նչ կըսէ : Սուրբն Յովհան օձնեցի հայրապետն իր խօսքը մարնակ աղանդաւ որի մը ուղղելով կըսէ , « յաղազս այդր երկիրի թէ մի գուցէ զիրկչական մարմինն 'ի մարդկոյնոյս ասել հարկեցցիս , 'ի հանուրց « իսկ էակացս 'ի սաց բարձեալ տարար զսնուն « բնութեան՝ ասելով , ո՛չ ասի այլ բնութիւն , « բայց արարչականն եւ եթ , : (Մատթեոսէր , Եւն , Ինտրատս , եր , 65) : Ըսկէց կը հասկընամք տեսակ մը հերետիկոսներու գտնուիլը , որ կըսեն եղեր թէ բնութիւն ըսելով միայն արտրչականը եւ աստուածայինը կիմացուի , հետեւաբար՝ քանին քննութիւնը մարմնացեալ ըսելն՝ Լստուածային բնութիւն 'ի մարմին փոխուած պիտի հասկընան ասոնք , եւ երանելի հայրապետին ընդդէմ երեւոյթականաց ճառը լատին լեզուի թարգմանողն ու ծանօթութիւններով հրատարակողը յատուկ ծանօթութիւնով մը կիմացընէ թէ Եւտիքական աղանդոյ պաշտպաններուն մէկը՝ Տիմոթէոս կուզը՝ կըսէր թէ Քրիստոսի բնութիւնը միայն ասէր Լստուածութիւնն է :

Լսոր համար՝ մի բնութիւն բանին մարմնացելոյ ըսելը՝ մեզի աւելի ապահով կ'ընուի , քան

թէ՝ մի բնութիւն բանին մարմնացեալ ըսելը . վասն զի այս վերջին զրուցուածքիս մէջ մարմնացելու բառը ուղղական հոլովով մնալով՝ կամ բայի նշանակութեամբ անհոլով մնացած կըհասկըցուի , որուն տէրը կըլլայ 'ի քննութիւն բառը . կամ իբրեւ ածական կառնուի , որ իր գոյականէն յետագաս ըլլալով անոր հետ նոյնահոլով ըլլալու է . ուստի կըլլայ 'ի քննութիւն բառին ածական . եւ ասոնց ո՛րն որ ընդունուի նէ՝ եւտիքականներուն մոլորութեանը շատ ազէկ կըծառայէ : Լսոր համար մենք՝ սուրբ Մերսէս շնորհալիէն սորված ըլլալով , ածական բառը սեռական հոլովով գործածեմք . որպէս զի Բանին բառին ածական ըլլայ . եւ անով՝ բանին մարմնացելոյ նախ քան զմիաւորութիւնն երկու՝ եւ յետ միաւորութեանն յանձն բանին մի բնութիւն ունենալը դաւանելիք : Եւ շնորհալոյն խօսքն է այս . « իսկ « զմի բնութեանն յիշատակ՝ զոր ասեմք մեք » , « մի՛ որ յայլ դէմս կարծիցէ . բայց՝ յաղա « զըս 'ի յերկուց բնութեանց անբաժանելի

* Եկեղեցւոյ նախնի հայրերուն մէջ ասանկ լրատող աւ կայ , բայց շիտակ մտքով . քննութիւն բառը անցն լատին տեղը առնելով , Հին տտեւները բառից ճշտութիւն շատ չէր նայուեր . մենք ալ չէինք նայեր՝ թէ որ կ'ընտան սարքերութեանց հեղինակը լիկ բառերէն հերետիկոսական լատոս չէ հաներ :

« միաւորութեանն՝ զոր ուսար 'ի յուզղտիաւ
 « վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ 'ի
 « սրբոյն Կիւրլէ աղէքսադրացւոյ ընդդէմ
 « Աեստորի, որպէս եւ գրէ յառաջին թղթին
 « առ Սեկունդոս, թէ խոստովանիմք մի բնու-
 « թիւն բանին մարմնացելոյ, որպէս եւ Հարքն
 « ասացեն: Իսկ յերկրորդումն թղթին որ առ
 « նոյն՝ եւս յայնադոյն ասէ. քսնգի նախ
 « դնէ զՀակոբակացն բան՝ որ ընդդէմ դառ-
 « նային ասացելոյն 'ի նմանէ բանի. այնմ եթէ
 « մի է բնութիւն բանին մարմնացելոյ: Օհ
 « թէ յերկուց բնութեանց ասեն ժողովեցաւ
 « Դամանուէլ. եւ 'ի միաւորութեանն մի բնու-
 « թիւն երեւի բանին մարմնացելոյ, Հեռեւի
 « ամենայն իրօք պարտ գոլ ասել զնա չարչա-
 « րնլի յիւրն բնութիւն, որոց առնէ պատաս-
 « խանի յետ յսլովից բանից եւ դայս եւս թէ
 « զինչ Հարկ էր չարչարիլ 'ի յիւրն բնութիւն,
 « թէ՛ եւ ասի յետ միաւորութեանն մի բնու-
 « թիւն որդւոյն մարմնացելոյ, քսնգի թէ ոչ
 « էր 'ի բանս տնօրէնութեանն կրել զչարչարա-
 « նըս, ուղղակի ասէին զայս, թէ Հարկ է ա-
 « մենայն իրօք բանին բնութեան ընդունել
 « զչարչարանս, (քնդհանք. էջ. 92. 93):
 « Ինչ մը երկանկէկ բերիմք սուրբ Հայրապետիս
 « խօսքը, ցուցընելու համար թէ Տէ քնոթի-
 « բանն մարմնացելու զրուցուածքն անոր անձանթէ,
 « մարմնացելոյ ըսելը կընդունի: Իսոպ ծուլու
 « վարժ եղողնելն այս երկու զրուցուածքիս մէջ

« ալ՝ երկու բնութիւն ըսելուն մէջ ալ՝ Հերետի-
 « կոսութիւն կգտնեն. թայց՝ ասիկայ տեսնելով
 « վհատիլ, եւ Հերետիկոսական մտքի լնաւ տե-
 « ղի չտուող զրուցուածք գանելու համար մտք
 « յոգնեցուցել պէտք է. որով Հետեւ երկու զը-
 « րուցուածքն ալ շիտակ մտքի կըրնան առնուիլ,
 « բաւական է ուղղափառ հաւատքն անխախտ պա-
 « հելը, եւ անկէց ետքը՝ իւր ազգին եւ եկե-
 « ղեցւոյն մէջ սովորականը որն է նէ նոյնը ա-
 « մուր բըննելով՝ դայթակողութեան առիթ ա-
 « լէն զգուշանալը:
 « Հայաստանեայց եկեղեցւոյ մի բնութիւն
 « ըսելովն ալ ուղղափառ ըլլալուն վկայ ունիմք
 « մի եւ նոյն փակ վերապատուելի մատենադիրնիս.
 « որ պատմելով թէ՛ Աիկեփորոս յոյն պատմիչը
 « Հայոց անջուր պատարագին Եւտիքէսի մտքով
 « մի բնութիւն խոստովանելու նշան կը ցուցը-
 « նէր՝ « քաւ լիցի կրտէ, մենք առանկ ոչ կուզեմք
 « եւ ոչ կըրնամք հաստատել, (էջ. 266) Եւելի
 « բայցայտ՝ եւ Հայոց սրբէ Լընթ-ձնու անուա-
 « նած եկեղեցին նախնական եկեղեցւոյ Հետ
 « հաշտեցընելու եւ միարանելու աւելի պատշա-
 « ճաւոր է նոյն գրքին սա խօսքը: « Հայաստան-
 « եայց ըսուած եկեղեցին իր բարձրագոյն Հե-
 « ղինակութեան կողմանէ կընդունի վերոյիշեալ
 « ուղղափառ վարդապետութեան մասերը: Կա-
 « թուղիկէ վարդապետութիւնը չուզեր ուրիշ
 « միաւորութիւն, թայց եթէ տնձաւորական,
 « եւ նոյնը կընդունի կաթուղիկոսական վկա-

« յութեամբ ամբացած քրիստոնէականը : Աս-
 « թուղիկէ վարդապետութիւնը կուզէ որ ՚ի
 « Վրիստոս բնութիւնները բացայայտ երկու
 « համբուին , իրօք նոյն քրիստոնէականը կր-
 « կին կամ երկու կը համբէ՝ մէկ Լստուածային
 « անձին վրայ : Աթուղիկէ եկեղեցին չըսէր
 « մի բնութիւն Վրիստոսի , եւ ոչ ալ մի բը-
 « նութիւն պարզապէս , այլ՝ մի բնութիւն բա-
 « նին մարմնացեալ , նոյնպէս վերոյիշեալ քրիս-
 « տոնէականը : Աթուղիկէ վարդապետութիւ-
 « նը երկու կամքերու եւ երկու գործողու-
 « թիւններու բացայայտ դաւանութիւնը կը
 « պահանջէ , ասանկ ալ կըսէ կաթուղիկոսա-
 « կան հաւանութեամբ հաստատուած քրիստո-
 « նէական մը : Այնպիսիք դեռ բան մը այս
 « նիւթիս մէջ կաթուղիկէ վարդապետութեան
 « բողոքովին համաձայն ըլլալու : Գոհութիւն
 « Մտուածոյ , չէ : (Եր . 19 , 20) : Ի՞նչ կը-
 « տորը կարդացողը պիտի կարծէ որ վերապատուե-
 « լի հեղինակն այս խնդիրս մէջ կը բերէ եւ Լջ-
 « միածնական եկեղեցոյ՝ կաթուղիկէն տարբեր
 « դաւանութիւններուն մէկն ըլլալ կցուցընէ
 « նէ՝ յակամայից՝ եւ իր կողման նախապաշար-
 « եալներուն զո՛հ մ'ըրած ըլլալ կը խոստովանի .
 « մանաւանդ որ ուղած համաձայնութիւնը նոյն
 « իսկ էջմիածնական եկեղեցոյ մէջ գտաւ . կա-
 « թուղիկոսական վկայութեամբ ամբացած քր-
 « րիստոնէականին ըստ ամենայնի՝ կաթուղիկէ
 « վարդապետութեան պահանջածներն ընդունի-

ըն ինքնին խոստովանեցաւ . եւ ասով՝ հայոց
 վրայ ձգուած հերետիկոսութիւններուն մէկը
 վերցած կըլլայ :

Բայց ասանկ չէ . բանն ուրիշ կերպ է :
 Վանի որ Հայաստանեայց եկեղեցոյ պարսա-
 « ադիւնները խօսք չեն հասկընար եւ բառի կա-
 « պուած են . այսինքն՝ քանի որ ուղղափառ բա-
 « ցատրութիւններուն տկանջ չգնելով այնպէս
 « բառեր գործածել տալ կուզեն՝ որ մեր նախնի-
 « քը չեն աւանդած մեզի , միշտ այս հերետիկո-
 « սութիւնը , զոր քառի հերետիկոսութիւն կըրնանք
 « անուանել , մեր սուրբ եկեղեցոյ վրայ ձգե-
 « լէն պիտի չդադարին . իսկ ողջամիտք գիտեն՝
 « որ լոկ բառով հերետիկոսութիւն չըլլար՝ թէ քր
 « բացատրութիւն ուղուած ժամանակ՝ դաւանու-
 « թիւնն ուղղափառ գանուի : Մտիկ ընենք որքան
 « վերապատուելի հեղինակին ըսելիքներուն :

« Բայց եթէ դեռ ըսողմալու բան մը կայ՝
 « այս է , որ փոխանակ մի բնութիւն բանին
 « մարմնացելոյ ըսելու ըսուէր մի բնութիւն
 « բանին մարմնացեալ , , Լսով Հայաստանեայց
 « եկեղեցին շիտկել ուղած ժամանակը սուրբ
 « Ալեքեղ աղէքսանդրացին եւ սուրբ Վերսէս շը-
 « նորհալին սրբագրել կուզէ , որ ըստ մեզ՝ յան-
 « դըգնութիւն է : Հայանածին՝ եւտիքականու-
 « թեան նպաստուոր ըլլալը վերն ըսինք :
 « Սուրբ Վերսէս շնորհալին խօսքն ալ՝ որուն
 « մէջ սրբոյն Ալեքի վարդապետութիւնը կպա-
 « րունակի , նմանապէս վերը դրած եմք :

Վերոգրեալ խօսքին քիչ մը ետքը՝ վերապատուելի հեղինակը կըսէ. « մեծ զարմաքով կը տեսնեմք որ անդիէն Եջմիածնի քրիստոնէականները « Բրնախիւն իւնի մարմնացեալ. » Արքի եւ լատերանեան ժողովոյն « համեմատ ընդունելէն ետքը, ասդին 1858 « ին հաճկաստանի մէջ՝ պատրիարքական հաստատուած բոլորովին նոր քրիստոնէականը՝ եւ « տեղականաց կամ միաբնակաց հետ՝ մի կամ « միաւորեալ բնութիւն Վրիստոսի կվարդապետ « տէ վարդապետութիւն մը՝ զորն որ Եջմի « ածնի եկեղեցւոյն քրիստոնէականներն ար « քէն մերժեցին » (էջ . 2) . Իսոյց Եջմի « ածնական եկեղեցւոյ քրիստոնէականներն իր « ուղածին պէս գանձելէն ետքը ինչքն պէտք էր « ուրիշ քրիստոնէականները բընաբուլ խոստ « մունքը՝ Եջմիածնական եկեղեցւոյ եւ ոչ թէ կո « տանդոնայութեանն՝ կաթողիկէ եկեղեցւոյ դա « ւանութենէն հիմնապէս տարբերած կէտերը « ցուցընել էր . անիկայ համաձայն գտաւ նէ, եւ « տարբեր կը կարծէի՝ համաձայն գտայ . եւ « Բեռ « Բեռայ րօնելով լրմընցունելու էր : Իսոյց չէ . « Իսոյց եկեղեցւոյն ազա քսելու ստիպուեր է . « եւ ասիկայ մասնաւորաց ըսածն ընդհանուրին « վրայ ձգելէն դատ ճար չունի . րայց ասոր ալ « անհիմն ըլլալը, եւ Բրնախիւն Վրիստոսի ը « սելն ու Բրնախիւն քանին ճարմնացելոյ ըսելը, « կամ որ ծոյնն է՝ Վրիստոս ըսելն ու իւն ճարմ

նայեալ ըսելը մի եւ նոյն նշանակութիւնն ու « նեւալը վերը ցուցուցիւք, Ինքն վերապատուել « ի հեղինակն ալ այս երկու բառերուն նշանա « կութիւններուն մէ, ըլլալը չլրնայ ուրանալ : « Եւ երբ Բրնախիւն իւնին ճարմնացելոյ րօնելէն « ազէկ կը սեպէր Բրնախիւն իւնին ճարմնացեալ « ըսելը նէ՝ Վրիստոս բառը ճարմնացել իւնն բա « ռերուն տեղը դնելու ըլլար նէ սեռական հօ « ւր վոյ պիտի դնէր թէ ուղղակսն . կամ ասոր « կերպ մը ցուցընելու է . կամ հաճելու է ը « սել թէ Բրնախիւն քանին ճարմնացելոյ րօնելը « շիտակ է . կամ մեզ համոզելու է թէ Վրիստոս « եւ իւն մարմնացեալ այլ եւ այլ նշանակութիւն « ունին եւ սրբայն Արքի պարագանց գրքին ա « ռաջին եւ վեցերորդ գլուխներն ալ սրբայր « ւու է, զորս վերն օրինակեցինք : Իսկ Բրնախիւն « բառին վրայ խօսած եմք գործոյս առաջին մա « սին առաջին գլխոյն մէջ . որուն վրայ կը յա « ւելցունեմք Տ . Երգուարդ Հիւրի գրեան արքե « պսկոպոսին՝ Հասունեան Տ . Երտաւ նախագահ « արքեպիսկոպոսին — յոյժ Այիի'ի յ կաթողիկո « սին — խորովը յօինած Բեռնական ասորաձաբա « նախիւնէն՝ հետեւեալ խօսքերը : « Ինու թիւն « որ յունարէն ասի Ֆիլոս բազում յոյժ ունի « նշանակութիւնս . ոչ ինչ ը'դ հաս 'ի բառիցս « էւ կամ ինչ րայց ըստ իմաստասիրաց եւ ըստ « աստուածաբանից վրի փոխանակ էութեան « կամ գոյացութեան իրին, իբրեւ բունն յատ « կութեանց նորին . վասնորոյ եւ մի բնութիւն

« Բասուածային ասի. այսինքն մի Բասուած
 « Թիւն. հիմն եւ արմատ ամենայն ստորագելեայ
 « նորա. (հասար. ա. եր. 386) : Եւ ըստ այ-
 « սըմ՝ մարդեղութեան վրայ գարձընելով կրսեմք
 Թէ մի քննութեան Քրիստոս կամ մի Քրիստոս կամ
 Բանին մարմնացելոյ ըսելը՝ մի Քրիստոս ըսել է,
 որ անոր ամէն յատկութիւններուն՝ Բասուա-
 ծայնոյն եւ մարդկայնոյն՝ բունն ու արմատն է :
 Եւ այս նշանակութիւնով անոնք բառին հետ
 տարբերութիւնը խիստ սուրբ եւ գրէ թէ ան-
 գգալի է. ուստի՝ ինչպէս որ շատ անգամ ը-
 սինք, մեր երկու բնութիւն չըսելը՝ երկու անոնք
 ըսելէն վախճանուս համար է. գուցէ մէկը
 այս երկու բաներու զանազանութիւնը չկըր-
 նալով ըմբռնել՝ մէկ ըսուածքէն միւսը հե-
 տեցընէ, եւ Հայաստանեայց սուրբ եկեղե-
 ցին իբրեւ նեստորական բամբասէ, Բայց մենք
 երկու քննութեան ըսողներուն դէմ ալ ըսելու
 բան մը չունինք. երբ որ ուղիղ բացատրու-
 թեամք հասկըցուցած միտքերնին ուղղափառա-
 կան գտնեմք. ինչպէս որ մեր մի քննութեան ը-
 սելուն ուղիղ բացատրութիւնը Եւրոպացի
 աստուածաբաններն իմանալով իրաւունք տուած
 են. եւ վճռած են որ հայոց վրայ ձգուած եւ-
 տիքական աղանդը՝ որուն իբրեւ հաստատու-
 թիւն կը ցուցընեն մի քննութեան ըսելնին, զըր-
 պարտութիւն է. եւ ասոր վրայ՝ Պետրոս լրպ-
 րէօն Վաղղիացի աստուածաբանին ըսածը՝ գոչ-
 ծոյս առջին մասին հինգերորդ գլխոյն մէջ

գրինք : Ըստ այ մէկ ուրիշ աստուածաբանի մը
 խօսքը գրեմք. որ հայոց գրաբար լեզուին ալ
 հրմուտ է. եւ երկար ժամանակի կոստանդնու-
 սոյնի կենայրով ազգիս դաւանութեան գլխաւոր
 կէտերուն վրայօր բաւական հմտութիւն առած
 է. բայց հոս գրելիքնիս՝ այն հմտութիւնները
 անեւէն առաջ՝ միայն մեր հայրապետաց գրքե-
 րը կարդալով ստացած է : Եւ ասիկայ է Տ.
 Եւզիմէոս Պորէ, Վաղղիացի. Լ ազարիսդ կը-
 րօնաւորական կարգին բնահանուոր գիւանադը-
 պիր : (Սիկայ) հայոց կրօնական պատմութեան խորա-
 գրքով գրուած մ'ունի, որ սարբէրէս քրիստոնե-
 ական իմաստութեան մակագրեայ ամսօրեայ
 պարբերակարին մէջ տպուած է : Եւսոր մէջ կը-
 սէ. « մի բնութեան պաշտպանները եւ կուսա-
 « կիցներն ընհանրապէս յունական բառիւ
 « ճանաչելով (մի քննել) բուեցան : Նշմախտը
 « խոսելով, ի չիտաս Վրիտաս մի քննութեան
 « ընդանդները նովին իսկ գործով ներքինս չե-
 « ին. վասն զի շատ հայրեր կը տեսնեմք կա-
 « տարեայ ուղղափառ, որ քննութեան բառով են-
 « իսկայնութեան իբօսդասիս—կը հասկընան. այ-
 « սինքն գոյացութիւն եւ անձն. եւ ամենաբա-
 « տոյգ է որ Որդւոյն Բասուածոյ գոյացութիւ-
 « նը եւ անձը արմատապէս եւ էպպէս մէկ է :
 « Եւս գանազանութիւնը անաւելապէս Հայաս-
 « տանի կպատշաճի. եւ կրնայ շատ աստուս
 « ծաբաններու անիրաւ ամբաստանութիւննե-
 « ըր լուծելու ծառայել. որ միաբնակներու

« կարգ զրած են աստիք , (Հասար . յ . Կ . Եր .
22 . որ է 1836 . յուրն) :

Արհեստը հաս ըսածնեղնուս վրայ սա ալ
յաւելցընել պատշաճ կը դատիմք : Հայք ՚ի
Քրիստոս մի բնութիւնը բսելը Քաղկեդոնի ժո-
ղովքէն ետքը սոխորութիւն ըրած չեն : Երբ որ
՛Նեստոր՝ քննիչն բառը աշխարհի տեղն առ-
նելով ինք կամ հետեւողները՝ այս համանշա-
նակ բառով պարզամիտները խաբել կուզէին ,
եւ իրենց մոլորութիւնն անոնց պիտի կըլլե-
ցընէին , սուրբն Սահակ Պարթեւ հայրապետը
ասոնց դէմ ժողովք ըրաւ Վշտիչատ քաղաքը ,
եւ նեստորականաց մոլորութիւնը ազգին մէջ
մտնելուն առաջն ամբարտակ տնկեց : Այս թէ-
պէտ նոյն ժողովոյն համար չեմք կարգար թէ
Քննիչն կամ ուրիշ ասոր նման բան մը ըսել
սահմանեց ՛Նեստորի դէմ , բայց այն ժամա-
նակէն ետքը ՛Նեստորի մոլորութիւնն մեծապէս
ատելի հղաւ ազգին եւ եկեղեցոյն . եւ շատ
հաւանելի է որ այն ժամանակէն սկսած ըլլան
Քննիչն ըսելու : Այստեքն այս զրուցուած-
քը զոր սուրբն Վթանաս եւ սուրբն Կիւրիզ
Վղէքսանդրացի եւ ուրիշ նախնի սուրբ հայրա-
պետներ ալ բեր էին՝ ՛Նեստորի դէմ գործա-
ծել սկսաւ . բայց ծուռ եւ հերետիկոսական
մեկնութիւն աալով , որուն հայք հոգ չըլին .
իրենց սորված ուղիղ բացատրութեամբ նոյնն
ըսելը շարունակեցին : Ասիկայ ուղղափառ հայոց
մարին մէջ արմատացաւ . որկէց անհնար էր

զանոնք խախտել . վասն զի հայք մէկ հաւատոյ
դաւանութիւն մը ունենալէն ետքը անկեց շե-
ղելի ին անհնար է . ասիկայ ազգային բնաւորու-
թիւն մ'է . ուստի կատարեալ վստահութեամբ
կըրնամք ըսել որ Հայաստանեայց սուրբ եկե-
ղեցին ինչ հաւատոյ դաւանութիւն եւ ինչ ծէս
եւ արարողութիւն որ ուրիշնէ՝ սուրբ Վեսա-
ւորչէն եւ անոր անմիջական յաջորդներէն է .
եւ ասոր ազատոյց՝ ամէն տեղ դանուող հայոց
ազգէն ամէն ժամանակ հաստատութեամբ պահ-
ուած ըլլալէն զատ բան պէտք չէ :

Ասիկայ վերոյիշեալ զաղբիացի հայերէնա-
գետ քահանայն՝ Աղիսէոս Պօրէ՝ նոյն գրու-
ածոյն մէջ կը վկայէ . զոր չէ թէ օստրազգի
խմաստունէ մը՝ այլ մեր ազգային խմաստուննե-
րէն լսել կուզէինք . բայց ասոնք Ստիգորնե-
րուն հնարած զրպարտութիւնները շիտակ կար-
ծելով ցուցընել կուզեն թէ հայք ամէն տե-
սակ մոլորութեանց ընդունակ ազգ մ'են , Երբ
Բիշեալ քահանայն վերոգրեալ տեղը (Եր . 9 .
10) այսպէս կը խօսի : « Թէպէտ շատ անգամ
ստիպուած է (հայք) Վստրեստանեայց կամ
« Պարսից մեծազօր լմագաւորութեանց յարձակ-
« մանցը տեղի տալու . երբէք իր անկախութեա-
« նը հետ հաւատքն ու կրօնական պաշտօնը
« չկորսընցունեն , քիչ մը ժամանակ դուրս կը
« ծռէ , եւ երբ կը կարծուի որ ասիական ազգաց
« ցանկին մէջէն ընտրուած է , զարմաւք կը բերէ
« տեսնելը որ աւելի հզօր եւ աւելի նսխան-

« ձախնդիր երեւան կելլէ իր աւանգաւթիւննե-
 « րը պահպանելու : Այլք թաղէս աւարեալ
 « եւ սուրբ Լուսաւորիչ, այս երկիրս աւետա-
 « րանի օրէնքին դարձուցին, որդիները իրենց
 « յոր ընդունած հաւատքին հետ հաստատու-
 « թեամբ կապուեցան : Եւ կրակապաշտութեան
 « եւ մոգութեան հետեւող Վարսից՝ եւ ետքը .
 « (ուրիշ ազգաց) հալածանաց տակն ինկան ալ
 « նէ՛ արթոտնէտօնիսը վիճելնին կենտնի եւ դրո-
 « սոր ծնաց : Եւ այսօրուան օրս հ յ րը բողոք
 « փորք Ասիայի մէջ լրուած են, եւ կգտնուին
 « Ռուսաստանի ներսերը եւ Աստանգուսպոլիս
 « եւ Վասիաստան եւ Հնդկաստանի առաւել
 « վաճառական քաղաքները, եւ միջեւ Չինաց
 « երկրին սահմանները . եւ ամէն տեղ երեւց
 « հաստատն եւ ելեղեցոյն պաշտմանց ե-
 « լեղեցոյն թեւերոն, ԻսՊանիոս Չորրորդ Գե-
 « րուս Մեջ ՍԱՀՄԵՆՈՒԵՐ ԷՐ անխտր ինքոյ
 « կապուած են : չճտալութեամբ յանձնառու
 « կըլլան քաղաքական քա ի ի իրաւունքներէն
 « զրկուելու, եւ Հրէից կրած նեղութիւնը
 « կրելու : իրենց տիրապետողները զիրենք կալ-
 « համարհեն, ուղածնին կըսեն եւ ապօրինա-
 « տոր ընթացք կը բռնեն . ասոնց մէկն ալ
 « հոգեբրին չէ . մրայն թէ կրնք ին պաշտելու
 « ազատ ըլլան, ինքի մը ետքը (եւ . 21)
 « կըսէ : « հայոց ամէնէն վտաղաւոր թշնամին
 « Պարսիկները չէին, որոց երկաթի լուծը շա-
 « տուց ՚ի վեր խորտակած կըլլար . այլ մանա-

« ւանդ յունաց խելապաշտ (ուղիւնալիսդ)
 « սուտ ոգին, որ միշտ անոնց վրայ կաշխատէր .
 « եւ անոնց մինչեւ սյնատենն անարատ մնա-
 « ցած կրօնական հաւատքը քակեց . . յայտնի
 « է՝ որ մէկմասն ազգային եկեղեցիէն զատելով,
 « որպէս ելան հայհոսները . զորս՝ հաւատքնին
 « մէկ ըլլալը հոգ չընելով՝ արարողութիւննին
 « ալ յունականի հետ փոխել եւ բոլորովին
 « յունացընել ուղեց . Ասիայ չգիտնալով կամ
 « օրինաւոր բան մը կարծելով նոյն իսկ ազգիս
 « մէջէն ելան սյնպի ի անձինք՝ որ յունականին
 « պէս երկոքնուսն ըսողները եւ Վաղկեգոնի
 « ժողովը եւ Լէոնի տոմարը չընդունողները
 « հերետիկոս սեպելով՝ ազգին մէջ յունաց սեր-
 « մանած երկպառակութիւնը մշտնջենաւորելու
 « զեցին : Այլոք կամ թէ բնութեան վրայ խօսածնիս
 « բաւական է . առանձին յաւելուածով մ՛ալ
 « Վաղկեգոնի ժողովոյն եւ Լէոնի տոմարին վը-
 « րայ խօսիմք : այս ալ բնութեանց խնդրոյն եւ
 « վարդապետութեանը կեց է :

ՅԱՒԵԼ ՈՒՍԾ

Վաղկեգոնի ժողովոյն եւ Լէոնի տոմարին վրայ

Հիմնական տարբերութեանց վերապատուե-
 լի հեղինակը՝ յիշեալ ժողովն ու տոմարը
 յատկապէս չընդունուիլը, « այսատանկայց՝
 կամ ըստ իւր կոչման՝ Այլոքնութեան եկեղեցոյ

դատարանները մէկ հիմնական որոշութեամբ, ուստի եւ իբրեւ նոր մոլորութիւն մը կը ցուցընէ այսպէս խօսելով .

« Գեո. Հայաստանեայց Լըջիածնական եկեղեցիքն դրական կերպով ընդունած չէ՝ ոչ « 1) . Լէոնի առ 1) . Փլաբիանոս վարդապետական թուղթը, եկեղեցական մատենագրութեան զարմանալիքներէն մէկը, եւ ոչ չորրորդ տիեզերական ժողովը՝ որ շատ պատճառներով՝ բոլոր արեւելեան տիեզերական ժողովոց նշանաւորագոյնն է, (եբ. 24) : Բայնք չընդունելուս վրայ պատմական տեղեկութիւն ուզողները գործոյս առաջին մասին առաջին գլուխը կարդալու հրահրելէն ետքը՝ վերապատուելի հեղինակին հետ քիչ մը գիտնական լեզուով խօսիմք :

Մեծին Լէոնի վարդապետական նամակին կամ տուժարին՝ եւ Վազկեղոսի ժողովոյն հաւատոյ սահմանին ուղղափառական ըլլալուն հաւատալը՝ ճիշտ ուղղափառ դաւանութիւն ունեցող մարդու նկատմամբ մարդկոյին հաւատք է թէ Լստուածային և Ուրիշ կերպով հարցնեմ : Յիշեալ գրուածներուն՝ որ երկուքն ալ հայերէն գրուած չեն, հին հայերէն թարգմանութիւնը կարդալով մէջէն նեստորական անանկոյ հոտ առնող ուղղափառ մը կ'արտատարի՝ արդ. օր իր իղձին դէմ՝ եւ միայն ուրիշներուն վկայութեանը ապաւինելով՝ իբրեւ ուղղափառական ընդունիլ : Բակեց վտանգ չը՝ ծագեր արդ-

եօք աստուածաբանութեան վարժ չեղող ուղղափառի մը համար, ուղղափառութիւնն ու նեստորականութիւնն իրար չ'իջոթելու, կամ զանազանելու ալ ըլլայ նէ՝ իր առաջին ուղղափառութիւնը ձգելու եւ նեստորական ըլլալու : Բայնք Լէոնի մեծին տուժարն ու Վազկեղոսի ժողովը միայն հին թարգմանութեամբ ազգիս ծանօթ եղած ժամանակին համար կըսեմք. ուր 'ի Վրիստոս երկու թի գրուած էր. եւ ասիկայ հայք չէին կըրնար ընդունիլ : որովհետեւ այդ բառը սովորաբար այն կընշանակէ մեր լեզուին մէջ. եւ կարելի է որ տուժարը Հայերէի թարգմանողը՝ որ գուցէ Հայազգի ալ չէր, ինչպէս որ կոշտ Հայերէնէն կըրնայ գուշակուիլ, բայնք կիրառութիւնը չգիտնալով գրած էր : Եւ թէպէտ բանաստեղծական եւ ճարտասանական եւ ուրիշ կերպ գրուածոց մէջ՝ որոց շատ ճշտութեանը չ'անհրաժեշտ է, անանձն բաներու համար ալ թի գրուած կայ, որոցմէ քանի մը հատը ժողուած է . Սկստիչ Երգերեան՝ Լէոնի տուժարի, նոր թարգմանութեան ծանօթութեանը մէջ, (եբ. 16. 18) . սակայն հաւատալեաց վերաբերեալ աստուածաբանական գրութեանց մէջ բառերու ճիշտ նշանակութիւնը նայելու է. բանաստեղծներու եւ ճարտասաններու շրջոց ազատութիւնը հոն չ'արտաբեր : Անոր համար . Երգերեանը տուժարին հին թարգմանութիւնն այս տեղս հայհոյակն կանուանէ :

Հիմա բանն այս վիճակին մէջ չէ . Լէոնի տուժարն ալ Քաղկեդոնի ժողովոյն հաւատոյ սահմանն ալ՝ Սկրտիչ Լեզերեանը Հայերէնի թարգմանեց . եւ հաւատարմութեանը վերայ վստահացընելու համար Լատիներէն եւ Յունարէն բնագիրներն ալ մէկ տեղ տպեց 1805ին* . Կոստանդնուպոլիս գումարեալ ազգային ժողովն ալ 1820ին՝ նայելով եւ քննելով՝ իր վախճալու բաներն ասոնց մէջ չգտաւ , եւ անոր համար ընդունեց . եւ սուրբ Եջմիածնի Երիւմ սրբազան կաթողիկոսին նուիրակ Լատուածատուր եպիսկոպոսին նոյն ժողովոյն մէջ ներկայ գտնուելն ու ստորագրութիւն տալը բաւական չսեպելով՝ նոյն իսկ կաթողիկոսին յատուկ քննարձակ գիր մը գրեց՝ որուն

*Սրբոյն Երեւեսի շնորհալուոյ հետ եղած խօսակցութիւնը պատկերով Թեոքիանէ կրսէ Թէ Քաղկեդոնի ժողովոյն սահմանը կարգացուեցաւ եւ յունական բնագիրն հետ հայերէն թարգմանութիւնն յար եւ նման տեսուեցաւ . (Մանսի հասարակական ժողովոյ . տարրաբանի . ընդհանուր պատմ . Խոսնու . եկեղ . հարպ . ԺՁ . եր . 201) : Բայց մենք հայերէն ճին թարգմանութեան անհարգաւ ըլլալը գիտնալով Թեոքիանէի դիտաւորութիւնն ալ կը հասկնամք . որ հայերուն յիշեալ ժողովոյն ճիշտ դատարմութիւնը գիտնալով ալ ընդունելին եւ տիրակալութեան նշան բըռնել կուզէ . որպէս զի հայոց սուրբ հայրապետը եւ տիրակալութեանն ուղղափառութեան դարձուցած սեպուի , որով Փոսոյ պէս պարծանք մ'ալ ինքն ունենայ :

մէջ՝ յիշեալ հայրապետին եւ ժողովոյն խօսքերովն (ըսա նոր թարգմանութեան) անոնց ուղղափառութեանը վկայութիւն տալէն , եւ քանի մ'ալ ետքի ժամանակներու Լատին ասուածաբաններէն խօսքեր մէջ բերելէն ետքը կրսէ . այն վաղեմի վէճ՝ որ յածի ընդ ազգս « ուղղափառաց ՚ի վերայ բնութեանն Քրիստոսի , է տարապարտ բառակոտորութիւն . զի թէ « ըստ արժանւոյն ՚ի միտ առեալ էր նոցա թէ « զի՛նչ նշանակէ ՚ի մեղ բառս՝ բնութիւն , զոր « մի գոյ տեսմք ՚ի Քրիստոս ըստ հարցն սըրբոց , վաղու եւս բարձեալ էր կրճիմն հակառակութեան » : Եւ յս մէկ խօսքովս մեր ըսածը հաստատած է . վէճը տարապարտ է ըսելով : Եւ կէց առաջ ալ Լէոնի տուժարին եւ Քաղկեդոնի ժողովոյն համար սա վկայութիւնը կուտայ նոյն ժողովը նոյն նամակին մէջ . « տուժարն « Լէոնի պապին եւ հարբ ժողովոյն Քաղկեդոնի խոստովանին զՔրիստոս յերկուց բնութեանց անշիտթ եւ անբաժանելի միաւորեալ « մի անձնաւորութիւն . եւ զամենեսին զնոսա « որք բաժանումն ՚ի մէջ արկանեն Լատուածա « յին եւ մարդկոյնն բնութեանցն Քրիստոսի « եւ լուծանեն զմի Քրիստոսն ՚ի յերկուս՝ « զնոսա նեոն անուանեն , եւ նշովիւք հեր « քեն » :

Ուրեմն ահա բանը հասկըցունելէն ետքը Լէոնի տուժարն ալ ընդունուած՝ Քաղկեդոնի ժողովոյն սահմանն ալ , եւ այն ատենէն՝ այս

Տայրապետիս եւ ժողովոյն դէմ նզովք պարու-
նակող երեք տուն շարականն ալ վերցաւ . ք-
սել է որ Հայաստանեայց եկեղեցին ընդունեց .
որովհետեւ եկեղեցական գորի մէջ փոփոխու-
թիւն մտցուց այն երկու տունը վերցընելով ,
որ հիմակո ան՝ եւ ժողովոյն թուականէն ետ-
քը տպեալ շարականներուն մէջ չկայ : Աւելի
ի՞նչ կուզէ վերապատուելի հեղինակը՝ ասոնք
ընդունած ըլլալը ցուցընելու . եկեղեցւոյ մ ջ
տօնել արդեօքս . գէշ չըլլար . բայց շատ երե-
ւելի սուրբեր կան՝ զորս Հայաստանեայց եկե-
ղեցին չտօներ . միայն յայտնաւորաց մէջ յիշա-
տակը կզնէ . որոցմէ մէկն է սուրբ Ամբրոսի-
ոս Տայրապետը կան ուրիշներ ալ՝ որոց անու-
նըն ալ չկայ յայտնաւորաց մէջ . բայց ազգիս
խմաստուն վարդապետներն իրենց գրուածոցը
մէջ սուրբ ածականով կը յիշեն . եւ ասանկ են
սուրբն Օգոստինոս եւ Հերոնիմոս . եւ ու-
րիշներ ալ : Հանգերձ այսու՝ Հոովմէակնս
Տայր որ հայոց հին տօնացուցին հետեւիլ կը
պարծին , ինչո՞ւ չեն տօներ սուրբ Յովհան
խմաստասէր Տայրապետը . զոր Հայաստանեայց
եկեղեցին սուրբ Արսէս շնորհալի Տայրապե-
տին ժամանակը կը տօներ . ինչպէս որ նոյն
սուրբ Տայրապետը կը վկայէ առ թեոքիանէ
Յոյն փիլիսոփայն խօսելով* , եւ մենք ալ մին-

* Տես Թեոփիլիէն ընդդէմ երևութականաց ձառին
լատիններէնով տպագրութեան յառաջաբանու .

չեւ հիմայ կտանեմք : Թե որ եւ տիրական կա-
րուելուն համար տօնացոյցէն դուրս ձգեցին
նէ՛ Հոովմ անոր դրբերը քննելէն եւ ուղղա-
փառութիւնը վիճելէն ետքը դարձեալ տօնա-
ցոյցի մէջ առնուելու էր : Եւ դարձեալ Մէոն
Տայրապետը սրբոց կարգն անցընելու սյարձ
նախանձ սխաղիւր են նէ . իրենց տօնացուցին կամ
օրացուցին ո՞ր կողմը կամ ո՞ր միջոց կգտնուե-
անոր յիշատակը : Իսկ ժողովք տօնելու՝ նոյն-
իսկ Մատին եկեղեցին ալ սովորութիւն չուրի .
Ուստի բուսական թող սեպէ՛ ասոնք հիմայ ըն-
դունուած ըլլալը :

Իսկ նախնի հայոց՝ եւ թէ որ մինչեւ հիմայ
տեղ տեղ չընդունողներ կան նէ՛ անոնց չըն-
գունիլն ալ թող չմեղադրէ . որովհետեւ նմա-
նըն արեւմուտք ալ տեսնուած է : Քրանքօր-
դի ժողովն ալ՝ 794ին , պատկերամարտներուն
դէմ Աիկիա գումարուած ժողովը մերժեց . եւ
ասոր պատճառը՝ մեր նախնեաց Վաղկեղոսի ժո-
ղովը չընդունելուն պատճառին յար եւ նմա-
նըն էր : Աիկիայ թ ժողովին գործոց յունարէն
գրուած պատմութեան Մատին թարգմանութեա-
նը մէջ գտան՝ որ սրբոց մասուցըններն ու պատ-
կերները ամենասուրբ Արրորդութեան տրուած

Թեանը մէջ . (եր , ը) : Ընդհակին խօսքը Հ .
Միքայէլ Չամչեանն ալ կը գնէ հայոց պատմու-
թեան մէջ . (Լատոյ . Բ . էր . 615) . բայց տօնա-
խմարութիւնը նշանակուած կտորը մէկ կայնով
եւ երեք կտոր կը ծածկէ :

պաշտօնին հասասար պաշտելու խօսք կայ . բայց
 ժողովոյն մէջ պղպես բան ըսուած չէր* : Քր-
 բանք Թորոզի ժողովը յիշեալ թարգմանութիւնը
 հարապատ կարծելով մերժեց զՎիկիոյ ժողովն .
 թէպէտ արեւելեան եկեղեցւոյ փեղեղեական
 ժողովներուն մէկն էր , եւ Հոովմայ Մորիա-
 նոս հայրապետէն ընդունուած էր : Բայց ասի
 բաներն ըստ բանի աստուածաբանից , ճշտութեան
 քննոյ կըսուին . որ հերետիկոսութեան կարգ
 չեն կըրնար անցնիլ : Քաղկեդոնի ժողովը նը-
 ման պատճառներով հայր ալ չընդունեցին նե՛-
 հին ատենները , եւ կամ հիմայ դուրսի երկիրնե-
 րը , եկեղեցիէն զատուած եւ հերետիկոսութեան
 մէջ ինկած չեղան եւ չեն ըլլար : Այսան զի

* Կիպրոսի Աստանդին եպիսկոպոսը Նիկիոյ Բ
 ժողովին մէջ ըսեր էր . « աստուով կընդունինք
 ,, սուրբ և պատուական պատկերները . և ծա-
 ,, ույական երկրպագութիւնը միայն երրորդու-
 ,, թեան կնուիրեմ , և ուրիշ կերպ խորհոյները և
 ,, խօսողները կընդովեմ » : Ժողովոյն պատու-
 թեան լատիններէն թարգմանութեանը մէջ այս-
 պէս գրուած էր . « կընդունինք և պատուով կը
 ,, հարգուրեմ սուրբ և պատուական պատկեր-
 ,, ները՝ համարոյ և կեղանարար երրորդու-
 ,, թեան ընծայած պաշտօնիս և երկրպագու-
 ,, թեանս պէս » : Փրանք Թորոզի ժողովը լատին-
 ներու ժողով էր . յունարէն չգիտէին ժողովա-
 կանը . ուստի լատիններէնը կարդացուեցաւ .
 ժողովական եպիսկոպոսները երբ այս խօսքը ը-
 սեցին՝ ամենքը միաբերան հերքեցին և դատա-
 պարտեցին :

ժողով մը չընդունելը՝ երբ անոր վարդապե-
 տութեանը վրայ սխալ կարծիք կայ . հերետի-
 կոսութիւն չսեպուիր : Եւ այս ըսածնիս չէ թէ
 մեզնէ , կամ Քաղկեդոնի ժողովը չընդու-
 նողներէն հնարուած մտացածին խօսք մ'է ,
 այլ հիմակուան երեւելի աստուածաբաններէն
 Բէրրոնէ Յիսուսեան կրօնաւորը՝ որ Հոովմայ
 Ժողովէն առաջ ըսուած գպրոցին մէջ ալ
 աստուածաբանութեան գաստուէ , եւ յորի-
 նած՝ եւ Ալեքսանդրի Արիթարեանց վանքը
 1842ին տպուած նախասմանէ սպասածքա-
 նակնէ գիւրջ մեծ յարգ ունի , եւ հիմայ շատ
 գպրոցներու մէջ աստուածաբանութեան դա-
 սազիրք մը եղած է , այսպէս կը խօսի .
 « հինգերորդ փեղեղեական ժողովոյն՝ երկր-
 « գլխոց դէմ հանած դատապարտութիւնը
 « չընդունելու համար վէճ հանեցին ա-
 « բեմուտցիք : Ետներն սկիզբէն այսպիսի-
 « լի տգիտութեամբ խարուեցան այլ եւ այլ
 « պատճառներով , զորս այս անգ մէջ բե-
 « ռելը պատեհութիւն չունի . եւ այն
 « վճռոյն հնազանդիլ չէին ուզեր . բայց ե-
 « կեղեցիէն ալ ընդհանրեցան » : (Խօսք . Բ .
 էր . 82) : Մենք ասոր ըսածին ալ շատ կա-
 րօտութիւն չունեցինք . որովհետեւ ըսածին հա-
 ւաստիքը ունէինք : Սորոն կողմապանոս՝ որ
 615 թուին մեռած է , Բէրրոնէի ըսած՝ հինգե-
 րորդ փեղեղեական ժողովը ինք չընդունելէն
 զատ Արիթարեանիս Քաղկեդոն ալ գիր գրեց որ

նոյնը մերժելու իրեն համաձայնի. ժողովը եւ տիրակալն աղանդոյն մէջը ինկաւ եւ նոյ՛ը ընդունող եւ վաւերացընող Վիգիլիոս պապն ալ նոյն հերետիկոսութեան պըլլիկեցաւ եւ այնպէս մեռաւ կրօնքս (Պիէտրի պատմ. եկեղ. քր. 1, 1, 8) . Քաղկեդոնի ժողովքն ու Վէոն հայրապետը չընդունողները սուրբ Աղոմպանոսին արածէն աւելի բան չեն բներ. սակայն Հոովմայեկեղեցին սուրբ Աղոմպանոսը սրբաց կորզը դասած է. եւ յիշատակը կրկատարէ նոյ Չիւնս . Մեր հայրագրի հոսմեականները իրենց ծնողքն ալ թէ որ Քաղկեդոնի ժողովքն ընդունած չէին նէ՛ ի դժոխս դատապարտեալ սեպելով անոնց հոգեոյն համար աղօթելու եւ մէկ Աստուած ողորթ մը ըսելու ինդճ կընեն . Սուրբն Աղոմպանոս հինգերորդ ժողովոյն եւ Վիգիլիոս պապին պատմութիւնը չգիտնալով անմեղկը սեպուի նէ, Քաղկեդոնի ժողովն ու Վէոնը չընդունողներուն մէջ ասոնց պատմութիւնը գիացող քանի՛ հոգի կայ կկարծեն . Քաղկեդոնի ժողովոյն վրայ այսքանս հերիք թող ըլլայ :

Հոգին սուրբ միակ 'ի Հօրէ՛ թէ նաև յՈրդւոյ
կելէ :

Այդ հարցումդ ընելեն առաջ մտածել պէտք է որ հայր հաւատոյ վարդապետութիւնը եկեղեցական արարողութեանց հետ մէկ տեղ՝ սուրբ Առսուորիչէն առած ըլլալով ամուր կըրնեն . եւ աղէկ եւ կատարեալ համոզուած են մէկ դիէն՝ որ Աստուած յի՛ յայտնութեամբ սորված Ճմարտութիւննիս մեր խելքէն վեր են, եւ սենք չեմք կրնար մեր խելքին թելադրածին պէս բացատրութիւն տալու . սուրբ գիրքը եւ սուրբ ժողովները եւ սուրբ հայրապետները ինչ բացատրութիւն տուին նէ՛ այնքանը հերիք սեպելու եմք . Մեկգրիէն ալ համոզուած էին՝ որ նոյն սուրբ Առսուորիչը ինչ որ 'ի հաւատս իրեն նախորդ եւ վարժապետներէն սորվեր է՝ նոյնը իր ժողովրդեան աւանդեր է . մէկ մասը բերնուց խօսելով՝ զորս Տրդատ թագաւորին դիւանագիրն Ագւթանգեղոս հաւատարմութեամբ գրեց . եւ մէկ մասն ալ ինքն սուրբ Տրդատ մեր անձամբ կըրելով, որ է Յանթարտոս գիրքը . եւ ասոնց երկուքին մէջ ալ չգրուածներն իր երանելի աջօրդ յներն աւանդեցին գրով :

Արդ նշայաստանեայց սուրբ եկեղեցին իր նախնի սուրբ հայրերէն սորված չէ նոգին սուրբ ելանէ կամ բղիխ ՚ի նօրէ եւ յԱրդւոյ ըսելը . քնքն ալ նոյնն ըսելէն կը վախնայ . չըլլայ որ ՚ի սուրբ Արքայութեան երկու սկիզբ կարծուի . Այս գրուցուածքը մեր աղբին ըստըզին անծանօթ էր մինչեւ Աիլիկեցոց ժամանակը* . Ատիններուն մէջ ալ հին գրուցուածք մը չէր . ինչպէս որ ետքը պիտի տեսնենք : Երբ որ լատինք նոգին սուրբ ՚ի նօրէ եւ յԱրդւոյ բղիխ ըսելն ընդունեցին՝ մեր կասկած ըրածին առաջն աննելու համար՝ իբրեւ ՚ի Բողոքի սկիզբէն մտերն ալ շատ անդ գործածեցին . բայց մէկ մը՝ որ այդ մտերնը հաւատոյ հանգանակներուն մէջ , եւ ուր որ ՚ի նօրէ եւ յԱրդւոյ բղիխ մէջ յիշուած է նէ՝ քովը գրուցուած չէ . մէկ մ'ալ՝ որ քերականական կազ-

* Անիկորները հայոց կարծեցեալ մտրուութիւններուն ցանկին մէջ՝ զոր գործոյս առաջին հատոյնն մէջ յիշեցինք (էջ . 68) առաջին մտրութիւն բեր էին նոգւոյն սրբոյ համար ՚ի նօրէ եւ յԱրդւոյ բղիխ ըսելին : Դանիէլ վարդապետը Սոյ ժողովոյն բերնէն հայերը կարդարացրէ ըսելով թէ հոգեգալտեան օրը պատարագի առն կարգացուած երրորդ աղօթքին մէջ՝ ու կըսկըսի . որ ետք Բիւրիւր զօրութեանց . յայտնի խօսքով կըսեն , Բիւրեւ ՚ի շաիւ Եւրոպոյ : Այս աղօթքս սուրբ Ռիկեբիւսին անուանողը տպուած է Քաւոց գրքին մէջ . և ո՛ր ՚ի նօրէ բղիխով

մութիւնը երկու սկիզբն ցուցնելու կերպ ունի , կամ դոնէ հայրերի վարժուած ականջներուն անանկ կուգոյ , բացատրութիւնն անբաւական կերեւի . ուստի նշայաստանեայց եկեղեցին իր սորուած լեզուովը կ'իտասի . չհասկըցած լեզուն գործ չածեր . բայց գործածողներուն ալ դիտաւորութիւնը հասկընալէն՝ եւ իր դաւանութեանը համաձայն դոնելէն ետքը բան չըսեր :

Արդ՝ դաւանութեան կողմանէ նշայաստանեայց եկեղեցին սա ճշմարտութիւնները կընդունի , որ հոովմէական եկեղեցոյն զնոգին սուրբ ՚ի նօրէ եւ յԱրդւոյ բղիխ ըսելուն ըսկըզունքը եւ արմատը եւ հիմնն : 'Կախ' զԱրդին Աստուծոյ եւ զնոգին սուրբ Աստուածութեամբ ընդ նօր մի , բայց անձնաւորաբար ինչպէս ՚ի նօրէ՝ նմանապէս իրարմէ ալ ան-

յիշուած է , ո՛չ ՚ի նօրէ եւ յԱրդւոյ . և սուրբ Ռիկեբերանին ժամանակը արեւելեան հայրապետ ք մէջ այսպէս ըսող չկար . ուստի համարձակ կըսելք որ այն աղօթքին մէջ այդ բառերը ետքն մտած են . թէպէտ Հ . Միքայէլ Չամչեան (պատմ . հայոց . Գ . էջ . 233) և Հ . Գարբիէլ աւետիքեան (Քաւ . յլ . Բիւ . նոգ . սրբոյ . համար . 44 . էջ . 75 , ըսք իսկ . պատգմ .) այս մեկայտութիւնս մէջ կը բերեն , բայց երկուքն ալ Սոյ ժողովոյն ըստքը կը կրկնեն , հարազատ ընթերցուածն այս ըլլալուն երախտաւոր չեն ըլլար :

բաժանաբար զանազանեալ կրաւանի: Երկրորդ՝
 զՈրդին Աստուած, ինչպէս եւ զՀօգին սուրբ,
 էութեամբ եւ բնութեամբ եւ աստուածու-
 թեամբ ըստ անեռայի միապէս Հօր Աստուծոյ
 հաւասար, հետեւաբար երեք անձինքը էու-
 թեամբ եւ բնութեամբ եւ աստուածութեամբ
 բացարձակապէս մի կրաւանի, եւ այս նկատմամբ
 երեքութիւն չձանչնար: Երրորդ՝ Երրորդու-
 թեան երկոյ անձանց մէջ միայն զՀայր Աս-
 տուած պարծառ եւ սկզբն, իսկ զՍրբին եւ զՀօ-
 գին սուրբ պարծառ եւ սկզբնաորեալ կրաւա-
 նի: որով իրարմէ անձնաւորական զանազանու-
 թիւնին միայն առնչութեան վրայ կ'մնայ: Հայր
 Աստուած Որդին կը զանազանի, մէկին
 ծնող եւ միւսին ծնեալ ըլլալովը: Գործեալ
 Հայր Աստուած Հօգի սուրբէն կը զանազանի՝
 մէկին բղխող եւ միւսոյն բղխեալ ըլլալովը՝
 ՚ի հարկէ Որդոյն եւ Հօգոյն սրբոյ մէջ ալ
 այդպիսի անձնական եւ առնչական զանազա-
 նութիւն մը կ'ձանաչէ, որ երեք անձինք կրա-
 ւանի. ապա թէ ո՛չ՝ այս երկու անձինքը ի-
 րարմէ զանազանելու ուրիշ կէտ մը չըլլալով,
 պէտք կ'ըլլար երկու անձն ըսել: Եւ անբաւա-
 կան է մէկը ծնեալ եւ մէկը բղխեալ ըսելուն
 վրայ հիմնել այս զանազանութիւնը. վասն զի
 էլլա՞նք բառը երկու անձանց հասարակաց կը
 գտնուի սուրբ գրոց մէջ. Որդին Աստուծոյ ի-
 րեն համար կ'ըսէ. եւ ի ՚ի Հօր, եւ Հօգոյն
 սրբոյ համար կ'ըսէ, ՚ի Հօրէ ելանէ, որով այս

էլլա՞նք բայով երկուքն ալ կը նոյնանան: Եւս
 զանազանիչ առնչութիւնն է որ լատինք՝ Հօ-
 գին սուրբ յՈրդւոյ բղխի ասելով կը բացատրեն.
 եւ ասով՝ Հայաստանեոյց եկեղեցւոյ դաւանու-
 թիւնն ըստ մտաց կը միանայ Հօովմէական ե-
 կեղեցւոյ դաւանութեանը հետ, եւ բանը կը
 մնայ զրուցուածքի վրայ. որուն այսպէս նիւ-
 թերու մէջ ծանր կարեւորութիւն մը չունենա-
 լը Հօովմէական եկեղեցին ալ ձանչնալով՝
 լուրդանի (կամ լէոնի) ՚ի ժողովոյն մէջ
 (1274ին), որ արեւմտեան եկեղեցւոյ տիեզե-
 րական ժողովոց մէկն է, թոյլ տուաւ յաւնաց
 որ հասարակն առջուց ունեցած սովորութեա-
 նը համեմատ ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ բաւերը չը
 յարելով ըսեն*: Փլորենտեան ժողովոյն մէջ
 (1439ին) յոյներն այս յաւելուածը դարձեալ
 չընդունեցին հանգանակին մէջ, եւ ժողովը
 անոնց չստիպեց որ ընդունին: Արէմէս ՚ի Հը-
 ուովմայ հայրապետը՝ որ 1592ին ամոռ նստաւ.
 եւ 1605ին վախճանեցաւ, լ'ի երրորդ կոնդա-
 կին 6 համարին մէջ կ'ըսէ թէ յոյները չեն
 պարտաւորիր հաւատոյ հանգանակին մէջ ՚ի Հօ-

*Նիկոզայոս Գ. Հուովմայ հայրապետը Միքա-
 յէլ Բալթօլօղոս կայսեր կրտսիպէր որ հաւա-
 սամբին մէջ Հօգոյն սրբոյ յՈրդւոյ բղխումը
 յայտնի ըսել տայ. Բայց պապին նուիրակնե-
 րը պարագայները Եկառելով ասոր վրայ շատ չը
 պնդեցին կ'ըսէ Ռօբարտըր (ընդհան. պատմ. Գա-
 ռուշ. Էէշ. հատոր ԺԹ. էջ. 146):

րէ եւ յՈրդւոյ բղխումը յայտնի ըսելու՝ թէ որ գայթակղութիւն չեւելելու ըլլայ նէ . բայց Հոգւոյն սրբոյ յՈրդւոյ բղխմանը հաւատալու են : Ըստնք կը պատմէ Քէրրոնէ , նախաստուգած գրքին մէջ . որուն լատին բնագիրը Վիէննա Սխիթարեանց վանքը տըպուած է . (հատր . Գ . եր . 844 . ծանօթ . 2) : Հիմակուան Պիոս Թ . Հոովմայ հայրապետն ալ 1860 թուին հրաման ըրաւ պուղարներուն որ հաւատամքին մէջ 'ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխի չըսեն : Հիմայ հիմական Գրքերոսթեանց հեղինակը՝ մեր յայտնապէս 'ի Հօրէ եւ յՈրդւոյ քրիստոսեանքի եւնիկ չըսելը՝ կաթողիկէ եկեղեցւոյ գաւանթութենէն հիմնական տարբերութիւն , ուստի եւ հերետիկոսութիւն կը սեպէ : Ինքը կաթողիկէ ըսելով Հոովմեականը կիմանայ : Ս'եր գիտցած Հոովմայ եկեղեցին՝ Վղէմէս Բ' ին եւ Պիոս Թ' ին եւ ուրիշներուն տեսչութիւն ըրած եկեղեցին է . հեղինակին՝ էջմիածնական եկեղեցիէն հիմնապէս տարբերութիւն ունի ըսած կաթողիկէ եկեղեցին ո՞րքն է . որ արեւելեան ազգերէն հաւատամքին մէջ յայտնապէս քրիստոսեանքի 'ի Հօրէ եւ յՈրդւոյ ըսել պահանջէ , եւ նոյնը չըսողներն իրմէ հիմնապէս տարբերեալ եւ հերետիկոս ճանչնայ : Ըստնք՝ իրենց կուսակիցները նախապաշարման մէջ պահելու , եւ էջմիածնական անուանած եկեղեցին զայթակղեցընելու համար առանձին հոովմեական կամ կաթողիկէ եկեղեցի մ'ու-

նեցած պիտի ըլլան՝ զոր մեր գիտցած Հոովմը չճանչնար . ուստի այս խնդիրս ալ առաջնոյն նման չէ թէ հիմնական , այլ հոսոցոյն տարբերութիւններու մէջ կը գնեմք :

Համառօտ մը սա յիշեցընել հարկ կը համարիմք որիններորդ դարէն առաջ խիստ քիչ հոովմեական հեղինակ կը գտնուի որ Հօրին սուրբ 'ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխի ըսած ըլլայ ըստ բառին . հաւատոյ հանգանակին մէջ գրուած չէր բնաւ . թէ եւ տեսականապէս ճշմարտութիւնն ընդունուած էր : Ըսոր վրայ մենք խօսելէն աւելի պատշաճ կը դատիմք հոովմեական եկեղեցւոյ անուանի եւ իմաստուն աստուածաբանի մը գըրածը հոս գնել . Պիլվարտ՝ որուն քովանդակութեան քովանդակութեան սրբոյն Թովմայէ երեք հատոր գիրքը Վիէննայի մխիթարեանք տպելով մեզի ծանօթ է , այս գրքիս ընդարձակին մէջ՝ որուն լատիններէն նոր տպագրութիւնն եղած է 'ի Վարիզ 1839 թուին , այսպէս կը խօսի (հատր . Բ . եր . 139) :

« Եր պատմուի որ այս (եւ յՈրդւոյ) բառըս պինտ առաջ սպանիացիք խօթեցին հանգանակին մէջ 589 ին՝ Ղուկետոնի Գ ժողովքին ատենը . եւ ութերորդ դարուն վերջերն սպանիացիներէն գաղղիացիներուն անցաւ . վասն զի 791 ին հուլեան Փորոնի (Տրեթիւսի) եւ 794 ին Պրանքֆորդի ժողովքին մէջ կայ : Ըգուիսկրանայի ժողովքէն , եւ մեծին Վարոլոսի առ լէոն Գ Հոովմայ հայրապետ խրկած պատգա-

մաւորութենէն ալ յայտնի է ստիկայ : Պատ-
գամաւորները հայրապետէն կը խնդրէին որ
հաւատարեաց յօդուածներուն մէջ այս բառ
ալ մտցունէ . եւ հրաման ընէ որ հաւատամբը
այս յաւելուածովս զրուցուի : Հայրապետն ա-
սոնք երկուքն ալ մերժեց : Բսածներէս սա կը
հասկըցուի որ յիշեալ թուին եւ քանի մի տա-
րի առաջու ընէ այս սովորութիւնս Վաղղիայի
մէջ մտած եւ զօրացած էր : Եւ Վ. հայրա-
պետն Հոովմայ՝ բոխման վարդապետութեան
կողմէն կմիաբանէր Վոլէտունի ժողովոյն սպա-
նիացիներուն եւ գաղղիացիներուն ընդունած
վարդապետութեանը . որովհետեւ ընդդէմ դա-
տապարտութեան վճիռ մը չտուաւ . միայն իւ-
րեւ ստուածաբանական ուղղափառ վարդապե-
տութիւն բռնելով հարկ մը չտեսաւ եկեղեցա-
կան պաշտամանց մէջ յաւելուած ընելու . որ-
պէս զի ոամիկ ժողովուրդը՝ եւ գիտուններն
անգամ եկեղեցւոյ մէջ նոր բան մտած տեսնե-
լով չգայթակղին : Հայոց այդ յաւելուածը
մինչեւ համայ իր եկեղեցական գրոցը մէջ ըն-
դունելին ալ ճիշտ ասոր նման է . ասով Հը-
նովմայ հայրապետի մը պէս ըրած կըլլան :

Մենք Պիլվարայ ըսածները շարունակենք .
«Պատմութիւններս այսքանիս կմիաբանին .
բայց թէ Հոովմ եւ բոյոր արեւմտեան եկե-
ղեցիք այս յաւելուածը երբ ընդունեցին . շատ
անստոյգ է :

«Եւ Վ. Վին այս յաւելուածը չընդունի-

լըն ամէնէն առաջ գրոյն է Վարդապետ . որ
ասոր վրայօք եղած խօսակցութիւնը նոյն իսկ
եղած առենը գրեց , եւ Սիրման խմատունն ալ
տպեց Վաղղիայ ժողովքներուն պատմութեան
Բ հատորին մէջ . Սոյ՛ը գրեցին նաեւ Ընաս-
տաս զրապետ՝ Եւն Վի վարուց մէջ . եւ վըճ-
ուց վարդապետը՝ (Վեոց . Ը . 11) . եւ ուրիշ-
ները : Եւ ասոնց նայելով կըսեմ որ այս յա-
ւելուածս Վամաստ հայրապետէն եւ Հոովմայ
ժողովքէն չէ՛ ինչպէս որ ոմանք կըսեն . վասն
զի թէ որ այդպէս բան մ'ըլլար նէ՛ Եւն Վ.
հայրապետը կը գիտնար . եւ գիտնալով ընդդի-
մութիւն չէր ըներ : Աստի այս հանգանակը՝
որ այս յաւելուածովս սրբոյն Հերոնիմոսի մա-
տենագրութեանց կարգը Վամաստի անունով
կգանուի , հմուտ մարդիկ շինծու կըսեպեն* :

«Արեւմ կրկնորդ . մեծն Եւն (Ս . անուա-
նի տումարին հեղինակը՝ որ հինգերորդ դարուն
մէջն էր .) սպանիացիներուն այս յաւելուածս
ընելուն ներած ըլլալն անստոյգ է . զոր ըն-
դունիլ կերելի Սիլվիոս՝ Բարոնիոսի հետեւե-
լով . որ այն ալ մեծին Եւնի Վ. կրորդ նա-
մակէն առած է . վասն զի այն յաւելուածը
գաղղիացիներն սպանիացիներէն առին նէ՛ Եւն
Վին կը յիշեցընէին անշուշտ . այն ալ չէր

* Հայոց ճաշոցին հոգեգալստեան աղօթքին
մէջ մտածն ալ՝ նոյն խորհրդածութեամբ անհա-
բազատ է ըսինք վերը ծանօթութեան մը մէջ :

արհամարհեր: Այլ եւ՝ մեծն Լէն յիշեալ նամակին մէջ՝ որ է առ Տուրքիոս, կըսէ միայն, — Հոգին յերկոցուն յառաջ խողացեալ. — բայց հանգանակին մէջ եւ յԱրդարձ բան աւելցընելու խօսք չկայ:

«Կըսեմ երրորդ. նոյնպէս անստոյգ է ըսելը՝ թէ այս յաւելուածը Նիկիոյ Բ՝ ժողովոյն ժամանակը՝ որ պատկերներուն պատճառաւ դամարեցաւ 781ին, կամ թէ անկէջ ալ առաջ՝ (հանգանակին մէջ մտաւ), ինչպէս որ լատիններէն ոմանք կպնդէին Փլորենտեան ժողովքին մէջ, մէկ հին օրինակէ մ՝ առնելով. որուն մէջ կըսուի թէ ժողովքս հաւատամբն այս յաւելուածովս ըսաւ: Աւան զի Ե, ասիկայ Լէնն Գէն ծածուկ չէր մնար. այն ալ ժողովքին հեղինակութիւնը չէր արհամարհեր: Արդորդ՝ յոյներն ալ այս յաւելուածոյս համար լատիններուն այնքան չէին հակառակեր. եւ յաւելուածոյս հեղինակ անոնք չէին սեպեր: Արրորդ՝ Անաստաս գրապետը որ յիշեալ ժողովքէն միայն 70 տարի ետքը ժողովքին գործերը լատիներէն թարգմանեց, յաւելուածոյս յիշատակ մը չըներ: Աւստի կտկարանայ այն հին ձեռագրին հաւատարմութիւնը, որ ուրիշ հաստատութիւն ալ չունի:»

«Բայց վերջապէս՝ Հռովմայ եկեղեցին այս յաւելուածը երբ ընդունեց: Փլորենտեան ժողովքին եօթներորդ դամարման մէջ լատիններուն կողմէն վիճարանող ուղղափառը կըսէր թէ

Հռովմայ հայրապետն ասիկայ արեւմտեան մեծ ժողովքի մը մէջ ընդունեց: Ասանկ կըսէր անկէ առաջ սուրբն Թռովմաս ալ (Բովանդակ. աստուածաբ. Ե. Ինդէր. Լ. Գ. Ե. 2): Բայց որովհետեւ երբեք եւ որ ժողովքին ատենն ըլլալը չեն ըսեր, խնդիրն ալ լուծուած չըլլար:

«Արդ կըսեմ թէ հաւանական է որ այս յաւելուածս ընդունած է Նիկիոյոյս Ե. կամ անոր ատենն ընդունուած է:

«Առջին ապացոյց՝ Փոտէն. որ Նիկիոյոյսի դէմ արեւելեան եկեղեցեաց առաջնորդներուն գրած նամակին մէջ կըսէ. — ասոնցմէ զատ որոնք իբրեւ՝ անտեղի յիշատակեցինք, սրբազան եւ անարատ հանգանակն ալ. . . անհաւատալի յանդըզնութեամբ խարդախելու ձեռք զարկին: —

«Արդորդ ապացոյց. կորեւայ վանքին եւ Ուարդամնոս կրօնաւորէն. որ յունաց դէմ Հռովմայ եկեղեցին ջատագոված գրքին մէջ (Էր. Բ. Էլ. 2), գործաւոր ժամանակը գրեց, կըսէ Փոտայ համար թէ Հռովմայ եկեղեցին եւ Նիկիոյոյս հայրապետը կը պարսաւէ՝ եւ յԱրդարձ բառը հանգանակին մէջ առնելու համար: Պարսաւէն ալ կարդարացունէ. բայց գործը կը հաստատէ. վասն զի առաքելական հանգանակին վրայ Նիկիոյ եւ կոստանդնուպօլսի ժողովքներուն յաւելուած ընելը գրելէն ետքը եւ յԱրդարձ յաւելուածին վրայ այսպէս կը խօսի. — հարիւր յիսուն հայրապետներուն այնպէս հեղինակութիւն մը չէ տրուած, որ Հռովմայ

Հայրապետին եւ Քիստոսի ընդհանուր եկեղեցւոյն տրուած չըլլայ :

« Երրորդ ապացոյց . սուրբ Եստոնիտէն . որ շահանակաբնութեան մէջ (ճան . Գ . Ի . 3 . համար 1) կը պատմէ թէ Փոտ ըսեր է որ 'Արկողայոս սյդ բառը հանգանակին մէջ աւելցընելուն համար Եփեսոսի ժողովոյն նորովքին տակն է : Աոյնը կըսեն նա եւ Սանուէլ Աւէկաս եւ Պիտէոս : Եւսքանս Պիլիպարտին գըրածն է : Եւ յայտնի է որ հաւատոյ հանգանակին մէջ այն տառերը բացատրութիւն մ'աւելցընել պէտք կըլլայ' երբ որ նոյն հանգանակին մէջ չբացատրուած բանի մը դէմ մոլորութիւն ելլէ : Արկոյ ժողովքը առաքելական հանգանակին մէջ նոյն ինն 'ի բնութեան' չօժոնտիս - բառն աւելցուց . վասն զի արիտականները զԱրդին Եստուած չօր Եստուծոյ բնութիւնակից կամ համագոյ չ'ին ճանչնար : Առասանդնուպոսի ժողովը' նոյն առաքելական հանգանակին մէջը չօղւոյն սրբոյ համար համառօտ մը "հաւատամք եւ 'ի չօգին սուրբ, ըսածին վրայ յաւելցուց " 'ի Տէրն եւ 'ի Անդաւարարն' որ 'ի չօրէ բղիտ, եւ ընդ չօր եւ ընդ Արդւոյ երկրպագի եւ փառաւորի : վասն զի Սակեդոն' որուն դէմ եղաւ ժողովքը , չօղւոյն սրբոյ Եստուածութիւնը եւ ընդ չօր եւ ընդ Արդւոյ փառակից ըլլալը կուրանար : 'ի հարկէ Դոլիտոնի Գ ժողովոյն տառերն ալ Ապանիա հաւատոյ ուղիղ դաւանու-

թեան դէմ աղանդ մը քարոզող եղած է . որուն դէմ Առասանդնուպոսի ժողովքին դրած 'ի չօրէ բառին քով եւ յԱրդւոյ բառն ալ աւելցընել պատշաճ տեսած են : Ս'եր ազդին մէջ սյդպիսի մոլորութիւն մտած չըլլալով , 'ի չօրէ բղիտուան դամ լուսաւորչական հանգանակին մէջ առնուած չէ . եւ սյդպիսի բացատրութիւններ աւելցընելու կարօտութիւն ալ չկայ . եւ ըլլայ ալ նէ չընդունուիր եւ հերձուած ոյ եւ երկպառակութեան պատճառ կըլլայ . չէ թէ հաւատոյ հակառակ սեպելով , այլ իբրեւ առանց կարեւորութեան յաւելուած մը :

Չայոց եկեղեցւոյն դաւանութիւնը Ասթուղիկէ եկեղեցւոյ համաձայն ըլլալը' հիմնական Գորբէր-Բնանց հեղինակն ինքն ալ կը ճանչնայ , եւ այսպէս կը խօսի :

" 1820ին ազգային սիւնհոգոսնիք' յայտարարութեան մէջ այս խնդրոյն վրայ հետեւեալ դաւանութիւնը կուտայ :

" Չօգին սուրբ չօգի չօր եւ Արդւոյ կը ճանչնանք . վասն զի ըստ սրբոյ Լուսաւորչին , չայր յանձնէ . Արդի 'ի չօրէ . չօգին սուրբ 'ի նոցունց 'ի նոսին : Եւոր համար ըստ Երնորհալւոյն կըսենք , թէ' չօգին սուրբ 'բղիտ 'ի չօրէ եւ առնու յԱրդւոյ' անձառաւար . եւ թէ' 'ի չօրէ բիտուան չօղւոյդ ո՛չ 'քննեցաւ . հոսման յԱրդւոյ տուան ո՛չ պատմեցաւ : (Երոհ . Յետոս Արեւ) : Եւ ըստ շարակալին , ազբիւր կենաց եւ փրկութեան

« մերոյ Հոգի Հօր եւ Որդւոյ » : Այսքանս յիշեալ ազգային ժողովոյն յայտարարութեանն առածն է : Որով՝ իրբեւ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանը վկայութիւն առած՝ գոհ ըլլալուն տեղը , հետեւեալ խորհրդածութիւնը կընէ :

« Աս սիւնհոգոսական դաւանութեան կամ « վճռոյն մէջ դաւանութիւնը՝ բերուած վկայութիւններէն պէտք է գանաղանել . որով « հետեւ՝ ինչպէս ուրիշ անգամ ըսած ենք . « խնդիրն ան չէ թէ Հայոց հին սուրբ հարքն « ի՞նչ կընդունին , հապա ան է՝ թէ հիմայ « Հայաստանեայց ըսուած եկեղեցին ի՞նչ իմաստով աս սուրբ հարց խօսքերը կառնու » :

Արապատուելի վարդապետն ասոր հետքնելու ուրիշ կէտ մ'ալ ունէր . այսինքն՝ թէ վկայութիւն բերուած խօսքերուն հեղինակներն ի՞նչ մտքով գրուցած են . վասն զի բառերը նոյն ըլլալով՝ եւ մէջը փոփոխութիւն կամ յաւելում կամ կրճատում չըլլալով , թէ որ երկու կերպ իմաստ կը պարունակէ , եւ բուն ըսողն ալ ըսուածը վկայութեան առնողն ալ՝ ի՞նչ մտքի ըսելին եւ ինչպէս հասկընալին բացատրած չըլլան նէ՝ մէկին տրուած իմաստը միւսոյն ալ կըրնայ տրուիլ . երկու կողմն ալ մէկ մտքի վրայ էին ըսողը՝ երկու կողմին ալ եւ այլ իմաստ ենթադրողէն աւելի իրաւունք կունենայ , բացատրութեան կերպը նոյն ըլլալուն համար :

Ո՞րք կըսէինք որ այս խօսքերս անձնաւորական գանաղանութեան կամ առընչական յարաբերութեանց վրայ ըլլալով՝ Աստիւն եկեղեցւոյ քչիւնն ի՛ Հօր եւ Որդւոյ ըսածէն զատ մտքի անհնար է որ առնուի . ապա թէ ո՞չ՝ Հոգին սուրբ եւ Որդի մէկ անձն կըլլան . եւ երբորդսինն դաւանածնիս երբորդսինն կըլլայ : Այսինք մեր վերապատուելի հեղինակը ի՞նչ իմաստ կգտնէ Հայաստանեայց եկեղեցւոյն այս սուրբ հարց խօսքերը հասկընալու : Արսէ :

« Արդ՝ թէ որ այս բերուած վկայութիւն « ներուն նայինք , անոնք գրե՛ թէ բովանդակ « կաթուղիկէ վարդապետութիւնը կպարունա « կեն . այսինքն՝ 1 . Հոգին սուրբ է հոգի չէ՛ « թէ մինակ Հօր , հապա նաեւ Որդւոյն 2 . « Հոգին սուրբ կառնու յՈրդւոյ , 3 . Հո « գին սուրբ է ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ (՚ի նո « ցունց) : 4 . Հոգւոյն սրբոյ յՈրդւոյն առու « մըն ուրիշ բան չէ , բայց եթէ հոստանն , որն « որ հասարակ եւ ընտանի բառով բխում « կըսուի » :

Թողութիւն կը խնդրեմք իմաստուն մատենագրէս ըսելու՝ որ հոստանն եւ քիտմ՝ մէկ բառ չէ . եւ հոստանն ըսածը՝ հասարակ եւ ընտանի բառով քիտմ ըսածը չէ , յառաջ ետեւոցս ըսածըն է , որ լատիններէն բրօքէտէրէ բառին բառական թարգմանութիւնն է . իսկ քչիւնն լատիններէն ստորոգելէ բառն է : Ասոր վրայ խօսած եմք գործոյս առաջին մասին մէջ (ԳԼ . Ե) :

Մեր սպասուելի հեղինակը խօսքը շարունակելով կըսէ :

« Լուսաւորչին ան խօսքը , չայր յանձնէ
« Որդի 'ի չօրէ , չոգին սուրբ 'ի նոցունց
« 'ի նոսին , տարբերութիւն մը չունին Պա լա-
« տերական ժողովոյն այս խօսքէն — չայր մէկէ
« մը չէ . Որչին մինակ չօրմէն . չոգին սուրբ
« երկուքէն ալ միանգամայն , — : Ըստնը նախնի
հարց , ուստի եւ չայստանայց եկեղեցւոյ
բուն եւ հարազատ դաւանութիւնն են . զորս
ամենայն իրօք կաթուղիկէ եկեղեցիին դաւա-
նութեանը համաձայն գաւա . եւ մեր կըսեմք
թէ նոյն է չայոց եկեղեցւոյ դաւանութիւնը
մինչեւ հիմայ՝ եւ մինչեւ անսահման ժամա-
նակ . մինչեւ որ ազգային լիակատար ժողով
մ'ընելով հին սուրբ հարց ըսածները մերժեն .
եւ շարականը սրբագրեն : Բայց ասոնք չըրած՝
կգտնուին եղեր ազգին մէջ քանի մի կամ շատ
մը անձինք՝ որ եկեղեցւոյ եւ սուրբ հարց սոր-
վեցուցածին եւ դաւանածին հակառակը կը
զրուցեն . անոնցմէ չայստանետոյց եկեղեցւոյն
ազո մը չգար . այլ անոնք իրենց ազգային ե-
կեղեցիէն՝ որով եւ ընդհանուր կաթուղիկէ
եկեղեցիէն ալ զատուած կըմնան : Ըսով այս
խնդիրս ալ Ք կամ երկուքնուկանց խնդիրնե-
րուն պէս՝ տարապարտ եւ անպէտ խնդիրներուն
կարգը կանցնի :

Բայց մենք հիմա կան տարբերութեանց հեղի-
նակին այս կէտին վրայ գտած տարբերութիւ-

նը գտնելու համար ըսածը շարունակեմք :

« Ըսոր հակառակ՝ իբրեւ վճիռ զուրցուած ,
« համառօտ՝ եւ ժողովոյն յատուկ եղող խօսքը
« թէ զչօգին սուրբ չոգի չօր եւ Որդւոյ
« կը ճանչնամք , շատ հոմ եւ անորոշ դաւա-
« նութիւն մըն է :

« Ըն խօսքը՝ չոգի Որդւոյ՝ սուրբ գրոց
« խօսքն ըլլալով սուրբ գիրք ընդունողը հար-
« կաւ զչօգի՝ չոգի Որդւոյ պիտոր ճանչնայ .
« Բայց ասով խնդիրը չլմըննար : Յոյն սուրբ
« գրոց մէջ չոգի որդւոյ կը կարդան ու չոգի
« Քրիստոսի կիմանան . այսինքն՝ ըստ յունաց՝
« չոգին սուրբ մինակ անոր համար չոգի Որդ-
«ւոյ կըսուի , որովհետեւ Որդի Ըստուծոյ
« մարմնացեալ զչօգին սուրբ եւ անոր շնորհ-
« քը իր չարչարանօքը մեզի 'ի ժամանակի ար-
« զիւնաւորեցաւ : Իսկ կաթուղիկէ եկեղեցիին
« տիեզերական ժողովոց համեմատ՝ որոնք կըր-
« նան սուրբ գրոց իմաստը չոգւով սրբով ո-
« ղոչէլ , չոգի Որդւոյ ըսելով՝ ինչպէս որ վե-
« ռը տեսանք . ան կիմանայ՝ ինչ որ չոգի չօր
« ըսելով կիմանայ . այսինքն՝ թէ չոգին՝ չո-
« գի չօր եւ Որդւոյ անոր համար կըսուի , վա-
« սըն զի 'ի յաւիտեանց 'ի չօրէ եւ Որդւոյ
« կեկէն :

Ինչ ըսել կուգէ զիտես , Յոյները չոգի
Որդւոյ ըսելով չոգի Քրիստոսի ըսել կը հաս-
կընան եղեր : Եւ չոգի Քրիստոսի ըսելով ալ՝
չոգւոյն սրբոյ շնորհքը Որդւոյն Ըստուծոյ

մարմնանայոյն եւ չարչարանոցն արդեամբը մե-
 զի տրուիլը կը հասկընան եղեր. ուրեմն՝ 1820
 ին գումարուած հայոց ազգոյնի ժողովն ալ ա-
 նանկ կը հասկընայ: Երբ մէջերնին չէ թէ մի-
 այն յոյն չկար, այլ եւ յունաց լեզուն գիտ-
 ցող ալ չկար: Բայց սա կհարցընեմք վերապա-
 տուելի հորդ. դիցուք թէ մինակ՝ Հոգի Որդ-
 ւոյ ըսելը յոյներն այդպէս հասկընան. Հոգի
 Հօր եւ Որդւոյ ըսելէն ալ այդպէս բան մը կը
 հասկընան մի. զոր դու՛ յունաց հասկըցածէն
 արարեցելու համար յիշեցիր. եւ մեկնեցիր թէ
 Հոգի Հօր եւ Որդւոյ անոր համար կըսուի,
 վասն զի է յառնեմէն ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ կել-
 լէ: Եւ վէնէտիկի Սիսիթարեան վարդապետ
 մը*, հայոց եկեղեցւոյն դաւաճուածիւնը Հը-
 ոտմայ համաձայն ըլլալը ճիշտ՝ սոյն սուրբ
 եկեղեցւոյն Հոգի Հօր եւ Որդւոյ ըսելէն կա-
 պացուցանէ, սա խօսքով. «Հոգին սուրբ Հո-
 գի Վրիստոսի կամ Հիսուսի ասելն կարէ ի-
 մացեալ լինել կամ ըստ մարդկութեանն որ
 ՚ի Վրիստոս, եւ կամ ըստ Ըստուածութեա-
 նըն: Ըստ մարդկութեան մտածեալ՝ յայտ

«է թէ Հոգի Վրիստոսի ասելն ոչ նշանակէ
 «ի նմանէ իբրեւ ՚ի մարդոյ բղխեալ, զի «յ
 «նուհետեւ Հոգին սուրբ ոչ լինէր Ըստուած
 «հասար որդւոյ: Եւ յնշանակէ իբրեւ սնօ
 «րին սուր ասեալ ՚ի Հօրէ: Եւ յմտածեալ
 «զ Վրիստոս կամ զյորդին ըստ Ըստուածու-
 «թեանն, ասեմք թէ ըստ այսմ մասին Հոգի
 «Հօր եւ Որդւոյ, որպէս յայտ է նաեւ ՚ի շա-
 «րականէն Հովակիմայ եւ Վրնայի, ուր ասի.—
 «Վրդեր կենաց եւ փրկութեան մերոյ Հոգի
 «Հօր եւ Որդւոյ:—Վրդ վասն այսօրիկ կոչի
 «Հոգի Հօր, վասն զի ելանէ ՚ի նմանէ: Եւ
 «այս զի նչ ուրիս ասել», կըսէ յիշեալ իմաս-
 տուն վարդապետը. չգիտնալով որ սըրմաքէշ
 Մանուէլը՝ որուն դէմ կգրէր այս խօսքերս,
 (Հոգիէ աշխարհութեան՝ ԷԼ Բ. Բէ. 20). ա-
 սոր ըսելիք չունի ալ նէ՝ հոռոմէական ուրիշ
 վարդապետ մը անոր կը սորվեցընէ. յունաց
 զՀոգին սուրբ Հոգի որդւոյ ըսածին պէս է
 հայոց եկեղեցւոյն Հոգի Հօր եւ Որդւոյ ը-
 սելն ալ, կամ այս մտքիս կըրնայ առնուիլ կը-
 սէ. վասն զի մինակ Հոգի Որդւոյ անոր հա-
 մար կըսուի. «որովհետեւ Որդին Ըստուծոյ
 «մարմնացեալ զՀոգին սուրբ եւ անոր շնորհ-
 «քը իր չարչարանօքը մեզի օրդիւնաւորեցաւ,
 «կըսէ Էփեսական դոգմաբանաց հեղինակը, եւ
 զարմար այն է՝ որ երկու հոռոմէական Հայ
 վարդապետաց մէկին հայոց եկեղեցին ուղղա-
 փառ ցուցընելու համար ըսածը միւսը կտակա-

* Հայեւի աշխարհութեան գրքին՝ որ ձեռագիր մնա-
 ցած է. ճակատը հեղինակի անուն չկայ. եւ
 շատեոր կը կարծւի թէ Հ. Գ. սրբիւ Ս. Էտիք-
 եանին գործն է. բայց Սուրբիս Սոմայեան ար-
 քեպիսկոպոսն և վէնէտի ՚ի Մարայն՝ կըսէ թէ
 Հ. Սուրբիս Աղաման շինն է (Պատմիչ պարս
 4-րդ գրք Էփեսական. Էփ. 190):

ծի տակ կը ձգէ . կասկած մը՝ որուն տակէն
 ըսել կելլէ թէ Արք. եւ Բան Եստուծոյ ըսուե-
 լով մարդ եղողը եւ շարչարանօքը Հոգին սուրբ
 եւ անոր շնորհքը մեզի համար արդեւաւորող
 անձը՝ Հայր Եստուած էր . որ ըսել է թէ սուրբ
 Արքորդութեան մէջ անձանց իրական զանազա-
 նութիւն չկայ . մի եւ նոյն անձը այլ եւ այլ
 տեղ պէս պէս անունով կը յիշուի . որ է սա-
 բելի եւ հայրաւորաց հերետիկոսներուն ազանդը :

Սուրբ գրոց մէջ զսա գրուած է՝ Հոգի
 Հօր . եւ ուրիշ տեղ գրուած է՝ Հօգի Արդւոյ,
 յոյները Հօգի Հօր եւ Արդւոյ ըսելէն ետ-
 քը ո՞ր տեղ այդպիսի մեկնութիւն մը տուած
 են : Յունաց մէջ Հոգւոյն սրբոյ Արդւոյ հետ
 ունեցած յարաբերութիւնին ուրացող կայ մի .
 եւ թէ որ կայ նէ՝ սուրբ գրոց այլ եւ այլ տե-
 դերուն խօսքը միացընելով՝ Հոգի Հօր եւ Արդ-
 ւոյ կըսէ մի* . Ի ննք աղէկ գիտեմք որ յիշ-
 եալ վարդապետութիւնը յոյնք չեն ուրանար ,
 որովհետեւ Եստուածային երեք անձանց զանա-
 զանութիւնը՝ որ միայն առընչութեամբ կըրնայ

*Սան յունաց մէջ՝ Փոռայ ժամանակէն էտքն
 ալ Հոգի Հօր եւ Արդւոյ բողոքերօ ինչպէս է
 Յովհաննէս Վէրքոս՝ յունաց Կոստանդնուպօլ-
 սի պատրիարքը . Հռովմայ հայրապետին գրած
 նամակին մէջ (տա Ռայնարթոյ . յմն 1277 . համար .
 32—39) . բայց յայնանպէս բղխման վարդա-
 պետութեանը վրայ է . շնորհաց տուութեան
 Նկատմամբ յոյնք երբէք Հոգի Հօր եւ Արդւոյ
 ըսած չեն :

հասկցուիլ կը խոստովանին . եւ Հոգին սուրբ
 Արդւոյն Եստուծոյ հետ չեն շրջոթեր . ինչ-
 պէս որ շիթեմելու էր՝ թէ որ երկու Եստուա-
 ծային անձինքն ալ ՚ի Հօրէ եկեալ ըսելով լը-
 մընցընէին , եւ Հոգւոյն սրբոյ Արդւոյն Ես-
 տուծոյ հետ առնչական զանազանութիւն մը
 չտային : Յոյնք իրրեւ սուրբ եւ ուղղափառ
 հայրապետ կընդունին սուրբ Աիւրեղ՝ Ղէբասնդ-
 րացին . որ Մեստորի գրած նամակին մէջ կը-
 սէ . « թէպէտ եւ Հոգին առանձին անձնաւո-
 ռութեամբ , եւ ի մասի յանձն իւր եւ ՚ի
 « Հոգի սուրբ , (այսինքն՝ ի մասի ըստ ինքեան
 ըստ որում է Հոգի սուրբ . ըստ յոյն բնա-
 գրքին , նօ՛րէ՛րէ՛ Իմօ՛ր Իմօ՛ր Բնօ՛ր Բնօ՛ր Է՛ր .
 « Ի՛ր) եւ ո՛չ Արդի . այլ ո՛չ է օտար ՚ի նմա-
 « նէ . զի Հոգի ճշմարտութեան անուանի ,
 « եւ Քրիստոս է ճշմարտութիւն . եւ երեւի
 « նովաւ որպէս յԵստուծոյ եւ ՚ի Հօրէ , (պա-
 ըսպմանց . էւ՛ Ի՛ն . եր . Գ՛Ղ՛՛Ը . [471] .
 Արքոյն Աիւրիկ այս առ Մեստոր գրած նամա-
 կը՝ Լապպէի ժողովոց հաւարման մէջ ալ անցած
 է (հարոր . Գ . էջ . 406 . յօդ . 10) : Իարձ-
 եալ յոյնք կընդունին Աիւրեղի տեղեկարկան
 սուրբ ժողովը՝ որ Մեստորի գէմ գումարեցաւ
 431 թուին . եւ անոր խօսքերն ուղղափառա-
 կան կը ճանաչէ . եւ սյս ժողովս ըսած է թէ
 Հոգին սուրբ յԱրդւոյ է , եւ ՚ի նմա է էա-
 պէս . (անդ . էջ , 823) . կընդունին զսուրբն
 Լեթանաս . որ Հոգւոյն սրբոյ համար կըսէ

Որդւոյն Աստուծոյ դոյութեան մէջ մնայուն
 փշու մէկ է (յու. երբորք. Բ. 19). եւ նոյն տեղը
 գլխորդին ազրիւր Հոգւոյն սրբոյ կանուանէ:
 Արնդունի զսուրբն Վարսեղ Կեսարացի, որ կը-
 սէ: «Արդին Հոգ Աստուծոյ հետ ինչ յարա-
 բերութիւն ունինէ՞ Հոգին սուրբ ալ Որդւոյն
 հետ նոյն յարաբերութիւնն ունի. ինչպէս որ
 մկրտութեան մէջ զրուցուած բառերուն կարգը
 մեզի կաւանդէ (յու. Հոգւոյն սրբոյ գլ. Ժ):
 Արնդունի սուրբ Վրիգոր նազիւնդացին, զոր
 աստուածաբան անուամբ կ'ապատէ. եւ անոր
 ըսածն իբրեւ բնդհանուր եկեղեցւոյ դաւանու-
 թիւն կը բըռնէ. եւ այս սուրբ հայրապետ
 գրած է. «ակն իմն եւ ազրիւր եւ գետ զմաւ
 «ածի. զի եւ այլք են թերեւս արդեօք. (յու.
 «սինքն՝ կարելի էր ուրիշ օրինակներ ալ գը-
 «նտիլ). միւսմն Հոյր եւ միւսումն Որդի եւ
 «միւսումն Հոգին սուրբ յարմարագոյն ինչ ի-
 «ցեն», (սու. սրբ. ճառ. Օ). Հոգին սուրբ գե-
 տոյ նմանեցունելով, որ թէպէտ ակէն կը բըզ-
 իի, բայց ազրիւրէն գալով կամ ազրիւրին միջ-
 նորդութեամբը գետ կրլայ. եւ ասոր համար
 Հոգին սուրբ ելանէ 'ի Հօրէ Որդւոյ կամ 'ի
 ձեռն Որդւոյ կրսէ, եւ սյս է մեր շարակարին
 ալ գլխորդին Աստուած հարաշարժ ազրիւր ան-
 ուանելը, եւ զՀոգին սուրբ անկէց յառաջ
 բղիւտալ ըսելը. «որ 'ի հարաշարժ 'ի յազրե-
 «րէն յառաջ բղիւտալ անհասարար 'ի Որդ-
 «ւոյ տիրապէս սուրբ Հոգին», Ասոնք ամէնն

ալ՝ լատիս եկեղեցւոյ բղիւտմն 'ի Հօրէ եւ
 Որդւոյ ըսելով բացատրած վարդապետութեան
 ուրիշ կերպով բացատրութիւններն են: Ուրիշ
 շատ վկայութիւններ ալ կըրնայինք ժողովել
 ցուցընելու համար թէ յուսաց եկեղեցին ալ
 դաւանութեան կողմանէ լատիս եկեղեցւոյ հե-
 մէկ է. միայն բացատրութեան կողմանէ կը
 տարբերի. լատիներուն պէս՝ Որդւոյ եւ Հօր
 Աստուծոյ անունները եւ շարկապով կ'ապելով՝
 բղիւտ 'ի Հօրէ եւ Որդւոյ ըսելը Հոգւոյն
 սրբոյ երկու բղիտոյ սկիզբն ցուցընել երեւելուն
 համար չընդունիր. եւ այս կողմէն Վուրդանի
 եւ Փլորեմտեան ժողովներուն մէջ համոզուեցան
 յոյնք որ լատիներուն ըսածը իրենց բացա-
 րութեամբը՝ ուղղափառութենէ օտար չէ. սակայն
 զրուցուածքն իրենց նախնի հայրապետաց սրու-
 ցուածքին շարունակն՝ եւ իրենց լեզուէն օտար ըլ-
 լալով՝ իրենց համ.ը չընդունեցին. եւ հաւա-
 տամբին մէջ խօսելու յանձնառու չեղան. եւ
 յիշեալ երկու ժողովներն ալ, կղէմէս Բ. Հը-
 ոովմայ հարապետն ալ հաճեցան որ հաւատաւ-
 քին եւ եկեղեցական պաշտօնանց մէջ չըսեն.
 միայն թէ նոյնը հաւատան:

Աղան յիշեալ ժողովոց հակառա-
 կողներ՝ որ լատիները՝ բղիւտ 'ի Հօրէ եւ Որ-
 դւոյ ըսելուն համար հերետիկոս ցուցընել ու-
 զեցին: Ասոնց մէջ՝ նոյն հակառակութեան ու-
 զիէն մղուելով՝ որ ձիշտ սահմանը հասածին
 պէս հոն կենալ չգիտեր. անկէց անդին ալ

կանցնի եւ մոլորութեան մէջ կիշնայ, Արդւոյն
 Ըստուծոյ եւ Հոգւոյն սրբոյ մէջ ամեն կերպ
 յարաբերութիւն եւ առնչութիւն ուրանալու
 պէս խօսքեր ըսին: Մեր վերապատուելի Հե-
 ղինակն արդեօք այդ մտքով գրող Հեղինակնե-
 րուն մէջ՝ Հոգի Հօր եւ Արդւոյ՝ մէկէն ըսողի
 պատահած է մի: Չատարար կրօնն Հոգի Հօր՝
 էրբեւ ՚ի նմանէ բղխեալ. եւ Հոգի Արդւոյ,
 Քրիստոս իւր չարչարանացն արդեամբը անոր
 շնորհքը մեզի վաստակցընելուն համար, բայց
 որովհետեւ երկուքը մէկէն ըսելէն կը հաս-
 կըցուէր որ Հոգին սուրբ ինչպէս Հօր Ըստու-
 ծոյ Հոգի է նէ՝ Արդւոյն Ըստուծոյ ալ նոյն
 մտքով Հոգի կրօնի: Ուստի այն հակառակող-
 ներն ասիկայ միանգամայն զրուցելէն կը քաշ-
 ուէին:

Եւ արդեօք հայոց գումարած 1820ին ժո-
 զովը՝ որ իր վճռոյն հիմկը զնէ զՀոգին սուրբ
 Հոգի Հօր եւ Արդւոյ կը ծանչնամէ խօսքը նէ՝
 վերոյ նշանակեալ հակառակակեր յունաց տը-
 ւած մեկնութիւնն ընդունելու նշան է թէ
 հերքելու: Եթէ Հոգւոյն սրբոյ առնչակից
 Արդի եւ Հայր մէկէն անուանելը՝ Հոգւոյն
 սրբոյ ՚ի յաւիտեանից ելմանը դաւանութիւն
 ճանչցար, ինչպէս որ հայելի աղբեցութեան գրքին
 հեղինակն ալ ճանչցաւ անտարակուսելի կերպով,
 որ իր հակառակորդը կը ատիպէր թէ ասոր ՚ի նչ
 ըսելիք ունիս, հապա ժողովքին ալ ըսածըն
 այն չէ՞ մի: Իայց զարմանքն այն է՝ որ վերա-

պատուելին էջնաշնակն եկեղեցւոյն այս վարդա-
 պետութեանս վրայ մոլորեալ ըլլալը չկընա-
 լով բուն հայոց ժողովքէն ցուցընէլ, եւ քը-
 րիստոնէականներէն ալ բան մը չկըրնալով դը-
 նել, որոց մէկը յայտնապէս ժողովոյն ըսա-
 ծին համաձայն գտաւ. ըսել է՝ հռովմէական
 դաւանութեան համաձայն: Ուստաստան տըպ-
 ուածներուն համար ալ ինքնին խոստացաւ թէ
 Առու—յունական ազգեցութեան տակ են,
 որով անոնց վարդապետածը չէ՞ թէ Հայաստան-
 եայց, այլ Առու—յունական եկեղեցւոյ դա-
 ւանութիւն են. ուստի ստիպուեցաւ այս ան-
 գամի համար՝ ըսա իւր կարծեաց հայոց մոլոր-
 եալ ըլլալուն ապացոյցը յունաց դաւանու-
 թիւնէն առնել. այն ալ չէ թէ յունական ե-
 կեղեցւոյն. անակ ընէր նէ միայն աս կըսէ-
 ինք որ ուղղփառ դաւանութիւնն ու մոլորու-
 թիւնը՝ յասին սասուածաբաններուն գրքերը
 կարդալով ալ չէ կրցած որոշել, այլ յունաց
 ազգին վերջին ժամանակի մատենագիրներէն.
 որոնք լատին եկեղեցւոյ դէմ խօսելոյ եռան-
 դէն բըռնուած՝ չեն նշմարեր թէ իրենց յու-
 նական եկեղեցւոյ հակառակ խօսք ալ կըրնան
 փախցունել: Ըյսպիսի յունաց ըսածը կտանէ.
 եւ հայոց ժողովքին ըսածն ալ կըրնայ այս մը-
 քովս ըլլալ կրէ. որով բոլոր խօսքը երկու
 խախուտ հիման վրայ կըղնէ. մէկն է կարծիք
 եւ միւսը՝ նմանութիւն. որ նմանութիւնն ո՛չ ՚ի
 փաստ ըսելը արամաբանից առած մ'է:

Մտնց խախտա ըլլալը հասկընալուն հա-
մար է որ ինչդիրն որոշելու չհամարձակիր . եւ
վերորդեալ խօսքերը կը վերջացընէ այսպէս
ըսելով . «արդ՝ վերջիշեալ սիւն հոգոսակն»
« դաւանութիւնը որք, յաւիտենական թէ մի»
« նակ ժամանակաւոր իմաստով զհոգին՝ հոգի
« որդւոյ կը ձանչնայ, անորոշ է, (հիմակ .
որքեր . էր . 44. - 48) , որոշելու կամք ունե-
նար նէ՝ շատ որոշ կը տեսնէր բանը . այն իմաս-
տով կը ձանչնայ զհոգին սուրբ հոգի որդւոյ՝
ինչ իմաստով զնոյն հոգի հօր կը ձանչնայ եւ
կըրնայ ձանչդուի . եւ ասոր նշանը՝ հոյր եւ
որդի մէկէն ըսելն է . «Լը այսպէս՝ երկու ե-
կեղեցեաց դաւանութեան այս տարբերութիւնս
ալ կ'որչընչանայ :

Ի այց արդեօք Հոգին սուրբ ՚ի Հօրէ ե-
յՈրդւոյ քրիէ ըսելուն այսքան դէմ կենալը՝
տարբերութեան օրինաւոր նշան չէ՝ մի . Մտոր
արդէն առաջին մասին մէջ պատասխան տուած
եմք որ հաւատոյ դաւանութիւնը բառի կապ-
ուած չէ՝ իմաստը դաւանելուն կընայի . եւ մաս-
նաւորապէս այս նիւթը սա մէջ՝ հայ լեզուն այդ
գրուցուածքը չընդունիր . մէկ մը քրիէ բառին
համար . եւ միւսը եւ շարկապին համար . Իսկ
ըստ մտաց՝ նոյն իսկ լատին վարդապետութեան
զրուցուածքին հակառակող մատենապիր մը՝ բուն
վարդապետութիւնը հայոց եկեղեցւոյն ըստմը-
տաց ընդունելի ըլլալը կվկայէ . Վարդան
վարդապետ , որ հայոց կուսանդին կաթուղիկո-

սին բերնէն Հիթուժ հայոց թաղաւորն՝ 1248
թուին նամակ գրելով իւրեւ ՚ի պատասխանի
Հոգվմայ հայրապետին կողմէն խրկուած նութ-
րակին ըսած առաջարկութեանցը , լատիններուն
մէջ տասն եւ եօթն սխալ կգտնէ , եւ ասոնք
բացատրած կարգին կըսէ . « երկրորդ սխալ .
« զՀոգին ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ ասնն՝ որ չը-
« փոթուին եւ պղտորուին առնէ մտաց լսողին :
« Լը թէպէտ եւ ասեմք , չկայ մնա՝ եւ ՚ի գը-
« րոց ասեմք . բայց տխմարացն ցաւ տայ ՚ի լսե-
« լըն . լաւ չասելն է , : Իսկ թէ ինքն Սար-
դան վարդապետ ի՞նչպէս կը գաւանի , լաւ է
լսելը . սրով հետեւ լատին եկեղեցւոյ դաւանու-
թեան հակառակ կարծուած էրիքնակն եկեղե-
ցւոյ՝ որ այն ատենը կաթուղիկոսը Սիս նստե-
լուն համար էրիքնակն չէր կըրնար ըսուիլ ,
դաւանութեան արտայայտութիւնն է . որովհե-
տեւ մէկ վարդապետ մ'է որ կաթուղիկոսի մը
բերնէ կգրէ , այն ալ՝ նախնի հօրց ըսածին
համաձայն : Լը այս է վարդապետին խօսքը .
« իսկ միւսն՝ (հոգին սուրբ) բղտուին է հոգե-
« պէս . վասն զի մի է ճշմարիտն հոգի բերա-
« նոյ Մատուծոյ . վասն զի մի է ճշմարիտն
« հայր ընդ որդւոյ Մատուծոյ : Եւ ՚ի նուա-
« զագոյնք են պատճառաւոր քան զպատճառն՝
« թէպէտ եւ ՚ի նմանէ , : Հոգին սուրբ մէկ է
կըսէ . վասն զի հայր Մատուած ալ որդւոյն Մա-
տուծոյ հետ մէկ է . եւ այս է լատիններուն իբ-
րէ՝ ՚ի քրիէ պիքն ըսածը : Թէ որ որդին Մա-

տուժոյ հոգւոյն սրբոյ ելմանը՝ հօր Աստուծոյ
հետ մէկ սկիզբն կամ պատճառ մը եղած չըլ-
լոր՝ այս պատճառը նշանակութիւն մը չէր
ունենար. եւ հոգւոյն սրբոյ մէկ հատիկ ըլ-
լալուն վրայ առանց այս վարդապետութեանս
խնդիր ալ չէր ելլեր՝ որ այսպիսի պատճառով
մը լուծուի :

Գ-Լ ՈՒ Խ Գ .

Մահուանէ ետքը հոգիք ի՞նչ վիճակի մէջ եք :

Թող ներէ ինձի վերապատուելի հեղինակը,
որ այս խնդրոյս պատասխան ես տալու տեղս իր
գրածն օրինակեմ :

«Վաղի անգամ 1820ին սիւնհոգոսը իր քըն-
նութիւններէն ետքը ասանկ կէս 'ի կէս դա-
ւանութեան մը վերջ ըրաւ : Բս փոփոխու-
թիւնը յիշեալ սիւնհոգոսին մի միայն տեւա-
կան ալիքները կրնանք սեպել , , Աէս 'ի կէս
դաւանութիւն ըսածն այն է՝ որ 18 4ին Աոս-
տանդնուպոլիս տպուած Բրիտանական
դաստիարակ մէջ հոգւոց վիճակին նկատմամբ միայն
ընդհանրական դատաստանին համար խօսք կայ
եղեր . անկէց առաջ հոգիներն ի՞նչ վիճակի մէջ
ըլլալուն վրայ բան չկայ եղեր : Ըսանկ բանի
մը վրայ յիշեալ բրիտանականին դաւանութիւ-

ղեցին արդարներուն մեռնելէն ետքը հոգւով
աստուածատեութեան , եւ մեղաւորներունը դը-
ժոխային տանջանաց . իսկ թողութեան ընդու-
նակ արատով մեռնողներուն Աստուծոյ անհուն
գթութեամբը քաւութիւն եւ հետ քաւութեան
ընդ սուրբս դասիլ կրնողունի եւ կը դաւանի՝
Հոգւոյն եկեղեցւոյն պէս . եւ այս կողմէն
տարբերութիւն չկայ :

Հինական դարբերութեանց հեղինակը՝ վերո-
յիշեալ Յակոբ Ալեան պատրիարքին Բրիտանի-
ական ուսանելի գրքին 1747ի տպագրութեանը
մէջ սա խօսքերը գտեր է : « Յայն ժամանակն
« (այսինքն մինչեւ յարութեան օրը) արդարք
« եւ մեղաւորք կուսպասեն մարմնոց յարութեան
« թէպէտ մեղաւորք չեն ուզիր զյարութիւն
« մարմնոց : վասն զի զիտեն զիրենք դատապար-
« տուելոց : Բրդ կեանք յաւիտենական կուտը-
« ռուի սրբոց եւ դատապարտութիւն յաւիտե-
« նական տանջանք եւ զրկուիլ Աստուծոյ տե-
« սութեանէն կուտրուի մեղաւորաց , (էջ . 65) :
« 122 (Բրիտանոսի հոգին) 'ի դժոխս . . . արար
« եւ 'ի մէջ դժոխոց զայցելութիւն արդարոց
« եւ մեղաւորաց . . . բայց արդարոցն արար
« Բրիտանոս յաւիտենական փրկութիւն եւ մե-
« ղաւորաց ժամանակաւոր փրկութիւն , որոնք
« յաւուրն դատաստար 'ի անդրէն պիտի դառնան
« 'ի դժոխս , , (էջ . 47 — 48) : Տեւան մերոց
առաջին զալստենէն ետքը մեռնողներուն հոգ-
ւոցը համար Բրիտանական ուսանելիին ըսածը՝

վերը բացատրուած մտքին կը յարմարի . նախ-
քան զգալուստն Քրիստոսի մեռեալ մեղաւորաց
հոգւոյն ժամանակաւ որ փրկութեանը եւ ետքը
ընդհանուր դատաստանին վերստին դատապար-
տելի ըլլալուն վրայ ասոր կարծիքը ուրիշ վար-
դապետաց առաւել հաւանականագոյն կարծեա-
ցը համաձայն չէ . բայց բանն այն է՝ որ Հա-
յաստանեայց եկեղեցին՝ որուն դաւանութեան
հոովմէականէն տարբերութիւնը պիտի ցուցը-
նէր վերապատուելի հեղինակը , Յակոբ պատ-
րիարքին դէմ՝ եւ հասարակաց հաւանականա-
գոյն կարծեացը համաձայն կերպէ . « քրովքէ-
« ական կառօքն ստորիջնալ 'ի դժօխս' կենդանի-
« եոյ հզօրեղապէս զերան արքարոյ » , (շարհ . ա-
« սոք օրհն . բկ) : Ուստի առ առաւելն՝ Յակոբ
պատրիարքին համ. ր կըրնամք ըսել թէ հաւա-
նականագոյնէն տարբեր կ'ընէր մ'ունի այս-
պէս բանի մի վրայ՝ որ հաւատոյ յօդուածնե-
րուն կարգը մտած չէ :

Բայց ըսենք թէ Յակոբ պատրիարքը այս
նիւթոյ մէջ սխալ դործեց հաւատոյ յօդուա-
ծոյ մը դէմ . ըսենք զաձեալ թէ մեռելոց
հոգիքը մինչև դատաստանին օրը ոչ վարձք
կընդունին լսաւ եւ ոչ պատժ . ըսենք թէ
համեմատեալն ալ՝ ուրիշ քանի մի վարդապետներ
ալ ասոնց նման սխալած են . ասիկոյ ոչ վե-
րապատուելիին հոգ ընելու բանն է եւ ոչ մեր :
Մէկ մասնաւոր անձ մը՝ թէ եւ զիտուն , կա-
թոլիկէ եկեղեցւոյ եւ էջմիածնական ըսածին

մէջ բաժանման միջնորմ մը շէրնար ըլլալ .
մանաւանդ որ՝ ասկէց ետքը 1820ին՝ ազգին
բովանդակ լրութիւնը ներկայացնող ժողովը
այդ գրքին ըսածի պէս կնթադրուած կարծեա-
ցը հակառակն ըսած է . որով այդ գրքին՝ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ չընդունած կարծիքն
ունեցած ըլլալը կիմացուի : Եսոր այսպէս ըլ-
լալը վերապատուելի հեղինակն ալ կը հաստա-
տէ սա՛ խօսքով , զոր բնագոյնէն ուսանելին
խօսքին կը յարէ անմիջապէս . « Թողունք աս տը-
» գեղ երեւոյթը , եւ դառնանք վերոյիշեալ քը-
« րիստոնէականներուն պարունակած կէտերուն՝
« որոնց համար մեր եղբարցը խնդակից ենք »
(կենդանի արքեր . էջ . 80) : Եւ այս խնդու-
թեանս առաւելութիւն մը կըզգայ՝ հանգուց-
եալ Տ . Մատթէոս օրբազան կաթոլիկոսին
հանդիսարան գրքին մէջ սա՛ հատուածս կարդալով .
« կընդունի հայոց եկեղեցին ճշմարիտ հաւա-
« տով եւ հաստատ յուսով՝ որ Հիսուսի Քրիս-
« տոսի փրկարար մահուան արգիւնքը եւ կեն-
« դանարար յարութեան շընորհքն երկնից ար-
« քայութեան ճանապարհը բացաւ : Ուրեմն
« արդար եւ սուրբ եւ Աստուածահաճոյ Հոգի-
« ները՝ որ Աստուածային տեսութեան արժա-
« նի եղեր են , կվայելեն հոգւով երկնից ար-
« քայութեան ամենացանկալի փառքերը » , (եր .
386) : Եւելի ինչ՝ կուզէ իմաստուն ընդգիմա-
խօսը : Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը Հը-
նովմէականին համաձայն ըլլալը ինքն է որ կը

վկայէ 1820ին ազգային իրազատար ժողովոյն՝
 վճռովը . 1843ին եւ 1858ին Կոստանդնու-
 պօլիս, 1843ին եւ 1854ին Օսմանիա , 1847
 ին Եւջ ապուած քրիստոնէականներուն՝ եւ
 Հայոց կաթողիկոսի մը հանդիսարան գրքին խօս-
 քերովը . ասոնց դէմ ի՞նչ կը զօրէ 1814ին
 Կոստանդնուպօլիս քրիստոնէականին լուսթիւ-
 նը , որ անոր մէջ « ոչ առանձնական դատաս-
 տան կայ , ոչ յարութենէն յառաջ մինակ
 « հոգւոց համար արքայութիւն , եւ ոչ քառու-
 թեան տեղ կամ վիճակ մը » , կըսէ վերա-
 պատուելի հեղինակը հիմալ . տարբեր . եր. 66 .
 Լուսթիւնէն բան մը չկը ըսած եմք առաջ .
 եւ հաւատոյ հանգանակին մէջ այս բաներուս
 չգտնուելն ինչի՞ կուտայ նէ՛ այս ալ անոր կըր-
 նայ տալ . Յակօր Կալեանին հակառակ խօսքը
 գտեր է . որուն հարազատ միտքը բացատրեցինք .
 Բայց սեպելով թէ վերապատուելի հեղինա-
 կին կարծիքը բաժնի մտքովն ըսած ըլլայ . ասով
 ալ անոր պատարականացն արժանի չէ . եւ իրա-
 ւունք չունի ասիկայ իրեն հիմ բռնելով՝ ասոր
 ըսածը Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ եւ հը-
 ռովմէականին մէջ հիմնական տարբերութիւն
 սեպել : Յովհաննէս Ի՛ն երորդ Հռովմայ հայ-
 րապետը կըսէր թէ ընդհանուր յարութենէն
 առաջ ոչ արդարոց վարձուց՝ եւ ոչ ալ մեղաւորաց
 պատժոց հատուցում կայ : Բայց Հռովմայ հայրա-
 պետն իր եկեղեցիէն այս բանիս համար չնզովուե-
 ցաւ . իբրեւ մասնաւոր մարդ սխալեցաւ ըսելով

զինքն անմեղադիր ըլին . այսու ամենայն իւր ըսող
 չեղաւ թէ Հռովմայ եկեղեցին Յովհաննէս Ի՛ն
 գրածին պէս կը հաւատայ եւ անոր համախոհ է :
 Արնար վերապատուելի հեղինակը Յակօր Կալ-
 եան պատրիարքին համար ըսել ինչ որ հռով-
 մէական աստուածաբանները Յովհաննէս Ի՛ն
 համար ըսին : Մենք երբէք ըսած չունիմք եւ
 չեմք ըսեր թէ Կոստանդնուպօլիս պատրիարքնեւ
 ընն ի բան հաւատոյ անսխալ կըլլան իբրեւ
 առանձին մարդ . ինչպէս որ հռովմէականք ալ
 չեն ըսեր թէ պապն իբրեւ առանձին մարդ եւ
 վարդապետ՝ անսխալ է :

Եյս ամէն ըսածներէս յայտնի կերելի որ
 վերապատուելի հեղինակն այս նիւթոյս վրայ
 մասնաւոր վարդապետի մը դէմ բանմու-
 նենալով գրեթէ բոլոր քրիստոնէականները
 եւ ազգային ժողով մը՝ որ հռովմէական եկե-
 ղեցւոյ դաւանութենէն տարբերութիւն չունին ,
 այն մէկ հատին՝ եւ անոր հեռեւորներուն ը-
 տածին հիմնելով հայոց եկեղեցին կաթողիկե-
 էն տարբերալ ցուցնելու իրաւունք չունի .
 եւ սայ գլուխս դնելը՝ պարապ տեղը հայոց
 վրայ մտորութիւն մ'աւելցնելով զրպարտել է :
 Բուն նիւթոյս վրայ միաբանելնէս ետքն
 աւելի խօսք ընելու պէտք չունիմք . ուստի նոյն
 խնդրոյն ուրիշ մէկ կէտին անցնինք :

Վիճակոր վ բղապետութեանը վրայ՝ որ է մեռելոց հ գոց վիճակը՝ կատարեալ համաձայնութիւն տեսնուելէն ետքը աւելորդ էր քաւարարին վրայ խօսք բանալը . որովհետեւ այս ալ անոր մէջ կը պարունակի : Բժէն ննջեցեալ՝ մեռած ատենը մէկ վիճակի մէջ չգըտնուիր . սուրբերը եւ դատապարտեալ մեղաւորներն երկու ծայրեն . միջին վիճակ մ'ալ կայ՝ որ իրենց մեղքէն զղջալով , բայց ապաշխարութեան ժամանակ չունենալով այս աշխարհիս մէջ՝ քաւութեան կը կարօտին . բայց հանդերձեալ աշխարհն այնպէս բան մը չեն կըրնար ընել՝ որ իրենց մեղաց քաւութիւն ըլլայ . սուրբ եկեղեցոյ անոնց համար ըրած աղօթքը եւ ուրիշներուն անոնց համար տուած ողորմութիւնները եւ ըրած բարեգործութիւններն , եւ մանաւանդ սուրբ պատարագը անոնց մեղացը քաւիչ կըլլայ , եւ կատարեալ թողութիւն գտնելէն ետքը երկնից արքայութեան մէջ սրբոց կարգը կը մտնեն . ինչպէս որ սուրբ պատարագի ատեն քահանայն կաղօթէ . մինչեւ այն ատենը՝ ոչ արքայութիւնն են եւ ոչ դժոխքը . ՚ի հարկէ այս երկուքէս դատ տեղ մը սահմանուած պիտի

ըլլայ ասոնց համար . եւ որովհետեւ այս վարդապետութիւնս Հայաստանեայց եկեղեցին ընդունած է , ինչպէս որ վերապատուելի վարդապետին վկայութեամբը վերը տեսանք , գժողքէ եւ արքայութենէ դուրս տեղ մ'ալ ընդունած կըլլայ , որ է լատիններուն քուրկադօրէնս ըսածը , զոր ունիդորները ասորսն թարգմանած են . բայց մեզի այս անունս անսովոր մնացած է . ուստի մենք այս բառով նշանակուած վարդապետութիւնն ընդունելով՝ եւ բառը մեզի մեր նախնիքներէն աւանդուած չըլլալուն համար անընդունելի մնալով՝ քաւարանի վրայ եղած վէճը կըլլայ քաւարանութիւն , որ դաւանութեան ոչ հիմնական եւ ոչ ուրիշ կերպ արբերութիւն մը պատճառելու չափ կարեւորութիւն չունենար :

Հայաստանեայց եկեղեցոյ դաւանութեանը եւ եկեղեցական արարողութեանց եւ պաշտամանցը հմուտ օտարազգի իմաստուններն ալ անոր այս կողմէն ողջամիտ ըլլալը ճանչցած են . որոցմէ կըբնայինք վկայներ բերել . բայց շատերուն տեղը մէկ հատը բաւական կը սեպմբ . որ հայոց վրայ աղէկ կարծիք մը չունենալուն՝ եւ ունիդորներուն եւ անոնց հետեւողներուն հնարած զրպարտութեանցը բըռնուած ըլլալուն համար հայոց եկեղեցին պաշտպանելէն հեռու էր , եւ անոր կուսակից եղող եւ աշտուութիւն ընող չկըրնար սեպուիլ : Եւ այս է յովէ գաղղիացի քահանայն՝ որ մեր մէջ Յովէտ Պատրի

անունով ճանչցուած է . եւ մենք ասոր գրած-
 ներուն վրայ համառօտ տեղեկութիւն մը տու-
 ած եմք գործոյս առաջին մասին : Այդ գլխոյն մէջ :
 Մտիկայ իր գրքին մէջ՝ որուն մակագիրն է , պար-
 ճօնին հանաքայ աշխարհայ . Մասառոնիէանց , երկ-
 րոց , ե- քասասաց , նաեւ զհրօնե նոցին , զոր ան-
 ծանօթ մէկը հայերէն աղաւաղ գրաբար լեզուի
 թարգմանած է . ասանկ կըսէ . « ոչ ընդունին
 « քաւարանն . բայց թուի ինձ թէ անասմբ փ-
 « այն իցէ ո՛չ ընդուննոսն այս . քանզի աղօթեն
 « եւ պատարագեն վասն ննջեցելոց , եւ անենն
 « զամենայն միջոցս նման լատինաց յաղագս օ-
 « ժանդակութեան եւ աղաաութեան հոգւոցն
 « քաւարանին , : Մ. յու ամենայնիւ մեր վերա-
 պատուելի հեղինակն երկու եկեղեցեաց դաւա-
 նութեան մէջ մէկ հիմնական արքեպիսկոպոս^մ ալ
 աւելի ցուցընելու համար հաւատացընել կաւզէ
 թէ հայք չէ թէ միայն ասորն բառը՝ այլ ա-
 նով նշանակուած վարդապետութիւնը չեն ըն-
 դունիր : Իր խօսքը լսենք :

« անդիսորանին հեղինակն գործածութեամբ
 « հասարակ եղած հայերէն ասորն բառն ա-
 « մէն շիոթութեանց պատճառ սեպելով տա-
 « րագրութեան արժանի կը հրատարակէ . ու ա-
 « նոր տեղը մտաբան բառը պատշաճ կը սեպէ : .
 « Մնոր համար չտարակուսի հանդիսորանին հե-
 « ղինակը՝ թէ իր աւազարկութիւնը , որչափ
 « ալ բանասիրական է քան թէ եկեղեցական ,
 « մեզի անընդունելի չէ : (Հիմնական . արքեպի .

եր . 83 — 84) : Ընորհակալ եմք սա բառը ըն-
 դունելուն . բայց ինչո՞ւ միջեւ հիմայ չեն
 ընդունած , երբ ինքը կը վկայէ նոյն խօսքը-
 բուն կարգը , « թէ մտաբան՝ տեղեկրական ժու-
 « ղովոց գործածած ասորքերէն կամ բարբառոց-
 « րէն բառերուն աւելի ճիշտ թարգմանու-
 « թիւնն է » (անդ) : () Բինակ ալ տուած էր
 իրենց՝ 1813 թուականէն 'ի վեր'՝ սերիշ հա-
 յազգի հոսովմեական վարդապետ մը , լատինե-
 բէն արքեպիսկոպոս : Բնած բառը մտաբան թարգմանե-
 լով (չ . Մ) կրտիչ Մագերեան . Վարդ արքեպիսկոպոս .
 հարր . Լ . Եր . 416) : Ար յուսամբ որ հիմնա-
 կան արքեպիսկոպոսի վերապատուելի հեղինակը՝
 որ այս բառս տեղեկրական ժողովոց գործածած
 յունարէն եւ լատիներէն բառերուն ճիշդ
 թարգմանութիւնն ըլլալը կը խստովանի , աս-
 կէց ետքն անճիշտ եւ գայթակղիցոցիչ ասորն
 բառը գործածելը վերցընելով՝ գոր պինդ բը-
 նելու պատճառ մը չունի , իր կուսակցաց մէջ
 սովորական կընէ :

Բայց առ այժմ ասոր միտք չունենալ կե-
 բելի . որովհետեւ ասորն բառը գործածու-
 թեամբ հասարակ եղած կանուանէ , եւ յայտնի
 է որ այսպիսի բառերը երբ չափասանեայց
 լուսաւորչական եկեղեցոց մէջ 'ի գործածու-
 թեան կրտսնեն՝ առանց իրճի կը փոխեն , թէ
 եւ ծանր գայթակղութիւն պատճառի ասկէց .
 ինչպէս տեսնը չորսոյն սրբոյ սո Սրբին Մս-
 տուծոյ ունեցած յարաբերութիւնը նշանակե-

յու համար մեր սուրբ հարց եւ եկեղեցւոյ գործածած ելուստն եւ առաջ բառերը ձգելով քրիստոսն բառը գործածելուն, եւ մի քննութիւն ըսելը ձգելով երկու քննութիւն ըսելուն, լայց իրենց մէջ ետքի ժամանակները եւ տարապարտ մտած եւ նշանակութեան կողմէն՝ մեր լեզուին յատկութեանը նայելով, մոլորութեան աւելի քան թէ ճշմարտութեան եւ ուղղափառութեան նպաստաւոր բառերը կընդունին եւ կը պահեն: Աւսիրաւի. առաջին բառը որո՞ց մէջ գործածութեամբ հասարակ եղած է: Այս թուիկ ժողովրդեան մէջ այն. բայց անոնք՝ սրոց մէջ հայերէն խօսելու սովորութիւնը միայն քիչ տարի է որ մտաւ, եւ Թոսկաւին ըստ ալժանւոյն տարածուած չէ, հայերէնի հեղինակ չեն կրնար ըլլալ. հայերէն արտիքեան ասոնք չեն կազմեր՝ որ անոնց ընդունած բառը հայոց մէջ հասարակ գործածութեան ընդունուած սեպուի: Ա վաղուց անտի հայերէն խօսող ժողովուրդը իր հաւատոց հայերէն եւ նախնիքներէն լըսած չըլլալով, կը խորշի այդ բառէն: Գիտունները, յունարէնի եւ լատիներէնի հետ բաղդատելով կը տեսնեն որ անոնց գործածած բառերն ալ առաջին կամ առաջինն որ եղ շնշանակեր, անորիցս արբազան հեղինակին պատշաճ դատածին պէս մարտբան կը նշանակէ. ուստի առաջինը նոր բառ մ'ըլլալով՝ եւ հոգովմէական եկեղեցւոյ ալ իր դատանութեանը մէջ գործածածին համաձայն չըլլալով՝ սիրաւի դայթակողութեան եւ շփոթի պատճառ է:

եւ թէ որ բառերու գործածութենէն դաւանութեան հիմնական դարբերութիւն կեւլէ նէ, (հեղինակին մինչեւ այս կէտս դտած տարբերութիւններն ասանկ ըլլալը տեսանք), հայազգի հոգովմէականներն են որ հոգովմայ եկեղեցւոյ հետ հիմնական տարբերութեան մէջ կը գտնուին. եւ ոչ մենք, որ այն եկեղեցւոյն իր դաւանութիւնը բացատրելու համար գործածած բառին ճիշտ հայերէն թարգմանութիւնը կընդունինք. եւ հայազգի հոգովմէականաց ալ նոյնն ընդունիլ կառաջարկեմք: Կը համաձայնիմք վերապատուելի հեղինակին այս աթիւ ըսածին. «ոչ եկեղեցւոյ վարդապետութիւնը եւ «ոչ մեր հաւատքը հայերէն բանասիրութեան «վրայ հիմնուած է», (եր. 85). եւ կը յաւելցընեմք, թէ եւ ոչ լատինականին. որով անպատեհ կըլլայ լատին լեզուին լոկ բանասիրականի վերաբերեալ կէտերուն վրայ պնդել, որպէս թէ ուղղափառութեան անսխալ թարգման ըլլալին հայոց լեզուին վրայ ալ ազգեցութիւն ունեցած ըլլայ: Աւ կը փափաքէինք որ վերապատուելի հեղինակն ամէն ատեն այդ սկզբանց համեմատ վարուէր, թէ որ հայերէն բառը յօտարգիր դնելով հասկըցընել չուզէր թէ հաւատքը ինք լատիներէն բանասիրութեան վրայ հիմնած է. որ մեր տուած բացատրութիւնն առ ոչինչ սեպելով՝ լատիններուն բացատրութեան ոճը կուզէ մեզնէ ամէն բանի մէջ:

Բայց այս բանասիրականն ներելէն ետքը վերապատուելի հեղինակն ուրիշ աւելի ծանր կէտի մը վրայ հայոց եւ հոռոմէականաց դաւանութեանցը մէջ տարբերութիւն կը գտնէ : Ըմբաստանութիւնն իրէքերնէն լսենք :

« Թէ որ Էմբաստանեայց եկեղեցին, ինչպէս կերեւայ, կը կարծէ թէ իր քրիստոնէականներուն ու սիւնհոգոսին մէջ սորվեցուցած մաքրարանն ալ ճշդիւ կաթուղիկէ վարդապետութեան մտքաբանը կամ Գառնիէն է, շատ կը խաբուի : Էմբաստանեայց եկեղեցւոյ այս օրուան օրս ընդունած մտքաբանը կաթուղիկէ եկեղեցւոյ ընդունած մաքրարանին կէսըն է. մէկ ալ մեծ կէսը դեռ պակաս է :

« Ըստ կաթուղիկէ վարդապետութեան մարբարանի մէջ գտնուող հոգիներն իրենց թէ ներելի մեղաց քառութիւնը եւ թէ ապաշխարանաց լրումը միայն եկեղեցւոյ կամ հաւատացելոց օժանդակութենէն չեն սպասեր . հազա գլխաւորաբար իրենց կրած տանջանքով կամ պատիժներով կը քաւեն . զորոնք տիեզերական ժողովք մտքաբան պատիժներ կանուանեն : Էւտացելոց ան հոգիներուն համար ըրածը՝ ըստ կաթուղիկէ վարդապետութեան նպատներ կամ օժանդակութիւններ են՝ որոնցմով ան պատիժները կը թեթեւանեն . ուստի մաքրարանի մէջ պատիժ կրուիլը հաւատոյ վարդապետութիւնն, եւ պատժոյն սաստիկ ըլլալն այնչափ ընդհանուր վարդապետ-

թիւնը ինչպէս անուանելը մեզի օտար գալու չէ . որովհետեւ սուրբ Էրեսուորիչէն մեզի աւանդուած հանգանակն ալ նոյն Վրիստոնէականին պէս է . ընդհանրական դատաստանէն առաջ հոգիներն ի՞նչ վիճակի մէջ ըլլալուն վրայ խօսք չկայ . « հաւատամք ՚ի մի միայն սուրբ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի . ՚ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն ՚ի քառութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց, ՚ի յարութիւն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկից եւ ՚ի կեանսն յաւիտենականս » :

« Եսանկ լուսութիւնները մինակ մէկ պատճառէ մը չեն առաջ գար . ուստի կաթուղիկէ եկեղեցիէն տարբերելու նշան չեն . ապա թէ ո՛չ հաւատամքն ալ կաթուղիկէ եկեղեցիէն տարբերելու նշան մը պիտի ըլլայ : Եւ որովհետեւ հաւատոյ հանգանակներուն գրեթէ ամենն ալ այժպէս են, զորս ուղողը ամէնը մէկէն ժողովուած կրնայ գտնել : Վէնեաիկ տպուած Գառնիէն սրբոցն մէջ (Գառնի . Ե . եր . 428—430) . շրջառած թէ այսպիսի բան մը եկեղեցիէն հիմնապէս տարբերելու նշան դրուի նէ՛ եկեղեցի բառովն ի՞նչ հասկընամք :

Բայց այս ալ ըլլայ նէ ի՞նչ գտնէ . հայոց վրայ հերետիկոսութիւն գտնելու պաշտօնը վրան առած է . եւ որքան շատ հերետիկոսութիւն գտնէ նէ՛ այնքան արդիւնաւոր անձ մը պիտի սեպուի իրեններուն մէջ : ՚ի ՚ի ՚ի ԻՐԱՅԱՅ . Բ . 7

տոս ք բնութիւն ըսելը հերեփկոսութիւն չը
սեպէ . Հոգւոյն սրբոյ համար է Հօրէ եւ Սրբո-
ւոյ բնութիւն չըսելը հերեփկոսութիւն չսեպէ .
ընդհանուր յարութենէն առաջ Հոգւոց ինչ
վիճակի մէջ ըլլալը չըրուցելը հերեփկոսու-
թիւն չսեպէ . մնացած խնդիրներուն մէջ ալ
գտած օտարութիւնները հերեփկոսութիւն
չսեպէ նէ՛ իր վրան առած պաշտօնն ինչպէս
կատարած կըրնայ ըլլալ . հարկ է մտլորութիւն
մը աւելի գտնել հայոց վրայ . որպէս զի հասի-
մէական հայերը մզոն մ'աւելի հետացընէ Վը-
միածնական անուանած Հայերէն : Այսամուրի
որ կ'ուսուէր մարդ մը մէկուն հետ կ'իւր ընե-
լով՝ գիտացինը ձայն չեր հաներ նէ՛ ես բու-
լոս թեանց ալ պատասխան ունիմ ըսելով վէ-
ճը կշարունակէր . մեր վերապատուելիքն ըրա-
ծընալ այն չի նէ՛ անոր մօտ բան ժրն է :

Իայց վերջին խօսքը բաւական էր ըսելիք-
ները կարծելու . Եւ բերել ուզած սիւն հոգո-
սական վկայութիւնը՝ դնելէն ետքը մէկ խօսք
մը կ'մտար իրեն ըսելիք ըստ արդարութեան .
եւ էր այս : Հայաստանեայց եկեղեցին ներկա-
յացնող լիակատար սիւն հոգոսին դատարութիւ-
նը հոսմէականին յար եւ շման գտանք . ահա
արդէ եկեղեցւոյն եկեղեցւոյ դատարութիւնն ո՞ր
է : Եսիկայ չըսելէն զատ՝ վերապատուելիքն բը-
ծախնդրութեան կ'ելլէ : Տեսնենք ուրիմն թէ
սիւն հոգոսն ինչ վճռած է . եւ այն են վերա-
պատուելիքն խօսքերը .

« Մհառապիկ սիւն հոգոսին դատարութիւնը : —
« Հասարակութեան անջատեալ հոգւոց 'ի հրատա-
« ռի նոցա յաշխարհէ , ըստ ուսուցանելոյ
« սրբոյն Վրեգորի լուսաւորչին է այսպէս : —
« Արք սուրբքն են՝ 'ի փրիստոս մերձ լինին . զի
« ուր ենն եմ ասէ , անդ եւ պաշտօնեայն իմ
« եղիցի : Յօհ . 17 . 26 : Գարձեայ . — Իւրեւ
« երկրաւոր կեանքս 'ի ձեան մահուան 'ի գը-
« յուխ ելանեն , հոգիքն յգարկին առ Եստուած
« որ ետ զնա , եւ մարմինն դառնայ 'ի հող՝ յոր-
« մէ ստեղծաւ յարարչէն : Եւ սուրբ եւ ար-
« դար հոգեացն ընդ առաջ գան հրեշտակք եւ
« սրբոցն հոգիք , եւ տանին առաջի Եստուծոյ
« սաղմասիւք , եւ օրհնութեամբ եւ երգովք հո-
« գեւորք գովեն զամենազօր փառսն տէրու-
« թեան ամենասուրբ Երրորդութեանն . եւ գո-
« հանան զերախտաւոր բարութենէն , որ փոխէ
« յերկրաւորացս յերկնաւորսն , յանարգութե-
« նէն 'ի պատիւ , զհաւիրեալսն եւ զկոչեց-
« եալսն : Դիւր արքայութիւնն եւ 'ի փառսն :
« Յօհ . 152 . 153 . Եւ յայլուր ասէ . —
« Իսկ որ 'ի սուրբ սէրն Վրիստոսի հաստատեալ
« են , որք զանձինս իւրեանց ետան 'ի մահ . . .
« ապրեալք լինին . . . եւ բացին դուռք կե-
« նաց բարեբարութեանն շնորհօք Հոգւոյն սրբ-
« ոյ վերին կայնիցն՝ ուր ժողովք սրբոցն են
« հանգուցեալք : Յօհ . 17 . Իսկ յաղագս
« ներելի մեղքք նըջեցելոց , եւ թողեալ մահու
« չափ մեղաց զապաշխարանսն ոչ վճարողաց՝ աստ

« աղօթս առնեմք ասելով . արա՛ արժանի օղոր-
 « մութեան՝ քառութեան եւ թողութեան մե-
 « ղաց : Ժամգիրտ : Լու վերագոչեմք յեկեղեցին .
 « որ թողութեանց եւ սուող Բստուած՝ թող
 « զմեզս մեր ննջեցելոց : Երբայն . ՆԻԸ .
 « Եւ դարձեալ Երբայն . ԼՆեղ խորհուրդ քա-
 « ճանային : եւ այլն : Ա՛սան որոյ եւ մաղթե-
 « ք ճանայն ՚ի սուրբ պատարագին ասելով .
 « յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛ եւ զթա՛ ՚ի հոգիս
 « ճանգուցելոցն ՚ի ճանգո զնոսա եւ լուսաւոր-
 « ցեա՛ եւ դասաւորեա՛ ընդ սուրբս քո յարքայու-
 « թեանդ երկնից . Քանզի այսպէս ուսոյց սուրբ
 « Լուսաւորիչն մեր յասելն : Իսկ հաւատացելոց
 « մեղուցելոց եւ խոստովանողաց եւ ապաշխարո-
 « ղաց եւ հաղորդելոց փկական խորհրդոյն եւ
 « հրաժարելոց յաշխարհէ՛ եւ նոցա կատարեսցին
 « յիշատակք՝ Քրիստոսի պատարագան եւ ա-
 « ղօթիւք եւ զթով անանկայ , եւ այլ բա-
 « րի գործովքի վերջնոցն բարեգործութեամբք
 « ճանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ
 « կենացն անվարձարից : Յամբ . 160 : Վասն
 « որոյ եւ տեղին : յորում կան այսպիսի ննջեց-
 « եալքն հոգիք՝ որ կարօտեն օժանդակութեան
 « եկեղեցւոյ՝ կա՛ի ՚ի մեզ կայան . զոր այլք կո-
 « չեն՝ մաքրարան կամ քաւարան : Իսկ զանդիզդ
 « մեղաւորս եւ զամբարիշտս եւ զանհաւատս
 « փրտեմք լինել արդէն իսկ անարգեալս եւ դա-
 « տապարտեալս . ուստի յասեմք բանիւ սուրբ
 « Լուսաւորչին . — Ե՛յլ կայանք են նոցա որք

« արճամարհեցին զօրէնս նոցա եւ ճառակեան
 « զժողակ ցանկո : Թեա՛ց անխառն եւ պէսպէս
 « չարեաց . որք ժառանգելոց են զբոտաքին խա-
 « լարն : Խաւար է աստ արժաքին չար . ուրոց
 « խաւարեալ են միտք եւ զգոյն թիւնք , եւ օ-
 « տարացեալ են ՚ի կենաց անսի . . . եւ անդ
 « ՚ի հուր գեհեանն՝ ուր յալ աչաց է եւ կրճել
 « աստմարց : Յամբ . 153 : Երբայն . ԷԶ .
 23—28 : Լսանկ՝ սիւնհոգոսական վճիռը , :
 (Երբայն Գործքոյն-Ինն . եր . 66—70) :

Ահեհ հոգոսին այս բացարձակութիւնք եւ այս
 վկայութիւններք կըրնային գոհ ընել վերա-
 պատուելի հեղինակը՝ բայց միտ թիւն տեսեր է
 մէջը : Արեւ . « աս սիւնհոգոսին յատուկ ե-
 « ղած խօսքերը որչափ քիչ եւ կարճ են , նոյն
 « չափ ալ կարեւոր կէտերը կեղակարծ եւ երկ-
 « դիմի կը մեան : Ա՛վ չտեսներ թէ ան բացա-
 « յայտութեամբ՝ որով որ սիւնհոգօսը մահու-
 « չափ մեղաւորներն անմիջապէս մահուան է ա-
 « քը դժօտք կը խաւրէ . նոյն քացայտութեամբ
 « արդար կամ քաւեալ հոգիներու աւջեւ՝ ան-
 « միջապէս մահուընէ ետքը կամ հասարակաց
 « յարութեանն յառաջ՝ արբայութեան դուրը
 « կամ Ըստուծոյ դէմյանդման տեսութեանը
 « վարագոյրը չբանար . ասով՝ մասնաւոր եւ
 « ընդճանրական դատաստանի զանազանութիւնն
 « ալ՝ կը կաղայ , (անդ . եր . 70 , 71) : Բայց
 ի՛նչպէս կըրնայ ըլլալ որ ժողովը սուրբ Լու-
 սաւորչին խօսքովը՝ վերապատուելի հեղինակին

ուրանն ալ բաց սոյոյսու թեամբ դաւանելէն ետ
 քը՝ Աստուածատու թեան վարագործը արդարոց
 եւ քաւեալ հոգւոց առաջը բացած չըլլար :
 Սուրբ Առաւորչէն ժողովոյն բերած վկայու-
 թեան մէջ սն կայ . սուրբ եւ արգար հոգ-
 ւեացն ընդ առաջ դան հրեշտակքն եւ որոցն
 « հոգիք եւ աննն առաջն Կարգոյն : Սոհոյ
 թէ որ աստուածատու թեան շնչանակեր նէ
 ի՞նչ բոխ կըլլայ : Եւ դարձեալ Կարգապետքն
 բերած վկայութեանը մէջ կգտնեմք : « Գրաս-
 « արեան ընդ սուրբք քո յարարութեանդ երկ-
 « նից : Եւ ի՞նչ կըլնայ հազարցոել արքա-
 յութիւն երկնից ըսածուիք : Զողովն այս վկա-
 յութիւնները՝ իր ըսելիքներն անոց բոխ առ-
 լու համար մէջ կըբերէ . եւ իրն մտքին հակա-
 դակ բան մը գտած չունի որ սերտէր կամ կե-
 տադրութեամբ անցնէր : Ի՞նչ կուզէ ուրեմն
 վերապատուելի հեղինակը : Այդէ որ ժողովը
 ինք գրուցէ : Եւ ինչոն չընդունիր այն վկա-
 յութիւններն՝ որ իր ուզածը բացայայտութեամբ
 կը ցուցնեն . վասն զի ժողովն ինք չէ ըսողը ,
 այլ սուրբ Առաւորչէն է կամ շարական է :
 Սոհոյ վերը պատմած առակէս աւելի ծաղրա-
 կան է . խօսողի մը խօսածը՝ ինք չըսաւ ուրի-
 շին ըսածն ընդունիլը ցուցուց ըսելով դիմա-
 խօսել է :

Այսու ամենայնի կը խոստովանի որ կարծեց-
 եալ մի թեւնովն ալ ապագային վրայ բարի ազ-
 դեցութիւն մ'ըբերէ . ըսել է՝ որ ուրիշներն

աւելի սրտան եւ յատկապես նն եղեր կամ թէ
 որ ասանկ չընդունինէ՝ այն ազդեցութիւնն ըն-
 դամողներն իրենց մտքին համաձայն հասկը-
 ցած են մութ խօսքերը : Արն որ ըլլայ նէ՝
 Էջիմովն ըսած եկեղեցւոյն մէջ իր ուզած դա-
 ւանութիւնը գտած կըլլայ . սիւն հոգոսին կարճ
 խօսքերովը մութ , թոյց 1843ին Աստանգու-
 պոլիս սպուած քրիստոնէականին խօսքովն ա-
 գաւ եւ համարձայ խօստովանուած : Այնը
 1847ին Աստանգուպոլի քրիստոնէականին
 եւ դարձեալ նոյն թուին Սաշի քրիստոնէա-
 կանին մէջ աւելի ճիշտ եւ որչ գտեր է : Այն-
 պէս Օլիւանից 1843ին եւ 1854ին սպուած-
 ներն ալ . եւ աւելի մանրամասն 1858ին քր-
 քիստոնէական վարդապետութիւնը կը յիշէ ,
 որ խնդրոյս վրայ խօսեր են՝ եւ ասանք՝ ժող-
 վոյն մութ կարծուած խօսքերը ցերեկուան
 լուսոյ շափ պայծառացնելու բաւական էին :
 Աստի իրքն ալ այս քրիստոնէականներուն ը-
 սածները ժողվելէն ետքը կըբերէ . « կըլնանք
 « բախ՝ որ ասանկ լուսաւոր համաձայնութիւն
 « մը երբէք մեջերնիս գտնուած խնդիրներէն ու-
 « ինչ մէկուն վրայ պատահած չէ : (Էջիմովն
 « արքեր . 79) : Հանգուցեալ Տ . Մատթէոս
 սրբազան կամ ռոզիկոսին՝ նախ քան զկամոնողիկո-
 սութիւնն յօրինած Հոնդիտարն գրքովն ալ նշ-
 նը կը հաստատէ (Էջի . էր . 81—83) : Ար-
 նար նաեւ վերջին դարերու այն վարդապետաց
 խօսքերովն ալ հաստատել՝ որ հոովմէականաց

Հակառակ էին յոյժնապէս . սակայն առանձնա-
կան դատաստան կենալը կընդունէին : Այժմ
մեր վերադատուելին ասոց քրքրը կարգալը
չօրերբ . ուստի այս տեղս անոց մէկ քանին
յիշելը կարելի է որ անոր եւ Համախոհներուն
ընդունելի բան մ'ըլլայ :

Վրիգոր Տաթևացին (սմբան հատոր. եր. 630)
կըսէ . « գալն Վրիստոսի ՚ի դատաստան երկու
« ազգ է . առաջինն՝ յորժամ գայ ՚ի յօր մա-
« հու մարդկան վասն առանձին դատաստանին .
« երկրորդ . յորժամ գայ ՚ի կտարածի առու-
« ըն վասն առ Հասարակ ղ դատաստանին .
« Ըսով՝ ընդհանրական դատաստանէն առաջ՝ եւ
« իւրաքանչիւր մարդոց մահուանէն անմիջապէս
« ետքը առանձին դատաստան մ'ըլլալը կխոստու-
« վանի : Իսկ թէ մինչեւ ընդհանուր դատաստա-
« նին օրը հոգիք ո՞ւր եւ ի՞նչ վիճակի մէջ են .
« հարցմանց գրքին մէջ այլ եւ այլ կարծիք մէջ բե-
« րելով վեցերորդ այս կըրէն . « ասնն գրուն կա-
« տարեալ բարեաց հոգիան ժողովեալ ՚ի հրեշ-
« տակացն դասս , գործասէ առքեալն . հոգիս
« անդրանկաց կատարելոց : Եւ որք են կատար-
« եալք . այսինքն է որ ՚ի վեր քան զհրամայ-
« եալ օրէնսն կատարեցին զգործս . որպէս ա-
« ռաքեալքն . մարգարէքն . մարտիրոսքն . կու-
« սանքն . եւ այլք : Եւ զըսն շարսն ՚ի գեղեո .
« որք են խանհաւատք եւ շարք եւ կապալաշար .
« որք ունին զհին օրէնս եւ ոչ զնորս . այլ ՚ի
« ներքոյ մեացեալ սկզբնական մեղաց նոցա

« ՚ի հարցման ընթանան : Իսկ այդարքն եւ մե-
« ղաւորքն մեջակբ՝ որք առին զօրէնսն եւ ըստ
« օրինացն զգործեցին զբարիս , կամ սխալեցին .
« եւ հոգիք նոցա ՚ի միտմ խորանի մի չգա-
« տաստանն ընտրեսցէ զնոսա եւ որոշեսցէ :
« Եւ յիշեալ վեց տեսակ կարծեաց վրայ իր դա-
« տողութիւնն իմացընելով կըսէ . « Իսկ վեցերոր-
« զըն . . մերձ է ՚ի ճամբառութիւնն այնու .
« զի զարդարս եւ զմեղաւորս ՚ի դատաստանին
« ասնն օրոշիլ : Եւ յորք ուղիղ դատեցան վար-
« դապետք եկեղեցւոյ . . կրկին ասնն զշախ-
« ղիս ընթացից հոգեոց , այսինքն մինն ՚ի վեր
« յերկինս . եւ միւսն ՚ի ներքոյ երկնից : Այո-
« քա որ թողին զամենայն եւ զնացին զհետ
« ՚ի իստոսի , որոց խոստացաւ զհօրիւրապատի-
« կըն աստ . եւ զկեանսն յաւիտենից : Աոցա
« համաձայնին ընդհանուր ամենայն վարդա-
« պետք՝ գոյ ՚ի յերկնային խարանս անմարմնոց
« ՚ի զանազան օմեւանս լուսոյ : Իսկ հոգիք
« հաւատացելոց որք ոչ զնացին այսպէս զհետ
« նորս . այլ ընկալան ՚ի ներգործութեանցն
« սասանայի եւ ՚ի կրից աշխարհի , ոչ թողու-
« արդար իրաւունքն . Կատուծոյ ելանել յերկի-
« նըս . այլ կան եւ մնան ՚ի ներքոյ երկնից ,
« ակն ունելով Հանդերձեալ դատաստանին , որ
« զթով ողորմութեամբ դիւրապէս քաւեսցին
« եւ ողորմութեան արժանացցին , (հարցմանց՝ Գր-
« ծ . Է . 11) : Թժու թիւն կայ այս վարդապե-
տիս խօսքերուն մէջ . եւ խառն ՚ի խուսն կե-

րեւի . րայց սա միտք առնելու է որ մարդիկ
 մեռնելէն նաքը մտախնայեալ զուրկ ըլլալուն հա-
 մար անոնց հատուցումն ալ անկատար կըլլայ .
 եւ այս անկատարութիւնս իմացընելու զեղծ
 խօսքը շիտիմ ձգածու է չէ թէ միայն համեա-
 ցին . ալ եւ որիչնեք ալ սրայս նիւթոյս վրայ
 գրած են . Այսպէս որ չհասկընամք՝ ամեն տո-
 զերուն մէջ հակասութիւններ կ'դասենք .
 Արտագրեալ խօսքերէն ետքը նոյն հեղինակը
 նոյն գրաստի մէջ կրտէ . « յետ աստեացս փառք
 « երանելիացն կրկին » է . այսինքն է փառք գոր-
 « ծոց ըստ ինքեան . եւ փառք հատուցմանց .
 « Իւր ոյթմ հոգիք սրբաց անուն զփաստ գոր-
 « ծոց ըստ ինքեան . զի հանդիւն եւ ո՞րախա-
 « նան ՚ի գործս իւրեանց . եւ ՚ի յարութեանն
 « աւետու զփաստ հատուցմանց հոգեով եւ մար-
 « մնով . Այսպէս խօսքերուն նայելով կրտենք
 որ այս վարդապետիս զրուածոյն մէջը անյաս-
 տանեայց եկեղեցւոյ յաւանութիւնն որ Լու-
 սաւորի սուրբ հօր խօսքովը մէջ րեքու 1820
 ին Պաղատային ժողովը . եւ մասնաւոր կարծիք մը
 իրար իրաւունգած են . փոքր բարձր ըստ ինքեան
 ըսածը՝ որուն համար կրտէ թէ սուրբերն հի-
 մայ կընդունին յոկ հանգչիլ եւ ուրախանալ
 ըլլալուն համար փառք չկընար ըսուիլ . փոքր
 ըսելը եկեղեցւոյ աւանդութիւնէն ստրկածն է .
 առած մեկնութիւնը՝ նոյնն իր մասնաւոր կարծ-
 եացը համաձայնեցընելու համար իրեն զիւսն
 է . եւ մենք ոչս վկայութիւնս մէջ բերինք

ցուցընելու համար որ հասկմէ ակն եկեղեցւոյ
 յայտնի դէմ խօսողներն ալ եկեղեցւոյ այս
 դաւանութեանս վկայութիւն կուտան .
 Միւս վկայ մ'ալ՝ հակոբ Վաչեան կոս-
 տանդնու պօլսի պատրիարքն է , որ Վաչեան Թի-
 նոսեան մէջ (էր 21) մեկնելով սուրբ Վր-
 ըրիգոր նարեկացւոյ խօսքը . « վայ ինձ առ ելս
 « անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս . որպէս
 « դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց » (Բռն .
 Է) , կրտէ . « այսինքն , վայ ինձ ՚ի ժամ ա-
 « ւանդման հոգւոյս յեղկելի մարմնոյս . որպէս
 « թէ յանդիման ինելոց եմ ահեղ գատաւո-
 « րին , զի յայնժամ դատաստանաւ ըստ մասին
 « հոգւոյն՝ մատուցանին յուսով ամենայն ու-
 « մեք վարձք եւ պատիժք . եւ մնայ կատարեալն
 « հանդերձ մարմնով ՚ի վերջին դատապատանին .
 « Իւր հոս՝ յուսով ըսուածին գայթակղիլ պէտք
 չէ . խօսքին ամբողջ թելը ձեռք աննել ուղուի
 նէ՝ ոչ ծուռ հասկընալ կըլլայ եւ ոչ գայթակ-
 զիլ . Լատուցում մը կենալ կը խոստովանի մա-
 տնապիքը . իսկ յոկ յուսով հատուցում չըլլար .
 յոյս մը տե՛կ մէջը նէ՝ ըսել է որ մէկ ըստ մաս-
 նեայ եւ անկատար հատուցում մը կամ հա-
 տուցման սկզբնաւորութիւն մ'իղած է . րայց
 կատարեալ չէ . եւ վայելքն ու ինդութիւնն
 ստացածին համար կըլլայ . իսկ յոյսը՝ կատար-
 եալն ստանալուն վրոյս . Իւր այս կատարելու-
 թիւնս այսպէս կը հասկընամք . Սարգոյս հո-
 գին առանց մարմնոյ՝ զգալու մէկ ուրիշ տե-

տակ մ'ունի՛ որուն վրայօք մենք գաղտնիք մը
 չունինք, եւ քանի որ մարմնով եմք՝ տկար գա-
 ղտիք մը կունենամք՝ լսկ հոգեկան վիշտերնուս
 կամ ուրախութիւններնուս վրայ չափերով Օգնի
 մահուան մինչեւ ցարուծիւնը՝ լսկ հոգին է որ
 վարձք կամ պատիժ կընդունի եւ ընդունա-
 ծին վայելքը լիակատար չըլլար . որովհետեւ
 մարմնուոր զգայարանաց միջոցաւ ալ նոյնը չըզ-
 գար . բայց ասոր ալ ստացմանը՝ փառաւորեալ
 հոգին յոյս՝ եւ դատապարտեալն երկիւղ կու-
 նենայ . Այս է որ թէ՛ Յսկոր Աստուան իմաս-
 տուն պատիօքքը , եւ թէ՛ անկէց առաջ սուր-
 բըն՝ Աերսէս Անորհալի հայրապետը յուսով
 վարձք կամ հատուցումն կըսեն . վասն զի Շը
 նորհալին ալ ասոր պէս կըսէ հասարակ իրաս-
 լանքն աղօթքին քսան եւ մէկերորդ ասնը մէջ .
 « Այս ճշմարիտ Քրիստոս՝ արժանաւորեալ զհո-
 « զի իմ ուրախութեամբ տեսանել զԱյս փա-
 « ռաց՝ քոց , եւ հանգչիլ յուսով բարեաց յո-
 « թեւանս արգարոց մինչեւ յօր մեծի գալըս-
 « տեան քո » : Քրիստոսի Աստուծոյ փառաց
 լըսը տեսանելն է երանութեան ծայրը . զոր
 մինչեւ դատաստանին օրը արգարք կը տեսնէ եւ
 կուրախանայ . բայց միայն հոգով . եւ կը յու-
 սայ որ դատաստանէն ետքը նոյնը մարմնով ալ
 պիտի տեսնէ որքան արարած բնութեան հնար
 է նէ տեսնել , եւ այն ատենը ուրախութիւնը
 հատարեալ կըլլայ :

Արեւն ինդիրը լուծուած է . անայց եկե-

« տութեան եւ եկեղեցւոյ մտաց համաձայն է՝
 « որ առանց մեծ յանդգնութեան չկըրնար
 « ժխտուիլ : Անոր համար կըրնանք իրաւամբ
 « ըսել՝ որ այս կէտին վրայօք Հայաստանեայց
 « էջմիածնական եկեղեցին դեռ ըսելիք ունի ,
 (էր . 85 . 86) : Այս խօսքերը խօսողն ալ դեռ
 լըսելիք ունի . բայց մենք առաջ՝ անմիջապէս
 Հոգովայ եկեղեցւոյն հարցընեմք թէ ասոր
 մարբարանի կամ մարտական պատիժներ ըսածին
 վրայ ի՞նչ կը վարդապետէ . վասն զի թէ որ խա-
 րուիլ ունիմք նէ՛ ասոր եւ իրեններուն ամէն
 ըսածը ճշմարիտ Հոգովայ եկեղեցւոյ ըսածին
 համաձայն կարծելիս է :

Ի՞նչամբ նախ եւ յառաջ՝ Հիւրմիտեան
 Տ . Աղուարդ արք եպիսկոպոսին տեսանք Աս-
 տուծոսի անուանիւնը : Անոր մէջ սա խօսքը կը բա-
 նեմք . « իսկ թէ մեր իցէ տեղի քաւարանի ,
 « որ աղք պատժոց անդ . որչափ տեւողութիւն .
 « եւ այլն . ոչինչ զայսցանէ սահմանեն հաւատք :
 « վասն որոյ քաջ աստուածարանն Ղաւունէլ
 « այսպէս վարդապետէ . « ուղղափառ անուամբս
 « ասարան իմանան զկայս , ուր հոգիք արգարոց
 « կան ՚ի զիպահոջ մինչեւ ՚ի ինուլի հասու-
 « ցումն աստուածային օրդարութեան , եթէ
 « ՚ի լրումն ժամանակաւոր պատժոց՝ զոր թայր
 « նոցա յեա թողութեան մեղացն կըսէ , եւ
 « եթէ վասն թեթեւ եւ ներկի մեղաց՝ որ
 « չիցեն թողեալ նոցա ՚ի կենդանութեան : Աստ
 « զկայ անու ուղղափառ վարդապետութիւն .

« անոր եւս ոչ խաղոյ յառաջ . զի ո՞ր եւ ո՞ւր
 « Իցե տեղին այն , զոր արդ ասնջանաց կրկնեն
 « Տոգիբ , արամուծին եւ եթ եւ վիշաւ ընդ
 « յամեցումն երանուծեան , բանտարգելուծիւն
 « Ի խաւարչտին՝ եւ Ի մառախլապատ արեք վայ-
 « ըի . տանջանս մարմնաւոր հրոյ առ Ի բոցա-
 « կիզել եւ ծախել զմնացուած աղտոյ . դարձեալ
 « եւ ո՞րչափ եւ ո՞րսխի եւ մինչեւ ցերբ , եւ
 « ո՞ անդ դահիճ . զի զայսօցիկ լեւալ է եկե-
 « ղեցի եւ ոչինչ սահմանեալ , չկարեմք ինչ ա-
 « սել հաւատտեալ » : (Հասար . Լ . էր . 571)
 Ատրը նոյն Գուռնելի աստուածաբանին ըսելը
 կըպատմէ . թէ հոն կրակ կենալն արգելեալ-
 ները չարչարելու համար , աստուածաբաննե-
 րուն հասարակաց կարծիք է , բայց կրակ չիտ
 ըտողը հոռովմէական դաւանութենէն տարբեր
 խօսած չըլար . որովհետեւ ասիկայ սահմանած
 չէ նոյն եկեղեցին . եւ այս ըսելը՝ Գուռնելի
 ըսածին ճիշտ հետեւութիւնն է :

Այբժիէ լատին աստուածաբանը Խրիտենդեան
 ժողովոյն երկու կանոնները մէջ կը բերէ . ո-
 րոց առաջինը (հոմարումն Օ . յաղագս արքարա-
 ցօցման . կանոն . 30) կըսէ . « Թէ որ մէկն ը-
 « սէ թէ արդարացուցման շնորհիւ ապաշխարո-
 « ղին մեղքն ու յաւիտենական պատիժը այն-
 « օրէս կը թողուին՝ որ ալ ժամանակաւոր պա-
 « տիժ չմար անոր կրելու ոչ յայսմ աշխար-
 « հի եւ ոչ Ի հանդերձելումն մաքրարանին մէջ
 « երկնային արքայութիւնը մտնելէն առաջ ,

« այնպիսին նզովեալ ըլլալ » .
 Խօսքին ամբողջ իմաստը կը ծ . դրնէ՝ որ
 ասիկայ բողոքականաց դէմ է . որ Քրի-
 ստոյն արեան արդիւնքովն արդարանալը ճու-
 մեկնելով կըսէին թէ մէկ անգամ մը Ի Քր-
 իստոս հաւատացողն որ Քրիստոսի արդարու-
 թեանը հաղորդ կըլլայ , չկրնար անկէջ ետ-
 քը ոչ յաւիտենական եւ ոչ ալ ժամանակա-
 ւոր մեղքիմը պարտական գտնուիլ առաջի Աս-
 տուծոյ . եւ ասով չէ թէ միայն մաքրալանը
 բոլորովին , այլ եւ ապաշխարութեան խորհուր-
 դն ալ կուրանային : Աւստի ժողովոյն նզով-
 քը Հայաստանեայց եկեղեցոյ չդպչիք ամե-
 նեւին . որ Ի հանդերձեալ աշխարհըն մաք-
 րութեան կարօտ հոգիներ կենալը խօստովա-
 նելով Ի հարկէ անոնց յաւկացեալ տեղ մ'ալ
 կը ծանչնայ : Անոր համար հիմնական արքեպի-
 տանց վերապատուելի հեղինակը պարսպ աշխա-
 տութիւն մ'է ըրեր , ժողովոյն այս կանոնով
 բողոքականաց դէմ սահմանած նզովքն առ մեզ
 ուղղելու . որպէս թէ մենք ալ բողոքականաց
 պէս ըսած ըլլամք : Իայց ասիկայ նոյն իմաս-
 տուն հեղինակին սովորական մէկ վարպետու-
 թիւնն է . մեզի կամ էջիսմանեան եկեղեցոյ
 դէմ խօսած ատենը աշխատութիւնը զիւրացը-
 նել ուղղելով՝ լատին աստուածաբաններուն բո-
 ղոքականաց դէմ խօսածները նոյն սուրբ եկե-
 ղեցոյ խօսածներուն դէմ կուղղէ . որով ազ-
 գին պարզամիտներն ալ բողոքականութեան զի-

մելու առաջնորդածի դէս կըլլայ . որ բողոքա-
կան վարդապետութեան եւ մեր սուրբ եկե-
ղեցւո՛ վարդապետութեան մէջ եղած խտիրն
ու տարբերութիւնը՝ աստուածաբանական խնդ-
րոց ըստ բաւականին վարժ եղած շքեղանուն
համար չըկըրնալով որոշել , զո՛նէ մտքերնէն
կանցընեն , թէ ուրեմն՝ բողոքականութիւնը
հստակեանաց առաջը հերետիկոսութիւն մ'է
եղեր . անոր քարոզածը՝ մեր Հայաստանեայց
եկեղեցւոյ քարոզածին համաձայն է եղեր : Եւ
ասով վերադատուելի հեղինակն իր նպատակէն
կը վրեպի , զիրկը կարգացողները Հոռոմայ ե-
կեղեցւոյն գիրքը քաշել ուղելով բողոքակա-
նութեան գիրկը կը մղէ . եւ անոնց հոգւոյն կո-
րըստեանը՝ առաջի Մատուցոյ պարտաւոր կըլլայ :

Պէրժիէ այս կանոնս դնելէն ետքը նոյն
ժողովոյն մէկ ուրիշ կանոնն ալ կընէ . որ
սուրբ պատարագին քաւիչ ըլլալը՝ եւ հաւասա-
րապէս մեռելոց եւ կենդանեաց օգուտ ըլլա-
լը ուրացողներուն նշովը կարձակէ . (Կոմարոնն .
Ի՛ . կանոն . 3) . որ այս ալ բողոքականներուն
դէմ է : Պէրժիէ կըսէ . « քան եւ հինգերորդ
« գումարման մէջ ժողովը վարդապետներուն
« եւ քարոզիչներուն կհրամայէ որ այս կեալիս
« վրայ միայն հարց եւ ժողովոց վարդապե-
« տութիւնը սորվեցունեն . հետանոյն այն ամէն
« ինդիրներէն՝ որ լոկ հետաքրքրութիւն են , եւ
« առաւելապէս անստոյգ կամ առասպելական ե-
« րկեցած բաներէն՝ որ կըրնան անպաշտութիւ-

« նը տածել , եւ անորք շահախրութեան նը
« պատեալ : Երկօր ժողովոյն այս պատուէրը
ճշդիւ պահուած է՝ անոր խօսքերը մեր աչքին
առաջը իրրեւ իրտուիլակ համոզ վերապատուել-
եաց մէջ : Որքօքօ գաղղիացի իմաստուն աստ-
ուածաբանը՝ արեւելեան պատարագատուցող հաստ-
ման երկրորդ հատորին մէջ (եր . 107)՝ Վրիտեն-
դեան ժողովքին այս խօսքը յիշելէն ետքը կը-
սէ . « ըսյց արեւելցիներուն մէջ ասոր չպի
« յաճախ խօսուածը չկայ , որ թէ որ Վրիտեն-
« դեան ժողովոյն հայրերուն խօսքը մտիկ ընէին
« նէ՛ իրենց ժողովրդեան մէջն արգամ այս
« պիտի բաներ խօսելու չէին . Թող թէ տղէտ
« մարդոց հետ հաւատոյ վրայ խօսած ատեննին .
« որոց միայն կամովիկէ ուղղախառ հաւատորը
« սորվեցընելը բաւական էր : »

Պէրժիէ խօսքը շարունակելով կըսէ . « այս
« վճիռներէս աւելի խոհական բան չըլլար :
« Ժողովը չվճուեր թէ սրգօք մաքրարանն
« այսպէս մասնաւոր ակնդ մ'է՛՝ ուր հոգիներն
« արգիլուած կըլլան . ի՞նչ կերպով կը մաք-
« րուին . կրակով թէ ուրիշ միջոցաւ . եւ պատ-
« ժոյն սաստիկութիւնը եւ տեւողութիւնը ո՞ր-
« քան է . եւ կենդանեաց աղօթքներուն եւ բա-
« րի գործքերուն օգնութեամբը մինչեւ ո՞ր աս-
« տիճան կը թեթեւանայ , նոյնպէս սուրբ պա-
« տարագին օժանդակութեամբը , եւ այլն :
(Պէրժիէ . Բաւ իրր պատարագատուցողն . Ի՛ քան
Ինքնաբոյր) : Եւ ըսածներուն վկայ կը ըրերէ

Հօտն , յ Երան , եւ Պօսիւէ աստուածաբան-
ները : Ետնց պէս կը լսօսին Ռէրրօնէ եւ Շու-
էց . որոց աստուածաբանական մատեանները
Սիէննայի միթիթաբեանց վանքը տպուած են .
եւ առ հասարակ լատին աստուածաբանք :

Ետնց միաբան վկայութենէն եւ Գրիտեն-
դեան ժողովոյն վճիռէն քաղելով կըսեմք , թէ
ըստ հռովմէական եկեղեցւոյ՝ մաքրաբանի
վրայօք հաւատոյ մասն սեպուած կէտերն ա-
սոնք են : 1 . թէ Քաւութեան կարօտ հոգիք
մինչեւ արդարանան եւ սրբոց դասակից ըլլան
նէ՝ այնպէս վիճակի մը մէջ են որ կատարեալ
արդարոց վիճակը չէ : 2 . Եւրպ վիճակիդ մէջ
ժամանակ մ'սպասելին հարկ կըլլայ , մինչեւ
հոգիներնուն վրայ մեղքերնէն մացած թեթեւ
աղտորը մաքրուին . 3 . Եւսն սրասած միջոցին
նեղութիւն մ'ունին կրելիք , որով պիտի մաք-
րուին . որ է մարտիրոս ըսուած պատիժը : 4 .
Սուրբ պատարագը , եւ կենդանիներուն անոնց
համար ըրած աղօթքնին եւ բարի գործքերնին
անոնց օգուտ կընէ :

Եւրպ՝ ասոնց ո՞րն է Հայաստանեայց եկեղե-
ցւոյ ընդունածը : Թեթեւ մեղքօք աղտեղեալ
կամ ապաշխարութեամբ չմաքրուած հոգիներն
այնպէս աղտեղութեամբ արքայութիւն կերթան
չ'ըսեր . մէկ տեղ մ'արգելեալ կ'մնան կըսէ :
Մնացած տեղերնին երջանկութեան տեղ մ'է
չ'ըսեր . ապա թէ ոչ՝ ինչո՞ւ աճապարելու եր
անոնց համար աղօթքներ ընելով՝ ողորմութիւն-

ներ տալով՝ բարեգործութիւններ ընելով՝ սուրբ
պատարագ մատուցանել տալով՝ անոնց օր ա-
ռաջ աղատուելուն ճարը հոգալու : 2^է մի որ
ուրիշ տանջանք չըլլայ ալ նէ՝ վերջնական ան-
վերջանալի երջանկութեան հասնելու ուշ մնալ-
նին իրենց բաւական ծանր տանջանք մ'է . եւ
Քաւութեանի ըսածին նայելով , աստուծոյ կամ
մարտիրոսի մէջ ասկէց դատ տանջանք չ'լ ըսո-
ղըն ալ ընդդէմ կաթուղիկէ եկեղեցւոյ դաւա-
նութեան քսած պիտի չըլլայ : որովհետեւ եկե-
ղեցին սահմանած չէ կըսէ նոյն աստուածա-
բանը , թէ արգետօք տանջանքնին միայն երանու-
թեան ուշանալուն վրայ արտմի՞լ եւ վշտանալ-
նին է , թէ ուրիշ տանջանք ալ ունի՞ն մի :
Ետնք ամենը Հայաստանեայց եկեղեցւոյ ըն-
դունածն է : Չորրորդն ընդունիլը մարդ չկըր-
նար ուրանալ . եւ չորսին մէկէն ընդունուիլը
վերապատուելի հեղինակն ալ դիտէ : Աւստի
ասոր ալ դժուար բան մը չէ խոստովանիլը՝ թէ
« Հայաստանեայց եկեղեցւոյ այս օրուան օրս
« ընդունած մարտիրոս կաթուղիկէ վարդապե-
« տութեան ընդունած մարտիրոսն կէսն է , մէկ
« ալ մեծ կէսը դեռ պակաս է , ըսածը , պա-
րապ խօսք մ'է . այն Տէ՞ կէսը զոր Հայաստան-
եայց եկեղեցին բացատրած չէ , Հովմայ ե-
կեղեցին ալ անորոշ թողած է . եւ յատկապէս
իր քարոզիչներուն պատուիրած է որ այն Տէ՞ կե-
սն վրայ աւելի բացատրութիւն չառն . այսինքն
Հայոց եկեղեցւոյ ընդունածէն աւելի բան

իրբեւ հաւատոյ վարդապետութիւն ընդունելի
լի չքարոզեն :

Վկաանելու բան մը կայ վերապատուելիին
ըսածին մէջ, որով իմացընել կուզէ թէ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնը
փոփոխութեան տակ ինկած է. եւ առաջին ժա-
մանակները մաքրարանի վրայօք ունեցած վար-
դապետութիւնը հիմակուանէն աւելի մօտ էր
հոգովմէական եկեղեցւոյ վարդապետութեանը,
եւ թէ յատկապէս՝ այն ձեռնիւք որ հիմայ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեան
մէջ պակաս է եղեր, այն ատենն ընդունուած
էր. վասն զի այնպէս կը հասկըցուի այս օրոսան
օրս բաւերուն իմաստը : Բայց մերք առաջուց
ցուցուցած եմք որ այս օրոսան օրս Հայոց եկե-
ղեցւոյն ինչ դաւանութիւն ունենալը հասկը-
նալու համար տեղեկութիւն աւնելու տեղերը
չէ կրցած գտնել. կարծեր է որ քանի մի աս-
տուածաբան վարդապետներու ըսածն է ճիշտ
Հայոց եկեղեցւոյ վարդապետութիւնը. զոր
հոգովմէական եկեղեցւոյ նկատմամբ՝ լատին աս-
տուածաբաններուն համար չկըրնար ըսել :
Պիտեմք թէ ինչ է ակնարկութիւնը այդ խօս-
քով. շարականին մէջ տուն մը բան կարդացեր
է. « Ե՛հեղ խորհուրդք քահանային բազկատա-
րած կայր ՚ի բնին առաջի սուրբ սեղանոյն ».
« հուր շիջանի, խաւար մերժի. տրտմեալ հո-
« րիքն ուրախանան. զի թողութիւն մեղալ ի-
« նի » : Թէ որ մեր վերապատուելի հեղինա-

կը՝ հայերէն լեզուին բանասիրական զննութիւ-
նը լատինականին չափ յարգելու ըլլար նէ՝
դիւրին էր իրեն ցուցընելը որ այդ շարականը
հայերէն դրարար լեզուին եղծուած եւ աւեր-
ւած ժամանակի գործ է. ըսել է՝ յ. Կ. դարուն
մէջ՝ կամ անկէց ետքը շիտուած : Մեր շարա-
կանին ուրիշ տեղերը (արեւելք քերտիկ շարակա-
նէն զատ, որ այն ալ վերջին ժամանակներու
գործ է), տեսնուած է արդեօք այնպէս աղճա-
տախօսութիւն մը որ այս մէկ տուն շարականիս
մէջ կը տեսնուի : Ի՞նչ կը նշանակէ քահանային
անկ խորհուրդք. եւ մինչեւ հիմայ՝ ատր հեղի-
նակէն զատ՝ ո՞վ զսուրբ պատարագն քահանայի
խորհուրդք անուանած ունի. երբ ամենայն հաբք
եւ վարդապետք եւ ընդհանուր եկեղեցին նոյ-
նը խորհուրդք մարմնոյ եւ արեւն Տեառն, եւ խո-
հուրդք եկեղեցւոյ կանուանէ. եւ ի՞նչ մտքով այս
սուրբ խորհուրդք՝ քահանայի խորհուրդք կրուի :
Քահանայի՞ ձեռքով կատարուելուն համար :
Ուրբեմն ապաշխարութիւնը խառն խորհուրդք ա-
նուանելու է. որովհետեւ ատր ամբողջացու-
ցիչ մասանց մէկը՝ որ է արձակում տալը, քա-
հանային է. իսկ զղջալը եւ խոստովանելը եւ
խոստովանած մեղացը համար ապաշխարելը խոս-
տովանոյնն է. որ աշխարհական ալ կըրնայ
ըլլալ : Չեմարդարանիւն ալ խորհուրդք եպիսկոպո-
սի ըսելու կըլլայ. վասն զի այս խորհուր-
դքս ալ մատակարարողը եպիսկոպոս մ'ըլլա-
լու է :

Եւ դարձեալ ինչպէս կըլլայ որ բանաստեղծացն այն անէր խորհորտը բեմին իրայ ստաբի յեղանոյն ստաբը բաշխորտը եւ կայն : ասով չէ՛ մի որ անէր խորհորտը ըսածը նոյն իսկ քահանայն կըլլայ . որովհետեւ այս տեղ բազկատարած կայնողը քահանայն է՛ եւ չէ՛ թէ ասեղ խորհորտը :

Թողունք ուրիշ անձունիութիւնները . եւ սա ըսեմք որ կարեւոր է թէ այս շարականս ունիողներէն մէկը շինած է . վասն զի այն ատենները այսպիսի պաղ եւ անհամ շարագրութիւն ընող՝ ունիողներուն մէջ միայն շատկէկ կգտնուէր : Քամանակին եկեղեցականներն ալ զրուցուածքին մէջ հաւատոց հակառակ մտլորութիւն մը չտեսնելով , եւ անհեղեղ շարագրածոյն չնայելով՝ զիջան եկեղեցւոյ մէջ երգել տալ ուղղոյններուն համար . որովհետեւ հայկարանութեան վարժապետ չէին որ այդպէս յօրինուածոյ մը հեղինակը դատապարտեն իւրեւ հայրենի լեզուին անվարժ : Այն ատենէն մտած կըլլայ ազգիս մէջ՝ ունիողներու միջոցաւ՝ մաքրարանի մէջ կրակ կենալուն գաղափարը : Եւ որովհետեւ կրակ ըսելով ծանր նեղութիւն ալ կիմացուի այլարանօրէն , եւ այսպէս հասկընալը խիստ սովորական է , եւ կըրնայ ըսուիլ թէ՛ այն հոգւոց առժամանակ մի երջանկութենէն ետ մնալը՝ զոր ուրիշներուն վայելելը կը տեսնէին , իրենց մեծ կրակ էր : Եւ այս մտօք հասկընալու իրաւունք կուտայ խօսքին շարքը . վասն զի՝ հօւր շիջանի խաւար

մերմի , ըսելէն անմիջապէս ետքը՝ « տըրտմեալ հոգիքն ուրախանան » կըսէ . ուրեմն այն կրակ ըսածն ալ՝ նոյն հոգւոց տրտմութիւնն է : Բայց ըստ նկարագրական մտաց առնլով՝ նիւթական կրակ ըսել հասկըցուի նէ՛ ընդդէմ հաւատոց մտլորութիւն մը չէ՛ . միայն թէ հոն կրակ կենալը՝ ի հաստոց է ըսելով՝ կրակ չկայ ըսողները հերեմակիտ չսեպուին :

Նեղինակին ըսածներէն կերեւի որ Հայաստանեայց եկեղեցւոյ այս օրոսն օրս չընդունածը , որ է՛ թէ՛ իրեն ստաբին օրերուն ընդունածէն եւ թէ՛ հոովմէական դաւանութենէն տարբերած կէտը , որ ըստ իւր կարծեացը՝ մաքրարանի վարդապետութեան մէջ կէտն է , միայն մաքրաւոր եւ նիւթական պատիժը կըլլայ . եւ այս կողմէն հոովմէական եկեղեցւոյ դաւանութեան համաձայնելու համար ըսելու է եղեր թէ մաքրարան գացողները կրակով կայրին : ի հաստոց է ըսելով Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ պակասճ ցուցնելու ասկէց դատ բան չկայ պատժոց կարգը . բայց նոյն իսկ Վարիտենդեան ժողովը մաքրարանին մէջ կրակ կենալն օրոշակի վճռած չէ՛ . հոովմէական աստուածաբանները՝ հոովմէական եկեղեցւոյ այդպէս վարդապետութիւն մը ռահմանած չըլլալը յայտնի կը զրուցեն : Այսու ամենայնիւ՝ վերապատուելի հեղինակը ի հաստոց է կըսէ . որպէս թէ՛ եկեղեցւոյ չյայտնուած մէկ ճշմարտութիւն մը յատկապէս իրեն յայտնուած ըլլար . որ է բո-

դոքականներուն ըսած եւ ընդունած՝ առանձնական յայտնութիւնը. որով կը կարծեն թէ սուրբ Հոգին՝ հաւատոյ ճշմարտութիւնները իւրաքանչիւր անհատի դատաւար կը յայտնէ՝ սուրբ գիրք կարդալու միջոցաւ։ Անք վերապատուելի հեղինակին՝ ՚հասարակ է ըսածը իրեւ հաւատոյ վարդապետութիւն չեմք ընդունիր, եւ Հռովմայ եկեղեցւոյն չվճռած բանին վրայ ինքնակամ տուած վճիռք չեմք ձանձնար։ Բայց հռովմէական հայագիրք՝ վերապատուելի հեղինակը հռովմէական եկեղեցւոյ դաւանութեանը թարգման կարծելու ազատ են։

Ասով չենք ուզեր ՚ի հաւատս մոլորեալ կարծել առ զանոնք՝ որ կըսեն թէ մաքրացանը կրակի կայ. եւ այն տեղի արդելուած հոգիները կրակով կայրին. Քանի որ եկեղեցին առք վրայ որոշում եւ վճիռ տուած չէ, կողմն նէ այն տեղի բարբոքեալ հրոյ հնոցին քով սառնատուն մ'ալ թող դնեն. անով ալ հերեւակոս չեն ըլլար. Հռովմայ չվճռած բանը վրձուց ըսելով ալ հերեւակոս չեն ըլլար. միայն ճշմարտութեանն խոտորած կըլլան. այն ալ՝ իրենց ժողովրդեան նախապաշարմանը չը դպչելու համար զիջանելով. որ ունիգորներուն օրերէն մինչեւ իրենց ժամանակը՝ քաւարանին մէջ կրակի կայ ընելն այնքան շատ անգամ եւ անընդհատ լսեր են, որ յերաւի այդ ալ հաւատարի ճշմարտութեանց կարգը կը կարծեն. եւ իրենց քարոզիչ վարդապետներուն

մէջ ալ չկայ այնպէս մէկը՝ որ անոնց հասկըցընէ թէ կրակ կենալը սուրբ հարց եւ ժողովոց վճռովն ստուգուած չըլլալով՝ հաւատարկ պարտաւորութիւն ալ չկայ։ Այսան զի այս կէտին վրայ անոնց ու մեր տարբերութիւնը մեզ լրարմէ հետի բռնելու պատճառ մը կըլլայ. եւ անոնց ալ ուզածն այս է։ Ինչ անոնք կըրակի կայ գիտնան. վաս չունի. բայց անոնց կրակը երանութենէն ուշանալին է ըսենք նէ՝ զրո արդարոց վայելելը կը տեսնեն, Հռովմայ դաւանութեան դէմ ըսող հերետիկոս չկարծեն զմեզ։

ԳԼՈՒԽ Դ.

Վերջին օրման վրայ։

Հայք կը դաւանին թէ եկեղեցւոյ Խորհուրդները եօթն են. եւ ասոնց մէկն ալ վերջին օրման է. հիմնական արքեպիսկոպոսոս հեղինակն ալ այսպէս ըլլալը կը խօստովանի. (Եր. 127). Հռովմէական եկեղեցին ալ նոյնպէս կը դաւանի. ուրեմն այս կէտի վրայ ոչ հիմնական եւ ոչ առանց հիման՝ տարբերութիւն մը չկայ այս երկու եկեղեցեաց մէջ. եւ որովհետեւ վերապատուելի հեղինակը իւր գրքը այսպիսի տար-

բերութիւնը հետազօտելու եւ վերցընելու համար յօրինած էր, կըրնար այս գլուխս ամբողջ ետ ձգել. եւ թէ որ այսպիսի նիւթոց վրայ ալ գրել կուզէր նէ՝ գրքին մէկ երկրորդ հասոր մ'ալ կըրնար շինել Յիսուսի կամ արարողին արքեպիսկոպոսի մակագրով: Բայց ինչպէս որ բոլոր գրածներէն շատ աղէկ կիմացուի, ինքն ուղած է իրեն կողման ռամիկներուն եւ պարզամտներուն ըսել տալ թէ հայերը այս սրբան շատ մոլորութիւն ունին եղեր որ այսքան հաստ զիրք մը լեցուեր է. անոր համար զիրքն ասոնցմով մեծցուցեր է:

Ար խոստովանիմք որ այս խորհրդոյ զանցառութիւնն էփ աղէկ պահասութիւն մ'է. եւ փափաքելի էր թէ այս անպատեհ զանցառութիւնը վերնար. զոր եւ համարէն ազգը կուզէ. եւ իր կամքը յայտնած է 1820 Թն ազգային ժողովոյն միջոցաւը. ուր կըսէ. «խորհուրդք սուրբ եկեղեցոյ եօթն են. յորոց մինն է վերջին օծումն. զոր պարտ է մատակարարել «Ծանր հիւանդաց օծմամբ իւզոյ ձիթոյ՝ օրհնեցելոյ ՚ի քահանայէ» (հրատէր սիրոյ. եր. 30). որ սուրբ Յովհան օձնեցի իմաստասէր հայրապետէն եւ սուրբ Յակոբ առաքեալէն վըկոյութիւններ ալ կանոնու: Բուն սկզբունքը ընդունուած է ուրեմն. բանը գործադրութեան կը մնայ:

Այս գործադրութիւնը հին ժամանակը մեր մէջ գտնուիլն անուրանալի է. մեծին Արքեպի-

սի վարուց պատմութեանը մէջ կը կարդամք որ սուրբ հայրապետը իւր մահը մօտ իմանալով եկեղեցին իջաւ, եւ այն տեղ ժողովուածներուն իր հրատարականը տալէն եւ խրատելէն եւ անոնց աղօթքը հայցելէն ետքը քահանայապետական աթոռը նստաւ. եւ սկսաւ երգել « օձեր, իւզով զգլուխ ՚ի քահանայ սուրբ սիրոյ զէս »: (Սաղմ. 141. Սոփեւր հայրապետ հր. 9. եր. 108). Սաղմոսին այս տունս երգելն անխորհուրդ չէր կրնար ըլլալ. նոր կատարուած խորհրդական արարողութեան մը ակնարկութիւն էր հարկաւ. եւ ի՞նչ կրնար ըլլալ այս. եթէ ո՛չ՝ օձեր իւզով զգլուխ ՚ի ըսելով վերջին օծման ընդունելը. իսկ քահանայ սուրբ անպատեհ արքեպիսկոպոսի ըսելով տէրունական սուրբ հաղորդութեան խորհուրդն իբրեւ վերջին թոշակ անուրըցուցընել: Սրբոյն Սահակայ Պարթեւին ալ մահուան մերձեանալու ժամանակը վերջին օծումն ընդունած ըլլալը համառօտ խօսքով կը ծանուցանէ անոր աշակերտը Արքեպիսկոպոսի. « Ի կատարել ամենան նաւասարդի, որպէս եւ զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ՚ի պաշտաման անուր հանող իւզոյն, հանդերձ աստուածահանոյ աղօթեալ, ծերունւոյն ՚ի Բրիստոս աւանդեալ »: (Երեմ. 25): Աղօթքով անուշահոտ իւզոյն պաշտօնը մերձ ՚ի մահ անձի մը քով վերջին օծումն զատ բան չհասկըցուիր: Եւ ասոնցմէ կը հասկընամք որ հին ժամանակը հայաստանեայց եկեղեցոյ

մէջ վերջին օճաս խորհուրդը վերջին թոշակին հաս մէկ տեղ հիւանդներուն կմատակարարուէր :

Եւ մատակարարութեան երկու կերպ կայ Մաշտոցներուն մէջը . մէկը է Ա՛ննետիկ տպուած մաշտոցինը . որուն մէջ լատիններուն լեբանիս ըսած աղօթքին ձեւով աղօթք մը կենալը կը ցուցնէ որ ետքի դարերը եւ գուցէ թովմա Մեծոբեցիին ժամանակը՝ որ ունիգորներուն ժամանակակից էր՝ լատիններէնէն թարգմանուած ըլլայ : Միւսն աւելի հին է . եւ թէ շարագրութիւնը թէ արարողութիւնը՝ մեր նախնի հարց գործն ըլլալ կը ցուցնեն : Սուրբին Յովհան Խմաստասէրը որ վերը յիշեցինք՝ խորհրդոյս արգէն իր ժամանակը ՚ի գործագրութեան ըլլալն ենթադրելով՝ մատակարարութիւնըն օրինակոր կերպով ընելուն խրատներ կուտայ : Քահանայները Արուստղէմէն օրհնած իւղ ըրելի կուտան եղեր Խաչի յէն անունով . եւ անով՝ կօծեն եղեր չէ՛ թէ միայն մկրտեալները եւ մկրտուելու պատրաստուած երասայները , այլեւ հիւանդներն ալ . որ է վերջին օճումը (Մատենադարանի Յովհ . Խմաստ . էր . 7 . 8) : Ատոր վրայ սուրբ հայրապետը իր ժողովքին մէջ հետեւեալ կանոնը կը դնէ . որ է Ս՛ . « արժան է զհիւանդացն զձէթ՝ քահանային օրհնել ըստ իւրում աղօթիցն . եւ ըստ բաւալ , կանութեան պահանջելոյ ժամուն պիտոյից » *

* Սուրբ հայրապետիս այս խօսքը՝ թէ վերջին

(անոք էր . 26) : Բայց սուրբ հայրապետիս ժամանակէն իբր երկու հարիւր յիսուն տարի ետքը խախտուած կը գտնեմք այս գործադրութիւնը . որուն համար սուրբ Պ . Իգոր Արեւիկայեցին հայրը մեծն Խոսրով Ա՛նձաւացեաց եպիսկոպոսը իր անհաւանութիւնը կը ցուցնէ սյս խօսքովս . « Իւղ՝ օրինակ շուրջն սրբոյ տուաւ , ,, որ աներեւութարար զներքին մարդն մաքրէ . ,, եւ յայտնապէս արտաքին մարմնոյն առողջութիւն պարզուէ որք հաւատով յուսան : Բայց ,, եւ զայն տեսանել պարտ է , զի եւ զիւղն ,, աղօթքն զօրակոր առնէ եւ զեղ թժշկութեան ,, կատարէ : Ա՛սան որոյ թէ երկոբին լինիցին՝ ,, բարի է , եւ թէ վասն շուրջնեան կամ պարծոտի ,, իրէն օշոտիւն իւրոյն խախտի , աղօթիցն լինել ,, պարտ է առանց ամենայն պատճառի » (Մեկն . ժամկարք . էր . 172 . 173 . րար . Աստ . 1842) : Չորսուրեան համար խախտուած ըսելը՝ խախտմանը չհաւանած ըլլալուն յոյսնի նշան է : Ա՛րեւի թէ խախտումը բաւական ժամանակ առաջ եղած էր՝ եւ գործադրութիւնը մոռցուած էր , զոր այն ատենը դարձեալ սկսելու ըլլալին նէ՛ կը կասկածէին . գուցէ պարզամիտ մար-

օճման իւղը քահանայն օրհնելու է , սրբոյն Վըրթանիսի հայոց հայրապետին խնդրովը սրբոյն Մահարայ երուսաղեմացոյ խրկած կանոնական գրոյն Գ յօդուածէն առած է . զոր է . Միբայել Չամչեայոյ պատճառեան մէջ կը գրէ . (Հայտ . տ . էր . 423) :

զիկ եկեղեցւոյ մէջ նոր բան մտած կարծելով
 գայթակղին եւ խռովութիւն յարուցանեն :
 Մէկ կողմէն ալ՝ հին ատենէ 'ի վեր խափա-
 նուած գործողութեան մը նորոգումը պարզ եւ
 պիտկոպոսի մը բան չէր . այլ կաթողիկոս մը
 եպիսկոպոսաց ժողովքով միայն կըրնար ընել :
 Ենոր համար մեծն խորով երկուքը մէկէն ,
 այսինքն օձու մն ու աղօթքը մէկ տեղ ըլլալը
 աւելի աղէկ ցուցնելէն ետքը դու թէ ահամայ
 կամօք կը զիջանի գոնէ աղօթքը չի խափանե-
 լու . եւ ասոր ալ պատճառ կը ցուցնէ այն՝
 որ իւրը գօրաւոր ընողն ալ աղօթքն է :

Եսկէց երկու դար ետքը կաթողիկէ թըղ-
 թոց մեկնիչ Սարգիս շնորհալի վարդապետն ալ
 նոյն ընթացքը կը բըռնէ : Ասի՝ վերջին օձ-
 ման գոյութիւնը կը ցուցընէ յայտնի , ըսե-
 լով . « փոխանակ միոյ իւրոյն որ ըստ օրինացն
 « կաղմէին . . . բազում իւրս 'ի ձեռն առաքե-
 « լոցն շնորհեցաւ եկեղեցւոյ : . . . Աւ այլ իւր
 « օձութեան երախայիցն՝ ըստ օրհնութեան քա-
 « հանայիցն . եւ այլ՝ հիւանդացն » (Տէն . կա-
 թու . եր . 166) : Ետքը՝ իր ժամանակը օձու-
 մը վերցած . եւ միայն աղօթքը մնացածի պէս
 կը ցուցընէ , եւ որքան հնար է նէ արդարացը-
 նելու պէս բան մ'ալ կը խօսի , որովհետեւ ա-
 սիկայ ալ որ վանքի մը միաբան վարդապետ էր՝
 չէր կըրնար խափանեալ մէկ բան մը վերստին
 գործադրելի ընել : Արտ . « յայտ է յայս-
 « մանէ՝ որպէս եսս վարկանիմ , եթէ ոչ իւրն

« ինչ տայր զառողջութիւն հիւանդին . այլ ա-
 « նունն Տեառն : » (Լուր) :

Խափանեալ մնաց այս խորհրդոյս մատակա-
 րարութիւնը՝ ուրիշօրն երուն ժամանակն ալ .
 որ է Գրիգոր տաթեւացւոյ՝ ժամանակը . եւ
 այլ վարդապետս խորհրդոյս վրայ խօսելով ա-
 ռաջ ուրիշ ազգաց մատակարարութեան կերպը
 կը պատմէ . եւ ետքը մերինը պատմել ուղե-
 լով՝ օձման ժամանակը զրուցուելու խօսքը մէջ
 կը բերէ . որ է մկրտութենէն ետքը զրոշմին
 ժամանակը տրուած օձման խօսքը . եւ կը յա-
 ւելու ըսել , թէ « գործ այս խորհրդոյս է ,
 « որ զմնացեալ ներելի մեղքն թողու » : (Հար-
 ճանց . թ . 33 . եր . 604) : Եսով կիմացընէ
 որ մկրտութեան ժամանակի օձումը չէ՛ վերջին
 օձումն ըսուածը . վասն զի նորածին երախայն
 որ նոր մկրտուած կըլլայ , անձնական մեղք
 մ'ունենալու բաւականութիւն չունի . ունե-
 նայ ալ նէ՛ (ենթացելով որ չափահաս է մը-
 կրտուողը) , սկզբնական մեղաց հետ ամէն մեղ-
 քըն ալ կը ընջուի : Ետք համար պարապ խօսք
 է այն՝ որ վերջին օձումը մենք ինչու չունիմք
 հարցընողներուն պատասխան կուտայ . « ա-
 « սեմք թէ ունիմք զխորհուրդ օձմանն , այլ
 « ծածկապէս . որպէս 'ի մկրտութիւնն , որպէս
 « ասացաք 'ի վերոյ թէ զգրոշմն եւ զառաջին
 « օձումն եւ զվերջին օձումն կատարեմք 'ի մը-
 « կրտակալսն » (Լուր) : Եայց այս պատասխանոյս
 ինքն ալ չի հաւնելով անմիջապէս կը յարէ .

« այլ եւ զայս օճումնս ունիմք 'ի յոտնալուայն :
 « Այլ եւ 'ի մկրտութեան Տեառն յաւուր
 « յայտնութեան . Այլ եւ զայս օճումնս ունիմք
 « 'ի ննջեցեալ քահանայս , (անք) , Ասոնց մէկն
 « ալ վերջնն օճումն չէ , որ հիւանդի վրայ պիտի
 « կատարուի . վասն զի ոտնալուային եւ յայտ-
 « նութեան աւուր օճում ըսածը՝ զոր չգիտեմք
 « Ինչ ըլլալը , հիւանդ չեղողի վրայ կ'ըլլայ յայտ-
 « նապէս . Իսկ վախճանեալ քահանային օճումը՝
 « Կէկեցեալ խորհրդոյ անընդունակ մեռեալ .
 « մարմնոյ մը վրայ ըլլալով խորհուրդ ալ չկըր-
 « նար ըսուիլ . լոկ արարողութիւն է :

Այս բաներս տեսնելով Յակոբ Ալաիան
 պատրիարքը՝ Եօնն խորհրդոց գրքին մէջ այսպէս կը
 խօսի . « ասիցես , թէ եւ օճման խորհուրդ ի-
 « ցէ , այլ ո՛չ վերջին . զի Տաթեւացին գոյն
 « յետ մահուան դնէ 'ի ննջեցեալ քահանայս
 « որ ո՛չ եւս է հիւանդ , այլ մեռեալ . եւ կամ
 « օճումն աւադ հինգշաբաթին յառողջն մարմ-
 « նով : Ասելի է թէ Տաթեւացին կամելով ըս-
 « տուգել զայս գոյ խորհուրդ , որովհետեւ
 « խափանեալ էր առ ժամանակ մի , որպիսի կեր-
 « պիւ եւ իցէ՝ հաստատէր զայս գոյ խորհուրդ :
 « Իսկ որ ղժամանակն եւ զօճանն լիսն փոփո-
 « խէ՝ անհիմն է . զի այս ո՛չ քահանայից միայն
 « , տալի է՝ այլ եւ ամենայն չափահասելոց . ո՛չ
 « , եւս խելագարաց եւ նաւարկելոց եւ 'ի մարտ
 « , մտողաց , եւ կամ գլխատելոց , այլ եւ ո՛չ հա-
 « րկեւորսպէս միայն տկարացելոց , որպէս ասնանի

« յաւադ հինգշաբաթին , թէ եւ յայնմիկ աւուր
 « սրբագործի . այլ մարմնով տկարացելոց 'ի կե-
 « նաց յուսահատեցելոց , առ 'ի բժշկութիւն եւ
 « 'ի հոգեկան տկարութեանց , (Յակոբն Վերջնն
 « օճման . պրակ . Ա) :

Աւնիգորները հայոց մէկ մոլորութիւն մը
 սեպած էին խորհրդոյ գործադրութեանը խա-
 « փանտում . որ թէ եւ ընդդէմ հաւատոյ մոլո-
 « րութիւն մը չէր , այսու ամենայնիւ դանց ըլ-
 « լաւելուն վրայօք մէկ զօրաւոր փաստ մը չկար .
 « անոր համար Տաթեւացիին աշակերտը թո՛ղմա
 « Մեծոքեցին՝ իր վարժապետին ըսածներուն տը-
 « կարութիւնը ճանաչելով , եւ ուզելով որ ազ-
 « քը այս բանիս համար ունիգորներուն լեզուին
 « տակը չմնայ , յատուկ յորդորակ մը գրեց առ
 « քահանայս , որ չճուլանան , վերջին օճման
 « խորհուրդը հիւանդներուն մատակարարեն . եւ
 « մաշտոցն ալ այսինքն քործողութեան հրահանգն
 « ու կերպն ալ հրատարակեց լատիններէն ասնե-
 « լով՝ ինչպէս կերբելի . եւ այս հրահանգս ե-
 « դած պիտի ըլլայ Վէնէտիկի մաշտոցին մէջ
 « տպուածը* .

* Մեծոքեցւոյն այս գործը Է . Միքայէլի Հայոց
 պատմութեան մէջ յիշուած չէ . բայց Է . Սուրբաւ Սո-
 մալեան աբբայն կը յիշէ պատիւը պատմութեան հայ գրող-
 րութեան մակագրեալ խոսքերէն գրքին յ. 2 (եր . 145) .
 եւ կըսէ թէ յոյն եւ լատին եկեղեցեաց ծխոց
 գրքերէն առաւ . որով սուս մը հաւատարմեալ կու .

Տասրուան գիտցած բանն է՝ (Կոստանդնուպոլսի Պողոս Ա. պատրիարքին խորհրդոյս գործադրութիւնը վերանորոգելու համար քրածջանքը, որ ազգին մէջ մեծ խռովութիւն հասնեց. եւ քիչ Թայ յիշեալ պատրիարքը իր նորոգել ուղած կարգադրութիւնն իր կեանքովը պիտի տուէր: Այս որ տեսնը, վերջին օժման խորհուրդը ըլլալը քարոզելով՝ եւ քրիստոնէականաց միջոցաւ մանր տղոց մտքին մէջ աղպաւորելով գործածութեան նորոգութիւնը ժամանակէն կը յուսամք, երբ այսպիսի հրահանգներով վարժուած տղայք մեծնան, խօսքի տէր ըլլան. եւ խափանութիւն վերստին հաստատեն:

Իսոյ արդեօք հիւանդներու վերջին օժման խորհուրդը մատակարարելը խափանեալ ըլլալէն՝ հայոց եւ հռոմէականաց դաւանութեանց մէջ հիմնական տարբերութիւն մը կը ծագի: Զծագելըն իմացուցինք գլխոյս սկիզբը, այս տեղը ըսածնիս հաստատել պէտք է. եւ ասիկայ հաստատելու համար հռոմէականաց վերջին տիեզերական ժողովքին ըսածը տեսնենք. որ է՝ Կրիստոնդեան ժողովը, Ասոր տան եւ չորսերորդ գումարման մէջ վերջին օժման համար գրուած կանոններուն երկրորդն է այս. « թէ որ մէկն ըսէ, որ հիւանդներուն տրուած սուրբ օժուովը ըր-

դէ. որպէս թէ 4 ուր մէջ առաջ չլար: Ասիկայ յայտնի չլսեր. բայց կէս սըլ եւ Թովմայի Մեծոբէ՛ցուոյ ծանօթ ըր. 1754 ալ չլսեր:

նորհրէք չբերեր. մեղաց թողութիւն չտար եւ հիւանդները չթեթեւցըներ, եւ հիմայ խափանել եւ դադրեցընել պէտք է, որպէս թէ միայն աստնօք հիւանդաց բժշկութիւն տալու չնորհրէք մ'եղած ըլլար, նզովեալ ըլլայ: Ինքնք պատմականերովնիս տեսանք որ վերջին օժման խորհրդոյն վրայօք մեր ազգին մէջ այդպէս բաներ ըսող չկայ. միայն՝ սուրբ իւղոյն ունեցած զօրութիւնը՝ զոր չէն ուրանար, քահանայ սկան աղօթքէն կաննէ կըսեն, որ այս ալ չուրացուիր. ապա թէ ոչ՝ վրան քահանայական օրհնութիւն չկարգացուած ո՛ր եւ իցէ իւզ՝ այն զօրութիւնը կուենայ ըսելու կըլլայ. որ է անտեղի: Աւստի՝ ժողովոյն ցուցուցած մտուրական պատճառներէն մէկն ալ չունենալով, միայն վան ծառայեան կամ այլ պատճառի իրէ՛ր չլսէս ըսաւ մեծն խոսքով, խորհրդոյս կատարումն առաջին անգամ խափանողը թէպէտ յանդիմանութեան եւ եկեղեցական պատժոց սրտանի եղած կըրնայ ըլլալ, այլ ժողովոյն նշովքին տակը չկըրնար սեպուիլ իբրեւ հերետիկոս. ըսել է՝ որ այս զանցառութիւնս դաւաճութեան տարբերութիւն չկացուցաներ:

Ի գործադրութեան՝ ստոր այսպէս ըլլալը կը հաստատէ Պաղտատեան Գեորգ վարդապետը, որուն ուղղափառութեանը վստահացած է Հռովմ, եւ հրաման տուած է հայոց մէջ կրթալու քարոզութիւն ընելու: Ասիկայ 1754 զեկտ, 17 թուականով առ դադատացիս գրած

նամակին մէջ՝ որ հռովմէական հայոց սահման
 եւ չափ կը դնէ թէ լուսաւորչական հայոց հետ
 ինչպէս վարուելու են 'ի հոգեւորս, կըսէ .
 " ոչ որ 'ի ձէնջ խղճացէ վասն ոչ կարելոյն
 " ընդունիլ զվերջին օծումն առ 'ի չգոյէ ուղ-
 " զափառ քսհանայի . զի այս խորհուրդ ոչ է
 " խորհուրդ հարկաւոր հարկաւորութեամբ մի-
 " ջոցի, այլ խորհուրդ պատշաճաւոր . զի եթէ
 " ընդունիցիք՝ բարեոք է եւ օգտակար յոյժ .
 " իսկ եթէ ոչ՝ անփնաս է առ հոգւոց փրկու-
 " թիւն . որպէս ուսուցանեն աստուածաբանք .
 " Խորհրդոյս կատարեալ գործադրութեան վասն-
 " զը անանուելէն ետքը՝ բոլորովին խափանելէն
 " աղէկ է արդեօք կիսով չափ միայն կատարուիլ ,
 " գոնէ ըստ դիտաւորութեան կատարողին , երբ
 " վերջին օծման ճշմարիտ խորհուրդ ըլլալն ա-
 " մէն Հայ կրնդունին :

Այս ըսածիս՝ թէ հայք խորհուրդը կընդու-
 նին , վերապատուելի հեղինակն ալ կը խոստ-
 վանի . վասն զի կըսէ " Հայաստանեայց էջմի-
 " անական եկեղեցին կաթողիկէ հռովմէական
 " վարդապետութեան համեմատ իր քրիստոնէ-
 " ականներուն մէջ ամէն ատեն եւ ամէն տեղ
 " կընդունի թէ վերջին օծումը եօթն ճշմարիտ
 " խորհուրդներէն մէկն է . եւ ընդհանրապէս
 " կը գաւանի թէ մէկալ խորհուրդներուն պէս
 " աս ալ 'ի Քրիստոսէ հետեւէ մերժեալն աւանդ-
 " ուած է " (Եր . 127) . Ուրեմն այս կողմէն
 " ալ հայոց 'ի դաւանութեան տարբերութիւնը

կամ մուրրու թիւնը ցարկին մէջէն ընջեմք . վա-
 սըն զի գործադրութեան խափանումը՝ բանի որ
 հետը մուլար սկզբունք մը չպարունակեր , ինչ-
 պէս են Պրիստոնդեան ժողովոյն վերոգրեալ
 կանոնին մէջ յիշածները , որքան մեղադրելի
 ըլլայ ալ նէ՝ մուրրութիւն եւ հերետիկոսու-
 թիւն չկրնար սեպուիլ :

Մանաւանդ որ՝ ամէն եւ իւրաքանչիւր
 քրիստոնէից՝ 'ի պարտաւորութենէ մըջի հարկ չը-
 կայ այս խորհուրդս ընդունելու , եւ նոյն իսկ
 ասիկայ մատակարարելն ու ընդունիլը սովոր-
 ութիւն եղած ազգաց մէջ անանկ դէպքեր կը
 պատահին՝ որ հիւանդն առանց վերջին օծման
 կը մնոյի . եւ մարդ չըսեր թէ այս խորհուր-
 դըս չընդունած վախճանելուն համար հոգւոյն
 փրկութիւնը կասկածելի է : Մկրտութեան խոր-
 հուրդն անանօրինելի ըլլալը Տէրն մեր ինքնին
 կը սորվեցընէ . " եթէ ոչ որ ծնցի 'ի ջրոյ եւ
 " 'ի հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւնն
 " Աստուծոյ " (Յով . 3) . ապաշխարութեան
 համար ալ դարձեալ Տէրն մեր կըսէ . " եթէ
 " ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կո-
 " րընչիցիք " : Սուրբ հաղորդութեան համար
 կըսէ . " եթէ ոչ կերթիք զմարմին որդւոյ մար-
 " դոյ եւ արքջիք զարիւն նորա՝ ոչ ոնեիչ կեա-
 " նըս յանձինս " : Մեղին օծման խորհրդոյն
 համար այդպէս հարկ մը չկայ : Աւտի այս
 խորհրդոյս գործադրութեան խափանումը այն-
 քան ծանր չէ երեցեր զանց ընողներուն :

Թեպէտ հոս կըրնայինք խնդրոյս վրայ ըսելիքնիս լմընցընել . բայց հիմաւան որքեքոնիւնայ մէկ ուրիշ տեղն ուրիշ մէկ ինչիր մը լացուած ըլլալով՝ որ մեր խօսքերուն հետ յարաբերութիւն ունի, ամէնը մէկ գլխոյ մէջ ամփոփելը պատշաճ տեսանք :

Ապաշխարութեան վրայ խօսելով՝ 1858 ին տպուած քրիստոնէականն սա հարցումը եւ պատասխանը կառնու եւ կը քննէ :

« 1. Հիւանդին ամէն մեղքն ալ այս (վերջին օժման) խորհրդովս չե՞ն մաքրուիր » :

« Գ. Չէ . ծանր մեղքերը մաքրելու համար ապաշխարութեան խորհուրդէն զատ հընարք չկայ » : 1847 ին Արստանդուպոլիս տպուած քրիստոնէականն ալ կրկին եւ կրկին կըսէ եղեր թէ « վերջին օժումը մահու չափ մեղքէ չազատեր » :

Հիմաւան որքեքոնիւնայ հեղինակը կըսէ . « ասոր հակառակ՝ ամէն աստուածաբաններուն, եւ ՚ի մասնաւորի՝ Արիստենդեան քրիստոնէականին (Տան . Բ . ԷԼ . 6 . 14 .) վարդապետութիւնն է՝ թէ վերջին օժման խորհուրդն ըստ ինքեան թեթեւ մեղքերը, բայց անուղղակի եւ ըստ պատահման նա եւ ծանր եւ մահու չափ մեղքերը ջնջելու համար ՚ի Վըրիստոսէ Տեառնէ մերմէ սահմանուած է . եւ շատ անգամ կըլլայ՝ որ այս խորհրդով հոգիներ կիրկուին . որոնք առանց անոր պիտոր կորսուէին » (Եր . 321 . 322) : Ատոր ըսե-

լիք չունիմ . բայց Արիստենդեան ժողովոյն քրիստոնէականն այդ վարդապետութեամբ այն քրիստոնէականներուն հակառակ բան ըսած չըլլար . մանաւանդ թէ կերպով մ'անոնց ըսածը կը հաստատէ :

Սաան զի թէ որ վերջին օժումը մահացու մեղքը չը ջնջեր, եւ ապաշխարութեան խորհուրդն է անիկայ ջնջողն ըսելը մոլորութիւն է նէ՛ ճշմարտութիւն ըլլալու է անոր հակառակըն ըսելը, թէ վերջին օժման ատենն ապաշխարութեան խորհուրդ պէտք չէ . վասն զի այս խորհուրդս թէ մանր եւ թէ խոշոր, թէ ներքին եւ թէ մահացու . ամէնը մէկէն կը ջնջէ . եւ որովհետեւ մարդոց փրկութեան արգելք միայն մեղքն է . կը հետեւի՝ եւ ՚ի հասարակ ըլլայ ըսելը, թէ վերջին օժումն ընդունող ամէն եւ իւրաքանչիւր մարդ հարկաւ պիտի փրկուի, այս դրութեանս հետ չմիաբանիր Վըրիստենդեան քրիստոնէականին վարդապետութիւնը՝ որ այս փրկութիւնս ոմանց միայն կը մասնաւորէ՝ եւ ոչ ամենեցուն, վերոյգրեալ խօսքին վերջին հատուածովն ըսելով, թէ շատ անգամ կըլլայ որ առանց այս խորհրդոյս կորսուելու հոգիք ասով կը փրկուին : Եւ անգամ կըլլայ ըսելը՝ ասին անգամ չըլլայ ըսել է : Արնայ վերապատուելի հեղինակը մեզի հասկըցընել թէ ի՞նչ պարագայի մէջ կըլլայ կամ չըլլար այն բարեբաղդ կամ դժբաղդ մեղուցելոց կենաց վերջին թելին փրկութեան հատիլը :

« ք Կրօնք թէ նրա խոստովանութեամբ եւ զղջմամբ խորհուրդս ընդունելու արժանի գըտնուի նէ փրկութեան կը հասնի . քրիստոնէականներուն ըսածնալ ուրիշ մտքով չհասկըցուիր : Աւ դարձեալ՝ կըրնայ նոյն վերապատուելի հեղինակը՝ վերջին օժման խորհրդոյն համար քսուածը ապաշխարութեան խորհրդոյն համար ըսել՝ թէ շառ անգամ կըլլայ որ առանց ապաշխարութեան ՚ի կորուստ երթալու հոգիք ապաշխարութեամբ կը փրկուին : Ար հայցուի այն ատենը թէ ինչո՞ւ համար անոն անգամ չէ . եւ առանց ապաշխարութեան խորհրդոյն մարդս մեղքէ ազատող եւ փրկութեան հասցընող ի՞նչ խորհուրդ կայ : Մկրտութիւնը արտաքայ կարգի շնորհ մ'է , որով մարդս (ստուծոյ որդեգիր ըլլալով սկզբնական եւ ներգործական մեղքերէն միանգամայն կազատի . յայց մկրտութենէն ետքը գործուած մեղքերուն քաւութեանը համար այս խորհուրդս օգուտ չունի . դարձեալ ապաշխարութեան խորհրդոյն կը կարօտի :

Ի այց այս գաղափարս վերապատուելի հեղինակին մէկ ուրիշ գաղափարին հետ ալ շատ չը համաձայնիր . զոր վերջին օժումը մատակարարող քրիստոնէից հաստատուն գործադրութենէն առած է : Ար վերջին օժումը մեր մէջէն վերնալուն հաւանական պատճառն ումանց ըսելուն պատահեր է . « շատ ժամանակէ ՚ի վեր տեսնուեցաւ մեք աղղի ժողովրդոց մէջ այս կերպ « պաղութիւն մը , որ այն օժումը իբրեւ հար-

« կաւոր միջոց փրկութեան համարելով սկսան « ապաշխարութիւնն ու հարողութիւնը ան- « հարկաւոր խորհուրդներ համարել . (Ամենայն « սարգիս . եր . 143 . Ի վերջի վարդապետարանն . եր . 105 . 106) Խորհրդոյս գործադրութեան խա- « փանմանը այս պատճառս կը ցուցընէ Պրիգոր « Տաթեւացին ալ : « Աւ թէ ընդէր ոչ յայտ- « նապէս (տուեալ ինի խորհուրդս) որպէս ալ « ազգաց , ասեմք թէ ՚ի հնարից չարին բար- « յին մարդիկը զխոստովանութիւնն որ հար- « կաւոր էր , յայն ապաւինեալ թէ ՚ի վերջին « օրն օժանիմք ձիթով լալասամիտաւ եւ արգա- « րանամք : . . Այան որոյ հայրապետք եկե- « ղեց , ոյ լաւ համարեցան զվայելչականն բառ- « նալ որ ոչ ՚ի լինիլն յաւելուած աննէ եւ « ոչ ՚ի բանիլն ապականէ զկարգ եկեղեցոյ , « որ է վերջին օժումն . քան թէ բանալ ըզ- « խոստովանութիւնն որ հարկաւոր է . առանց « որոյ ոչ գոյ ներգործական մեղացն թողու- « թիւն դատենք . (Հարցմանց . թ . 33 . եր . 604) * .

* Լատիններուն մէջ ալ խորհրդոյս գործադրու- « ցութիւնը խափանման վիճակի մօտեցաւ երբեմն . երբ « սամիկին միտքը թիւր կարծիք մը մտաւ որ խոր- « հուրդս ընդունողը թէ որ առողջանայ նէ՛ միշտ « պահք կամ նաւակատիք պիտի մնայ . ոտքի աման « չհագնելով բոպիկ պիտի քալէ . ամբ մնական կեան- « քէն պիտի հրաժարի . Էւ այլն : 1287 թուին Սիդ- « դիայի Էստէրը քսղաբն եղած ժողով մը քահա-

Եյս պատճառիս՝ որ գուցէ խորհրդոյս գործադրութեան խափանմանը բուն եւ ճշմարիտ պատճառն է . չհաւնիր իմաստուն հեղինակը . եւ կըսէ . « ի՞նչ հիւանդ կըրնար զանց անեւ . լո՞վ խոստովանութեան խորհուրդը՝ իր բա՛լոր « վատահոգութիւնը վերջին օժման խորհրդոյն « պահել . թէ որ քահանան՝ ինչպէս որ ըստ « կարգի պէտքէ ըլլալ , վերջինը չիտար , մին « չեւ որ առջինը չընդունուիր , (հիմա՛կ . Գարբեր . էր . 150) : Ուրեմն գործնականապէս ընդունուած է որ « ծանր մեղքերու համար ա « պաշխարութեան խորհուրդէն զատ հնարք « չկայ . Եւ թէ եւ ամէն տեսակ մեղքեր ջընջելու սահմանուած է վերջին օժուժը , բայց ինքնին թեթեւ եւ ներքին մեղքերը կը ջըջէ . իսկ ծանրերը ջնջելը կըլլայ ըստ պատահման . որով միշտ ճշմարիտ կը մնայ ըսելը թէ ամէն տեսակ մեղք՝ առանց բացառութեան ջնջելու համար՝ ապաշխարութենէն զատ խորհուրդ չըկայ . Եւ վերջին օժման՝ մահացու մեղքերը ջնջելու դորութիւն ունենալը աւստրիական ականջը հասած ըլլալով , եւ անուղղակի եւ ըստ պատահման ինչ ըսել ըլլալը չհասկընալով՝ շատ դիւրին է ապաշխարութեան խորհուրդը մէկդի դրած եւ յոյսերնին վերջին օժման վը-

նայներուն յատուկ պատուէր կուտայ որ ուսմիկներուն մտքէն այդպիսի ծուռ կարծիքը վերջընելու աշխատին : (Յիւսի պարս . էիւ . ՁԼ . 42) .

րայ հաստատած ըլլալնին . զոր հոգեւոր հոգիին ներէն ոմնա՛ք տեսնելով՝ քահանաներն ու ժողովուրդը այս բանիս վըրայ կըթելէն դիւրին տեսած են ձախողակի խորհրդով՝ վերջին օժուժը վերջնելը , հոգւոյ փրկութիւնն ապահովընելու համար . թէ եւ ասոր աւելի դիւրին ծամբան կ'ը . որ էր յատուկ հրահանգ տալով քահանայից խօսիւ պատուիրելը որ խոստովանութիւն եւ հաղորդութիւն չընդունած մարդու մը այս խորհուրդու չտրուի : Եւ այս գործածութիւնս վերապատուելի հեղինակին միւս գաղափրին ա՛յստար է ըսինք . վասն զի՝ թէ որ հայոց քրիստոնէականին՝ « ապաշ « խարութենէ զատ խորհուրդ չկայ ծանր մեղք , քերը մաքրելու » ըսելը ճիշդ չէր ո՛ր՝ ինչ հարկ էր մերձ ՚ի մահ հիւանդը խոստովանջընելու եւ հաղորդելու : Գործնականապէս վըտանդ ալ ունի՝ վերջին օժման ծանր մեղքերը մաքրելու դորութիւն ունենալն աւստրիական ականջը հասցընելը՝ որոց կըթուութեան համար կը շինուին քրիստոնէականները : Իսկ վերջին օժուժը գործածողները՝ հայութեան մէջ հոգւոյ մեծ վտանգ ցուցընելու համար իրենց ժողովըրդեանն այս ալ հասկըցուցած կըլլան . որով անոնք ալ այս խորհուրդը գործածուած անձանց համար ապաշխարութիւնն աւելորդ կը սեպեն . եւ կը խոստովանին եւ կը հաղորդին ալ ո՛ր՝ քահանային ստիպելովը՝ եւ վերջին օժուժէն չզըրկուելու համար կընեն , միշտ մտքերնին

իրենց ծուռ կարծիքին վրայ հաստատ ըլլալով .
 եւ այսպիսի վարդապետութիւն մը քանի որ կայ
 հոովմեակն վարդապետաց մէջ , եւ ժողովրդի-
 կան ալ կը հաղորդեն առանց շրջահայեցութեան ,
 եւ հայոց եկեղեցոյն ուղղափառ վարդապե-
 տութեանը վրայ մտքերնուն մէջ նախապաշար-
 մամբ մտած կարծիքը առաւել եւս արմատացը-
 նելու համար . ինչպէս որ ըրած է հիմնական
 գաղթեցողիանց վերապատուելի հեղինակը . ճըշ-
 մարիտ կելլէ Տաթեւացոյն եւ հիւսի վարդապե-
 տութիւն ըսածը՝ թէ մեր մէջ վերջին օժման
 գործադրութիւնը վերնալուսն պատճառ՝ զհի-
 ւանդը ապաշխարութեան եւ հաղորդութեան
 խորհրդոց աւելի մտադիր ընելն կղած է :
 Հանդերձ այսու՝ մենք՝ ինչպէս որ վերն ը-
 սինք , այս պատճառիս չեմք հաւնիր . եւ այս
 տեղ՝ վերջին օժման վրայ ըսելիքնին վերջացը-
 նելու տեղերնիս սա ալ կըսեմք , որ օժման իւ-
 ղըն աղօթքէն զօրութիւն կանուռ ըսելով , եւ
 առով կերպիւ իւրիք օժուժը աւելորդ սեպելով
 խախտուելուն որպէս թէ իրաւունք մը տա-
 լերնուն ալ չեմք հաւնիր , զոր մեծին խորհու-
 լու եւ Սարգիս Ենթոհայիին գրքերէն վերը
 մէջ բերինք : Յակօր Սարեան պատրիարքը եօնն
 իրորոց գրքին մէջ (յղ . վերջին օժման . պրտի . Գ)
 Սարգսի խօսքը իր ըսածին դէմ առարկութիւն
 կընէ . եւ կը պատասխանէ . « առ բանն Սարգ-
 սի ստեմ , թէ այնու կամի ստեմ , թէ սուկ
 ի օժու . մի ոչ աննէ ինչ՝ եթէ ոչ անուն Տեառն

ն վերագայցէ . ըստ որում եւ ոչ ջուրն կարէ
 « աննել ինչ առանց անուան Երրորդութեանն :
 Ըսել կուզէ որ երկուքն ալ պէտք են , եւ
 ինչպէս որ միայն ամենասուրբ Երրորդութիւնը
 յիշելով առանց ջրով լուսալու մկրտութեան
 խորհուրդը չկատարուիր , նմանապէս միայն ա-
 ղօթքը՝ առանց օժութեան վերջին օժում չըլ-
 լար . վասն զի ասիկայ եկեղեցոյ խորհուրդնե-
 րէն մէկն է . եւ ամէն խորհուրդ՝ յիւթ մ'ու-
 նի . հարկ է որ վերջին օժման խորհուրդն ալ
 յիւթ մ'ունենայ . եւ սյս յիւթս է իւղը :
 Սուտի կատարեալ իրաւամբ ըսած է սուրբն՝ Սեր-
 սես Ենթոհային , որուն խօսքը մէջ կը բերէ
 հիմնական գաղթեցողիանց վերապատուելի հեղինա-
 կը . « թէ ներգործել զայս՝ աղօթիցն էր զօ-
 « րութեան , օժման իւղոյն սո ինչ պէտս
 « բժշկեալքն կարօտանային . յայտ է՝ թէ զի
 « յերկուց ելով մեր , ամենայն ինչ զգալի է
 « եւ իմանալի իրակութեանն ասիմ զոյգ եու-
 « թեանս . որպէս ջուր եւ Հողի . հաց եւ
 « Ըստուած . ըստ այսմ աոցես զօժանին իւ-
 « ղով , (հիմնական . գաղթեց . կր . 136) * . Սու-
 տի կըսեմք թէ ոչ գիշերծամբ , ոչ խաչահան-
 գիտք , վերջին օժման խորհուրդ չեն . այլ մի-
 այն՝ անիկայ չեղած տեղը անոր փոխարէն կըր-
 նան սեպուիլ , Սմանապէս՝ Նոր մկրտեալնե-

* Սուրբ հայ ապետին այս խօսքը՝ հիմնական գաղթե-
 ցողիանց հեղինակը տեղովը շարեւակած ըլլալով
 մենք անոր գրածն օրինակեցինք :

քուն տրուած օծումը, կամ աւագ Հինգշաբաթի ռանալուսին՝ ոտքին վրայ քսուած եղը՝ որ շատ տեղ միայն քահանայներուն ոտքէն կը քսեն եւ ոչ աշխարհականներուն, եւ ննջեցեալ քահանայներն օծելը վերջն օծում չեն: Ասորն զի ասոնց ամէնէն ալ կը պակսի սուրբ Յակոբ աստրելոյն այս խորհուրդս ընդունելու համար ցուցուցած պայմանը. որ է՝ հիւանդութեան ժամանակն ընդունուիլը: Ասոնք սորվելու համար երեսակն արքեպիսկոպոստուն հեղինակին սորվեցընելուն կարօտ չէինք. մեզնէ հարիւր տարիէն աւելի առաջ՝ Յակոբ Ալեքան պատրիարքն ասոնք գրած էր: Եւ այս ամէն բաներուս համար վերապատուելի հեղինակին հետ կատարեալ միաձայնութիւն ունիմք. երկու կէտի վրայ է միայն տարբերութիւննիս. մէկը՝ որ մերք անոր ըսածին հակառակ կըսեմք թէ խորհրդոյս գործադրութեան խափանումը՝ հաւատոյ դաւանութեան մէջ հռովմեականէն հիմնական տարբերութիւն մը չկացուցաներ. եւ միւսը՝ դարձեալ անոր ըսածին հակառակ կըսեմք թէ « վերջին օծումը մահացու մեղքէ « չսզատեր »: Յայտնի է որ այս կերպ ըսելունիս՝ խորհրդոյն հասարակ ներգործութեանը վրայ է. ազատել ունի նէ՝ անուշակէ ըլլալը վերապատուելի հեղինակն ալ խոստովանած է. ըսել է որ բացառութիւն մ'է աօրկայ:

Բայց վերապատուելի մատենագիրը խորհրդոյս խափանումն առիթ բերնելով մէկ նո-

րահար եւ հետաքրքրական ամբաստանութիւն մը կը հանէ Երեսնական անուանած եկեղեցւոյ դէմ. զոր մինչեւ հիմայ՝ եօթն հարիւր տարի մը կայ՝ որ իրբեւ ամբաստանութիւն լըսած չունէինք. այն ատենն ալ՝ հայերը կատարեալ քրիստոնեայ չկարծելով իրենց եկեղեցին մըտնողը նորէն մկրտութեան տանելու սովորութիւն ընող յոյները կընէին: Մեր իմաստուն հեղինակն ալ անոնց ձայնակից կըլլայ, ըրած ամբաստանութիւննին նորագլով. կըսէ: « Լուանդներուն վերջին օծում՝ չընելով լոկ խաչահանգիստ ընելը եւ աղօթքներ կարգալը բաւական սեպելու « եղծագործ սովորութեան ծագումը ան դարմանալի ընդդիմութենէն է՝ « որ նոր ձիթոյ կամ իւղոյ ձիթենեաց դէմ կը « դիտուի հայոց եկեղեցական պաշտամանցը « մէջ. ան ազնիւ նիւթին՝ որ՞ որ խորհրդա- « ւոր սրբութիւն մ'ունի հին եւ նոր կտակա- « րանաց մէջ »: (Հիմալ. արքեպ. էր. 174):

Այսպէս հաստատողական կերպով բացարձակ զրուցուածք մը կարգացողը պիտի կարծէ որ ասոնք գրողը բուն տեղէն լուր առած է. եւ ըսածն անտարակուսելի է. որովհետեւ ինքըն ալ տարակոյս նշանակելու բառ մը գործ չսօժեր: Բայց կերելի որ իմաստուն եւ բազմաքընին հեղինակը չէ կարդացած Վարդէին Ղ. Վ. գլուխը. որուն խորագիրն է, Երեսնական քրիստոնէութիւն: Այն տեղ կըրնար տեսնել որ այստանեայց եկեղեցին որքան կը յարգէ ձէ-

Թը՛, այսինքն՝ ձիթապտուղէն քամելով հանուած իւղը՝ Արրնար այն տեղ սա հեռեւեալ հատուածը կարդալ . « այն իւղ զօրմանահրաշ
 « օրհնութեան լուսոյ՝ զհրեայն եւ զխուժն ,
 « զհնդկին եւ զարբարոսն քրիստոսեան արարեւ
 « եալ անուամբ քոյ կնքէ , եւ Հոգւոյդ սրբոյ
 « ընծայէ . եւ Հօրդ երկնաւորի հարազատ որ-
 « դի հաստատէ , (Կորնթ. 12) , (Եւս՝
 մկրտութեան օճմանը համար , Գրոշմին համար
 կրսէ , Կարգ ոչ իւղեալ սողալ՝ հեշտեալ խոր-
 « ատակի . եւ մէկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ
 « լուսաւորի ,) , « Հիւանդաց օճման համար կը-
 « սէ . « սովաւ շրջէին՝ որպէս բանն ազդէ աւեւ
 « սարանչին Կարկոսի , առաքելականացն լը-
 « ծակցութիւնք . իբր ազդակից հարազատ ձե-
 « սինդ (Եստուծոյ՝ այսու վարեցեալը . քանզի
 « իւղով օճանէին , եւ առանց մարդկային հը-
 « նարից՝ անուամբ քո բժշկէին , (Թոր. 14) :
 Ըւազանի օճութեան համար կրսէ . « ոչ է ա-
 « լազան կատարեալ՝ առանց օճման օճանդա-
 « կութեան* , « Չիթոյ գովեստը՝ բոլոր այն
 « զիտոյն մէջ , եւ առաւելապէս՝ 18 համարին
 « մէջ մտադրութեամբ կարդալու ըլլար չէ՛ կը
 « հասկընար թէ հայոց եկեղեցին ընդդիմութիւն
 « մը չունի ձիթոյ հետ . եւ զարմանալին՝ իմաս-
 « տուն հեղինակին այդպէս ընդդիմութիւն մը
 « տեսնելն է :

* Կարելի է որ հոս սուրբ վարդապետն ստացան բա-
 ոսով փոխաբերաբար մկրտութիւնն իմացած ըլլայ :

Միւսոսի կաշմութեան մէջ ձէթ չմանե-
 լը՝ եւ ամէն տեսակ օճման անխախտ միւսոս
 գործածուիլը՝ այդ թիւր կարծեացը պատճառ
 եղած է . ինչպէս որ սուրբ Կեբուէս Ընորհալի
 հայրապետին արովը եւ անկէց ալ տաա՛ յու-
 նաց ձեռքն ալ հայերը իբրեւ հերետիկոսու-
 թեան մէջ ինկած ամբաստանելու նիւթ մը ե-
 դած էր . որոց այսպէս կը պատասխանէ սուրբ
 հայրապետը՝ որ մեր վերապատուելի հեղինա-
 կին ալ տրուելու յարմար պատասխան կըլլար ,
 թէ որ մի՛չէ՛ւ հիմայ միւսոսը առանց ձիթոյ
 շինէին . այսու ամենայնիւ՝ այն ժամանակի
 յունաց համար շատ աղէկ պատասխան է : Աը-
 սէ . « գրեալ էր 'ի քիրս . թէ 'ի բուժարեր
 « ձիթոյ՝ զոր շուշմայ անուանեն , լինել մեռո-
 « սի մերոյ . եւ ոչ 'ի ծառոց ձիթենեաց . եւ
 « այս յիշաւի . եւ պատճառն ոչ այլ ինչ , այլ
 « զի 'ի Հայաստանեայց աշխարհն ոչ են ձիթե-
 « վիտք , վասն ցոտութեան օդոյն . հարկ եղեւ
 « զայն ինչ ձէթ՝ որ գիւտ է յաշխարհն , 'ի
 « նիւթ առնուլ մեռոսի . եւ ոչ ինչ վնաս հո-
 « գեւոր տեսին յայստիկ , (Բարդուէ . եր . 62 .
 որ . Կոստ) : Ըսոր այսպէս ըլլալը վերապատ-
 ուելի հեղինակն ալ ծանցած է իր գրքին մէկ
 ուրիշ տեղը (եր . 273) , ուր կրսէ թէ , « Հա-
 « յաստանի տեղակած հանգամա՛ր քէն , այսին-
 « քըն՝ ձիթենեոյ անպարար ըլլալն ծագած
 « է միւսոսի մէջ ձիթոյ գործածութեան խախտ-
 « նումը , ՚ (Երեկոյ որ զիտէ , եւ վերջին օճ-

ման խափանման պատճառն ալ Ռէնէ վարդապետաց
 ցանէն սարգած է թէ ասպախարութեան կարե-
 ւորագոյն խորհրդոյն խափանուելուն կասկածն
 է, ինչ՞ու համար այս անգամ այս պատճառիւ չը-
 հանելով՝ ձիթոյ դեմ Հայաստանեայց եկեղեց-
 ւոյ ունենալ կարծած զարմաւախ՝ բայց միան-
 գամայն մատցածին ընդդէմութիւնը թէջ կը բն-
 րէ. այսպէս պատճառ մը մեր գրուած դատեր է:
 Տեղ մը գրուած չէ. գուցէ "Կիկոնի կամ" Պի-
 դազենոսի կամ՝ ասոնց նման մեկի մը գորին
 գանձելով՝ հմանութիւն ցուցնելու համար զը-
 ընթեր է. հմանութիւն մը՝ որ իրեն գրածովը
 անհմանութեան կը փոխուի:

Օրոյն հանգամանացը պատճառաւ՝ եկեղե-
 ցական արարողութեանց մէջ ձիթոյ գործածու-
 թեան խափանուելին ալ առ ժամանակեայ բան մը
 ըլլալ կը գտնուի: Սուրբ Գրիգոր՝ Կարեկացին՝
 որ սուրբ Ներսէս Շնորհալիէն միայն երկու
 դար առաջէր, միւսոնի բազմադրութեան հիմը
 ձէթն ըլլալը կը անշնայ սա խօսքիս մէջ.
 "ճշ յոլովից խառնից 'ի մի եկեղոց խմբակցու-
 լի ենէ զանազան ծագլանց, ըստ հնոյն եւ
 ստուելին բազմաբուրեան այլայլութենէ,
 զոյս իւր օծութեան հրամանաբեցեր, այլ
 իրր զօրինակ փոխեալ զայն առ այս, դու
 սինքն խառնեցար 'ի սոյն մարբութիւն վերնա-
 լլոյս ձիթոյ" (Վարդի Ղ. Գ. 11). սրուն վրայ
 Հ. Գարբիէլ Բերտրեան իմաստուն վարդա-
 պետը կը ծանուցանէ՝ որ "Բրիտանոս հրաման

չառաւ այլ եւ այլ անուշահոտ իւրեց խառնե-
 լով միւսոն շինելու՝ ինչպէս որ հին օրինաց մէջ
 հրամայած էր. բայց հին ասեմէ 'ի վեր, այս-
 ինքն՝ Փրկչի թուականութեան երկրորդ դարեն
 'ի վեր վկայութիւն կայ՝ այգապիս բազմադրու-
 թեամբ միւսոն շինուելուն: Քիոնեսիոսի Բնի-
 պագոցոյ եկեղեցական անանյայտաստեանց գրքին
 Գ. գլուխն ալ իրր եւ ըսածին հաստատութիւն
 կը ցուցնէ. եւ այս սուրբս՝ ինչպէս յայտնի է՝
 սրբոյն Պօզոսի առաքելոյն աշակերտն է. որով
 միւսոնի կազմութեան սկիզբն ալ առաքելոց ժա-
 մանակին կը հասնի. եւ ըսել հարկ կըլլայ թէ
 Տէրն մեր Հիւստայեց նե՝ չարգիլեց ալ:

Սուրբ Ներսէս Շնորհալիէն ետքն ալ՝ միւ-
 սոնի բազմադրութեան գլխաւոր նիւթ՝ ձէթը
 առնուած է, երբ որ բաւականին չափ ձէթ ձա-
 բելը գիւրին ըլլայ: Բնուշահոտ ծաղիկներ կը
 դնեն ձիթոյ մէջ, եւ քառասուն օր կը պահեն,
 մինչեւ անոնց հիւթն ու ձիթոյ իւրը իրարմով
 ապարբին եւ միտան: Ըստ կը վկայէ Յա-
 կոբ Վալեան պատրիարքը. որ եօթն խորհրդոց
 գրքին մէջ կըսէ. թէպէտ "ճշ ամենայն ուրեք
 զանոն ի թն ձիթեմեց. . . կարելի է ամսիւ
 յօտար երկրէ. որպէս եւ վասն միւսոնին
 որոյ նիւթն, եւ մանաւանդ գնօղքն գան 'ի
 Հնգկաց" (Չ. Թ. Ե. Գ. Գ. 1): Եւ
 աւելի բացայայտելով կըսէ. "հասարակ նիւթ
 միւսոնի գիտեմք զիւրն 'ի ձիթեմեաց. եւ վա-
 յիւշական զպալասանն՝ որ խառնի 'ի ձէթն

31 ձիթենեոյ, (ԿԵ Կառա . եր . 643) :

Որքան անհրժիշտ է վերապատուելոյն ամբաստանելի թէ եկեղեցական պաշտամանց մէջ ձեթ գործածելու հակառակութիւն ունին . եւ ասով ցուցուցած է թէ Հայաստանեայց եկեղեցական պաշտամանց հմաութիւն չունի . Եւ ասիկայ դարմանալի կը գտնէ նէ՛ մենք անոր կը դարմանամք որ ունիդորներուն ցանկին մէջ անգամ չանունած այսպիսի ամբաստանութիւն մը հընարեր է . որովհետեւ անոնց մէջ գրուած չէ թէ Հայք ձիթոյ գործածութեան դիմագրութիւն ունենալուն համար վերջին օծումը խափածեր են : Եւ ասով իմաստուն հեղինակս հին ունիդորներուն հնարած **ՁԻ** գլուխ զրգարանութիւնները **ՁԻԲ** ըրեր է . այն ալ՝ ինչպէս որ ինք կըսէ , հայց ազգը սիրելուն համար : Այսպիսի ազգայնութեան սի՛րնչ կրնայ ըսել . մանաւանդ հիմայ՝ որ բառերը իրենց բուն նշանակութեան հակառակ մարտէջ գործածելը շատ ալու վրայ է :

Գ Լ Ո Ւ Ե .

Անշուր պատարագելու վրայ :

Վերադարձուելի հեղինակը վարդապետական փաստերը մէջ չընկած՝ իրրիւ նախաշաղիղ

Եւ ընթերցողներուն միտքը պաշարելու յարմար քանի մի բան կը խօսի . որոյմէ մէկ հասարակի համար հաս նշանակելը՝ (Թեպէտ խընդիրէն դուրս է , անօգուտ չեմ սեպեր .)

Որովհետեւ անպակ կամ անջուր գինին սուրբ խորհրդոյն մէջ գործածելուն դեմ պիտի խօսի , կըսէ որ այս անակ գինին Բասուծոյ անողոքելի բարկութիւնը նշանակելու գործածուած է սուրբ գրոց մէջ (Կրդ . 29 . 8 . Եւր . Ժ . 10 . 2 . Գրք . եր . 223) :

Եւ որովհետեւ Տեան մերոյ Յիսուսի Գրիստոսի պատուական արիւնը թափելը Բասուածային բարկութիւնը ՚ի հաշտութիւն փոխարկելու համար էր , եւ ինչպէս որ մկրտութեամբ անոր թաղմանը կը հաղորդիմք (Կրդ . Բ . 12) .

նմանապէս Տեան մերոյ մեզի համար եւ մեր վրայէն Բասուածային բարկութիւնը վերջընելու համար արիւն թափելուն հազարէ կըլլամք անջուր գինեոյ անսակաւ նոյն արիւնը ճաշակելով : Կարգարէն մեզի կը ծանուցանէ ասիկայ . « այր ի Թանապարհի իւրում մնլորեցաւ . » Եւ Տէր մարտոյ զՆա առ ժըս ժըս , (Եսայ . ԾԳ . 6) , թի՛ք որ իմաստուն հեղինակին բերած փաստը գորութիւն ունենար նէ՛ մեզի աւելի նպատաւոր էր քան թէ հակառակ :

Այլ եւ՝ սուրբ գիրքը բաղարջ կամ անխմար հացը շարժանաց հոյ կանուանէ . « զեօթն » որ բաղարջ կերիցին ընդ նմա (Կատկական

« գառին հետ », հաց չարչարանաց, (Ռ . օրհն . 4 .
 Ե . 3) . եւ չարչարանաց հացով որ սուրբ
 պատարագ կը մատչի նե՛ կը վայելէ որ նոյն
 չարչարանքը մեզի պատճառող Աստուածային
 անողորմելի բարկութեան նշանակ անապակ գի-
 նի ըլլայ անոր հետ . որպէս զի հին օրինաց
 գառնաղնութեան ողբոյն աւելի մօտաւոր հա-
 մեմատութիւն ունենայ :

Մեր իմաստուն քննաբանը կասկածելով ,
 գուցէ անպակ գինւոյ համար բերած վկայու-
 թեանը զօրութենէն խուսափելու համար մեկը
 Սաղմոսին խօսքը իրեն գիմացը հանէ . որ ան-
 ջուր գինին ուրախութեան պատճառ ցուցընե-
 լով՝ գլուխը իւզով օծելու հաւատար ըսած է .
 « օճեր իւզով զգլուխ իմ . բաժակ քո որպէս
 « անապակ արբեցոյց զիս » (Սաղ . 138 . 5) .
 յատուկ ծանօթութիւնով մը մէջ կը բերէ .
 (Կիմակ . պարբեր . Եր . 224) . եւ կպատասխա-
 նէ թէ այս տեղի անպակ բառը յունարէնին
 մէջ քաղցրացնելու եւ լատիններէնին մէջ օրգիստ-
 քրուած է եղեր . որ անհաւա ըսել է : Եւսով
 քիչ մը մեր երանաշնորհ թարգմանիչներու մէջ
 Գրպիլ ուզած կերելի . որ կամ յունարեն
 բառին նշանակութիւնը գիտած չեն ըլլար .
 կամ սուրբ գիրքը թարգմանած առեւճին Ե-
 մաստը խանգարած կըլլան : Իսոյց բոլոր աշ-
 խարհ մեր երանաշնորհ թարգմանչաց հաղթանայն
 այնպէս գիտեն որ գինին ամենէն ընտիր տե-
 սակին ալ անապակը ջրախառնէն լաւ կըլլայ .

ուստի գինին համար անհաւա ըսելն ու ան-
 պակ բերել մի եւ նոյն նշանակութիւնը կունե-
 նան : Եսոր համար գինին ջուր խառնողն ալ
 իբրեւ խարդախ՝ եւ գինւոյն լաւութիւնը արող
 Աստուած յանդիմանութիւն կը լըսէ . « զի-
 « արդ եղև պոռնիկ՝ քաղաքն հաւատարիմ՝ Սի-
 « ոն . . . վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ
 գինի » (Մատթ . Ե . 21 . 22) :

Եսոյպիսի խօսքերը փաստ ըսուելու արժա-
 նի չենալնէ , որովհետեւ իմաստուն քննա-
 բանը մէջ բերելով կարելի եղած առարկութիւ-
 նըն ալ յատուկ յիշուած՝ եւ պատասխան առ-
 լով իբրեւ կարեւոր եւ մեծ բան մը ցուցընել
 ուզած է , հարկ սեպկեցինք ոչ թէ պէտքէն ա-
 ւելի կարեւորութիւն տալով , այլ միայն ըն-
 թերցողներուն պատճառած գայթակգութիւնը
 բուժելու համար պատասխանը տալ : Աւելի
 փաստերն ալ ասկէց զօրաւոր չեն . Ինչպէս որ
 խօսելիքներնուս կարգովը կանսնուի . մենք
 բուն ինդրոյն գանք :

Եսոյ ինդրոյն հին Ե . ունիգործներէն ալ հին,
 եւ յոյներէն Թացած . որ զմեզ կը պարսաւէին՝
 անքմոր հացով եւ անջուր գինւով պատարա-
 գելնուս համար : Յոյնք այս անբառաւորութե-
 նը միայն կեսին իրենց ծայրակէց գառն ունի-
 ցօրները . վասն զի ասոնք ալ կռաքն եզեղե-
 ցոյ հետեւողութեամբ բարաքը կը պատարա-
 գէին . եւ ասոր համար է որ թէպէտ ուրիշ
 քանի մի բաներու զրոյցը հայերուն համար ը-

քին թէ հրեայներուն կը նմանին, կամ հրեայ-
 ներէն առած են. (ինչպէս որ մեր վերապատ-
 ուելի մատենագիրն ալ կըսէ, զոր զլիոյս վերջը
 առանձին յաւելուածով պիտի առնենք), բայց
 բարդոյնով պատարագելնու համար ասանկ բան
 մը չեն ըսեր. ինչպէս որ յոյն կըսեն: Ռե-
 նիդորները հայոց եկեղեցւոյ ուրիշ նեւերուն
 եւ արարողութիւններուն հետ մէկ տեղ՝ ան-
 ջուր գինեով պատարագելն ալ ձեռքեցին. եւ
 Կաթողիկէ պատարագելն մէջ հիշատակն պարբերու-
 թիւն մը սեպեղով պարսաւել սկսան, որովհե-
 տեւ լատին եկեղեցին ջրախառն գինեով պա-
 տարագելու սովորութիւնն ընդունած էր. ա-
 նանկ որ՝ թէ որ նոյն եկեղեցին ալ անջուր
 գինեով պատարագէր նէ՝ ըսելիք մը չէին ու-
 նենար. եւ թէ որ բողոքոյնով շապատարագէր նէ՝
 մէկ ամբաստանութիւն մ'աւելի կըլլար մեզի
 գէմ, եւ դուրս ալ աւելի գէշ գրուցէին. ու-
 թուն յոյն իրենց օրինակ եւ թելադիր կըրնա-
 յին ըլլալ:

Հին ժամանակն ամբաստանող ունեցանք նէ՝
 անոնց պատասխան առլով Հայաստանայց եկե-
 ղեցին պաշտպանող ալ ունեցանք: Սուրբ Ներ-
 սիս Ընորհային՝ անջուր պատարագելուն քա-
 նի մի պաշտանութիւնները ցուցնելէն ետքը
 կըսծ. "Թէ ջրով որ կատարէ եւ թէ ասանց
 " ջրոյ, ոչ եւ ընդ մէջ ՚ի նոցանէ կամ փա-
 " սըս ընդունելից Մատուոյ եւ Թամ ասանց
 " ըանս. այլ որք սուրբ սրտեւ եւ ուզիչ հոգ-

ււււով մատուցանեն՝ փաստարքին Կրնանէ. եւ
 " որք անմաքուր խորհրդով եւ վատթար գոր-
 " ծովք՝ ասնջանաց ակնկալցին, որով օրինակաւ
 " եւ կատարեսցեն. եթէ անպագ՝ եւ եթէ
 " խառնեալ ընդ ջրոյ, " (Ձեռն. եր. 84).
 Եւ այս տեղ՝ ամեն պէտք է զած տեղերուն հա-
 մար ժէկ տեղամ մը յիշեցընել հարկ կը սե-
 պենք. որ սուրբ հայրապետն անբող ընդհա-
 լովան գրքի մեջ պարունակուած նշանները
 Վարդապետի վէճակեցից քահանայն լատին-
 րէնի թարգմանած եւ ապա Ե 1883 թուին
 Անկեպի քարտը. եւ Լուովմայ գրոց ջրե-
 նութեան ժողովը ասոր ուղղափառութիւնը
 ճանչնալով՝ հրատարակութեանը արգելը չէ
 դրած: Ետքը պիտի տեսնենք թէ հիշատակաւ
 բերութեանց վերապատուելի հեղինակն այս կե-
 տես որքան կհամարուին Լուովմայ ամուսոյն
 հետ:

Ռենիդորներուն ամբաստանութեանը ուղ-
 դակի պատասխան կգրէ Սոյ ժողովոյն ընդունն
 կատնել վարդապետար. եւ նոյն պատասխանը
 Լուովմ կը խրկուի. հոն լատիներէնի կը թարգ-
 մանուի, եւ քննիչներուն կը յանձնուի: Ետք
 մէջ այսպէս գրուած է. " գիտելի է որ յոյն-
 " քրքն ասաջ պատարագին ջուր չէին դնել. եւ
 " ծննդեան տունը յունաց պէս յունուարի Թին
 " կընէին. բայց ետքը Հոգիտան Արեւելեանին
 " ժամանակը յունաց եկեղեցին պատարագին
 " ջրոյ գործածութիւնը եւ ծննդեան տունը

« գեղանման 25 ին. բնելն ընդունեց, թայց
 « հայոց եկեղեցին չընդունեց. վասն զի հայոց
 « կաթուղիկոսը սուրբն Իսահակ իր աթոռէն
 « վար անուեցաւ. եւ հայոց եկեղեցին գյուղի
 « չունէր որ վերայ ասացեալներն ընդունէր
 « ուրիշ եկեղեցիներուն պէս. եւ ասանկ նախ
 « Ծախան ստորութեամբք մաց: Իսկ յայնք
 « պատարագի գինւոյն ջուր գնելը եւ նըն-
 « գեան ստիւր դեկա. 25 ին կառարելն ընդու-
 « նելնէն Եօրը սխան զհայն նախառել, եւ
 « հայք զայնս: (Ս՝ անթ. հասմանն ժողո-
 « ւոց. հարց. ԻՆ. ԿԷ. 1221. ԿԿ. Պէնիթի.
 1782): Լոռվմ այս պատասխանւոյս հաճե-
 « ցաւ. եւ անոր վրայ չեմք տեսնիր որ հայոց
 « կաթուղիկոսին գրած բլլայ, թէ հիմայ Իսա-
 « հակ կաթուղիկոսին աթոռէն վար անուած
 « ժամանակին պէս չէ. գաւն նոյն կաթուղիկո-
 « սական Եթոնոյն վրայ կաթուղիկոս նաած
 « բլլայով ազգիք եկեղեցւոյն գյուղին ես. պէտք
 « է որ ուրիշ քրիստոնեայ ազգաց համաձայնիս.
 « եւ սուրբ պատարագը ջրախան գինւով բնես.
 « (Ներքի Գրիգոր Է): Լոռվմայ հայրապետը 1060
 « թուին առ Լայ արքեպիսկոպոսն Սիւննագոյ
 « (կամ Սիւնեաց) գրած թղթոյն մեզ կը հար-
 « ցընէր նոյն արքեպիսկոպոսին թէ իրան է արգ-
 « հոց որ հայք անժուր գինւով կողատարագեն.
 « Բայց ասի այ յոն անգեկուսիին մ'ուզել էր,
 « որ այնպէս չընելու արգելք մը կամ բնելու
 « թոյլատուութիւն մը չէր պարունակեր: Քուցե՛

« յիշեալ պատը ստոգ կողմէն կերպով մը՝
 « անջուր պատարագելոյն համաց յաւնոց իրքեւ
 « պատճառ ցուցուցած մեկ մուրաբութիւնը անն-
 « Ծալմին կամ շուննեալմին նոյն թոք հայոց
 « արքեպիսկոպոսն մը սաուցել փուզէր. որ Եթ-
 « ջուր զպատարագելման պատճառ մը կամ թոր-
 « հըջտիկան պատշաճութիւն մը ցուցընելը բնա-
 « փան էր: Թեպէտ հայոց արքեպիսկոպոսին գրած
 « պատասխանը չկայ, բայց կըրնամք գուշակել թէ
 « մուրաբիան գրաւորութեան մը բացատրութիւն
 « չկար մէջը, եւ գոհացուցիչ էր. վասն զի ան-
 « կէց Եօրը մինչեւ ունիդորներուն ժամանակը
 « Լոռվմայ կողմէն այսպէս խօսք մը չեղաւ. եւ
 « ունիդորներուն գրածներուն պատասխան՝ հա-
 « յոց ժողովքին կողմէն Դանիէլ վարդապետին
 « գրածներուն ամենուն ալ հաճութիւն ցուցուց
 « կղեմէս Օ. Լոռվմայ հայրապետը, որու խըր-
 « կուած էին այս պատասխանները. եւ թղթոյն
 « ողջամիտ վարդապետութեանը վրայ շատ ուրախ
 « եղաւ, ինչպէս որ կըսէ Լ. Սիրայէլ Զամչ-
 « եան (պարմ. հոյ. հարց. Գ. եր. 365): «Մոյ-
 « նը կըսէ նաեւ Սորպատի եկեղեցեական նոր
 « պատմիչը (Ընդհանուր պարմ. Խնիսալ. Եկեղ. հօ-
 « րոք. Ի. եր. 265. ԿԿ. Փառէլ. 1858), թէ
 « կղեմէս Օ. Լոռվմայ հայրապետը՝ ամբաստանու-
 « թեան « յիշատակագրին յօդուածներուն արուած
 « պատասխանւոյն գոհ ըլլալը վկայեց » 1846
 « օգոստոսի վերջ թուականով գրած կոնդակին
 « մէջ. « բայց՝ կը յտեկուէ. ուրիշ մուրաբութիւն

ներկան, որոնք բնագիրը ընել պէտք է, և Յայտնի է որ այս ուրիշ ըսածները յճատակողմին մէջ զայն անհերքելի զատ են, որոց պատասխանը առած էր Սոսի ժողովը. և սրովհետեւ ան անբարեմտները հայոց եկեղեցւոյն կարծեցեալ մոլորութիւնները շատ ցուցնելու համարձեցնեմ ճիգ թափած էին, և այնպէս բաներ գրած էին՝ որոնք աւելի պատուական ծիծաղելի բաներ էին քան թէ ընդդէմ հաւատոյ մոլորութիւն, չեմք կարծեր թէ Հոգւմայ հայրապետը հայոց վրայ այն ճիշտ խելագարեցեալ մոլորութիւններէն ուրիշ բան գիտած ըլլայ. ուստի ըսել ուզած կըլլայ որ, թէ որ այն գրածներէն զատ ուրիշ մոլորութիւններ ունիք նե՛ անսիրտ վերջընելու նայեցէք: Իսոյց ինչ որ է նե՛ սա ճշմարիտ է՝ որ Գանձի վարդապետին գրած պատասխանւոյն մէջ Հոգւմ ըսելու բան մը չգտաւ: Եւ այս պատասխաններս կարգալով էր որ Մարդէնէ և Մանսի քաջ աստուածաբանները և բազմաճամուռ մատենագիրները կըրցան վճարաբար ըսել թէ հայոց եկեղեցւոյ մէջ մոլորութիւն չեմք կըրնար տեսնել:

Հայոց եկեղեցւոյ ուղղափառութիւնը ճանցցընելով ասոնք գոհ ընելը՝ ունիդորները և անոնց հետեւողութեամբ մեղնէ բաժնուած իմաստունները գոհ ընելէն շատ դիւրին է եղեր սակայն այս ալ բացառութիւն ունի: Այս բաժնուողներուն մէկը՝ Ս. Միքայէլ Չամչեանն է:

Բայց սակայն՝ Սոսի ժողովոյն և Գանձի վարդապետին պէս իտեղէն զատ՝ կըսէ և կը քարամարանէ ալ որ ՚ի հարկէ հայերն այս սովորութիւնս յայնրէն առած են: «Սէր զայս մի ինչ ճշմարտութեամբ կարեմք ասել, կըսէ, թէ սուրբ Լուսաւորիչն մեր որպէս և «Եգիտ ՚ի յոյն» այնպէս աւանդեաց ՚ի հայս: «քանզի անհաւատալի իմն երեւի թէ այլազո: «իցէ կարգեալ սա՛ քան զոր տեսալն է ՚ի «յոյնս» (սատմ. հայոց, հարոց. Բ. եր. 648): Ետքը կըսէմէս կալանոսի կարծիքը մէջ բերելով, որ անշուր պատարագելու սկսող սուրբ Յովհանն Օձնեցի իմաստասէր հայրապետը կը ցուցնէր. հաստատուն փաստով և նոյն իսկ կալանոսը վկայ բերելով կը ցուցնէ թէ ըսածը ճշմարիտ ըլլալն անհնար է: Այս տեղս ալ ծանուցանելը՝ ներկայ գլխոյս մէջ ըսուելիքն համար հակաւոր կսեպեմք, որ Չամչեանն Ս. Միքայէլի Հայոց պատմութեան համար՝ իբրև հերետիկոսութիւն պարունակող՝ ամբաստանութիւն եղած էր Հոգւմ: Պատմութիւնը քննուեցաւ. և կարդինալ Ռոմբանա, 1819 ին յուլիսի 31 ին գրած նամակով մը Աբոնց Ստեփաննոս Աբրայիմ կիմացընէր որ գրքին մէջ դատապարագութեան արժանի բան մը չկայ:

Բայց կիմական պարբերութեանց հեղինակը կոհ ընելու մեծ դժուարութիւն կոյ. որ գրողես Պիոս թի ին քովը Հոգւմ յ ալոսոյն վրայ՝ նստած՝ շանթի և կոյճա՛ի պէս վճիռներ կոտրուեցաւ. Բ.

րոտայ . այն ալ՝ այս անդամ Հոռովմայ աթո-
 սոյն գրե՛ թէ լռել պատօրիւրելով : Արտէ .
 « Վստահ ենք որ կաթուղիկէ եկեղեցւոյ մըտ-
 « քէն չենք հեռանար , եթէ ըսենք՝ որ առա-
 « քելական աթոռը գիտնալով թէ ան առնկե-
 « ըը զորոնք Քրիստոսի Տեառն մերոյ հոյրը
 « տընկած է , ասանկ հողմերէն չեն խլուիր ,
 « նա եւ ան առնն չխտտորիր ան ճամբէն՝ երբ
 « որ քրտոր Թորքումայ դաւաղը , իբրեւ զայր՝
 « մի « խոտանայ կաթուղիկէ եկեղեցւոյ գաւի-
 « թը դառնալու՝ միայն սա պայմանը դնելով
 « որ բաժակին մէջ ջուր չխառնէ , » (Եր . 219)
 Այս խօսքը Թոռովմայ Ագուինացի սեծանուն
 աստուածաբանին խօսքին գրե թէ բառ առ բառ
 հակառակ է , եւ Հոռովմայ եկեղեցին այս աստ-
 ուածաբանս սրբոց կարգն առած է , եւ անկէց
 ետքը որքան աստուածաբան ունեցեր են՝ ա-
 մէնն ալ իրենց ըսածին հաստատութիւնն անկէց
 կառնեն : Տես Առաջնայ Գլխաւորութեան Ա հաստո-
 րին սկիզբը այս աստուածաբան փիլիսոփայիս
 համար գրուած յատուկ ճառը : Արդ՝ աօիկայ
 եղրակացութիւն դնելով , թէ « անհաւատից
 « ծէսերը՝ որ օգուտ մը կամ ճշմարտութիւն
 « մը կ'առթեն հաւատացելոց , թող տրուելու
 « են » , խօսքին կարգը կըսէ . « իսկ ուրիշ
 « անհաւատից ծէսերը , որ ոչ օգուտ եւ ոչ
 « ճշմարտութիւն կը բերեն , ուրիշ կերպով չեն
 « թող տրուիր , բայց եթէ մէկ դէշուութենէ մը
 « խորշելու համար . զոր օրինակ՝ դայթակղու-

« թենէ կամ անկէց ծագելիք երկպառակութե-
 « նէ , կամ առանց թոյլ տրուելու կամաց կա-
 « մաց հաւատքի գալու տրամադրութիւն ու-
 « նեցողներուն փրկութեան արգելք ըլլալէն » :
 (Բաւնոր . ասորոսած . Բ . Բ . ծան . Ա . պրակ .
 Ժ . Ինրէր . 11) : Արդեօք հայոց՝ իւրեանց
 եկեղեցւոյն իր հայրենատուր աւանդութեանը
 հետեւելով անջուր պատարագելու ծէսը՝ ան-
 հաւատներուն անօգուտ՝ եւ ճշմարտութեան
 համար անպտուղ ծէսերէն ծածկէ եղեր . որ
 Հոռովմայ հայրապետն ասոր չներելու համար
 բոլոր ազգի մ'առ ինքն դառնալը պիտի մերժէ :
 Այնթաղրելով թէ հայոց ազգին անջուր պա-
 տարագելու սովորութիւնը անխախտ մնայ նէ՝
 Հայք ազգովին Հոռովմայ եկեղեցին դիմելու
 տրամադրութիւն ունին , թէ որ Թոռովմայ ագ-
 ուինացիին հարցուէր թէ անոնց հրաման կըր-
 նայ տրուիլ որ իրենց հին սովորութիւնը պա-
 հեն , մեր վերապատուելի հեղինակը ի՞նչ կը
 կարծէ թէ պատասխան կուտար այդ աստուա-
 ծաբանը՝ որ վերոյլրեալ խօսքը գրեց : Արծեմ
 չկըրնար ժըխտել թէ՛ իւր սկզբանցը համեմատ
 պիտի պատասխանէր , թէ թոյլ տալ պէտք է որ
 անջուր պատարագեն :

Գուցէ ոմանք վերապատուելի հեղինակին
 միտքը այնպէս հասկընան , որպէս թէ ըսել
 ուշա՛ ըլլայ , որ Հայք հոռովմէական եկեղեց-
 ւոյ հետ միանալու յանձնառու չեն ըլլար
 մինչեւ որ այն եկեղեցւոյն մէջն ալ անջուր գին-

Եւոյ պատարագ մատչիլը չը տեսնեն՝ ինչպէս որ
 Հայաստանեայց եկեղեցւոյն սովորութիւնն է :
 Բայց մենք նոյն իմաստոյն ազգայնի կարծիք
 մ'ունենալուն չենք կրնար հաւատալ . որով-
 Տեաեւ անջուր գինւով պատարագելու պաշտ-
 պան կեցող մեր հայրապետները եւ վարդապետ-
 ները թէպէտ մեր ազգային սովորութեան տե-
 սակ տեսակ պատշաճութիւնները կը ցոյցընեն,
 բայց եւ ոչ մէկը չըսեր թէ ջրախան գինւով
 պատարագողներուն պէտք է իրենց նախնի սո-
 վորութիւնը ձգել եւ մերինին հետեւիլ : Սորք
 Աերբէս Ընդհալուոյն ըսածը տեսանք . եւ
 մեր ամեն վարդապետաց ալ ըսածը նոյնն է :
 Արապատուելի հեղինակին այսպէս կարծիք
 մ'ընելուն կասկած կըրնայ պատճառել, Հը-
 ոովմայ եկեղեցին էր հաճէն շխտութիւն ըսելը .
 բայց առով այս ալ ըսել կը հասկըցա՛ն թէ
 այդպէս պատճառներով չթուլանար, եւ անջուր
 գինւով պատարագելու հրաման չտար :

Թէ որ իմաստուն հեղինակն այս վերջին
 մտքովս ըսած է այդ խօսքը նէ, ինչպէս որ
 հաւանական կերեւի՝ անոր իմաստութեանը նա-
 յելով, որ ՚ի հարկէ պիտի դիմնայ որ Հայք
 երբեք ուրիշ եկեղեցեաց ծեսերը փոխելու պա-
 հանջում ըրած չեն, որով եւ Հոովմէն կը
 պահանջեն կարծելը ծիծաղական կըլլայ, թո-
 դութիւն կը խնդրեմ նոյն վերապատուելի մա-
 տնագրէն՝ եւ անոր խօսքը իրբեւ Հոովմայ
 եկեղեցւոյ պատգամ բռնողներէն : եւ կըսեմ

Թէ Հոովմայ եկեղեցւոյն այս կէտիս վրայ այդ
 աստիճան խտուրթիւն բանեցընելը սուտ է . եւ
 անտք որ մտքերէն կանցընեն թէ անհնար է
 որ ես՝ Ամենայն պարբերութեանց հեղինակէն աղէկ
 դիմամ Հոովմայ տրամադրութիւնը, կազա-
 չեմ որ այդ վճիռը տալը քիչ մ'ուշացընեն,
 մինչեւ որ վկայները մտիկ ըլլաւին . եւ խօսք
 կուտամ չէ թէ միոյն իմ՝ այլ եւ վերապատ-
 ուելի հեղինակին վկայներն ալ խօսեցընելու :

Սուարեզ՝ Հոովմայ եկեղեցւոյ մէջ մեծ
 համբաւ ունեցող աստուածաբաններէն է . եւ
 ասոր խօսքը՝ իրմէ ետքը ապուած աստուածա-
 բանութեանց մէջ վկայութեան կը բերուին .
 եւ զիրքն ալ մօտ տալիներս վերստին տպուած
 է, որ անոր ժամանակակից եւ Ժ.Չ. դարու
 աստուածաբաններուն մէջէն խնստ քիչ են որ
 այս ժամանակներս այդ պատուոյն հասած ըլ-
 լան : Ասիկայ թովմայ Աբուինացոյն աստուա-
 ծաբանութեան ընթացքովը իրբեւ անոր բա-
 ցատրութիւն շնած աստուածաբանութեան
 գրքին մէջ յայտնապէս կըսէ՝ թէ Հոովմ
 « կրնայ տնօրինմամբ ներել որ անջուր պատա-
 ւ րագուի » (Տան . Գ . 113աբ . 106 . հարոտաշ .
 Բ . Երէքայութիւն . 1) :

Մէկ ուրիշ վկայնիս է Լէտեզմա . որ յար-
 գութեան կողմանէ թէպէտ Սուարեզի չհարնէր
 բայց բաւական հեղինակութիւն ալ ունի . եւ
 իրմէ ետքն եղող աստուածաբաններուն շատը
 ասկէց վկայութիւն կառնուն : Ասիկայ ալ յա-

դա՞ն հասարակ ճառին մէջ (Իւրոյ . ԺԵ , 107 . 7)
 Սուրբեղին ըսածէն ալ անդին կանցնի . վասն
 զի յայտնի կըսէ թէ « հարկ եղած ատենը տը-
 », նօրինման կարօտ չըլլալով ալ կըրնայ ջուր
 , խառնելը զանց ըլլալի » : Ըյս երկու աս-
 տուածաբանութեանց գիրքն ալ որ հիմնական ար-
 քերութեանց պատգամատու հեղինակին գեմ կը
 խօսին , Հոովմայ գրոց քննութեան ժողովէն
 արդիւուած կամ պարտաւ ընդունած չին : Կըր-
 նայինք այս նիւթոյս վրայ հայազգի հոովմեա-
 կան արքեպիսկոպոսի մ'ալ կենդանի րարբառով
 վկայութիւնն աւելցընել , որ քանի մի արժա-
 նահաւատմարդոց քով ըսած է թէ անջուր գին-
 ւով պատարագելը բնաւ մնաս չունի . բայց
 զգուշացանք , չըլլայ որ մեր վերապատուելի
 հեղինակին այս գիրքը յօրինել թեւազրոզ-
 ներուն կողմէն նեղութիւն կրէ :

Ըյս պատկառելի հեղինակաց կարգը կըր-
 նանք գասել Յովհաննէս Սեղրոսեան հայազգի
 մատենագիրը , զոր գործոյս առաջին մասին մէջ
 յիշեցնիք , եւ ըսինք՝ որ գրածներուն մէջ աստ-
 ուածարանական խնդրոց վերաբերեալ հատուած-
 ները Մարինովիչ աստուածաբանին թելադրու-
 թեամբը դրուած են . եւ հայազգի Պաղինեան
 եպիսկոպոսը գրքին դատախազութիւն բրեր ալ
 է նէ՛ չէ կըրցեր Հոովմայ առաջը դատապարտե-
 լի ցուցընել : Ըսիկայ՝ Սուրբեղի եւ Լէտեղմա-
 յի վկայութեանց յենլով կըսէ թէ Հոովմ
 կըրնայ անջուր պատարագելու սովորութիւն ու-

նեցողներուն դիջանիլ (Պատմ . յիշատ . հասար . Գ
 էր . 157 . 158) :

Վերապատուելի հեղինակին վկայն է Գրի-
 տենդեան ժողովը . որ ԻԲ . գումարման մէջ
 ըսած է . « թէ որ մէկն ըսէ թէ բաժակին գի-
 », նիին անոր համար ջուր խառնելու չէ , վասն
 « զի Վրիստոսի սահմանադրութեանը հակառակ
 », է , նզովեալ ըլլայ » : Եւ որովհետեւ մէկ
 բան մը նզովքով արգիւրուի նէ՛ սովորաբար այն
 բանը ընդդէմ հաւատոյ կը սեպուի . ուստի
 Բէրրանէ արդի աստուածաբանն ալ ըսած է թէ
 սուրբ պատարագի բաժակի ջուր խառնելու հար-
 կաւորութիւնն 'ի հաւատոց է (Ծառ . 17 . հարցոյ .
 մաս . Բ . գլ . Գ . նախադասութեան . Գ .) :

Գրիտենդեան ժողովոյն ըսածին համար
 կըսենք թէ Հայաստանեայց եկեղեցւոյ չվե-
 րաբերի . վասն զի ջրախառն գինւոյ դործա-
 ծութեան դեմ խօսողներուն մէջ մէկ հատ մ'ալ
 չկայ՝ որքան որ գիտնիք , որ ջրախառն պատա-
 րագելը Վրիստոսի տեսան մերոյ սահմանադրու-
 թեան հակառակ է ըսէ : Ըսող կայ յերաւի ,
 թէ վերջին ընթրեաց ատենը Տեառն մերոյ սե-
 ղանին վրայ գտնուած գինին՝ որկէց 'էր սրբա-
 գործածը , անջուր էր . եւ ասիկայ հաստատուի .
 համար սուրբ գրոց մէջ բան չըկրնալով գըտ-
 նել՝ հրէից սովորութեան կը դիմեն , որ այն
 ալ պէտք եղածին չափ ստուգուած չէ . այսու
 ամենայնիւ այս պիտի կարծիք մը պատճառ բըռ-
 նելով ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներուն ջը-

րախառն գինւով պատարագելու սովորութիւնը
 չեն դատապարտեր: Վիտոմբ որ Տէրմմեր չը-
 սաւ առաքելոց թէ չըլլայ որ պատարագին զի-
 նիքն մէջ ջուր խառնէք. հարկաւ անջուր ընե-
 լու է. եւ միայն ասանկ ըսողները կրնան ի-
 րաւունք ունենալ պնդելու թէ ջուր խառնե-
 լը Տեառն մերոյ սահմանադրութեան հակառակ
 է, որով սուտ խօսած եւ նզովքի արժանի եղած
 կըլլան. որովհետեւ այն եկեղեցիէն՝ որուն ան-
 դամ գտնուած են, այսպիսի սնտօսի պատճառով
 մը դատուելին արգարացընելու կաշխատին:

Իսկ թէ որո՞ւ է այդ նշովքը. Քէրրոնէ
 կըսէ (անդ) թէ « ուղղակի նոր աղանդներուն
 ,, կը դըպչի ,, . եւ մեզի շատ ծանր կուգայ թէ
 այս տեղ եւ թէ ուրիշ պարագայներու մէջ անս-
 նելը որ վերապատուելի հեղինակը մեզի հետ
 այնպէս կը խօսի՝ ինչպէս որ լատին աստուածա-
 բանները բողոքականներուն հետ կը խօսին որ-
 պէս թէ Հայաստանայց եկեղեցին ալ անոնց
 բազմաթիւ ազանդներէն մէկն ըլլար: Ըսոր
 այսպէս ճամբայ մը բըռնելը՝ մեր համազգի հը-
 սովմեական եղբայրները մեզնէ աւելի խորշնցը-
 նել եւ հեռացընել է. բայց ինչպէս առաջ ը-
 սինք՝ անջուր պատարագելը սուրբ Լուսաւորչէն
 աւանդեալ ըլլալուն համոզուողներուն համար
 աւելի ծանր վտանգ կայ բողոքականներուն մօ-
 տեցընելու: Եւ հոգւոց փրկութեան նախա-
 ձախնդիր եւ խղճ մտաց առաջնորդ եկեղեցական
 մը՝ ինչպէս է հիմախան Կորբէրոսիեանց վերապատ-

ուելի հեղինակը, քրիստոնեայ մը այսպէս վը-
 տանգէ հեռացընելու պարտական է, եւ չէ՞ թէ
 հաւատոյ դաւանութիւնը նոյն ըլլալով՝ թեթեւ-
 բաններու համար իրարմէ դատուած համադրինե-
 րուն՝ առաւել եւս իրարմէ հեռանալու խօսքեր
 խառնելու:

Քէրրոնէի այնքան չեմք նեղանար. որ վե-
 րագրեալ խօսքէն անմիջապէս ետքը կըսէ. բո-
 ղոքականներն « աւելի ընաբեցին միաբնակինե-
 ,, րուն եւ քաջանեալ կայերուն օրինակին հետե-
 ,, լի, որոնք պատարագին անպակի գինւոյ գոր-
 ,, ծածուցութիւնը Վիտիստոս միայն մէկ բնու-
 ,, թիւն կենալուն հաստատութիւն ընդունե-
 ,, ցին ,, : Քէրրոնէ Հայերը չէր ճանչնար. եւ
 թէպէտ Հայերը գիրներ կատարեալ արգարա-
 ցուցած էին համօրէն քրիստոնեայ եկեղեցեաց
 եւ գլխաւորապէս Հոմայ առաջը՝ թէ մի բնու-
 թիւն ըսելին եւտիքականներու մարով չէ. եւ
 անջուր գինւոյ գործածութիւնն ազգային հայ-
 րենաւանդ սովորութիւնն անխախտ պահելու
 համար է՝ եւ ոչ թէ հակառակ ընողները պա-
 խարակելու համար. բայց Քէրրոնէ՝ որ աստուա-
 ծաբանութիւն կը գրէր եւ կը սովորեցընէր.
 եւ ոչ թէ եկեղեցական կամ կրօնական պատ-
 մութիւն, այսպիսի բաներո հետազօտելու պար-
 տականութիւն չունէր. գուցէ Հոմով գտնը-
 ուած հայազգի հսովմեականներէն ալ՝ որ բրօ-
 բականայի Ուրբանեան դպրոցը կարդացած են
 կամ կը կարդան, եւ Հայոց եկեղեցական եւ

Հայրապետական գրքերուն՝ բուն լատին եւ հաւ-
յերէնէ բնաւ տեղեկութիւն չունեցող իմաս-
տուններէն աւելի տեղեկութիւն չսունին, լը-
սած էր որ Հայերը եւտիքական են: Ասոնց՝
որ իրենց ժամանակակից եւ ազգակից անձանց
համար վկայութիւն կուտան, խօսքերնին հայե-
րը զրպարտող Յոյն մատենագրաց խօսքին նման
գրածներով իբրեւ ճշմարիտ գրելը մեղադրելի
չէ. առ առաւելն՝ լըսածին պարզմտութեամբ
հաւատալով՝ իր կամացը եւ խղճին գէմ զըր-
պարտիչ եղած է:

Իսկ թէ հին յոյներէն որ հեղինակն է որ
հայոց եկեղեցւոյն համար այդ անտեղի եւ մար-
դու միտք չգալու սուտը մըտածեր եւ գրի ան-
ցուցեր է. Անաստաս Մինայեցին՝ որ եօթ-
ներորդ դարուն վերջերն էր, առաջինն եղաւ՝
որչափ որ գիտեմք, հայոց անջուր գինիով պա-
տարագելուն սյրպէս մոլար զիտաւորութիւն մը
ունենալ ցուցընողը: Ասիկայ իրեն Առեցոյց—
() Կիլիզա — անուն գրքին մէջ կըսէ թէ « միա-
բընականերն իրենց պատարագին մէջն անգամ
« գիրենք կը յայտնեն անապակ գինի մատու-
« ցանելով առանց ջուր խառնելու. հասկըցը-
« նել ուզելով թէ Յիսուս Քրիստոս ոչ մար-
« մին ունի եւ ոչ հոգի, այլ միայն Աստուա-
« ծութիւն, »: Բայց չըսեր թէ գինին որ յատ-
կութեանը կողմէն Աստուածութեան կը նման-
ցընեն, եւ ոչ մանաւանդ հոգւոյ՝ ոգելից ըլ-
լալուն համար. եւ հոգւոյն ալ զգայական կա-

րողութեանը՝ որուն հետաւութիւն մը կը պատ-
ճառէ արեւցութեամբ. եւ այս կողմէն մարմնոյ
աւելի պատշաճութիւն ունի: Թէ որ գինին
Աստուածութեան հետ յարաբերութիւն մ'ու-
նենար նէ՝ ճգնաւորները եւ ժուժկալութիւն
սիրողները գինիէն չէին հրաժարեր. հին օրի-
նայ մէջ նազովբացներուն՝ եւ նոր օրինաց մէջ
ապաշխարողներուն զինք խմելը չէր արդիուէր:
Ասոնք չմտածելով ետքէն եկող հակառակասէր
յոյները, եւ միայն այն նայելով որ միաբնա-
կաց անուամբ հայոց վրայ մոլորութեան նշան
մը ցուցուցած կըլլան, Անաստասոյ գրածը
սիրով ընդունեցին եւ իրենց գրուածներուն
մէջն առին: Ասոնցմէ մէկն է Վիկեփորոս յոյն
պատմիչը, որ Թ' Երորդ դարու մատենագիր
մ'է. եւ յատկապէս հայերը յիշելով անոնց
գիտաւորութեանը գուշակութիւն կը հանէ
անջուր պատարագիւն: Վերապատուելի հե-
ղինակն ասոր վկայութիւնը մէջ բերելէն ան-
միջապէս ետքը կը յարէ. թէ « քաւ լեցի,
« մենք ասանկ ոչ կուզենք եւ ոչ կրնանք
« հաստատել » (Գիժնալ. Կարբէք. էր. 266):
Ասով Հայք բողոքականաց անջուր գինեով պա-
տարագելնուն առաջնորդ ըլլալէն ալ, մի բը-
նութիւն ըսելնուն տրուած ծուռ մեկնութե-
նէն ալ կաղաթին: Այլ յիրաւի՝ մեր իմաստուն
մատենագիրը Վիկեփորոսի ըսածին պէս մոլար
գիտաւորութիւն մը մեր սուրբ եկեղեցւոյն վը-
րայ հաստատել չուզիր. վասն զի չկընար-

րայց երբ ուրիշ մը չըրանալով այդպէս սուտ
 եւ զրպարտիչ խօսք մը իբրեւ ճշմարիտ հաստա-
 տելու ըլլայ նէ՛ անոր այն սխալն ամէն տեղ
 տարածելու կողմնն եւ ձեռնտու կըլլան իրենց
 լուսութեամբը : Բէրրոնէի ասորոսաքանակիան նախ-
 ասանց գիրքը — Բրեւեթեօ՛նէ՛ Բեօք՛ծիւն — զօր
 քովերնիս ունիմք , Վ՛իեննայի Մխիթարեանց
 սպարանէն ելած է : Թէ՛ որ սպագրիչք ազգա-
 սէր եւ ճշմարատսր անձինք ըլլային , եւ Վի-
 կեփորոսի զրպարտութիւնը հայոց վրայ հաս-
 տատել չուզելնին անկեղծ ըլլարնէ՛ հեղինա-
 կին այն խօսքին տակը կարճ կամ երկան ինչ-
 պէս որ է նէ ծանօթութիւն մը կըլնէին . եւ
 իրենց ազարդիւն քան ինչ անով արդիւնաւոր
 կընէին . Բի՛ որ այդ գիրքը կարդար նէ՛ այդ-
 պիսի ծանօթութեամբ մը սխալը շիտուած կը
 գընէր . եւ հոյոց եկեղեցւոյն վրայ ծուռ
 կարծիք եւ նախապաշարում մ'ունէր նէ կը
 վերնար . որով ազգիս համար ալ մեծ երախտիք
 մ'ըրած կըլլային . որովհետեւ ինքն Բէրրոնէ
 շատմայ մէջ աստուածարանութեան դաստուռ
 եւ զիրքն ալ Աւրոպայի բազմաթիւ բարունարան-
 ներուն (եկեղեցական դպրոցներուն) մէջ աստ-
 ուածաբանական ուսման դասագրքը ըլլալով ,
 շատ ժամանակ չանցած՝ այս կէտիս վրայ բոլոր
 եւրոպացի եկեղեցականներուն մտացը մէջ մեր
 ազգային եկեղեցւոյն համար տիրած նախապա-
 շարումը կը վերնար . եւ զրպարտիչները կը
 խայտառակէին : Այն իսկ հեղինակն ալ սպագ-

րիչ ծանօթարարէն շնորհակալ կըլլար . եւ դու-
 ցե անկէց ետքը հրատարակելիք սպագրութեանց
 մէջէն այդ սխալը վերցընէր . կամ բուն հե-
 ղին սկիին Վիկեփորոսի վրայ ձգելով ինք պա-
 տասխանատու չըլլար . դուցե՛ ծանօթութիւնը
 ձեռքն ունենալով ինքն ալ իր կողմէն ծանօ-
 թութիւն մ'աւելցընէր բանին սուտ ըլլալը
 ցուցընելով :

Գանք Բէրրոնէին՝ ջրախառն պատարագե-
 լըն ՚ի հասարոց է ըսելուն , որ մեր հեղինակին
 պատճառ տուած է կարծեմք՝ ըսելու թէ չը-
 ուովմայ հայրագետն ալ չկըրնար անջուր պա-
 տարագը ներելու զիջանիլ . որովհետեւ ՚ի հա-
 սարոց եղած բանը տնօրինման տակ չմտնէր :
 Բայց Սուարեղ եւ Լէտեղմա՛ երկուքն ալ ան-
 ուանի աստուածաբաններ , մէկը վկայեց թէ
 անապակ զինուով պատարագելու համար կարե-
 լի է տնօրինմամբ հրաման առնուիլ . եւ միւսն
 ըսաւ թէ այդպէս պատարագելու հարկ ըլլայ
 նէ տնօրինման ալ կարօտութիւն չկայ : Ուրե-
 մըն այդ երկու երեւելի աստուածաբանները
 այդ բանին ՚ի հասարոց ըլլալը չեն գիտեր . ը-
 սել կըլլայ որ՝ աստուածաբանութիւն գրելու
 ելեր են , եւ իրենց պաշտպանելու եկեղեցւոյն
 հաւատքը չեն գիտեր : Եւ այդ ալ ընդունուելու
 բան չէ . այս բանի մէջ սխալ մը կայ նէ՛ ո-
 թոչեւ եւ գանել պէտք է թէ որինն է Բէր-
 րոնէի , թէ Սուարեղի եւ Լէտեղմայի . եւ ա-
 սիկայ դանելու համար ուրիշ աստուածաբանա-

կան կանոն մը կայ :

Այն բանն որ 'ի սահմանագրութենէ եկեղեցոյ է՝ կըրնայ անօրինուիլ . վասն զի եկեղեցին իր սահմանածը անօրինելու իշխանութիւն ունի : Արդ՝ գինիին ջուր խառնելն 'ի սահմանագրութենէ եկեղեցոյ է . ուրիմն կըրնայ անօրինուիլ : Սոսա՞ս հաստատելու համար Քերթնէէն զատ աստուածաբանի կարօտ չեմ : Սփիւկայ վերոյն շանակեալ տեղը կըսէ . « ոչ ալ նոյնը (ջրախառն պատարագելը) հարկաւոր « ըլլալ կը պնդեմք եւ կը պաշտպանեմք . որ « մինակ Քոնստանտին քրիստոսի անուիլ . այսինքն՝ Քրիստոս ջուր խառնեց ըսելէն չհետեաիր ջուր խառնելը Աստուածային հրաման է եւ հարկաւոր է ըսել : Եւ չէր կրրնար ալ Քէրթնէն ասանկ ըսել . որովհետեւ Պրիտենդեան ժողովոյն քրիստոնէականը յայտնի կըսէ թէ « ջուր խառնելը բացարձակապէս հարկաւոր չէ » (ծան . Ք . գլ . 4 . 17 . եր . 214 . արդ . Հոտփ . 1796) : Բերրոնէ իր ըսածին 'ի նմանութենէ ալ ապացոյց մը տալ ուզելով կըսէ . « ապա թէ ոչ՝ անխմոր հացն ալ , ուրիշ « շատ բաներ ալ Ստուածային հրամանէ պարտաւորիչ սեպելու կըլլանք . զոր մարգ չըսեր : « Աւրեմն առիկոյ հարկաւոր կը սեղենք 'ի հրա- « ծանէ եկեղեցոյ , որ յայտնի կըլլայ նոյն ե- « կեղեցոյ անընդհատ սովորութենէն , եւ « նոյնը ենթադրող շատ կանոններէն » : Քայց այս ալ ըստ մեր կարծեաց , Հոսմայ եկեղեցոյ

առիգերական Պրիտենդեան ժողովոյն քրիստոնէականին՝ ջուր խառնելը քացարկապէս հարկաւոր է ըսելուն հետ չմտարար . անով կըրնայ միտարանիլ , որ քա ինք հարկաւոր է , Հընովմայ եկեղեցոյն անընդհատ սովորութեանը նկատմամբ : Աւրեմն՝ այս նկատմամբ , որ սկիզբէն 'ի վեր անջուր գինուով պատարագելն ալ Հայաստանեայց եկեղեցոյ անընդհատ սովորութիւնն է , այնպէս ընելը նոյն հարկը կուենայ 'ի հրամանէ եկեղեցոյ Հայաստանեայց . եւ ինչ որ Ռովմա Աղուինացին խմորեալ կամ անխմոր հացով պատարագելու համար ըսաւ , թէ Յոյն քահանայ մը անխմոր հացով , եւ լատին քահանայ մը խմորեալ հացով պատարագէնէ՝ երկուքն ալ կը մեղանչեն , նոյնը կըրնամք ամենայն իրաւամբ ըսել թէ Յոյն կամ լատին կամ Ասորի քահանայ մը անջուր պատարագելով , եւ Հայ քահանայ մը ջրախառն պատարագելով կը մեղանչեն : Աղուինացոյն խօսքը մէջ րեւած եմք գրքիս սուղին մասին վերջին գլխոյն մէջ : Ընեց աստուածաբանը (ընդհա . վարդապ . աստուածաբ . հր . Գ . եր . 292) կըսէ թէ՛ լատին խորհրդատուրերուն մէջ հրահանգ կայ որ՝ թէ որ քահանայ մը սրբազործութենէն առաջ գինիին ջուր խառնելու մտնայ նէ՛ ետքը պէտք չէ խառնել . վասն զի 'ի հարկաւորութենէ խորհրդոյն չէ :

Սէկ ուրիշ ապացոյց մ'ալ՝ ջրախառն գինուով պատարագելն 'ի հասարոց չըլլալուն : Փը-

լորենտան ժողովքին հայոց աղգէն ալ մարգ
հրաւիրուած էին, որ ժողովքը լըմընալէն
եաքը հասան. եւ Եւզիմէոս Պ' Հոովմայ հայ-
րապետը պատշաճ սեպեց հայոց համար առան-
ձին "հրահանգ աւլ * : Այս հրահանգին մէջ
յիշեալ հայրապետը կըսէ թէ " սուրբ հաղոր-
" դութեան նիւթը ցորենի հաց եւ խաղողէ
" հանուած գինի է, . — Էննամ որ Էն'դէ — Էն-
" նի յոբէոյ — Արովհետեւ յայտնի էր որ Հայք
պատարագի նիւթ ըրած էին ցորենի հացը եւ
անջուր գինին, եւ ասիկայ Հոովմայ անտուա-
ծարանները ճգիտէին. մանաւանդ որ այս ժո-
ղովքէս միայն 97 կամ 96 տարի առաջ՝ հայոց
աղգին եւ եկեղեցւոյն ՂՃԻ, տեսակ մոլորու-
թիւն ձգող պարսաւադիրը Հոովմայ հայրապե-
տին տրուած էր. թէ որ ջրախառն գինւով պա-
տարագելն 'ի հասարոց գիտցուէր նէ՝ հարկաւ
Եւզիմէոս Պ' հայոց տուած հրահանգին մէջ
ստիպելու էր որ գինիին հետ քիչ մ'ալ ջուր
խառնեն. կայ յորգոր մը նոյն հրահանգին մէջ
այսպէս ընելու. բայց այն չկայ թէ 'ի հասարոց
կամ գոնէ 'ի հարկաւորութենէ խորհրդոյն է՝
Եւ այս է հրահանգին խօսքը: " Արովհետեւ
" ամէն եկեղեցիները, լատիններունն ու յոյ-
" ներունը նորածին եկեղեցւոյ ժամանակէն 'ի
" վերջոյս սովորութիւնս պահեցին. եւ մինչեւ

* Այս հրահանգը ժողովոյն հեղինակութիւնը
չունի լատինացւոց մէջ:

" հիմայ կը պահեն, նոյն հայերն ալ ընդհա-
" նուր քրիստոնեայ աշխարհի համաձայնին, եւ
" քահանայներնին պատարագի ըստակի գին-
" ւոյն հետ քիչ մը ջուր խառնեն, . (Հար-
տուին.) Հասանուտ իրողոց. հասար. Թ. Եր.
439) : Եւ ասոնցմէ առնելով Շուէց՝ Ա իէն-
նայի Համալսարանի աստուածաբանութեան
դասատուն՝ կըսէ իր վարդապետական կախարհէ
աստուածաբանութեան գրքին մէջ՝ զոր Ա իէննայի
Միտիմարեանք տպած են 1854 թուին. " պա-
" տարագելի գինւոյն ջուր խառնուելու է .
" բայց ասիկայ 'ի հարկաւորութենէ խորհրդոյն չէ, .
այսինքն՝ խորհուրդը կատարեալ ըլլալու համար
հարկաւոր չէ՝ : Այսն աստուածաբանը քիչ մը
ետքը այսպէս կը խօսի. " թէպէտ՝ ինչպէս որ
" Հոովմէական քրիստոնէականը (որ է 'իջ-
" րիտենդեան ժողովքինը) կըսէ, գինիին ջուր
" խառնելու ծանր պատճառներ կան, որ առանց
" մահացու մեղաց զանց ընել չըլլար*, բայց
" չըլլայ ալ նէ խորհուրդը կըրնայ կայանալ :
" Այս ալ իրաւամբ կը սահմանուի. վասն զի
" ջուր խառնելու համար Վրիստոսի օրինակէն
" զատ Աստուածային օրէնք մը չկայ, որ՝ թէ
" որ այսպէս բան մը կենար՝ եւ զանց ըլլուէր
" նէ, խորհուրդը ոչինչ եւ անվաւեր կըլլար:

* Այլըլ՝ Թովմա Ագուինացիին խօսքովը ցուցու-
ցինք Թէ ո՞վ մահացու մեղաց մէջ կիյնայ ասիկայ
զանց ընելով:

Ի Եւ ասոր Աստուածային օրէնքի մը դորու-
 Ի թեամբ հարկաւոր ըլլալը սուրբ գիրքը կամ
 Ի աստուածութիւնը մեկի իմացընելու հին . ըստ
 Ի ասոնց մէջ այնպէս բան մը չկայ : Աստի սուրբ
 Ի հայրերն ալ՝ որ ջուր խառնելու կը ստիպեն ,
 Ի ինչպէս են սուրբն Կիպրիանոս (Բարձր . ԿՂ .
 Ի առ Կեկեկեանոս) եւ անկէց ետքը Պրահար-
 Ի եան Ժողովքը (առ Մանեսայ . հասարձ . Ժող .
 Ի հասար . Բ . եր . 155) , կը խոստովանին որ
 Ի ասանց ասոր ալ Քրիստոսի արիւն կը ըլլայ ,
 (հոյր . Գ . եր . 290—292) :

Եւ որովհետեւ ամէն աստուածաբան վե-
 րոյգրեալ սկզբունքն ընդունած են , թէ եկե-
 ղեցին իր տուած հրամանը կը ընայ անօրինել ,
 եւ որովհետեւ նոյն աստուածաբանը՝ որ ջուր
 խառնելն Ի հասարոց է ըսաւ , դարձեալ ըսաւ
 թէ յԱստուածային հրամանէ զէ , յեկեղեցական հրամ-
 նէ է , ընական եւ բանական հետեւութիւն է
 ըսելը թէ Սուրբեղի եւ Լէտեղմայի պէս Բեր-
 րոնէ ալ ասոր յեկեղեցւոյ անօրինելի ըլլալը
 կճանաչէ , եւ այս այսպէս ըլլալով՝ ջրախառն
 պատարագելն Ի հասարոց է ըսելն այնպէս չեմք
 հասկընար , որպէս թէ անջուր գինեով պատա-
 րագելն ընդդէմ հասարոց ըսել կը ըլլայ . վասն զի
 այն ատենը մարդ չէր կըրնար հրաման ընել
 որ ընդդէմ հաւատոյ բան մը դործուի : Եւ
 ասկէց դատ՝ քործ մը ընդդէմ հասարոց ըլլալ
 ենթադրելը խելք չհասնելու բան մ'է . հա-
 ւաքը մտքէն է . անոր հակառակն ալ մտքի

ներգործութիւն ըլլալու է : Անջուր պատարա-
 գելն ընդդէմ հաւատոյ կը ըլլար յիրաւի՝ թէ որ
 մտար մտքի մը նշան ըլլար . այսինքն՝ թէ որ
 Աստուածայ եւ Կիկեփորոսի եւ ուրիշ յոյն
 մատենագրաց՝ եւ անոնցմէ աննելով Բերրոնէի
 ըսածին պէս՝ Ի Քրիստոս շիթեալ կամ իրար
 խառնուած մէկ բնութիւն դաւանելու նշան
 ըլլար : Բերրոնէի՝ ջրախառն պատարագելն Ի
 հաւատոց է ըսելը միայն այս մտքով ճշմարիտ
 է . բացարձակ մտքով հասկըցուի նէ՝ Սուրբե-
 զի եւ Լէտեղմայի եւ նոյն իսկ Բերրոնէի եւ
 վերոյգրեալ աստուածաբանական սկզբանց հա-
 կառակ է , եւ շատ անտեղի հետեւութիւններ
 կունենայ : Աստի մեր վերապատուելի հեղի-
 նակէն ներումն կը խնդրեմք ըսելու , որ ինքն
 ասոնք Ի հարկէ քան զմեզ աղէկ գիտէ . ուստի
 այսպէս ըսելը՝ Հոյաստանայց էջմիածնական
 անուանած եկեղեցին կաթողիկոս Ժողովրդեան
 հերետիկոս ցուցընելով անկէց հեռացընելու
 համար շինուած բան մըն է . եւ խօսքն ալ երկ-
 դիմի ընելը՝ որ մէկ կողմէն կը ցուցընէ որ
 Հոովմայ եկեղեցին Հայոց խօսքովն իր նախնի
 սովորութիւնը փոխելով անջուր պատարագե-
 լու յանձնառու չըլլար . եւ միւս կողմէն ալ
 կը ցուցընէ որ հայերը ամէնն ալ միայն ան-
 ջուր պատարագելու թոյլտուութիւն խնդրելու
 պայմանով Հոովմեական ըլլալու հաճին ալ նէ
 խնդիրնին կը մերժէ , վարպետութիւն մը կե-
 րելի : Աստի այս ալ նսխընթացներուն պէս

քրիստոնէական իմաստէ օտար մտքով շինուած
ամբաստանութիւն մը սեպելով՝ երկու եկե-
ղեցեաց իրարմէ Կաթէր հիմնական դասանութեանց
կարգէն դուրս կը նետեմք. եւ կըսեմք թէ վե-
րապատուելի հեղինակին ըսածը ոչ Պրիտեն-
դեան ժողովոյն համաձայն է, ոչ Վատին աստ-
ուածաբաններուն, եւ ոչ Հռովմէական եկե-
ղեցւոյ՝ հետեւարար:

ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ա.

Ընդհանր պարտաւելլ օրինակներն արեւոտ ըւ-
լալոն լիցայ:

Հայաստանեայց եկեղեցին պաշտպանողներն՝
անջուր պատարագելոյն նախկին ազգային ա-
ւանդութիւն ըլլալը սուրբ Յովհանն իմաստա-
սէր հայրագետին վկայութեամբը կը հաստա-
տեն. որ՝ ըստ ՚ի մէջ բերելոյ հիմնական Կաթէ-
րութեանց հեղինակին է այս. « արժան է զհայն
,, անխմար՝ եւ զզինին անապակ հանել ՚ի սուրբ
,, սեղանն. ըստ աւանդելոյն մեզ սրբոյն Պրի-
,, գորի. եւ ոչ խոնարհիլ յայլ ազգաց քրիստո-
,, նէից աւանդութիւնս. զի սուրբ Լուսաւորի-
,, չքն՝ յօրինականէն բերեալ զոյս՝ առաքելաբար
,, հրաման ետ կատարել իւրոց վիճակերցն. որ-
,, պէս եւ զաղն օրհնութեան յազապացն զն-
,, մունս իսանել. եւ ըստ կարգի ղեւտացւոցն

,, ազգաւ սեպհականել ղեկեղեցւոյ շնորհ. եւ
,, մեզ ՚ի նմին պարս է յարանալ եւ չթողուլ
,, ՚ի բաց եւ չտնել Դորաձեւ ինչ, (հիմնական
Կաթէրութեան երես 258):

Սուրբ հայրագետին այս վկայութեանը
վրայ մեր վերապատուելի հեղինակը նախ եւ
առաջ պատմական քննաբանութիւն ժը կընէ.
եւ կըսէ որ՝ Լուսաւորիչէն չորս հարիւր տարի
ետըր եկողի մը վկայութիւն չգօրեր երբ Լու-
սաւորչին համար բան մը կը վկայէ: Արովհե-
տեւ ասիկայ դաւանութեան վերաբերեալ բան
մը չէ, կարճ խօսքով կըսեմք որ վերապատուե-
լի հեղինակը սուրբ Յովհանն իմաստասէրին դը-
րատան գրքերը չէ տեսած՝ որ իմանայ թէ այս
խօսքս անկէց առաջ իստող հեղինակը սուրբ
Լուսաւորչէն քսի ի տարի ետը է* . բայց ան-
շուշտ՝ քան զսուրբն Յովհանն իմաստասէր ա-
ւելի մօտ կըլլայ անոր: Եւ հին գրքերէն՝ մեր
ձեռքն անցածներէն աւելին՝ պէս պէս աղետալի
դէպքերով կորսուած ըլլալը զիստող մարդ մը

* Չամչեան Հ. Մկրայէլ (պատմ. հայոց. հարց
Բ. էր. 323) Գովհաս կամ զեղեկոսին համար՝ որ
իմաստասէր սուրբ հայրագետն է հարիւր տարի մը
առաջ էր. կըսէ թէ յատուկ նամակ մը գրեց
Կոստանդնուպոլսի պատրիարքին՝ մեր ազգային ծե-
սերուն վրայ: Հարկաւ ասոր մէջ անապակ գինեով
պատարագելու վրայ ալ իստած՝ և սուրբ Լուսա-
ւորչէն աւանդեալ ըլլալուն վկայած կըլլայ: Եւ
ասով ժամանակաց ասքերբութիւնը երեք հարիւր
տարի կիջնէ:

չկրնար դիւրաւ հաճութիւն տալ այդպէս ժամանակագրական կշռագատութեան մը , որ կենթադրէ թէ այդպէս խօսք մը սուրբ Յովհան Իմաստասէրէն առաջ ըսող չկայ . որկէց կը հետեւի որ սուրբ հայրապետը ինք շինած է ասիկայ . եւ մենք այդպէս ենթադրութիւն մը բընաւ չեմք ընդունիր :

Երկրորդ քննարանութիւնը օրինակն բառը ծուռ հասկընալուն վրայ հիմնած է . Եւ այս է օրինակն որքէնթեմանց իմաստուն հեղինակին խօսքը : Անջուր պատարագելը սուրբ Առսաւորին աւանդեց ըսելը՝ « նա եւ իբրեւ ձեռնարկութիւն՝ բոլորովին անոր է : Անոր պարունակած ձեռնարկութիւնը սա է , իրովհետեւ , հին օրինաց կամ պատերին ընթրեաց հացը , բաղարջ էր , եւ գինին անջուր եւ անապակ , սուրբն Վրիգոր անկէ առնելով՝ իրեններուն , համար պատարագին գինին անջուր կամ անապակ սահմանեց , (էր . 260 . 261) : Բայց իմաստուն հեղինակն որկէց գիտէ թէ սուրբ հայրապետն այդպէս ձեռնարկութիւն մը կընէ՝ կամ ընելու միտք ունի : Վիմացինին դիւրաւ պատասխանելու համար անոր չըսածն ըսել տալը վիճարանական՝ բայց ոչ հաւատարմական հնարք մ'է : Թէ որ մէկ ծանօթութեան մը մէջ նոյն հեղինակին՝ Անն գերմանացւոյն խօսքէն առածն իրաւ է նէ , թէ հրեայք պատերաստնին ջրախառն գինի գործ կածէին , անջուր գինի եղած չըլլար հին օրինաց

կամ պատերին գինին . եւ շատ յայտնի չէ թէ հեղինակը՝ որ իր ձեւացուցած ձեռնարկութեան տակը յիշեալ ծանօթութիւնը կրնէ նէ՝ սուրբ հայրապետը արդէտ ցուցընել կուզէ , թէ ինքը հակասարանել :

Ասանկ ձեռնարկութեան մը հանել ուղած անտեղութիւններուն մէկը սա խօսքովս կը բացատրէ : Բայց այսմ ենթադրութեան ըսելու կըլլանք թէ՝ « սուրբն Վրիգոր կըրնար ասանկ՝ « ուրիշ քրիստոնեայ ազգաց մէջ չտեսնուած « բան մը՝ իբրեւ նոր տառերէլ մը կարգադրել : « Չենք կըրնար ասկէ աւելի եկեղեցական բան « կըզբանց հակառակ գործողութիւն երեւակա « յել : Սուրբն Վրիգոր որչափ սրբութեամբ « մեծ , նոյնչափ ալ տեղեակ էր , որ ասանկ՝ « եկեղեցիէն , անոր հիմնական սովորութիւն « ներէն եւ բոլոր քրիստոնեայ ազգաց կարգե « րէն անկախ՝ տառերէլ բան մը կարգադրե « լու իշխանութիւն ոչ ինք՝ եւ ոչ հրեշտակ « յերկրից ունէր : Ասանկ՝ չէ թէ գործողու « թիւն մը , հայպ նաեւ մտածութիւն մը որ « եւ իցէ սրբոյ ընծայել , (թէ որ խօսքին հե « տեղութեանը մտադիր ըլլանք) , կըրնայ զա « նիկայ նախատելու հաւասար սեպուիլ , : (էր . 262 . 263) :

Հարեանցի մը սա տեսնելու է հեղինակիս խօսքին մէջ՝ որ եկեղեցական սովորութեանց եւ կարգաց մէջ ուլիշ քրիստոնեայ ազգերէն անկախ սովորութիւն մը կարգադրելու՝ ոչ սուրբ

Դուսաւորիչը եւ ոչ երկնից հրեշտակ մը իշխանութիւն չունի եղեր : Ամէն եկեղեցեաց մէջ իրարմէ տարբեր եւ իրարմէ անկախ եկեղեցական կարգադրութիւններ եւ ծէսեր կան , զորս Հոովմայ եկեղեցին ալ արգելած չըլլալէն զատ՝ իր քարոզիչներուն խրկած կոնգակներովը եւ ժողովներու վճռով եւ աստուածաբաններու վարդապետութեամբը պատուէր տուած է որ շխախանուին : Ասոնք ո՞վ է կարգադրեր՝ որոց պահպանութեանն այսքան նախանձախնդիր կըլլայ Հոովմայ եկեղեցին : Տունաց խմորեալ հացով պատարագելը գոնէ հիմնական ըսուելու սովորութիւններուն կարգն է , եւ բաղարջ հացիւ պատարագող քրիստոնեայ ազգաց սովորութենէն անկախ է . ուրեմն երկնաւոր հրեշտակ մ'անդամ այսպէս կարգադրելու իշխանութիւն չունէր . եւ ի՞նչպէս կըլլայ որ Հոովմայ եկեղեցին այս կարգադրութիւնս այնպէս ամուր բռնած է , որ բաղարջ հացով պատարագող յոյն քահանայն մահացու մեղաց մէջ ինկած կհրատարակէ : Աւրիշ օրինակ մը : Ս' կրտսութեան արարողութիւնը ընկրմամբ ըլլալը առաքելական աւանդութիւն ըլլալուն վրայ տարակոյս չկընար ընել ով որ Պօլոս առաքելոյն թուղթերը կարգացած է . որ մկրտութեան՝ Վրիստոսի թաղմանն օրինակ ըլլալը՝ ընկղմումէն առնելով կբացատրէ . ըսել է որ՝ այս ալ էփ աղէկ հիմնական ըսուելու արժանի սովորութիւն մ'է , որ մինչեւ իններորդ

եւ տասներորդ դարերը՝ եւ աւելի ետքերն ալ՝ ինչպէս որ եկեղեցական հնութեանց հմուտները կը վկայեն , ամէն ազգաց մէջ ամէն տեղ ընկղմմբ կը մկրտուին . եւ մինչեւ հիմայ՝ հրոսովմական եկեղեցիէն զատ եկեղեցի չկայ որ ընկղմմբ չընէ : Արդ՝ այս բանս ալ՝ որ ըստ վերապատուելի հեղինակին , հիմնական սովորութիւն մ'ըլլալով երկնից հրեշտակ մ'ալ հակառակը կարգադրելու իշխանութիւն չունէր , ո՞վ կարգադրեց , զոր մինչեւ հիմայ Հոովմայ եկեղեցին կը պահէ՝ քուրք յիստոնեայ ազգաց կարգերէն անկախ : Ասով ըսել չեմք ուզեր թէ Հոովմայ եկեղեցւոյ մկրտութիւնը անվաւեր է , եւ անոր մկրտածները նորէն մկրտելու է , այլ սա ցուցնել կուզեմ՝ որ մեր խմաստուն հեղինակին՝ Հայաստանեայց եկեղեցւոյ արարողութեանց եւ սովորութեանց դէմ խօսելու չափազանց փափաքըն այսպէս անպատճհ բաներ խօսել տուեր է . որուն հետեւութիւնը թէ որ միտքը գար նէ՝ հաւատալի ճշմարտութիւնները փոխելու համար հրեշտակաց իշխանութիւն չունենալը քաշկըստելով եկեղեցական կարգադրութեանց վրայ չէր բերեր :

Այս կէտիս վրայ այսքանս հերիք սեպելով որիշ ըսածը տեսներք : Սուրբ Դուսաւորիչը , Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնադիրը , կամ՝ թէ որ աւելի պատշաճ կը տեսնուի , վերսնորդիչն ըլլալով , (որովհետեւ անոր հաւատք բարոզած ժամանակը Հայաստան քրիստոնէական

եկեղեցի կար, թէ եւ դադարի, ինչպէս որ պատմութիւններէն կը սովորեմք, կրնար իրեն պատշաճ տեսած կերպովը կարգադրել իր կառավարելու եկեղեցին, հրեշտակներուն այսպէս բանի մը իշխանութիւն ունենալը կամ չունենալը հոգ չընելով: որովհետեւ Աստուած իր եկեղեցւոյն կարգադիր ըլլալու վերաբերեալ պաշտօն մը չըյանձնեց հրեշտակներուն, ասիկայ եկեղեցւոյ հովուաց ընելու բանն էր, միայն անոր նայելու էր՝ որ հաւատոց անբժու թեանը դպչելու բան չըլլայ: Արթեմ, մանաւանդ թէ շատ աղէկ գիտեմ, որ ասանկ ըսելով հերետիկոսութիւն մ'ըրած չեմ ըլլար: վասն զի հաւատոյ չդպչող վարդապետութիւնները արարողութեան կամ ծէսի կը վերաբերին: Առովմայ եկեղեցին շատ մը վճիռներով՝ իրաւքանչիւր եկեղեցեաց ծէսերն անխախտ պահելու պատուէր կուտայ: Աստի վերապատուելի հեղինակին վերոգրեալ հատուածը, եւ չէ թէ անջուր պատարագին անդոզը սուրբ Առասաւորին էր ըսելը, մեծ նախառիք է չէ թէ միայն սուրբ Առասաւորչին, այլ եւ Առովմայ աթոռոյն ալ, ամէն եկեղեցեաց եկեղեցական ծէսերը կարգադրող սուրբ հոյրերուն ալ, եւ այն ատենը կարգարանան բողոքականները, որ եկեղեցական ծէսերը արհամարհանօր մերժելու պատճառ՝ մինչեւ հիմայ այն կը բերէին թէ սուրբ գրոց մէջ չկայ. եւ մեր իմաստուն հեղինակին ըսածէն առնելով կըլնան ասկէց ետ:

Ընն ըսել թէ որովհետեւ եկեղեցական հիմնական ծէսերը կարգադրելու՝ երկնից հրեշտակն անգամ իշխանութիւն չունի, ուստի մենք ալ մինչեւ հիմայ կարգադրուած եկեղեցական արարողութիւններն ամէնը մէկէն մերժելու իրաւունք ունիմք:

Ասոնք վերապատուելի հեղինակին ըսել տուող ասիթը՝ սուրբ Յովհան Խմաստասէր հայրապետին գործածած օրինակն բառին ըստ հաճոյս տուած ծուռ մեկնութիւնն է, չըսեմ ազգիտարար ծուռ հասկընալը. զոր անոր իմաստութեանը չեմ կըրնար վայելեցընել: Այս բառս՝ հին օրէնքի վերաբերեալ ըսել մեկներ է. սակայն մեր որ գործածուած տեսներն է՝ ամէն տեղ այդ նշանակութիւնը չունի. եւ բառին կողմութիւնն ալ նշանակութիւնն այդպէս ամփոփել չվերցընէր: Բառին ըստ կազմութեան բուն նշանակութիւնը օրէնքի մը վերաբերեալ ըսել է. ինչ օրէնք կըլլայ նէ ըլլայ. Մովսիսական կամ Քրիստոնէական, Առաքելական կամ Աղգային կամ քաղսքական կամ մարդկային. եւ ասոնց յարարութեամբ օրինասոր բառին նշանակութեանը կը մօտենայ, երկուքն ալ մի եւ նոյն բառէն ելած ըլլալով: Այսպէս քանի մի կերպ նշանակութիւն ունեցող բառ մը՝ առանց խօսքին պարագայներուն միտ դնելու մէկ անփոփոխ նշանակութեան մը կապելն ու անոր վրայ ձեռնարկութիւն շինելը՝ տրամաբանական կանոնաց դէմ է. եւ Խմաստասէրին

կամ խաբէական յեւնարկութեան ըսուածներուն կարգը կը մտնէ . որոնք գործածելու համարն չը տար ողջամիտ տրամաբանութիւնը : Մենք այս խօսքիս մէջ օրինական ըսելը՝ եկեղեցական հայրենուանդ օրէնքներու կամ կանոններու վերաբերեալ կը հասկընամք : Եւ այս իմաստը՝ վերապատուելի հեղինակին կազմակերպած ձեռնարկութիւնը զոր սուրբ Յովհան Իմաստասիրին ընել կուտայ՝ բոլորովին կ'ոչընչացընէ :

Այս բանս մէջ հրեական օրէնքի ակնարկութիւն չտեսնող՝ մինակ մենք չենք : Սուրբն Ներսէս Շնորհալի՝ Ալեքս իշխանին գրած նամակին մէջ կըսէ . անջուր պատարագելը հին է . « զի 'ի Լուսաւորչէն մերմէ 'ի սրբոյն Իրիզու » րէ ունիմք զայս աւանդութիւն . որդէս ընկաւ » րա նա 'ի նախնեաց սրբոց հարցն որդ յառաջ Ժան զնա » (Քնդհան . էր . 63 . Եր . Արտասնդ .) : Որիչ մտօք , բայց միշտ մեր իմաստուն հեղինակէն տարրեր իմացեր է Չամչեան Հ . Մեքայէլը . որ ասոր վրայ ուրիշ կարծիք մը կը հիմնէ : Արսէ . սուրբ Լուսաւորիչը Հոովմ գացած ատենը՝ Հայոց նորահաստատ եկեղեցւոյ վրայօք սրբոյն Աղղբատրոսի Հոովմայ հայրապետին իմացուց թէ սուրբ պատարագն անջուր գինիով ընել սորվեցուց . սուրբ հայրապետը ասոր հաճութիւն տուած կըլլայ : Բայց խոհական վարդապետն իր հասկըցածին չվստահիր . բասի վրայ ձեռնարկութիւն չլինել՝ որպէս թէ բուն իմաստը գտած ըլլայ . այլ երկբայական

ոճով կըսէ . « եւ թերեւս յայս հայիտոյն բան » Յովհաննու Իմաստասիրի , թէ սուրբ Լուսաւորիչն « յօրինականէն բերեալ » աւանդեաց » ազգիս զանխմար եւ զանջուր պատարագելն . » ուր օրինական ասելով՝ դիցէ իմանայ զօրինակն նաղրական իշխանութիւն զլիւոյն եկեղեցւոյն » (Պատմ . Հայոց . հր . Բ . էր . 648) : Եւսկէց կը հասկընամք որ այս վարդապետս ալ՝ որ հոովմէական եկեղեցւոյ հաւատոց եւ կանոնացն անհմուտ չըլլալը իր գրածներովը , եւ նոյն աթոռոյն անընդունելի բան մը գրած չըլլալը՝ Հայոց պատմութեան գրքին՝ գրոց քննութեան ատենէն անդատապարտ ելլելովը կը հասկըցուի , անջուր պատարագելը տնօրինելու բան ըլլալուն կը հաւանի , եւ հիմնական պարբերապետաց հեղինակէն ասով կը տարբերի՝ որ Հոովմ անջուր պատարագելու հրաման տալով բոլոր Հայերուն իր իշխանութեան տակը գիմելիքն ալ գիտնայ նէ այս հրամանս չտար չըսելէն զատարդէն սուրբ Աղղբատրոս Հոովմայ հայրապետէն այդ հրամանը եւ հաճութիւնը տրուած կենթադրէ : Եւս ներկու Հոովմէական հեղինակ՝ որ իրարու հակառակ կը խօսին . մէկին գրածը ամբաստանող ունենալով Հոովմայ գրոց քննութեան ատենէն քննուելի եւ անդատապարտ ելլեր է , ինչպէս որ վերը յիշած եմք . միւսոյն համար առ այժմ լոկ համբաւ մը կայ՝ թէ Հոովմայ բերանն է եւ պաշտօնական գրութիւն մ'է . սակայն մինչեւ հիմայ Հոովմ

գեա նոյնը քննած չէ՝ գուցէ չզիտէ ալ որ
 ոչդպէս զիրք մը իր հեղինակութենէն կտոր
 դողցեր՝ ազգին մէջ պարծելով կը պըտըտի.
 գուցէ քննութեան քուրսային մէջ ստնէ նէ՝
 մտածին պէս չելլէ : Այս երկու հասովմէական
 հեղինակաց որն ընդունելը՝ կաթոլիկ քարեպաշտ
 ժողովրդեան ընտրութեանը կը թուուենք . մի-
 անգամայն սուրբ Վերսէս Շնորհալի հոյրպակե-
 տին ըսածն ալ՝ զոր քիչ մը առաջ զրինք՝ անոնց
 յիշեցընելով . մենք տեսնենք թէ սուրբ Լու-
 սաւորչէն առաջ բան մը կըրնանք գտնել :

Կանան քրիստոսի մէջ սրբոյն թագէտի առաքե-
 լոյ անունով կանոններ կան . որոց համար
 չեմք կրնար ըսել թէ հարազատութիւնն իւ-
 րաբանչիւր բաւերուն վրան անգամ կը տարա-
 ծի . բայց չեմք ալ ընդունիր ըսելը թէ բոլո-
 րովին շինծու են* . յաւելուածներ կան , բայց

* Իբնօտօ՝ Մէլիքէ Ե-Յովհանն կամ Էւտիքական
 Ասորիներու պարագմաբարոյնէրուս վրայ գրած ճառին
 մէջ՝ որ Արեւելեան պարագմաբարոյնց հաւանան առա-
 ջին հատորին սկիզբը տպուած է , (համար 4) : կը
 վկայէ որ Մեգրիկեան գրատան մէջ Յակոբեան ա-
 սորուց եկեղեցւոյ կանոններուն ձեռագիր հաւաք-
 ման կարգը՝ սրբոյն Արքեի Ե-Ազիտայ վարդապետութեանց
 համայնի կանոնէր գտեր է : Եւ նոյն մատենագիրը քիչ
 մը վերը Արքեի թագէտու առաքելոյն հետ ասորի-
 ներուն մէկ սեպելը վկայէլէն կրնամք կարծիք ը-
 նել թէ այս կանոններս ալ մեր կանոն զբքին մէջի
 գտնուածներն են : որ յանուն սրբոյն թագէտու
 առաքելոյն գրուած են :

մէկ բունիմը վրայ . վասն զի ոչինչի վրայ յա-
 ւելուած չըլլար : եւ թէ որ բոլորովին շինծու
 են նէ՝ ինչո՞ւ համար շինողը առաքելոյն անու-
 նովը շիներ է՝ եւ ճշ սուրբ Լուսաւորչի անու-
 նով , զոր թէ որ ընէր՝ հարազատութեան ա-
 ւելի հաւանական կերպ մը կառնուր սուրբ
 Յովհան Իմաստասերին վկայութիւնովը :

Սրբոյն թագէտի առաքելոյ կանոններուն
 վեցերորդն է այս : « Օհաց պատարագին յու-
 ,, բում աւուր մատուցանիցեն՝ ՚ի նմին աւուր
 ,, եփեսցեն խաչապէս դրոշմաւ . նոյնպէս եւ
 ,, զգինի սուրբ բաժակին սուրբ ամանօք հան-
 ,, ցեն ՚ի սուրբ սեղանի : Եւ մի որ յանդգնես-
 ,, ցի խառնել ջուր յայն բաժակն , զի չէ այն
 ,, աստուածահաճոյ . այլ անգոսնելի մտաց . եւ
 ,, որ որ առնէ՝ այնպիսին չէ քրիստոնեայ , այլ
 ,, նզովեալ եղիցի : » թէ որ հիմնական պարբերու-
 թեանց հեղինակը կուզէ՝ կը հաւանիմք ըսելու թէ
 զէ չէ՝ ոչն ստորագրուածն բաւերէն սկսելով մին-
 չեւ վերջը՝ Վաղղիկոսի ժողովքէն ետքը եւ
 եկեղեցական ծիսից տարբերութեան համար յու-
 նաց հետ վէճին սաստկացած ժամանակն աւել-
 ցած է . բայց բունը՝ որուն վրայ այս կտորը
 պատուաստուած է՝ հին է . եւ այս հնութեանս
 վկայ ալ ունիմք Ասորիները , որ թէպէտ հիմայ
 ջրախառն կը պատարագեն , բայց հին ատեննե-
 րը անջուր կը պատարագէին : Ասոնց երկիրն՝
 ինչպէս յայտնի է՝ Միջագետաց հարաւակողմն
 էր՝ Արեւիսայի սահմանակից . եւ նոյն իսկ Ե-

գետիա քաղաքը Ասորեստանի մասն էր, որ Մի-
ջագետք Ասորեոց կըսուի: Սուրբ առաքեալն
Նդեհիա գնաց քարոզելու. կանոններն ալ այն
կողմերը հրատարակեցան, եւ Ասորիներն ալ
ընդունեցին Հայոց պէս: Լըպրէօն կըսէ՝ թէ
ժամանակ մը Յակոբեան Ասորիք անջուր պա-
տարագելու սովորութեան հետեւեցան, եւ
ետքը միաբան անկէց հրաժարեցան (Բացասք.
աղջի. եւ սրար. պարսք. ճար. Ե. 12)*.
Բայց չըսեր թէ այդ աղբը այդ սովորութենեղ-
երբ ետ կեցաւ. մեզի բաւական է ըսելը թէ
առաջ ասոր կը հետեւէին. որկէց կը հետեւ-
ցընեմք թէ՛ երբ յունազգի Եւտիքէսի աղան-
դոյն հետեւեցաւ անոնց առաջնորդը Յակոբ
Ծանծալոս Պարատէոս՝ ջուր խառնելու սովո-
րութիւնն ալ եւտիքականներէն առաւ, որ յու-
նական եկեղեցւոյ սովորութիւնը չէին ձգած.
եւ ջուր խառնելն ալ ըստ իմիք եւտիքական
մոլորութեան յարմարութիւն մը կըրնար ու-
նենալ անոնց կարծեացը մէջ. կըրնային զինի-

*Անաստաս Անտիոքացիին Յակոբեան կամ Եւտի-
քական Ասորիներուն համար ըսած է թէ անջուր
գինւով կպատարագեն: Ռընօտօ՝ արեւելեան պարսա-
քամարոյցս հաւանածն երկրորդ հատորին յառաջաբա-
նութեան մէջ կը կարծէ թէ Հայոց համար ըսե-
լիքը Ասորեոց համար ըսած է սխալմամբ: Բայց
Լըպրէօն՝ որ նոյնը լճաբար կը խօսի՝ եւ Ռը-
նօտօէն ետք է, աւելի հաւատարմութեամբ կէ-
րեւի մեզի:

ին եւ ջրոյն իրար իաւնուելը՝ որով ջուրը երես
քիչ ըլլալուն համար գինւոյն մէջ կընկղմի եւ
անղբայի կըլլայ, մարդկային բնութեան աստ-
ուածայնոյն հետ խառնուելուն եւ գրեթէ ոչնչա-
նալուն օրինակ բանել. վասն զի ջուր խառնե-
լուն տակ այս վարդապետութիւնը աւելի դիւ-
րաւ կը մըանէ՝ քան թէ անջուր գինւով պա-
տարագելոյն աակ՝ ինչպէս որ կը կարծէր Մի-
կելիորոս յոյնը, եւ անկէց խարուող լատին
աստուածարանները: Ծանծալոսի օրէն այս
ջրախառն պատարագելու սովորութիւնն այնպէս
արմատացաւ Ասորեոց մէջ, եւ ասոր այնքան նա-
խան ձախնդիր եղան, որ Գիննեկոս Պարսալի-
պի անուն մէկ եպիսկոպոսին Հայոց անջուր
պատարագելուն դէմ գիրք ալ գրեց: Եսկէց
կերեւի որ սրբոյն իրագէտսի անունը կ'ող կա-
նոնը՝ սուրբ պատարագին զի իին ջուր չխառնե-
լու պատուէրը կը պարունակէ, զոր Հայոց եւ
Ասորեոց միօրինակ աւանդելով՝ եկեղեցական օ-
րէն մ'եղած էր այն աղբոց մէջ. եւ սուրբ
Լուսաւորիչն ալ այս սովորութիւնս օրինակաւն
աննելով ազգին աւանդեց ըսելը՝ այս մտքով
հասկընալն աւելի բնական է:

Եյս գլխոյս սկիզբը՝ ունիդօրներուն ամ-
բաստանութեանցը դէմ Սոյ ժողովոյն կողմէն
Դանիէլ վարդապետին գրածը յիշեցինք. եւ
անջուր պատարագելու վրայ խօսածն ալ մէջ
բերինք. որ կըսէ թէ « յոյներն առաջ պատա-
րագին զինւոյն ջուր չէին դնել »: Սուրբ

Աերսես Շորհալոյն ըսելը թէ սուրբ Լուսաւորիչն իրմէ առաջ եղող սուրբ հայրերէն ինչպէս տեսաւ նէ՛ իւր ազգին անանկ աւանդեց, ասիկայ կը հաստատէ: Ըստնց նայելով Չամչեան Հ. Սիրայէլ կըսէ. « զայս մի ինչ ճըշմարտութեամբ կարեմք ասել, թէ սուրբ Լուսաւորիչն մեր, որպէս եւ եզրա ՚ի յոյնս բնակեալս ՚ի Աեսարիա, սյնպէս աւանդեաց ՚ի հայս. քանզի անհաւատալի իմն երեւի թէ այլազգ իցէ կորգեալ նա՛ քան զոր տեսեալ էր ՚ի յոյնս, (Գրք. Հայ. հր. Բ. էր. 646): Ըստ իմաստուն վարդապետս ըսածին տակէն սա երկուայլ աւանդութիւնը կը հանէ. թէ որ սյն ատենը Աեսարիոյ կողմերուն յոյները անջուր կը պատարագէին նէ՛ սուրբ Լուսաւորիչըն ալ անջուր աւանդեց. իսկ թէ ջրով կը պատարագէին նէ՛ հարկ կըլլայ ըսել թէ անիկայ ալ ջրով աւանդեց. ասկէ ընապէս սա խընդիրս կը ծագի, թէ հայերը երբ անջուր պատարագելու սկսան. եւ Չամչեան Հ. Սիրայէլի այս բանիս վրայօր ըրած հետազօտութեան արդիւնքն է այս:

Աղեմէս Ասլանոս իրեն Վաթանուհի Հայոց Եկեղեցւոյն գրքին մէջ՝ զոր գրքիս առաջին մասին մէջը յիշեցինք, շատ տեղ, (հր. Բ. էր. 203 եւ հր. Գ. էր. 560, 567, եւ ուրիշ տեղեր) կըսէ թէ Հայերը մինչեւ Յովհանն (Օճնեցիին ժամանակը, որ է սուրբ Յովհանն Իմաստասէր հայրապետը, ջրախան կը պատարագէին. եւ

այս սովորութիւնս անիկայ վերջուց: Բայց անհարկ է որ ասիկայ ճշմարտ ըլլայ՝ կրօն Չամչեանը. վասնզի նոյն սուրբ հայրապետը ազգին բոլոր եպիսկոպոսներովը եւ վարդապետներովը դումարած ժողովքին մէջ ինչպէս կը համարձակէր ըսելու թէ սուրբ Լուսաւորչէն ՚ի վեր ունիմք այս սովորութիւնս. եւ թէ որ ինքն ըլլար ասիկայ սահմանողը նէ՛ ո՞վ կը լսէր, եւ այդպէս յանդգնութիւն մը շէր խայտառակեր: Ե՛ւ եւ Կրստանդնուպօլսի Տրուդեան ըսուած ժողովը՝ որ 692 թուին դումարեցաւ, ուստի եւ Յովհանն Իմաստասիրին կաթուղիկոս ըլլալէն 26 տարի առաջ, օտարի ոճ մանգաղ խօթելով՝ ինչպէս որ կըսէ առակը, հայոց անջուր գինով պատարագելը կը դատապարտէ: Աւրեմն Յովհանն Իմաստասէրը շէր անջուր պատարագելը սովորեցընողը: Գուցէ ըսող ըլլայ՝ կրօն Չամչեան, թէ Աերսես Շինողն էր այս սովորութիւնս հայոց մէջ մացրնողը. բայց ինքը ասիկայ երկու փաստով կը հերքէ. մէկ մը՝ որ այս կաթուղիկոսիս ըրած ժողովքին պատմութեանը մէջ ալ, Ըսողի եւ ուրիշ ազգային պատմագրաց մէջ ալ միայն այսքանս ըսուած է որ անոր օրովն ոմանք ջրախան պատարագելու սկսան, եւ հայրապետը ժողովքով նզովք կարգաց անոնց որ հայրենի սովորութիւնը ձգելով ազգը կը գայթակղեցընէին: Եւ երկրորդ. Եզր կաթուղիկոսին համար ըսուած է որ ջրախան պատարագելու հաճութիւն տուաւ՝ յունաց

ինչորոյն զիջանելով, Կարնոյ ժողովրին մէջ :
 Բսել է որ անջուր պատարագելու սովորութիւնը
 Եղբ կաթուղիկոսէն ալ առաջ էր : Ըրդ՝
 Եղբ կաթուղիկոս ըլլալն է 629 թուին . որուն
 յաջորդեց Կերսէս Ընողը՝ 640 թուին . ու-
 րեմն՝ Կերսէս Ընողին ժամանակն ալ սահ-
 մանուած չէ ասիկայ : Եւ ըստ սյոմ ետետ եր-
 թալով չկրնար գտնուիլ թէ անջուր պատարա-
 գելն երբ սահմանուած է . եւ թէ որ սուրբ
 Լուսաւորչը ջրախառն սահմանած ըլլար եւ
 ետքը մէկն ելլէր փոխէր նէ՛ անհնար էր որ
 պատմութեանց մէջ անյիշատակ մնար : Ըրդը
 սուրբ Լուսաւորչէն մնացած աւանդութեանցը
 հաւատարիմ աւանդապահ ըլլալով այս բանիս
 վրայ փոփոխութիւն մը ըլլար նէ վէճ մը կը
 հանէր . խոսովութիւն մը կեցիւր . վէճը հան-
 դարտեցընելու համար ժողով մը գումարել
 պէտք կըլլար . եւ սյուպիսի ժողովոյ մը վճիռը
 ու սահմանը հարկաւ գլխկառնուէր . իսկ մենք
 սուրբ պատարագին զինչոյն համար խօսք՝ Եղբ
 կաթուղիկոսին օրը գումարուած Կարնոյ ժողով-
 քէն առաջ չգիտեմք . եւ երբ որ յիշուած է նէ՛
 անջուր պատարագելու սովորութիւնը հին կը
 գտնեմք , թէ ջրախառն պատարագելն ընդու-
 նած ըլլայ այն ժողովքը , եւ թէ մերժած ըլ-
 լայ :

Ըստնք այսպէս ըլլալով կը մնայ հետազո-
 տել թէ արգեօք Լուսաւորչի ժամանակը յու-
 նաց անջուր գինելով պատարագելուն մէկ յիշա-

տակ մը կայ մի : Հին ժողովները . ինչպէս են
 Կիկիոյ , Կոստանդնուպոլսի Ը . Վաղկեգոնի ,
 եւ Կոստանդնուպոլսի Ը . եկեղեցական արարո-
 ղութեանց ազգ ազգէ տարբերած կէտերուն վը-
 րայ բան չեն խօսիր . Կիկիոյ ժողովրին՝ Չատ-
 կի տունն օրն որոշելն ինչո՞ւ համար ըլլալուն
 վրայ դործոյ յիշ . գլխոյն մէջ կը խօսինք .
 ուստի ասոնց լուսթեանէն հաստատուն փաստ մը
 չառնուիր . միայն այսքանս կրնանք հասկընալ
 որ յիշեալ ժողովները այս սովորութիւնս ընդ-
 դէ՛ հասարոյ չեն տեսեր . կարեւորութիւն մը
 չեն տուեր . եւ իրենց լուսթեամբը՝ թէ որ այս
 ժողովներուս հնագոյններուն , զոր օրինակ Կի-
 կիոյ ժողովրին ժամանակը՝ որ մեր սուրբ Լու-
 սաւորչին ժամանակին հետ կընոյնանայ , յոյնք
 ալ անջուր չէին պատարագեր նէ , մեր սուրբ
 Կերսէս Ընորհալի հայրապետին ըսածին ըս-
 տորագութիւն տուած կըլլան . որ ըսաւ , թէ
 անջուր եւ թէ ջրախառն պատարագէ քահանայն ,
 վարքը արժանաւոր կամ անարժան ըլլալէն
 կախում ունի պատարագողին մեղանչելը կամ
 ոչ . չէ՛ թէ ջրով կամ անջուր ըլլալէն : Բայց
 մենք՝ այն հին ատենները յունաց անջուր պա-
 տարագելուն անուղղակի հետք մը կը գտնեմք :

Սուրբն Սրդանէս , սուրբ Լուսաւորչին
 երկրորդ որդին , որ իր եղբօրը սուրբ Ըրիստա-
 կէսին մարտիրոսական մահուանէն ետքը՝ 339
 թուին , ուստի Կիկիոյ սուրբ ժողովքէն 14 տա-
 րի ետքը կաթուղիկոս եղաւ , Եւ ուսաղէմի սուրբ

Մակարիոս հայրապետէն՝ որ նշյն սուրբ ժողովոյն հայրապետներէն էր, եկեղեցական կարգաւորութեանց վրայ խրատներ եւ հրահանգներ ուղեց: Սուրբ Մակարիոս հայրապետն ալ պատասխան խրկեց. որուն մէջ ութը կանոն պատճենակուած է. եւ ասոնց եօթներորդն է այս. « հաց ջերմ եւ բաժակ անապակ հանցի ՚ի սեղան ձեռամբ սարկաւազաց. եւ քահանայն, որ հնեացէ եւ կատարեացէ զխորհուրդն » (Կանոնքերս ԳԼ. ԺԿ. ա. 2. ՍԷ. Չած. հր. Ը. պարմ. հայ. էր. 423): Ըստիկայ կը ցուցնէ կամ այն՝ որ Արուստղէմի եկեղեցին ալ այն ատենն անջուր կը պատարագէր, կամ թէ 2-րդ եկեղեցւոյն սուրբ Լուսաւորչէն սորվածը զիտնալով նոյնպէս ընելու հաճութիւն կուտար: Ընդ սրբորդս առաջինն չափ հաւանականութիւն չունի. թէ որ այնպէս ըլլար նե՛ր քահան էր ըսելը թէ ձեզի աւանդածին պէս ըրէք. ուստի առաջինը հաւանական կը մնայ. եւ ասով կը հաստատուի սրբոյն Արքեպի Ենորհալւոյ՝ եւ Սոյ ժողովոյն գրածները. որոց 2-րդը էլ Չամչեան ալ հաւանութիւն կուտայ, ինչպէս որ տեսանք:

Յունաց մէջ՝ որ հիմայ իրենց պէս չընողները հերետիկոս սեպելու չափ ն. խանձախընդիր են ջրախան պատարագելու, անջուր պատարագելու սովորութիւն կենալուն ուղղակի վկայութիւն ունիմք ԺԿ. 7-րդու եկեղեցական պատմութենէն:

Հովելպերի Ընտելմոս եպիսկոպոսը Կոստանդնուպոլիս գտնուելով Արևմտիկայի Արքեպիստէս մետրապոլիտին հետ ըրած հանդիսաւոր վիճաբանութիւնը Հոովմայ Արքիսէոս Գ. պպին հրամանովը 1149-ին գրի առած է. որուն համառոտութիւնը կը գտնուի Արքեպիստէս Գ. Գրքերս Ժ. Գրքերս Գրքերս մէջ (հարս Ը. էր. 397—98): Յիշեալ գերմանացի եպիսկոպոսը յոյն մետրապոլիտին կը հարցնէ թէ ինչու համար անապակ զինի կը սրբագործեն, եւ սրբագործութենէն ետքը ջուր կը խտանեն: Արքեպիստէս կը պատասխանէ թէ սուրբ գրոց մ. ջ գրուած չէ թէ Քրիստոս վերջին ընթրեաց ատենը սուրբ բաժակին մէջ ջուր խտանեց. եւ մեր սրբագործութենէն ետքը ջուր խտանելը՝ սուրբ հաղորդութեան միջոցաւ ժողովորդեան ընդ Քրիստոսի միանալը կը նշանակէ. եւ ջուրը ժողովուրդը նշանակելուն վկայութիւն ալ կը ըրերէ յայտնութեան գրքին՝ ջուրը ժողովուրդը կը նշանակէ ըսելը (ԺԿ. 15): Գրոյն այսպէս նշանակութիւն տալերին կայ մինչեւ հիմայ յունաց Կոստանդնուպոլիս եկեղեցւոյ գործածած խորհրդատեարին մէջ. որ սրբագործութենէն եւ սուրբ մարմինն ու արևներ ժողովորդեանէն երկրպագութիւն ընդունելու համար ՚ի սրբութեան սրբոց ըսելով ըստ ճրարցընէն ետքը եւ հաղորդութենէն անմիջապէս առաջ ջուր խտանած ատենին « եւ զաւելուսի սրբին եւ ջուր » ըսելու տեղը՝ սա համառոտ գոչ

հուլիսը կընեն . « օրհնեալ ըլլայ քու սուր-
բերուդ եռանդը հիմայ եւ ամէն ատեն » :
(Լըպրեօն . Բացարարական աղբից եւ արարողու-
թեանց պատարագի . հարոր Ռ . էր . 352) * .

Սուրբ բաժակին տաք ջուր խառնելու
սովորութիւնը երբ սկսած ըլլալը հեռա-
զօտող քննիչները կը գտնեն որ վեցերորդ դա-
րէն անդին չանցնիր . որ մեր սուրբ Լուսա-
ւորչէն 200 տարի ետք է : Բսել է որ անկէց
առաջ չկար . եւ որովհետեւ Նիքիտէսի տուած
պատասխանէն կիմանամք որ սրբագործութենէն
առաջ ջուր խառնել բնաւ չունէին հին ատենը ,
անջուր պատարագելը յունաց նախնի սովորու-
թիւնն էր ըսելը , եւ հետեւաբար՝ սուրբ Լու-
սաւորիչը յոյներէն առած էր ըսելը ճիշդ եւ

* Ըսուածներէն կը հասկընամք որ սուրբ բա-
ժակին խառնուած ջուրը չէ՛ թէ Տեառն մերոյ
առտուածային կամ մարդկային բնութեանց մէկը
նշանակելու գիտաւորութեամբ է , ինչպէս որ
կարծեցին կամ կարծել զուրեցին Անաստաս Սի-
նայեցին եւ Նիկեփորոս , անջուր պատարագող-
ներուն վրայ եւտիցականութեան աղտ քրեւու
մտքով . այլ ժողովորեան սուրբ խորհրդոյն հաղորդ
ըլլալուն օրինակ մ'է . եւ որովհետեւ իրականն
եղած տեղը օրինակի շատ կարօտութիւն չմնար .
ուստի ջուր խառնելը կամ շիտանելը՝ երբ մոլոր
գաւանդութեան նշանի տեղ գործ չածուի նէ՛ ան-
տարբեր բան մ'է . եւ կիմանան պարբերութեանց հեղի-
նակին ասոր վրայ գրած երկար խօսքը (էր . 251 -
33) անպէտ եւ անզօր կը մնայ :

բնական հետեւութիւն մ'է :

Լատիններուն մէջ ալ տեղ տեղ այս անջուր
պատարագելու սովորութիւնը մտած ըլլալուն
նշանները կը գտնուի . եւ սա՛ կը տեսնենք , որ
առաջուց 'ի վեր ջրախառն պատարագելը մէջեր-
նին ընդունուած ըլլալով՝ այս սովորութիւնս որ
նորամուտ էր՝ կը մերժէին : Վերամիայի Սո-
գունտիա (Մայից) քաղաքին մօտերը Գրիպուր
ըսուած տեղը 895 թուին գումարուած ժողով-
քին ժՌ՝ կանոնը՝ անջուր պատարագելը կար-
գելու : Այն ժամանակները Գաղղոյի Աուա-
սոն քաղաքին Հրիկուլփոս եպիսկոպոսը աոյն
արգելքը կը դնէ իւր վիճակի քահանայներուն :
Յայտնի է նախ՝ որ սովորութիւն չեղած բանի
մը արգելք չըլլար : Երկրորդ՝ ընդդէմ հաւա-
տոց զեղծում մը արգելող կանոններուն սովոր-
ական կերպն է՝ արգելքը մտիկ չընողները կար-
գէն լուծել եւ բանադրել . եւ ոչ յիշեալ ժո-
ղովը եւ ոչ Հրիկուլփոս եպիսկոպոսը՝ առանց
ջրոյ պատարագողներուն այդպէս արգելք մը դը-
նելէն ետքը կարգէ լուծուիլ եւ բանադրանք
չեն սպառնար : Արեմն՝ ջրախառն գիւնով պա-
տարագելն 'ի հասարոց է ըսելը՝ անապակը իբրեւ
եւտիքականութեան նշան գործածողներուն
գէմ է :

Սեր հակաուկորդաց մասնաւոր դիտողու-
թեան արժանի այն է՝ որ 541 (կամ ըստ կա-
լանոսի , 545) թուին գումարեալ Արեւիանու
(Օրլէանի) չորրորդ ժողովքին չորրորդ կա-

նոնը կըսէ . « սուրբ բաժակին նուիրագործու-
 ,, թեանը՝ որ թոյ բերքէն քամուածէն զատ բան
 ,, նուիրելու մարդ չյանդգնի . այն ալ՝ առանց
 ,, ջուր խառնելու , , Եսիկայ իրեն դէմ կառար-
 կէ Բէրրոնէ . (յ. հաղար . հր . 357) . եւ
 կը պատասխանէ (համար 361) . « մեզի դէմ
 ,, առարկուած Եւրեթիանու Ժողովոյն չոր-
 ,, րորդ կանոնն ընտրելագոյն տպագրութեանց
 ,, մէջ ասանկ է . սուրբ բաժակին նուիրագոր-
 ,, ծութեանք՝ այգւոյ պողէն քամուածէն զատ
 ,, բան նուիրելու մարդ չյանդգնի . այն ալ՝ ջուր
 ,, խառնած , , : Տարբերութիւնը լատիներէնին
 մէջ — սինէ — առանց — բառը գրուելուն կամ
 չգրուելուն վրայ է . եւ այս բառս չգտնուած
 օրինակները ընտրելագոյն սեպած են Կիմոն
 (հասարակական Ժողովոյ Գաղղիայ հր . Ը . էջ .
 261) , Լապպէ (հասարակական Ժողովոյ հր . Ե . էջ .
 382) , եւ Լարուսին (Գործի Ժողովոյ հր . Բ .
 էջ . 1437) : Ըստ ընտրելագոյն կարծուած օ-
 րինակին հետեւած է կղերմէս կալանոս . եւ այս
 կանոնս զոր անջուր պատարագողները ընդդէմ
 Բէրրոնէի կառարկէին , ասիկայ ընդդէմ անջուր
 պատարագողաց կառարկէ (հր . Գ . էր . 567) .
 այնքան վստահ է այս հեղինակներուն գտած
 օրինակին վրայ : Եւ որովհետեւ ասոր մէջ բե-
 րածը յիշեալ կանոնին վերոգրեալ խօսքերէն
 զատ պարունակած կտորն ալ կը պարունակէ՝
 այս սեղ իր գրածին պէս օրինակել արժան կը
 համարիմ : « Ոչ որ ի խնացէ մատուցանել ՚ի

,, սուրբ բաժակին , եթէ ոչ փայն որ ելանէ ՚ի
 ,, բերոյ սրժոյ խառնեալ ջրով . վասն զի սրբա-
 ,, պղծութիւն համարի զայլ ինչ մատուցանել ,
 ,, բայց փայն զոր աւանդեաց Քրիկիչն մեր , ,
 Վերջին հատուածը զոր Բէրրոնէ զանց ըրած
 է՝ ակնարկութիւն մը կը կարծեմք անջուր պա-
 տարագելու . ըստ որում հետոն մերոյ սրբա-
 գործած գինիին մէջ ջուր խառնել գրուած չէ
 սուրբ աւետարանին մէջ . Եւ ի՞նչ բնագրին մէջ
 բառ մտնալը նորէն բառ աւելցընելէն դիւ-
 ռին է . մանաւանդ երբ աւելցածն ոյնպէս բառ
 մ՝ ըլլայ՝ որ ընկալեալ սովորութեան հակառակ
 ըլլայ . եւ որու միտք կրնայ գալ Եւրեթիանու
 Ժողովքին ըսել տալ՝ որ գինին առանց ջրոյ ըլ-
 լալու է : Իսկ օրինակողներուն՝ որ հոսովհետեւ
 կան ըլլալով իրենց եկեղեցւոյ սովորութիւնը
 գիտեն , բնական էր կարծելը թէ արեւմտեան
 Ժողովի մը կանոնին մէջ առանց ջրոյ գինիով պա-
 տարագելու պատուէր չըլլար . անոր համար առանց
 բառը իրբեւ աւելորդ կարծելով վերցուցին :
 Ժողովքը իր կանոնին մէջ սինէ բառը գրեր է կամ
 չէ գրեր՝ մեր հոգը չէ . վերոգրեալ մակարեւ-
 րութիւնը միշտ նոյնը կը մնայ . թէ որ այն
 բառը գրուէ՝ լատին եկեղեցւոյ մէջ անպակ
 գինեով պատարագելը վաւերացուցած կըլլայ .
 չէ նէ՝ նշանակած կըլլայ որ վեցերորդ դարուն
 մէջ առանց ջրոյ պատարագելու սովորութիւն
 մը մտած է եղեր Գաղղիայի մէջ . զոր կանո-
 նովս վերցընելու ջանացած կըլլայ : Եւ որկէց

ճտած է այս սովորութիւնս , եթէ ոչ յոյնե-
րէն . վասն զի այն ատենը Հայք Հսովմայ ե-
կեղեցւոյն հետ հաղորդակցութիւն չունէին :

Արապատուելի հեղինակը որ Հովհան Ի-
մաստասէր սուրբ հայրապետին վկայութիւնը
կը մերժէ , եւ մեր բերած ուրիշ վկայութիւն-
ները եւ փաստերը չը յիշեր , անջուր գինեոյ
գործածութեան ծագումը հետազոտելով վեր-
ջապէս կը գտնէ Գրիգոր I : Ընաւարդցի կա-
թողիկոսին առ Հեթում թագաւոր գրած նա-
մակէն որ արեւելցիք անջուր գինի խմելու սո-
վորութիւն ունենալով՝ սուրբ պատարագին ալ
նոյնը գործածելու սկսեր են (Էջ. Գաղթ. Եջ .
271 . 272) ,

Հոովմէականք սովորաբար կըսեն թէ ան-
ջուր գինիով պատարագելու սովորութիւնը մի-
այն Հայոց յատուկ է . թէ որ անջուր գինի
խմելը նոյն օրինակ գինիով պատարագելու սո-
վորութեան ծագումն եղած է նէ՛ պէտք էր որ
եկեղեցական լեզուով արեւելեան ըսուած ազգե-
րը ամէնն ալ , Հոյները , Եսորիները , Վել-
տանիները , եւ այլն , նոյնպէս պատարագէին .
զոր չեմք տեսներ . վասն զի ատնք ամէնն ալ
ջրօխառն գործ կածեն : Ուրեմն՝ մեր անջուր
պատարագելուն այգպէս պատճառ մը չկ'նար
ընդունուիլ .

Եյս պատճառս ընդունելու համար կարծեմ
մեր վերապատուելի հեղինակն ալ քիչ մը դրժ-
բարութիւն պիտի կրէ : Պատճառն ու գործը

իրարու կապակցութիւն ունենալու են . պատ-
ճառն եղած ատենը գործն ալ անոր հետը կամ
անկէց քիչ մը ետքը ըլլալու է : Ուստի Գրի-
գոր I : կաթողիկոսին ըսածին հաւանութիւն
տալու համար ըսել պէտք կըլլայ թէ Հայերը
սուրբ Լուսաւորչին եւ սրբոյն Սահակայ ժամա-
նակը անջուր գինի խմելու սովորութիւն չու-
նէին . ետքը սովորեցան : Եյն ատենն ալ այս
սովորութիւնս ընդունելուն պատճառը եւ ժա-
մանակը ցուցընելու էր :

Թէ որ ասիկայ Հայոց ամէն ժամանակի
մշտնջենաւոր սովորութիւնն էր ըսուի նէ՛ մենք
կընդունիմք . եւ կը հեռեցընեմք որ՝ ուրեմն
սուրբ Լուսաւորչին ատենն ալ կար այն սովո-
րութիւնը . ուրեմն անջուր պատարագելն սուրբ
Լուսաւորչի ժամանակէն է : Արապատուելի
հեղինակը՝ որ ասիկայ սուրբ Լուսաւորչէն հե-
ռացընել կուզէ , գիտեմք որ այս հետեւութիւ-
նըս չընդունիր . բայց ի՞նչ ընեմք . Գրիգոր I :
ին նամակէն գտած եւ հաճութեամբ ընդունած
խօսքին հետեւութիւնն այսպէս ելաւ . եւ մեք
տրամաբանութեան նոր կանոնադիր չեմք կըր-
նար ըլլալ :

Նոյն կաթողիկոսը եւ իր խորհրդակիցնե-
րը անջուր գինիով պատարագելու յիշատակ
չեն գտեր սուրբ Լուսաւորչի գրոց եւ սուրբ
Սահակոյ կանոններուն մէջ : Եյս ատարկու-
թիւնս քիչ մը բողոքականութեան կերպ ուրի .
որ եկեղեցական աւանդութիւնները՝ սուրբ

դրոց մէջը չըզտանք ըսելով չեն ընդունիր, եւ չընդունած բաներնին գրուած գտնեն ալ նէ՛ այն գիրքն ալ չեն ընդունիր: Սուրբ Լուսաւորչի գրքին եւ սուրբ Սահակայ կանոններուն մէջ գրուած չէ՛ ըսածը սուրբ Յովհան Իմաստասեր հայրապետին կանոններուն մէջ կայ. բայց Գըրիգոր Լ, կաթուղիկոսը՝ որ ազգին հայրենաւանդ ծէսերը լատինականի փոխել կուզէր, այս սուրբ հայրապետի վկայութիւնը չընդունիր: Իր տուած պատճառն ալ կամ բողոքովին անհիմն է, կամ մեզի աւելի նպաստաւոր է՝ քան թէ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ արարողութիւնը փոխել ուզողներուն:՝

Ասոնց վրայ խօսելէն ետքը չեմք կըրնար այն ալ զանց ընել՝ որ Հայաստանեայց եկեղեցւոյ պարսաւադիրները, նախ Աղեմէս Աւլանոս, եւ այս մօտ ժամանակս հիմնական սորբերսեանց վերապատուելի հեղինակը, թող ուրիշ լատին աստուածաբանները, Տրուղեան ժողովը կը հանեն մեզի դէմ: Եւ ասոր՝ Աղեմէս Աւլանոս տիեզերական ժողովքի անուն կուտայ (Հարոյր Գ. էրէս 568) *.

* Այս տեղս ալ Աւլանոսի սովորական վարպետութիւնը կը տեսնուի, որ լատիններէնին մէջ պէտքերական բառը չընէր. որով լատին եկեղեցւոյ չէ՛ թէ իբրեւ պէտքերական՝ այլ իբրեւ ուղղափառայան անդամ չընդունած ժողովը մեզի իբրեւ տիեզերական կը լեցընել կուզէ:

Այս ժողովքս՝ սուրբ բաժակին անջուր դինւոյ մատուցանելուն եւ եկեղեցականաց ժառանգութեամբ ըլլալուն եւ սատարի խնդիրները մէկ տեղ բերած է՝ սուրբ Յովհան Իմաստասերին պէս՝ կրտ մեր վերապատուելի հեղինակը. եւ իր խօսքն է այս. «ինչպէս Իմաստասիրի վերոյիշեալ խօսքերուն մէջ, նոյնպէս անկէ 25 տարի մ'առաջ Տրուղեան ժողովին կանոններուն մէջ՝ անջուր բաժակի խնդրոյն հետ յարակից կը գտնուին ուրիշ կրկին խընդիրներ. այսինքն մատաղներու եւ Գեւական յաջորդութեամբ տեւող քահանայութեան սովորութիւնը»: Եւ տակը ծանօթութիւն կը դընէ. «Տրուղեան ժողովոյն 32երորդ, եւ 33 երորդ կանոնները աս սովորութեանց դէմ են: Բաղարջ հացի դէմ Տրուղեան ժողովը (692 ին) ամենեւին բան մը չըսեր. որովհետեւ դեռ, ինչպէս յայտնի է, յունական եկեղեցին առաքելական աթոռէն բաժնուած չէր»: Այս բաժնուած չըլլալը, եւ Հոգիմայ հետ սրբան միաբան ըլլալը տեսնեմք:

Գիտեմք որ Քիրուլարիոս պատրիարքին օրոյն արգիւնացած բաժանումն այն ատենը տակաւին եղած չէր. բայց երկու երեք հարիւր տարի մը կար որ երկու եկեղեցեաց մէջ զրժտութիւն մը մտած էր՝ որ բաժանման հիմն է: Կոստանդնուպօլսի Ը տիեզերական ժողովքին մէջ՝ Կոստանդնուպօլսի եպիսկոպոսին նախագահութիւն եւ պատրիարքական պատիւ մը տալ

վճուռեցաւ, որ անկէց առաջ արք եպիսկոպոս
 ալ չէր, ներակիայի արք եպիսկոպոսին իրա-
 ւաբանութեանը տակը պարզ եպիսկոպոս մըն
 էր: Ասիկայ այն ատենը լոկ արտաքին խնդիր
 մ'էր. բայց նոովմ' թէ իր եւ թէ Մղէքսանդ-
 րիոյ եւ Մնտիոբայ պատրիարքական աթոռներուն
 պատիւը պահելու համար հաճութիւն չտուաւ.
 վասն զի ասով պահանջուածը՝ միայն նոովմայ
 աթոռը առաջին սեպելով միւս երկու հայրապե-
 տական աթոռներէն Կոստանդնուպոլսինը վեր
 բըռնել էր: Եւ ասոր համար նոովմ' Կոս-
 տանդնուպոլսի Մ. ժողովը երկար ժամանակ
 չընդունեց: Քաղկեդոնի ժողովն ալ նոյն պատ-
 ճառին համար ժամանակ մը նոովմէն չընդուն-
 ուեցաւ, մինչեւ որ ժողովոյն քսան եւ ութ-
 երորդ կանոնը նոյն իսկ յոյները հանեցին, եւ
 անով ժողովն արեւմտեան եկեղեցւոյ ընդու-
 նելի ըրին, եւ այս կանոնս՝ Կոստանդնուպոլսի
 եպիսկոպոսը Մղէքսանդրիոյ եւ Մնտիոբայ պատ-
 իրարքներէն վեր կը դասէր: Այս կանոնը որ-
 քան վերցաւ ալ նե՛ յունաց մէջ նոովմայ
 դէմ զրգիւ մը տուաւ. եւ նոովմէն բոլորո-
 վին բաժնուելու ճամբան զիւրացընելու կը
 նայէին, մանաւանդ յունաց կայսրերը. որոց
 մէկ յայտնի փափաքն էր աշխարհական իշխա-
 նութեան հետ հոգեւոր իշխանութիւն ալ բա-
 նեցընել. եւ նոովմայ հոյրապետներն ամէն
 ատեն հակառակ կը կենային: Այս կայսրերուն
 մէկն եղաւ Հուստիանոս Բ. որ ժիշեալ Տը-

րուղեան ժողովը դումարել տուաւ:
 Այս ժողովքիս կանոններն են որ երբեմն
 հայազգի հոովմէականները մեզի դէմ կը բե-
 րեն. որով այնպէս մը կը ցուցընեն, որպէս
 թէ Աիկիոյ եւ Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի
 ժողովներուն համապատիւ բան մ'է. եւ ասոր
 կանոններն ամէն ուղղափառ քրիստոնեայք պա-
 հելու կը պարտաւորին: Մեր ազգը այս ժու-
 ղովս ամենեւին չճանաչեր. մեր նախնեաց գրը-
 քերուն մէջ անունը չկայ: Իսկ թէ նոովմայ
 եկեղեցին ինչպէս կը ճանաչէ եւ ինչ յարգու-
 թիւն կուտայ՝ հասկընալու համար բաւական
 ըլլայ Ռօբրպար անուն Յիսուսեան կրօնաւո-
 րին՝ Բարսիւնոս պատմութեան կախողիէ կեղեցոյ,
 մակագրեալ գրքին մէջ գրածը այս տեղ թարգ-
 մանել: « Երբ արեւմտեան ազգերը նոովմայ
 ,, հայրապետին գերագոյն առաջնորդութեամբը
 ,, մէկ զմէկ հաւատքի կը բերէին, եւ կամաց
 ,, կամաց քրիստոնէական կանոնադրութիւն եւ
 ,, օրէնսդրութիւն մը ձեռք կառնէին, յունաց
 ,, մէկ ժողով մը կը գումարուէր Կոստանդնու-
 ,, պոլիս: որ իր իմաստակութիւններովը եւ ան-
 ,, խորհուրդ ընթացքով եւ կաթուղիկ սէրն ու
 ,, միութիւնը աղէկ մը չհասկընալով, արեւել-
 ,, եան եկեղեցւոյ մշտնջենաւոր գժտութիւն
 ,, մը, եւ անոր կղերին անարգութիւն կը պատ-
 ,, րաստէր: Բսածնիս՝ 692 ին՝ Յուստինիանոս Բ
 ,, կայսեր Կոստանդնուպոլիս գումարած եւ պա-
 ,, ըստին մէկ սրահը ժողովուելուն համար

Տրուղեան ըսուած ժողովը կամ չափազանց
 — Գոմարիւնսկի — է : Այս ժողովս իր վրան
 օրինակներէն ժողովոյ անուն առաւ . բայց
 նոյն ժամանակի մէկ սուրբ մը , պատուակա-
 նըն Պէտա , աւելի ճիշդ խօսելով՝ Տուրական
 ժողով — Գոմարիւնսկի — կանուանէ : Եւ
 յիրաւի ասիկայ արդէն դատապարտուած մոլո-
 ղութիւններ կը սովորեցընէ . նոր սուտեր կը
 քալեցընէ . որ գլխաւոր կէտի մը վրայ բոլոր
 եկեղեցական կարգաւորութիւնը կը փոխեն :
 Ասոր համար կը տեսնեմք որ Արքեպիսպոս պապը
 մեռնելէն անգամ աչքն աննելով այս ժողով-
 քիս ստորագրութիւն չտուաւ : (Գր . Օ .
 հր . Ե . էր . 407 . Գր . Գրքի 1857) :

Ինչ կըսես երբ կը տեսնես որ հիմնական
 Գոմարիւնսկի վերապատուելի հեղինակը մեզի
 դէմ անանկ ժողով մը կը հանէ , որ հռովմե-
 ական եկեղեցւոյ յարգած անձի մը՝ Պէտա պատ-
 ուականին վկայութեանը նայելով , Տուրական
 ժողով է եղեր . եւ արդէն Գոմարիւնսկի
 Գոմարիւնսկի կը սովորեցընէ եղեր : Ինչպէս Հռով-
 մէն բաժնուած չէ եղեր այս ժողովը՝ իր սով-
 րեցուցած մոլորութիւններովը . եւ մեր իմաս-
 տուն հեղինակը պիտի ըսէ՝ արդեօք որ այն ա-
 սանը Հռովմալ անոր հետ նոյն մոլորութիւն-
 ները կը սովորեցընէր . վասն զի չբաժնուիլը ա-
 սանկ կըլլայ : Սովորեցուցած մոլորութիւնները
 մեզի պէտք չեն . եւ ինչ ըլլալնին հետադարձ-
 քը անդուոյս բանը չէ : Բայց ի վերջէ սա կը

հարցընեմք . զիտէ՞ եւ կըրնայ մեզի անանկ մէկ
 պապ մը ցուցընել՝ որ Արքեպիսպոս պապին չըսո-
 րագրած ժողովոյն հաւանութիւն տուած ըլ-
 լայ . եւ թէ որ ասիկայ անկարելի է նէ՞ ինչպէս
 որ է ճշմարտիւ , ինչպէս ինքը՝ որ հռովմեական
 ըլլալէն զատ Հռովմայ բերան ալ կարծուեր է ;
 պապին չընդունած եւ ստորագրութիւն չտալու
 համար մինչեւ իր մահը յանձնառու եղած ժո-
 ղովքի մը անուն բերան կառնու . եւ անոր կա-
 նաններէն մեզի դէմ բան կը ցուցընէ :

Արեւմտեան ընդհանրապէս խօսելով , երբ հը-
 ռովմեական մատնագիր մը , կուզէ Հայ ըլլայ
 կուզէ ուրիշ ազգէ , Հռովմայ չընդունած մէկ
 ժողով մը իբրեւ Հռովմայ չափազանց մեզի կըլ-
 ցեցընել կուզէ , եւ անոր կանոններովը չվար-
 ուելնիս մեզի յանցանք կը սեպէ , արդեօք այս
 տեսակ ձեռնարկութեան ինչ անուն տալ պէտք
 է : Գոմարիւնսկի առ Տուրական ըսուած տեսակէն
 չէ . ասանկ ըլլալու համար պէտք էր որ Տը-
 րուղեան ժողովը Հռովմայ թիտոյն ընդունե-
 լի չէ՞ ալ նէ՞ մեր ազգին ընդունելի եղած ըլ-
 լայ . ուր ընդհակառակն՝ ընդունելի չըլլալէն
 զատ ծանօթ ալ չէ : Անք ասոր յարմար ա-
 նունը չէ մը դներ . ո՞ր որ այս տեսակ ձեռնար-
 կութիւն հարեց նէ՞ անունն ալ թող այն դնէ :

Երկուստեց ժողովուրդս բարեպաշտ էլ լայ :

Երկուստեց պատարագելու վրայ ուրիշ բաներ ալ կը խօսի վերապատուելի հեղինակը . բայց կարեւորագոյն կէտերն ասոնք էին՝ որոց վրայ բուն իսկ գլխոյս եւ առաջին յաւելուածոյն մէջ խօսեցաւք . եւ ասոնք հաստատուելէն ետքը միւս խօսածներուն վրայ ուժ չմնար : Վլխաւոր տեսնալիքնիս այն էր՝ որ Ե . ասիկայ հաւատոյ դաւանութեան չվերարեցելուն համար՝ հռովմէական եկեղեցւոյ դաւանութենէն հիմնական տարբերութիւն մը չկացուցաներ : Բ . թէ սուրբ Լուսաւորչէն աւանդութեամբ հասած է մեզի : Վ . սուրբ Լուսաւորիչը ասիկայ հրէական օրէնքին հետեւողութեամբ հաստատած չէ : Արմնայ հիմայ ուրիշ քննութեան մտնել հեղինակին հետ , հրեայններէն առնուած կարծեցեալ երկու սովորութեանց վրայ , կորս սուրբ Լուսաւորիչն յօրէնականն առաւ կըսէ սուրբն Յովհան Բանաստասէր . եւ ասոնց մէկն է՝ քահանայութեան որդւոց յորդի անցնիլը . եւ երկրորդը՝ մատաղի սովորութիւնը : Եւ առջինն այս յաւելուածոյս՝ եւ երկրորդը յաջորդին մէջ կը ակննմք :

Եւ առջին վրայ մեր իմաստուն հեղինակին խօսքն է այս : « Արդիւ շեղալ խօսքերուն մէջ , նախնութեան վրայ ուրիշ երկու ենթագ-

որութիւններ ալ կ'աւելցուին՝ դուցէ նոյները , հաստատելու համար . բայց այս վերջիններն առջիններէն աւելի հաստատութեան կարօտ են : Եւ այսինքն՝ թէ սուրբն Վրիգոր սահմանադրած ըլլայ՝ որ քահանայութիւնը Հայաստանի մէջ (զեւտացւոց ցեղին նման) քահանայից ցեղին մէջ մնայ իբրեւ թառանգական , պաշտօն մը , (Հին . դարք . էր . 264) : Որովհետեւ հաստատութեան կարօտ է , հաստատուու աշխատիք :

Յիրաւի սուրբ Յովհան Իմաստասէրէն առաջ՝ մեր ձեռքը հասած հեղինակներուն մէջ ըսող չկայ , եւ ո՛չ ալ սուրբ Լուսաւորչի առնունով կանոն գրքին մէջ գտնուած կանոնները այդպէս յօդուած մը կը պարունակեն : Բայց ազգային պատմութեան աղբիւրսեպուելու արժանացած մատենագրաց գրոցը մէջ այդպէս աւանդութեան մը գործնական հաստատութիւնը ճիշդ սուրբ Լուսաւորչին օրէն սկսելով մինչեւ սուրբ Սահակ Պարթեւ հոյրապետին օրը կը գտնեմք :

Սուրբ Լուսաւորիչն իր կենդանութեան ականքը շատ եպիսկոպոսներ ձեռնադրեց ազգին մէջ . բայց ինքը անապատ առանձնանալու ատենը իր ամուսն ու պաշտօնը իր որդւոյն սրբոյն Վրիստակէսի յանձնեց . որ հօրը ձգելէն ետքը կամուրդիկսութիւնը վարեց : Եւ որովհետեւ ամուսնացեալ չէր եւ ժառանգ չունէր՝ մահուանէն ետքը տեղն անցաւ սուրբն Արգանէս :

եւ անոր յաջորդ եղաւ անոր որդին սուրբ
 բարն Յուսիկ. ասոր տղայքը Պապ եւ Աթա-
 նազինէ իրենց անառակութեամբը սուրբ աթո-
 ոսյն արժանի չէին ալ նէ՝ նախարարաց ստիպ-
 մամբը սարկաւագ ձեռնադրուեցան. որպէս զի
 ժամանակին՝ հայրենի աթոռոյն ժառանգ ըլլան:
 Բայց իրենց հօրմէն առաջ մեռնելով՝ Աթանա-
 զինէի տղան մնաց Վերսէս. որ սուրբ Յուս-
 կան վախճանած ատենը տակաւին անոր տեղին
 անցնելու տարիքը հասած չըլլալէն զատ՝ Կոս-
 տանդնուպօլիս զինուորաց կարգը մտած էր: Բս-
 պասելը վտանգաւոր ըլլալով՝ այս առաջին ան-
 դամ օտար ցեղէ մէկն ընտրեցին, Փառնեքոսէհը.
 ասիկայ մասնաւոր պատճառներէ ստիպեալ բա-
 ցառութիւն մ'էր. եւ ամէն բացառութիւն՝ կա-
 նոնի մը հետ հարկաւ յարաբերութիւն ունի.
 ապա թէ ոչ՝ բացառութիւն չըլլար: Ըսոր վախ-
 ճանէն ետքը սուրբն Վերսէս յաջորդեց աթո-
 ուր: Ըսոր ալ վախճանած ատենը որդին Սահակ՝
 նորահաս պատանի էր, եւ Կոստանդնուպօլիս
 ուսման կը հետեւէր: Ըզգն առանց կաթուղի-
 կոսի ձգել չէր ըլլար. ուստի օտար ցեղէ՝ բայց
 ամէնքն ալ սուրբ Լուսաւորչէն ձեռնադրուած
 Աղբիանոս եպիսկոպոսին տոհմէն երեք կա-
 թուղիկոս իրարու յաջորդեցին: Բացառու-
 թիւն մ'ալ այս էր. բայց միանգամայն մինչեւ
 այն ատեն իրրեւ կանոն պահուած սովո-
 րութեան մը հետեւողութիւն ըլլալը կե-
 րեւէր, երեքն ալ սուրբ Լուսաւորչի ցեղէն

չէին ալ նէ՝ մի եւնոյն եպիսկոպոսական ցեղէ
 էին: Ըստու ամենայնիւ ազգը իր առաջին կա-
 նոնին դարձեալ հետեւելու կը բաղձար. ուստի
 երբ Ըսպուրակէս կաթուղիկոսը վախճանեցաւ՝
 Սահակ պատանին ըստ բաւականին տարիքն ա-
 ռած ըլլալով կաթուղիկոսական աթոռը նստե-
 ցուցին, որ սուրբ Սահակ Պարթեւ անուանով
 կը ձանչցուի: Ըսորմանչ զաւակ չունենալն ազ-
 գին մեծ տխրութիւն պատճառեց. որովհետեւ
 հարիւր սյսբան տարիէ ՚ի վեր պահուած կանոնն
 աւրուելու վտանգի մէջ էր: Սուրբն Սահակ
 նախարարները միութեամբ իր համար յայտնեց ա-
 նոնց ինչ որ Ըստուած իրեն յայտներ էր. սուրբ
 Լուսաւորչին տնէն հայրապետութեան, եւ Ըր-
 շակունեաց ցեղէն թագաւորութեան վերջանա-
 ւը: Ըսանկ հաստատուն բընուած կարգաւո-
 րութիւն մը՝ թէ եւ գրաւոր կանոն մը չունե-
 լար, իրական հիմ մը ունեցած պիտի ըլլար:

Ըզգին Լուսաւորութեան առաջին տարիներն
 այսպէս ըլլալը պատշաճութիւն ալ ունէր, եւ
 ինչ մնաս ունի՝ երբ այդպիսի պատշաճութիւն մը
 խորհելով սուրբ Լուսաւորիչը, կանոն աւանդե-
 լու կամ կտակ ընելու ժամանակը՝ իշխանասիրու-
 թեան եւ փառասիրութեան կարճք մը իր վրայօք
 ընել չտալու համար հին օրէնքէն Պետացեոց
 ցեղն օրինակ ցուցուցած ըլլայ: Քահանայական
 զգեստները եւ եկեղեցւոյ մէջ խունկ ծիւնը եւ
 քահանայներուն օժմամբ քահանայ ձեռնադրուի-
 ւը հին օրինաց նմանութիւն չէն մի. եւ բա-

ղորականներէն զատ ո՛վ կը մեղադրէ այս սովորութիւններովս վարուող քրիստոնեայ ազգերը :
Մեր վերապատուելի հեղինակն ինչո՞ւ այսպիսի բաներու մէջ այն աղանդաւորաց նպաստաւոր ըլլալու ճամբայ կը բընէ :

Ըսած պատշաճութիւննիս այս է : Հայոց ազգը քրիստոնէութեան նոր դարձած՝ հեթանոսական մոլորութենէն կատարեալ ապահով ըլլալու համար քաջ՝ եւ քրիստոնէական հաւատոյ նախանձանդիր հովիւներու կարօտ էր . ապա թէ ո՛չ՝ առաջին անգամ ազգին մէջ քրիստոնէութիւն մտնելու ժամանակին նման կը ըլլար . որ սուրբն Աբգար վախճանելէն ետքը յաջորդին ուրացութեամբը բոլոր նախարարք եւ գրէթէ ամբողջ ազգը կռապաշտ եղաւ : Սուրբ Լուսաւորչին ժամանակն ալ այդպէս բանէ մը վախցուիլն՝ քուրճերուն պատերազմովը իմացուեցաւ . որոց ձեռնտու քանի մի նախարարներ ալ գլխունուեցան : Արանելի Տրդատ Թագաւորին թագաժառանգ որդին Խոսրով՝ հօրն արժանի ժառանգ չէր . Սուրբ Լուսաւորիչը ազգին մէջ քրիստոնէութիւնը յարատեւ մնալուն ուրիշ կերպ վստահութիւն չէր կըրնար ունենալ , եթէ ո՛չ՝ անոնց հոգեւոր հովիւներուն վրայ . որոնք իր յառաջագրեալ նպատակին ճառայելու համար կրօնական իրաց մէջ քաջավարժ ըլլալու էին . եւ այսպէս ազգին ընդհանուր հոգեւոր հառավարութեանը համար իր զաւակացը չափ ուրիշները չէր ճանչնար . եւ նախարարներ

ըր իրենց հաճոյիցը համեմատ մէկն ընտրելէն վախնալով՝ իր որդին ինք ընտրեց . եւ այն առանք կանոնադրած կը ըլլայ որ անկէց ետքն ալ իւր ցեղը յաջորդէ որդւոց որդի . եւ այս կանոնս գուցէ ուրիշ քահանայից համար ալ ընդարձակեց , որպէս զի սիայն իր տանը սեպհականաճ չըլլայ ժառանգական քահանայութիւնը . տեւողութիւնն ալ Լստուծոյ յանձնեց . որ սրբոյն Սահակայ Պարթեւին ժամանակը ազգն ըստ բաւականին ՚ի հաւատս հաստատեալ գլխունը ելով մարմնական յաջորդութիւնը դադարեցաւ ալ նէ՛ ասիկայ ազգը իրրեւ պատիժ մը սեպեց :

Ըսածնիս պատմական հաւաստիք ալ ունի : Սրբոյն մեծին Անբոսեօսի վարուց պատմիչը , որուն համար տպագրիչները որ են Ալէեւեկոյ Մխիթարեան հմուտ վարդապետք , ժամանակաւ սուրբ հոյրապետին մօտ էր կը սեն , եւ հաւանական կը սեպեն կարծելը թէ կամ երանելին Սովսէս Խորենացին էր , կամ Աբրահամ , անոր աշակերտակիցը , այսպէս կըսէ . « սիայնա » կեացք աշխարհին ՚ի մի վայր ժողովեալ , եւ « մարգարէական հոգւով իմացեալ , եթէ ո՛չ լի » նի հնար փրկութեան հայոց աշխարհիս , եթէ « ո՛չ գտցի առաջնորդ ՚ի յազգէ սրբոյն Գրէգորէ » (Սովեթ հայտնութե հո . Օ . էր . 15) , Վրէ մը ետքը կըսէ . « տեսեալ Արշակայ որ ո՛չ գտա » նէր առաջնորդ ՚ի ճառագրաց սուրբ ազգէն Ռէթէ « անանայապետին Գրէգորէ . . . եւ իմացեալ թէ

,, աներ աշխարհին հայոց սյնը աղագաւ պատճա-
 ,, անաց եղեւ ,, (անդ էր . 16) : ,, Խորհուրդ
 ,, Ըստոտծոյն ՚ի մէջ առեալ ազգին հայոց , եւ
 ,, ինքն թագաւորն Ըրշակ , վասն ազգի սրբոյն
 ,, Պրիգորի Կանախապետութեան . . . պարտ է նորո-
 ,, գել զաթոռ հայրապետութեան սրբոյն Պրի-
 ,, գորի ազգին ,, : Եւ կը պատմէ թէ սուրբը
 ամուսնացած էր սուրբ սթոռոյն ժառանգ ձը-
 դելու համար . " էր ամուսնացեալ վասն ժա-
 ,, րանդութեան աթոռոյն ,, (անդ էր . 18 . 19) :
 Եւ երբ հայրապետութիւնը յանձն առնուլ
 կտտիպէին զինքը նախալարք՝ կըսէին . " դու
 ,, զվերակացութիւն հարցն քոց նորոգեա՛ ՚ի
 ,, մեզ ,, (անդ էր . 21) : Եւ սուրբը սյն պաշտօ-
 նէն խուսափելու համար շատ եղանակներ բըռ-
 նեց . բայց երբէք չըսաւ թէ ժառանգական քա-
 հանայապետութիւնը Պեւտական ազգին յա-
 տուկ է . մեր քրիստոնէիցս մէջ ազգի կապելը
 հրեական խափանեալ սովորութեան հետեւի է ,
 ազգին եպիսկոպոսներուն մէջէն ուրիշ մը կըր-
 նաք ընտրել . եւ այլն : Եւ մանաւանդ՝ կենա-
 ցը վերջին ժամանակները՝ սուրբ Լուսաւորչին
 ցեղէն քահանայապետութեան վերնալը իբրեւ
 Ըստուծոյ կողմէն տրուած պատիժ մը կը ցու-
 ցընէր . եւ այն ալ չէ թէ իր խելքովը գտած
 էր , այլ Ըստուածային յայտնութեամբ . վասն
 զի այս պատիժս ըլլալիքը ըսելէն զատ՝ ըլլա-
 լու ժամանակն ալ գուշակեց . որ միայն Ըստ-
 ուած կըրնար զիտնալ : Վասն զի ըսաւ . " զի

,, աղի՞դ Ըրշակունեաց բազում լուսաւորս պա-
 ,, կասեցուցեալ յաշխարհէդ հայոց յազգէ խմե՛
 ,, շիջուցին զլոյսն յինքեանց . . . յետ լընլոյ
 ,, յիսուն ամաց բարձցի քահանայութիւն յազ-
 ,, գէս մերմէ՛ որ է սրբոյ նախնւոյն իմոյ Պրի-
 ,, գորի ,, (անդ էր . 89) : Ըյս մարգարէութիւ-
 նըս իրօք կատարեցաւ սրբոյն Սահակայ Պար-
 թեւին հայրապետութեան հրաժարած ժամա-
 նակը . ինչպէս որ Ըստուծոյ կողմանէ իրեն
 յայտնութիւն ալ եղած էր . վասն զի տեսած
 հրաշալի տեսիլքը մեկնող հրեշտակն ըսաւ .
 " Լո՛ւր ստուգապէս . զի լուսեցէ մերձ ընդ մերձ
 ,, . . . քահանայութիւն ՚ի ցեղէ արժանաւոր
 ,, քահանայապետին Պրիգորի ,, (Փորպէն էր .
 58) : Եւ կը գուշակէ որ վերջին ժամանակնե-
 րը դարձեալ նոյն ցեղին պիտի դառնայ հայրա-
 պետութիւնը . " նորոգի աթոռ հայրապետու-
 ,, թեան ՚ի շառաւիղէ սրբոյն Պրիգորի ,, (անդ
 էր . 59) : Եւ այս օլ ճիշդ կատարեցաւ գուշա-
 կութեան գրէ թէ 600 տարի ետքը , էրբ
 Պրիգոր Վկայասէր , Պրիգոր Պահլաւունի ,
 Ներսէս Ընորհալի եւ Պրիգոր Տղայ երանելի-
 քը որ սուրբ Լուսաւորչի ցեղէն էին՝ հայոց
 հայրապետ եղան : Ըհաւաստիկ ազգին կրօնաւոր-
 ներուն եւ թագաւորին եւ նախարարներուն վը-
 կայութեանէն զատ՝ Ըստուածային յայտնու-
 թեամբ ալ սրբոյն Պրիգորի ցեղին վրայ հայ-
 րապետական ժառանգութիւնը ցուցուած . եւ
 այսքան հաստատութիւններ գտնուելէն ետքը՝

այս սովորութիւնս առ ժամանակ մի Ղեւտացիներէն առնուած ըլլալն ալ բնաւ վնաս չունի . եւ եկեղեցիս անոնցմէ սովրած ուրիշ բաներ ալ ունի . ինչպէս ե՛ն օծութեամբ քահանայութիւնը , եւ այլն . որոնք վերը յիշեցինք : Եւ հիմայ միայն բողոքականները կան որ հրէական սովորութիւն է ըսելով չեն ընդունիր . եւ թէ որ Հոսիմայ եկեղեցիս ալ ընդունած չըլլար նէ՛ մեր վերապատուելին այս բաներս ալ մերժելով բողոքականաց ձայնակից պիտի ըլլար :

Եւ այց ժառանգական հայրապետութիւնը դադրելէն ետքը առանց ցեղի նայելու արժանաւորը կընտրուէր , ինչպէս որ դադարումէն առջ ալ եղաւ . որ սուրբ Հուսկան տղայքը Պայ եւ Բթանագինէ անարժան ըլլալով՝ հայրապետական ցեղէ ալ էին նէ մերժուեցան , եւ անոնց տեղը օտար ցեղէ Փաններսէ հանուն մէկն ընտրուեցաւ : Եւ այս ընտրութիւնս ո՛չ ցեղի կը նայէր եւ ո՛չ հարստութեան կամ ուրիշ աշխարհական մեծութեան , այլ միայն այն սուրբ պաշտօնին արժանի եղողը կընտրուէր , թէ եւ մութացիկանի մը զաւակ ըլլար . եւ ճիշդ ասոր օրինակն ալ տեսնուեցաւ՝ երբ 1555 թուին ազգին կաթողիկոս ընտրեցաւ Եսայի եպիսկոպոսը որ մութացիկան այրի կնոջ մը զաւակ էր : Եւ ինքը Հովհան Իմաստասէր հայրապետը՝ որ Տաշրաց գաւառէն Օձուն գեղէն էր որ Հայաստանի հիւսիսային կողմը Արվկաս լեռներուն

մէջ է , իր նախորդ Եղիա կաթողիկոսին հետ ազգակցութիւն մը չունէր . որ Հայաստանի հարաւային կողմերէն՝ Երճէշ քաղաքէն էր :

Պուցէ բողոք ըլլայ թէ այդ ժառանգական քահանայութեանը չհաւանիր երանելի Լամբրոնացին . որկէց յայտնի կերելի թէ սուրբ Լուսաւորչէն այդպէս կանոն մը դրուած ըլլալը չձանչնար : Այնքն ըսածներէս ասոր պատասխանը դիւրաւ կելլէ : Անոնք թէ եւ սուրբ Լուսաւորիչին դորձէն առնուած՝ առժամանակեայ էր . եւ խափանումն աստուածային կամքը ըլլալը սուրբն Սահակ Պարթեւ նախարարներուն իմացուց : Ենկէց ետքը հարկ չկար ազդի սեպհականելու . եւ քահանայութիւնը ժառանգութեան կապելու ժամանակն անցած էր . եւ այն կանոնին խափանելալ ըլլալն աստուածային յայտնութեամբ իմացուած էր . ասոր համար սուրբ Երեսէս Լամբրոնացին իրաւունք ունէր ասոր դէմ կենալու : Սուրբ Լուսաւորիչն իր զաւակն իր տեղը դրաւ նէ՛ ըսա մարմնոյ Պահլաւ ցեղէն եւ իրեն զաւակն ըլլալուն համար չէր . այլ վասն զի այս հոգեւոր պաշտօնին անիկայ արժանի գտաւ . եւ այս է երանելոյն ըսածը : « առաքինութիւնը որդւոց սրբոյն Պարիգորի ըզն , նոսին յարգեցին , եւ ո՛չ որբոյն Պարիգորի որո » զիութիւնն : Հրաժարելն նոցա ՚ի հօրէ եւ ՚ի պատուոյն պատուեաց զնոսա , եւ ո՛չ գարն » շեղի եւ մեղսատէր անուն Պահլաւին . զի յԻճն » քան փառս հօրն ո՛չ ձգեցան . այլ աստուած

„ ծային անսուլթեամբն անան թեամբ
„ ժառանգ ամբողջն Վրիստոսի եւ ոչ սրբոյն
„ Վրիգորի . որպէս որդիք Վրիստոսի եւ ոչ
„ Վրիգորի „ (Բն . պարտ . եր . 533 որդ .
„ Վ . Բն .) : Եսոնք մեր ըսածին հակառակ չեն :

ՅՄԻԵԼՈՒԱԾ . Գ .

Մարտի Լրոյ :

Հինգուստիս արքեպիսկոսոս հեղինակը ժառանգական քահանայութեան վրայ խօսելէն անմիջապէս ետքը հետեւեալը կը յարէ : Եւ ելցուած երկու ենթացողութիւններուն մէկն ալ այս է . որպէս թէ սուրբն Վրիգոր սահմանադրած ըլլայ , որ “ հին օրինաց արարողութեամբ մատաղ “ ներ կամ ազգայներ մատուցուին եւ բաժնուին : Բաւական ատեն է որ ինք Հայ ժողովուրդը քրիստոնէական հոգւոյ բերման հետեւելով ինք զինք կամաց կամաց աս անպատեհութիւններէն սրբեց ’ (թէ որ առաջինը “ հին Հայաստանի քրմաց զեղծմամբ ծագում “ ատած չէ . ինչպէս որ երկրորդն ալ դրացի “ Ասորիներէն սպրդելով մտած է) , շահախնդրութիւնն աւելորդապաշտութեան երկուցի թ ունեցող արարողութիւններով զարգարեց . եւ յունաց հետ հակառակութիւնը նոյնն արմատացուց : Եսոնք իմաստասէրը մի-

„ այն քանի մի ստայօր յիշատակարաններէ
„ պատրեալ կըրցաւ սուրբ Վրիգորէն սեպել ,
„ որոց ստուգութիւնը հիմայ արեւին լուսոյն պէս
„ յայտնի է : Աաղաչեմք մեր ընթերցողաց ’ որ
„ քիչ մը սպասեն , եւ չաճապարեն իրենց ստորագրութիւնն իմաստուն հեղինակին ըսածին տալու , մինչեւ մեր ըսելիքներն ալ լսեն :

Ախ եւ յառաջ համառօտ մը սա ըսեմք , որ հին օրինաց սովորութեամբ եղած մատաղներն ու ազգայներն իրար շփութելով մի եւ նոյն բան կարծել տալն անտեղի է : Հին օրինաց զոհը որուն ճարտար անուն տրուելն ալ նախնեաց մէջ լսուած չէ , մեղաց թողութեան համար տըրուած էր , եւ Տեառն մերոյ խաչին վրայ ինք զինքը մատուցած մեղսաբաւիչ զոհին օրինակն էր , զոր սուրբ Պօղոս առաքեալը օրինակը ճըմարտութեան փոխուած ըլլալը ցուցնելով առ Եբրայեցիս թղթոյն մէջ քրիստոնեայներուն այսպիսի զոհեր մատուցանելուն անպատեհութիւնն յայտնած էր : Մատաղին այս մտքով չըլլալը , եւ այս մտքով ընողը իբրեւ հրեամիտ մարդ մը դատապարտութեան տակ իյնալը քիչ մը ետքը կը տեսնեմք :

Բնապէս զոհերէն շատ տարբեր էր , եւ նոյն իսկ մեր ճարտար ըսածն է : Սուրբ Պօղոս առաքելոյն առ կորնթացիս գրած առաջին թղթոյն ժԼ գլխէն կը սովորեմք որ այն ատենը հաւատացելոց մէջէն շատերը եկեղեցի գացած ատենն ինչ հետերնին կերակուր կը տանէին . եւ

սուրբ պատարագէն ետքը եկեղեցւոյ մէջ ամէն-
քը մէկ տեղ ժողովուելով, այն ուտելիքները
բերողներն ալ՝ բերելու բան մը չունեցողներն
ալ մէկ տեղ կը նստէին կուտէին. որով աղ-
քատներն ալ ուտելու բան կը գտնէին : Աոյն
իսկ սուրբ առաքելոց ժամանակը այս գովելի
սովորութեանս հետ զեղծում ալ մտաւ . հա-
րուստ մարդիկ բերածնին եկեղեցւոյ մէջ կու-
տէին փորերնին կը կշաքցընէին, եւ աղքատե-
րուն բան չէր մնար . ունեւորներուն ու չքա-
ւորներուն այսպիսի խարութեան հետեւանքը՝
քրիստոնէական հաւասարութիւնը աւելցնելու
ալ կը պաշտօնէր, ուր բուն ազապը՝ ինչպէս
որ նոյն իսկ յունարէն աղբիքն անգլիացի կը սով-
րեցընէ՝ ամէնուն մէջ հաւասար եղբայրսիրու-
թիւնը զօրանալու առիթ մ'ըլլալու էր : Սուրբ
առաքելալը Աորնթացիներուն մէջ այսպիսի զեղ-
ծում մտած ըլլալն իմանալով՝ ագապը խափան-
եալ հրատարակելուն տեղը՝ ինչպէս որ հրեական
զոհերուն համար ըրաւ, բարեկարգութեան
կանոններ կուտայ : Առաջ կըսէ՝ որ մէկտեղած
ժամանակնիդ Աստուծոյ տունը ձեզի հաց ու-
տելու տեղ չէ, ուտելու խմելու համար տուն
չունիք մի՛ որ ամէն մարդ իր բերածն ուտելու
առաջ կուգայ, մէկը կուշտ եւ միւսը գինով-
ցած կը գանուի : Աստուծոյ եկեղեցին բանի տեղ
չէր գնիր . չբաւորները կ'ամբողջուէր, որ բան
մը բերելու կարող չ'ըլլալուն համար ուտելու
բան ալ չէն ունենար . առիթի կը մնայ : Այդ

բանին համար ձեզ չեմ գովեր կրտէ . որ կը
հասկըցնէ որ բանն ինքնին գովելի էր, բայց
Աորնթացիներուն ըրածը գովութեան արժանի
չէր : Այս առիթով՝ եկեղեցւոյ մէջ շաշակելի
օրինաւոր եղած մէկ հատիկ կերակրէ՛ն եւ ըմ-
պելուցն վրայ կը խօսի, որ է հետոն մերոյ կե-
նարար մարմինն ու արիւնը . եւ անկէջ ետքն
ազապը բարեկարգութեամբ ընելու համար հը-
րահանգ կուտայ . ասկէջ ետք՝ կըսէ, երբ կե-
րակուր ուտելու համար մէկ տեղ ժողովուելու
ըլլաք նէ՛ իրարու սպասեցէք, եւ թէ որ փո-
րերնիդ առիթի է նէ՛ հացերնիդ տուններնիդ կե-
րէք : Ասոր վրայ ուրիշ ըսելիքներն ալ՝ անձամբ
Աորնթոս երթալու ժամանակին կը ձգէ : Ահա
այս ազապս է՝ որուն բարեկարգութեանը համար
սուրբ առաքելալը հրահանգ կուտայ : Այս հը-
րահանգներս անպտուղ չ'ըլլան . եւ հետեւանոս
ուրացողը շատ կը գովէ ազապը, եւ հետեւանո-
սաց ալ անիկոյ օրինակ կը ցուցընէ հետեւելու
արժանի . ըսել է որ մինչեւ ստոր ժամանակը,
այսինքն՝ մինչեւ չորրորդ դարուն կեսը կար :
Ասոր վկայ ունիմք ուրիշ հեղինակներէն զատ՝
սրբոյն Սարգսի վարուց պատմիչը, որուն գրու-
ածը սուրբն՝ Աերսէս Անորհալին թարգմա-
նել տուաւ . եւ այն տեղ այսպէս կը կարդամք :
,, Չանբանից կենդանեաց զենմունս բաշխելով
,, ի պէտս աղքատաց եւ կարօտելոց, ըստ սովո-
,, ընութեան իարտմ ի նանեաց անոյն ,, : Ալ մինակ
իրեն այս հայրենաւանդ սովորութիւնը կատա-

րևը հերիք չօնպելով՝ « զայն եւ ուսուցանէր , , ամենեցուն աննուազ կատարել զինմունսսս » , նաանց Ինուէրս Մատուցոյ յաղաքս կերակ- , , րելոյ ողորմութեամբ զքաղցեալս եւ զկարօտ- , , եալս , (Սոփ . հայկ . հո . Ճ . Օ . էր . 22 . Վարդ- սրբոց . հո . Ի . էր . 11) : Եւ յայտնի է որ սուրբն Սարգիս Յուլիանոս Ուրացոզին ժամանակակից է : Յուլիանոսի կայսրութիւնը մեր Փաննբոէ հայրապետին ժամանակն էր , որ սուրբ Աուսա- ւորչէն ետքը չորրորդ կաթուղիկոսնիս է . եւ անոր թոսանը՝ սուրբ Յուսկան անմիջական յա- ջորդն էր : Արդեօք ինչ կըսէ մեր վերապատ- ուելի հեղինակը . սուրբ Աուսաւորիչը գրիստոնե- կայ եկեղեցեաց մէջ գտնուած՝ եւ Յուլիանոսի պէս մարդու մ'աչքին անգամ՝ որ քրիստոնէ- ութեան մէջ նախատելու բաներ գրեթէ կը մուրար իր ուրացութիւնն արգարացընելու հա- մար՝ գովելի երեւցած մէկ բանը իւր նորահա- ւատ ազգին մէջ ալ մտցունել չէր ուզեր . ո- րուն առիթ ալ պատահեցաւ , ինչպէս որ ետքը պիտի տեսնենք :

Սեր ազգին մատաղի սովորութեան սուրբ Աուսաւորչի օրէն ըլլալուն՝ սուրբ Յովհան Ի- մաստասէր հայրապետէն դատ վկայներ ունիմք : Սուրբն Աերսէս Ընորհալի Յամայր նահանգի քահանայներուն գրած նամակին մէջ կը պատ- մէ թէ՛ սուրբ Աահակ հայրապետին կանոնական գրոցը մէջ յայպէս գրուած է : Սուրբ Աուսա- ւորչին աշխատութեամբը Հայոց ազգը կու-

պաշտութենէն քրիստոնէութեան դառնալէն ետքը հաւատքի եկած քուրմերն առաջն եկան եւ ըսին . հեթանոսութեան ժամանակնիս մեր եւ զաւակներնուս ուսելիքը պիղծ զոհերէն կու- նենայինք . ասկէց ետքը ձեր տէրութիւնը մե- զի հրամայէ մեր ապրուստը ցուցընելու թէ ին- չով ապրինք : Անիկոյ ալ հրաման ըրաւ ամէն բանէ տասանորդ տալ՝ ինչպէս որ հին օրինաց մէջ ղեւտացիներուն եւ քահանայներուն կը տրուէր . եւ ժողովրդեանն ալ պատուիրեց որ առաջ անչունչ կուտրերուն համար ըրած նը- ուէրներուն տեղը՝ մէկ հասիկ Աստուծոյ նուէրք տան անբան անասուններ մոլթելով տէրունա- կան յարութեան Օրասիին օրը եւ տէրունա- կան ամէն մէկ տօներուն եւ երեւելի սրբոց տօնախմբութեանը ճւղջեցելոց յիշատակին՝ օրհնած աղօղ խառնելով . եւ ասիկայ ողորմու- թեան սուրբ մը պիտի ըլլար , որով աղբատ- ները պիտի կերակրէին : Եւ օրէնք գրաւ որ այն մոլթուածներէն հաւատացեալ քուրմերուն բա- ժին տրուի չէ թէ միայն երկն (պուտը) եւ կաշին , ինչպէս որ Ընորհալի սուրբ հայրապե- տին օրովը կընէին , այլ եւ շատ բաներ ալ . որոնք հիմայ՝ մատաղ ընողներուն աղքատու- թեանը կամ ժլատութեանը՝ եւ ոչ թէ մեր վերապատուելոյն ըսածին պէս՝ քրիստոնէական հոգւոյ բերման հետեւելով խախտուած են : (Ընորհալ . էր . 155 . որդ . Աստ .) : Եւ ասոնք ըսելէն ետքը կը յաւելու . « պատճառ մերոյ

,, ազգիս մատաղ առնելոյն , եւ թէ երբ եւ
 ,, յուսմէ՞ օրինադրեցաւ , այս է ստուգու թեամբ
 ,, զոր գրեցաք . ոչ ըստ հրէականացն . քաւ լի-
 ,, ցի . զի որ առնէ ընդ նոսա՝ նզովք ընկալցի , ,
 Չեմ գիտեր թէ քաղաքական օրէնքն այս բանիս
 մէջ կը մտնէ մի , որ կը կարգադրէ թէ , մէկը
 ուրիշի մը վրայ յանցանք մը ձգէ , եւ չկրնա-
 լով ստուգել՝ գրպարտիչ եղած գանուի նէ ,
 յանցանքին համեմատ տրուելու պատիժը զըր-
 պարտողին տրուի : Թէ որ այս բանիս մէջ այս
 կանոնս տեղի ունենայ նէ՝ հայերը մատաղը
 նելով հրեայներուն կը նմանին կամ մատաղ
 ընելն անոնցմէ առած են ըսողը՝ եւ Հայոց
 գործածած ազգայր հին օրինաց մատաղներուն
 նմանցընողը նզովքի տակ կիյնայ :

Ար հարցընեմք ամէն հոովմէական անաչառ
 հայազգի եղբարց . կը կարծես թէ հիմնական ուս-
 քերթեանց իմաստուն հեղինակը , որ Մխիթար-
 եան ուխտին հին սահմանադրութեանը համե-
 մատ՝ Հայոց եկեղեցւոյ նախնի հարց եւ վար-
 դպետաց գրոցը մէջ վարժուած՝ եւ ետքը Եւ-
 րոպական ուսմանց կարգը բռնած պիտի ըլ-
 լայ , սուրբ Արքայն Շնորհալոյ պէս իմաս-
 տուն եւ սուրբ հայրապետի մը՝ գոնէ տպագ-
 րութեամբ հասարակաց ձեռքն անցած գրութիւն-
 ները կարդացած չըլլայ : Ար թէ նոյն գրուած-
 ները՝ զոր Հոովմ կարդացած եւ քննած եւ
 հաւանութիւն տուած է , կընդունի՞ իրբեւ ըստ
 ամենայնի ուղղափառական : Թէ որ չընդունի՞ր

նէ՝ հոովմէական անուամբ պարծիլը պարագ է :
 որովհետեւ անոր ընդունածն իրենք չընդունած
 կըլլան : Թէ որ կընդունի նէ՝ վերապատուելի
 հեղինակին դատախազելն իրենց կիյնայ . վասն
 զի գրածները գլխաւորապէս իրենք մեզնէ՝ որ
 եղբայրական սիրով կը սիրեմք՝ զատելու եւ
 առաւել եւս հեացընելու համար է : Ասան
 զի այդ իմաստուն հեղինակից ըսածը՝ սուրբ
 Շնորհալին ըսածներուն բոլորովին հակա-
 ոակ է :

Շնորհալին կըսէ . մեր մատաղ ընելը
 հրէական օրինաց ըրած մտքովը չէ . հեղինակ-
 նիս կըսէ թէ այն մտքովն է . Շնորհալին կը-
 սէ թէ սուրբ Լուսաւորիչն այսպէս սահմանեց ,
 եւ վկայ կը ցուցընէ սուրբ Սահակ Պարթեւը .
 հեղինակը կըսէ թէ ասորինբէն սպրդեցաւ :
 Շնորհալին կըսէ . մատաղէն հաւատացեալ
 քույրներուն համար հանուած բաժիններուն
 պակսիլը մատաղ ընողներուն աղքատութեանը
 եւ ժլատութեանը համար եղած է : վերապատ-
 ուելի հեղինակը բուն իսկ մատաղին աս վեր-
 ցին ժամանակներս խախտուիլը քրիստոնէական
 հոգւոյ բերման հետեւիլ կանուանէ . եւ սուրբ
 Լուսաւորչէն սահմանուած է ըսելն ալ սուրբ
 Հովհանն իմաստասիրին պարզմտութեամբը աղ-
 ցին մէջ յարգ գտած սուտ կարծիք մ'ըլլալը
 արեւու լուսոյն պէս յայտնի է ըսելով ժողո-
 վըրդեան աչքը խտողել կուզէ , որպէս զի է-
 ութիւնը շտանեն . եւ մէկն ասոնց ասորը

սածին հակառակն ըսէ նէ կարծեն թէ կոյր է
անիկայ, որ արեւի լուսոյն նման յայտնի
բանք չտեսնար :

Ի՞նչ կը կարծեն այս վարպետութիւններու
ուսուցանողք : Կնծի այնպէս կուգայ որ Հին
ատենէն ՚ի վեր մէջերնին մտածելու անհոգու-
թեամբ որդուց որդի մինչեւ անոնց հասած նա-
խագաշարմունքը տածելու, կամ թէ ուղղակի
անոնց գիտցածին եւ մտքերնին դրածին հակա-
ռակն անոնց չըսելու համար է : Թէ որ ճշ-
մարիաբան լսելու եւ հանդարտելու յօժարութիւն
մը անոնց մէջ տեսնէրնէ, ճշմարիտն անոնցմէ
չէր ծածկեր. ուստի այս բաներու համար վե-
րապատուելի հայրը պարտաւելու եւ անոր դէմ
դատախազելու իրաւունք չէն ունենար թէ որ
յիրաւի բանն այսպէս է նէ : Թէ որ հրեանե-
րուն սովորութեանցը նման եւ անոնց մինչեւ
հիմայ գործածած օրէնքէն անուած բաներ է
նէ՛ ինչո՞ւ համար տասանորդ տալն ալ չեն պա-
խարակեր. որուն համար սուրբ Շնորհալի հայ-
րապետը յայտնի կըլտէ թէ հին օրինաց նմա-
նութիւն մ'ի՛ . « սահմանեաց տալ նոցա տա-
լ, սանորդս յամենայնէ, որպէս Պեւտացոց
ի բահանայիցն ՚ի հնունն » : Իսկ մատաղը՝ զոր
մեր իմաստուն հեղինակը երբեմն հրեաներէն
եւ երբեմն Ասորիներէն անուած կըսէ, սուրբ
հայրապետը յայտնի կըվկայէ թէ « ոչ ըստ հրե-
ականացն, քան լի ՚ի . զի որ առնէ ընդ նոսա՝
» նզովս ընկալցի » : Ասոր պատճառն ու լիշբան

չէ, բայց եթէ Հոռովմայ եկեղեցւոյ սովորու-
թեան մէջ տասանորդին միեւեւ հիմայ մնացած
ըլլալը : Գանգրեայ ժողովոյն յԱՆ երորդ կա-
նոնը, որ կըսէ . « յըբ արհամարհեն զայնոսիկ
» յըբ հաւատով ազապս առնեն, (մատաղը նոյն
» իսկ ազապ ըսածն ըլլալը գիտէ մեր վերա-
» պատուելի հեղինակը) . եւ վասն պատ-
» ուի Տեառն կոչեն զեղբարս, եւ ոչ կա-
» մին հաւասարիլ եւ յանձն առնուլ եւ ար-
» համարհեսցեն, նզովեալ եղիցին » : Արգեօք
կը կարծէ՞ որ մատաղի սովորութիւն չունեցող
քրիստոնեայ անձանց հետեւիլը եւ իր մատաղ
չընելը հերիք չսեպելով՝ ուրիշ քրիստոնէից եւ
մանաւանդ իր ազգին բնիկ Աուսաւորչական ե-
կեղեցւոյն Աուսաւորչական սովորութիւնը հը-
րէական զոհերուն նմանցընելովը եւ արհամար-
հելովը այս նզովքէս ազատ կը մնայ : Հիմայ
ժողովրդեան մէջ մատաղի սովորութիւնը քիչ-
նալը մոռցուցեր է իրեն ամէն Օգոստիկ Հոռով-
մայ եկեղեցւոյն մէջ երկու գառն մատաղ ընել-
նին, որոց բուրդէն կըշինեն սովորաբար՝ քալե-
ոս՝ ըսուած եպիսկոպոսական պատուանշանը .
զոր Հոռովմայ հայրապետն աթոռոյն նախապատ-
ուութեամբ կամ անձնական արժանեօք երեւե-
լի եղած արքեպիսկոպոսներուն եւ եպիսկոպոս-
ներուն խրկելու սովորութիւն ունի, այն սո-
վորութեանը նման՝ որով մեր կաթողիկոսները
եպիսկոպոսաց կոնքեռ կրելու հրաման կուտան :
Թէ որ այս սասնկ չըլլար նէ՛ դիւրին է դա-

տելը թէ որն աւելի մօտ է շահասիրութեան :
տարին քանի մի օր մատաղ ընելը՝ որ պարտա-
ւորիչ սովորութիւն մ'ալ չէ . դոնէ հիմակուան
ժամանակիս համար . կամ թէ ամէն ժամանակի
վաստակէն եւ ամէն ունեցածէն տասանորդ-
տալը :

Մատաղի վրայ մենք մեզնէ ասկէց աւելի
բան չեմք ըսեր . սուրբ Շնորհարի հայրադե-
տին ըսածները ամէնուն դիւրիմանալի աշխար-
հաբար լեզուի կը թարգմանեմք :

Երբ սուրբ հայրապետ կըսէ . « թէ որ ու-
րիշ քրիստոնեայ ազգերն ասիկայ ընելու սովո-
րութիւն չունին նէ՛ մարդ անով մեղ թող չմե-
ղադրէ . վասն զի անոնք իրեւց նախնի առաջ-
նորդներէն աւանդութեամբ չառին լմեղի պէս .
եւ առաջնորդներն ալ անոր համար այս օրէնքս
չգրին . վասն զի հարկ ջեղաւ՝ ինչպէս որ մեր
Լուսաւորչին եղաւ . եւ սուրբ Պրիգորէն օրէնք
դրուածը սուրբ առաքեալներէն դրուածներէն
պզտիկ բան մ'է* , որ Վրիստոսի անուանը հա-
մար համբերութեամբ կրօժ անտանելի չարչա-
բանքովը եւ անկէց առած աստուածաշունչ զօ-
րութեամբը եւ այսքան ազգեր անոր երկրպա-
գութեան դարձընելովն** անոնցմէ վար չէր :

* Հինական ասորերո-բեռնց հեղինակն անջուր պա-
տարագէլու վրայ խօսած ատենը յայտնի ըսաւ թէ
ասոր գրած օրէնքն անընդունելի է :

** Սուրբ հայրապետին ըսած ազգերն են Աղ-
ուանները եւ ուրիշ քանի մի Կովկասեան ազգեր :

« ինչց հակառակողներու կը հարցընեմք .
ըսեմք թէ , ոչ թէ սուրբ Պրիգոր , այլ վեր-
ջին եւ աննշան քանի մի անձինք հաստատած
ըլլային , մատաղը կամ դատկին կամ հոգէհատ-
դըտին համար ընելը՝ հոգւոց ի՞նչ վնաս ու-
նէր . ձեր ըսածը սուրբ գրոց վկայութեամբն
արդարացուցէք՝ եւ մենք ասիկայ վերցընելու կը
հաճիմք . չէ նէ՛ մենք անոնց օգուտը ձեզի ցու-
ցընեմք . որ չէ թէ միայն հոգւոյ վնաս չէ ,
այլ եւ օգուտ ալ է . դուք ալ այդ չար դայ-
թակդութիւնը ձեր մտքէն հանեցէք :

« Երբ արարիչն զգալի կենդանեաց տեսակն
ստեղծեց , ամենուն համար (սուրբ գրոց) խօս-
քը վկայեց թէ տեսաւ Մատուած եւ անհա շատ
աղէկ էին . բայց նոյն արարիչը ետքն անոնք
իրարմէ զատեց . եւ զոմանս սուրբ անուա-
նեց եւ կանաչեղէնի պէս ուտելու հրաման
տուաւ , ոմանց համար ալ ըսաւ թէ պիղծ են
եւ չեն ուտուիր . մարդոցմէն ալ ուղեց՝ որ այն
սուրբ կենդանիներէն իրեն նուէր մատուցանեն
զոր « Այ յայտնի կընէ , որ ջրհեղեղէն ետքը
սուրբ կենդանիներէ մէկ մէկ հատ՝ Մատուծոյ
ողջակէզ կը մատուցանէր , որոյմէ Մատուած ալ
անուշութեան հոտ հոտոտեցաւ . եւ անոնք՝
որոց համար Մատուածային խօսքը հրամայեց թէ
սուրբ են՝ եւ կուտուին առանց խղճի . իսկ որոց
համար որ պիղծ ըսաւ՝ պիղծ եւ դարշելի են
հաւատացելոց առաջը , եւ անոնցմէ ռւտողն Մա-
տուծոյ հրամանին հակառակ է , խոզն ուտելէս

զատ, որ առաջ սուրբ չէր, եւ ետքը հոգւոյն սրբոյ հրամանաւ առաքելոց ձեռօքը սրբեցաւ*, Վարդապետի հաւատացեալները հրէից միաբանութենէն զատելու համար:

« Ընկալ թէ որ մենք մատաղն անսուրբ կենդանիներէն նուիրէինք նէ՝ օրհնած աղն անոնք կը սրբէ ըսելով, ինչպէս որ ասորիները պղծեալ կերակուրներն աղօթքով կը սրբեն, գուցէ հակառակելու պատճառ մը կ'ունենայիր: Քայց երբ օրհնած աղը չըլլալով ալ մատաղ ըրած կենդանիներն սուրբ՝ եւ ամենուն ուտելի են, ի՞նչ պատճառաւ անկէց ետքը քեզի անսուրբ եւ վնասակար կերելին՝ միթէ աղին վրայ կարդացուած քահանայական աղօթքները եւ մարգարէներուն եւ առաքեալներուն եւ աւետարանիչներուն խօսքերը եւ վրանին խաչակրէքելը՝ սուրբ կենդանիները քեզի պիղծ եւ անուտելի՞ սեպել կուտան որ Պօղոս առաքեալն ալ կը հրամայէ առաջ Եստուծոյ խօսքովն ու աղօթքով սրբել եւ ետքը ուտել չէ թէ միայն Եստուծոյ նուիրուածները, այլ եւ հասարակ ուտելիքներն ու խմելիքները: Արեւմտեան Մանիքեցիներուն պէս կը մտածես, որ կերակուրներն առաջ կանիծեն եւ ետքը կուտեն:

* Սուրբ հայրապետն ըսածին պէս կըսէ նա եւ սուրբն Եփրեմ Խորին Ասորին. « ցաւուրս առաքելոցն իբրեւ մկրտէին զհրեայսն, ՚ի ժողովս տանէին նախ ուտել խոզենիս, եւ ապա մկրտէին զնոսա: » (Մատթ. 23. 19. Եփր. 121):

« Ի՞նչ դու, քահանայներուն աղ օրհնած ատենը կարդացածնին կարդա, եւ ըսուած խօսքերուն միտքը հասկըցիր. եւ անոնց վնասը ցուցուր. մենք ալ քու շաղակրատելոյդ (պօշ-պօղաղութիւն ընելուդ) ներեմք. չէ՛, թէ որ չես կըրնար ցուցընել նէ՛ լեզուդ չարութենէ լուցուր, եւ Եստուծոյ ժողովուրդը մի գայթակղեցըններ, » (Ընդհանրական. 156. 157):

Արովհետեւ խօսքերնիս առ Հայազգի հոովմէական եղբարս ուղղած եմք, մանաւանդ անոնց մէջէն անաչառ դատաստան ընողներուն հետ կը խօսիմք, ներուի մեզի երկանկէկ կտոր մ'ալ հոովմէական հայերէնագէտ քահանայի մը դըրածէն թարգմանել, եւ կը յուսամք որ Հայոց ազգէն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ հայրապետ սուրբ Արքայ Ենորհալին, եւ հոովմէական եկեղեցականաց կողմէն Վարբէլէզդի քահանային խօսքերը՝ մեր վերապատուելի հեղինակին մատաղի վրայ խօսածներուն անհիմն եւ անպատեհ ըլլալն ըստ բաւականին կը ցուցընեն: Եռաջուց սա յիշեցընեմք, որ այս քահանային մէկ գիրքը Հոովմէն դատապարտուած է. այն է՝ Տօն Կասբարօին՝ Միխայիլեանն Վէնիկոյ մակադրով իտալերէն հրատարակած պարսաւագըրքին դէմ գրածը. այն ալ՝ մէջը կարգաւորի մը չլայելու խտութեամբ խօսելուն համար. ինչպէս որ նոյն պատճառին համար Տօն Կասբարօին գիրքն ալ դատապարտեցաւ: Վարբէլէզդի ուրիշ գրքերն այդպէս դատապարտութիւն

մը կրած չըլլալէն դատ՝ հայերէն (Մաշտոցը
 Վէնէտիկ տպուեցաւ եւ քանի մի հոգի ինու
 բազանտոյն աշակերտներէն անոր դէմ դատաւ
 խաղութիւն ըրին նէ՝ Հոովմայ գրոց բնու
 թեան ատենը ասոր տուաւ բնեւոր եւ ա
 սոր ներկայացուցած տեղեկագրովը անոր հրա
 տարակմանը հրաման տրուեցաւ : Մենք ասի
 կայ ծանուցանելը հարկ սեպեցինք , որ չ'ըլլայ
 թէ այն դատապարտութիւնը պատճառ բռնելով
 ոմանք՝ կարծեն թէ 'ի հաւատս մոլորութիւնը
 գլուսուած՝ եւ անոր համար Հոովմէն դատաւ
 պարտուած է :

Բսիկայ Պէրբարէլի (Երկնցական պարմոթեան
 իտալերէն թարգմանութեանը կցած ճառերուն
 մէկը , (էր . 16 . յոդ . 124 . ճառ . 11) , յա
 տուկ այոց մատաղ ընելու սովորութեանը վը
 րայ գրած է . եւ այն տեղ այսպէս կը խօսի :

« Եւս (մատաղի վրայ) վէճը երկոտասաներորդ
 դարուն մէջ Յամայք նահանգին տգէտ քահա
 նայներուն ըրածէն աւելի տարութեամբ նո
 րոգեցին . Աշէմէս Ասլանօսին կոյր կուսակից
 ներք , այն Ալանօսին՝ որ ճիշտ մատաղի արա
 րողութեան վրայ խօսելով կը ճոխարանէ . եւ
 ստելով , եւ հրահանգաց (մաշտոցին) բնագրին
 խօսքերն այլափոխելով եւ ետքն իր ուզածին
 պէս թարգմանելով՝ հայոց համաւը կոտորելու
 կաշխատի : Եւս մարդոյս՝ որ գիտնալով ստախօս
 է , երկընդո՛ւ ըլլալուն ապացոյց մը բերելու ան
 ճգուտ է , որովհետեւ գործոյս ապագրիչն առա

ջին հատորին յառաջաբանութեանը մէջ ինձմէ
 թելադրուելով բաւական խօսեցաւ : Բայց պատ
 շած կը սեպեմ հոս քննել թէ արդեօք այս
 ծէսը կրնայ հրեական կամ հեթանոսական
 ըսուիլ . ինչպէս որ առանց կարմըրելու ըսած
 է վերջիշեալ Ալանօսը , եւ անկէջ ետքը ան
 կէջ խաբուած եւ թերիմաստ պաշտպանները :

« Ամենէն առաջ գիտնալ պէտք է՝ որ այն
 մատաղահասակ անասունները՝ որ ետքը աղբատ
 ներուն կը տրուին , օրհնելու ծէսերը , եւ այն
 ծէսերուն մէջ քանի մի օրհնութիւն ալ՝ այս
 անասուններս մորթելէն առաջ անոնց ուտելու
 տրուած աղին վրայ կըլլան , սուրբ Յուստո
 սէն առնուած է . որ սուրբ Յակոբ առաքեա
 լէն ետքը Երուսաղէմի չորրորդ եպիսկոպոսն
 է : Ըսոր յոյանի վկայութիւն ունիմք սուրբ
 Մովսէս Խորենացիէն , որ հինգերորդ դարու
 նրբազնին մատենագիր մըն է : Բսիկայ իրեն
 օրհնութեանց դրբին մէջ այսպէս կը պատմէ : « Բսկ
 » վասն տեառնականի եւ աղօրհնէից սուրբ
 » Յուստոս է արարեալ , որ չորրորդ եպիսկո
 » պոսն է յԵրուսաղէմ յառաքելոյն Յակո
 » բայ » :

« Եւ չկընար ջսուիլ թէ հորթերու կամ
 դառերու այսպիսի զենմունքը կուսպաշտական
 կամ հրեական է . վասն զի սուրբն Աբրահէս
 Յամայքի քահանայներուն գրած նամակին մէջ
 այսպէս կը խօսի : « Երդեօք մեր զենմունքը հը
 » րեականին նման պիտի ըլլան : Եւոնք միայն

,, մէկ տարուան եւ արու գառն կընտրէին . մենք
 ,, մէկ ամսուանը եւ աւելի պղտիկը՝ ինչպէս որ
 ,, ըլլայ . եւ արու կամ եզ ըլլալուն բնաւ չեմք
 ,, նայիր : Ընտնք զանիկայ հինգ որ առաջ տուն
 ,, կը տանէին , մենք նոյն օրը կամ երբ որ ըլ-
 ,, լայ : Ընտնք հին զատկին նախընթաց իրկունը
 ,, կը մորթէին . մենք նոր զատկին առաւտուն :
 ,, Ընտնք գիշերով եւ կայնուք կուտէին . մենք
 ,, ցերեկին եւ նստուք : Ընտնք բաղարջով եւ
 ,, եղերդով (վայրի մատուլով) , եւ մենք խը-
 ,, մորեալ հացով եւ առանց եղերգի . Կմանա-
 ,, պէս անոնց զոհերն ամէնն ալ կենդանեաց
 ,, համար կը նուիրուէին . մեր նուիրածները
 ,, ննջեցելոց յիշատակին համար են . որպէս զի
 ,, աղքատները սնուցանելովիս անոնք յԱստու-
 ,, ծոյ ողորմութիւն ընդունին : ,

,, Թէ որ հայոց գործածած այս արարողու-
 թեանս սկիզբը եւ սահմանուելուն պատճառը
 մտածել ուզուի , դիտաւորութիւնը հրեականէն
 կամ հեթանոսականէն շատ հեռու կը գտնուի :
 Եւ յիրաւի . չորրորդ դարուն մէջ հայոց կաթու-
 ղիկոս սուրբ Սահակին գրած կանոնական գրքին
 քահանայից կանոններուն մէջ կը կարգամք ,
 որ հայոց ազգին բրիստոնէական հաւատքի դառ-
 նալէն ետքը հաւատացեալ քուրմերը սուրբ
 Գրիգոր Լուսաւորիչին առաջն եկան . . . * ,

* Հոս պատմածը մենք վերք սուրբ Ընտնակին
 խօսքերուն կարգովը գրելուս համար կրկնելն ա-
 լելորդ սեպեցինք :

,, Սուրբ Յուստոս Երուսաղէմացիին հե-
 տեւողութեամբ սուրբ Լուսաւորչին իմաստու-
 թեամբ կարգադրած այս սահմանիս մէջ՝ նա-
 խանձայոյց հակառակորդները գայթակղութիւն
 կը գտնեն . եւ զայս իրրեւ հեթանոսութեան
 եւ հրեութեան մէջ ինկած կամբաստանեն : Ի-
 բնեց ամենակարճ խելքովը կը խօսին եւ կը դը-
 րեն . եկեղեցական պատմութենէն եւ սուրբ
 հարց սահմաններէն եւ օրէնքներէն բան մը չը
 դիտեն : Եւ յիրաւի վեցերորդ դարուն վերջը
 մեծն Գրիգոր սուրբ հայրապետը նորադարձ
 Ընդդիացիներուն համար ճիշդ այս կանոնս ա-
 ւանդեց . Ըյսնիւթոյս վրայ առ Սելիտոս ար-
 բայե գրած նամակը թող կարդան . թող հա-
 մոզուին եւ լսեն : Սուրբ հայրապետն անոնց
 համար քանի մի պատուէր եւ կանոն աւելն
 ետքը կըսէ . « որովհետեւ դեւերուն համար
 ,, շատ եղ զոհձու սովրած են , ասոր վրայօք
 ,, ալ անոնց մէջ հանդէսներու փոփոխութիւն
 ,, մ'ընել պէտք է . անանկ որ՝ նաւակատեաց
 ,, կամ սուրբ մարտիրոսաց ամերուն օրը մը
 ,, սուրբերուն մասունքը որ անոնց քով կը
 ,, գտնուին , եկեղեցիներուն բոլորը ծառերու
 ,, ճիւղերէ իրենց տաղաւար շինեն , եւ ամա-
 ,, թը մընութիւնները պարկեշտ հացկերոյթով կա-
 ,, տարեն : Ըլ անկէց ետքն անասունները չէ
 ,, թէ 'ի փառս օտանայի , այլ իրենց կերակուր
 ,, ըլլալու համար մատաղ թող ընեն , եւ կըլ-
 ,, տանալնուն համար Ըստուծոյ փառք տան :

,, Ասանդի երբ անոնց արտաքին մէկուբախու-
 ,, թիւն մ'ընել թող արուի նէ՛ ներքին ուրա-
 ,, խութիւն ընելնին ալ դիւրին կըլլայ : Ինչս-
 ,, տասիրաները մէկանց ամէն բանէ զատելն
 ,, անհնար ըլլալը աներկբայելի է . եւ բարձր
 ,, տեղ մ'ելլելու աշխատողին պէտք է աստիճան
 ,, աստիճան կամ ոտք ոտք ելլել , եւ չէ թէ
 ,, ցածկելով , (Գր . Թ . նամակ 21) : Ըրդ՝
 այն բանն որ մեծին Գրիգորի պ'ս վարդապե-
 առութեամբ եւ սրբութեամբ նշանաւոր մէկ հայ-
 րապետ մը նորագարձ անգղիացիներուն գործա-
 դրութեանը համար պատուիրեց , կըրնայ ար-
 դեօք հայերուն յանցանք ըլլալ . եւ հրէու-
 թեան եւ հեթանոսութեան մընացորդ մը սե-
 պուիլ : Բայց իրաւանոս՝ ուրիշներուն սովորու-
 թիւն բրածին պէս , որ ասանց պատճառները
 գիտնալու եւ լոկ կուսակցութեան ոգուով կը-
 պաշտպանեն կամ կը պարսակեն , մէկ բանէն
 ուրիշի մը կ'անցնի . եւ մէկ փաստը ուրիշի մը
 հետ շփոթելով կը հակառակի . եւ անոր կ'ըն-
 կերանայ անոր սխալներուն պաշտպանը : Ըր-
 իճի Մոնֆորդէ , որ 1817ին Վարովի : Կրեմս
 Կալանոս պաշտպանեալ յամբաստանութեանց Սեդեան
 Մարտիէն մահադրեալ գրքուկին մէջ հրէից կե-
 րակրոց խարութիւնը մէջ կը բերէ , եւ զանոնք
 իրենց բոլոր ծառայական հետեւողութեամբը
 պահուած կգտնէ հայոց մատաղի օրհնութեանը
 մէջ : Ըստնց բաւակնն ըլլայ պատասխանել որ
 թէ որ հայերը այդպիսի ծէսով հրէից հետեւած

ըլլային , անշուշտ պիղծ սեպելու չէին դառ-
 ները եւ հորթերը՝ որ ըստ հին օրինաց սուրբ
 եւ զոհ ըլլալու ամենայամար կենդանիներ էին ,
 Եւ սուրբ ու անսուրբ կերակրոց ալ խորու-
 թիւն ըրած ըլլային նէ՛ չէ՛ մի որ ասոնք քահա-
 նայական օրհնութիւններով կըմարտէին եւ կը
 սրբուէին : Հայոց 1) Գրիգոր կաթողիկոսը ;
 զոր նշյն ինքն : Կալանոս՝ հզօր պաշտպան
 ուղղափառ հաւատոյ կ'անուանէ , տանն եւ չորս-
 երորդ դարուն սկիզբը հրաման ըրաւ անմաքուր
 կերակուրները օրհնելու որ մաքրուին , եւ
 աղքատներուն անթութիւնը կշտացնելու կա-
 րենան ծառայել . եւ ահա անօր խօսքերը :
 ,, Հրամայեմք զամենայն խոտելի իրս՝ յոր թէ
 ,, ախանայ զաղբրկան իրք ի յարդիւնս աղքատաց
 ,, անկանին , որպէս ասէ Պօղոս , զամենայն ինչ
 ,, սրբել անուամբ Ըստուծոյ , եւ գրեալ է տէր
 ,, Ներսէս օրհնել աղօթիւք , : Ըստ կէտիս վրայ
 հարկ է ծանուցանել , որ մեկ բանի մէջ պիղծ
 բան մ'իյնայ նէ անիկայ պղծեալ կը սեպեն
 արեւելք . անոր համար մինչեւ որ քահանայա-
 կան օրհնութեամբ չ'սրբուին , չեն ուտեր :
 ,, Բայց հայերուն մէջ պահուած խարութիւնը
 այս պիղծ կամ օտար անմաքրութիւն մը մէջն
 իյնալով պղծուած կերակուրներուն նկատմամբ
 հրեաներուն պահած օրինական խարութեանը
 հետ բան չ'ունի : Ըստնց մէջ այն բանն որ
 պիղծ էր՝ ըստ օրինաց անհնար սեպուած էր որ
 մաքրուի եւ սրբուի : Ուրեմն հայերուն մատաղ-

Յրհնէքը ոչ հրեական հոգևով է , եւ ոչ գառը կամ հորժը պիղծ սեպելով , զորս հրեաներն ալ սուրբ կենդանի կը սեպեն :

« Կերեւի որ Պերժիէ իմաստունն ալ ասոր պէս դիտողութիւններ ըրած ըլլայ իր աստուծո՞ւն հետեւեալ քառասունն մէջ , Հայր բառին վրայ , երբ ասոր պահպանութիւնը կը պաշտպանէ Պրէքվուտ անգղիացիին դէմ , որ գուցէ կալանոսէն կամ անոր կուսակիցներուն մէկէն խաբուելով այսպիսի օրհնութեանց գործադրուածիւնը կը պահարակէր . եւ ահա անոր խօսքերը : « Պրէքվուտ զասոնք առանց հիման կամ , բաստանէ , որպէս թէ խորհրդական (անուանուող) նալ հերետիկոս) ներուն կարծեացը նպաստամատոյց ըլլան . եւ Սովսիսական օրինաց , մէջ անսուրբ սեպուած անասունները չուտեն : « Այ տեսեր որ արիւն՝ կամ խեղդուած անասունոյ միս չուտելը՝ բոլոր արեւելեան քրիստոնէսայ ազգաց սովորութիւնն է . եւ ըստ ոգւոյ , նախնական եկեղեցւոյ՝ ասոր մէջ սնապաշտութիւն չկայ » : Կերակրոյ այս խորութիւնը՝ արեւելքի ամէն քրիստոնեայներուն պէս հայերն ալ կը պահեն առաքելոց ժամանակէն 'ի վեր՝ եւ կը յիշեն : Եւ ասոր ծագումը կառնուն՝ Գործն առաքելոցն մէջ սրբոյն Ղուկասու պատմած Գրուսաղէմի ժողովքին կանոնէն . « հայր , ճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ եւ մեզ՝ մի ինչ , աւելի բռն դնել ձեզ , բայց միայն 'ի կարեւորացս յայսցանէ զգուշանալ ձեզ 'ի զոհելոյ

« կոտց եւ յարենէ եւ 'ի հեղձուցելոց » , եւն : « այոց մատաղ օրհնելու սովորութեան անխորհուրդ թշնամիները աւելի հզօրապէս հերքելու համար աս ալ ըսեմ , որ յոյներն ալ գառ եւ ուրիշ կերակուրներ կօրհնեն , մասնաորապէս զատկի օրը . եւ մէկն ալ զանոնք մեղադրած չունի իբրեւ հեթանոսութեան կամ հրեութեան հետեւող : Եյս արարողութիւնս կըրնայ կարգացուիլ յունաց պաշտամանց դրքին (Էսթրոնցիօնին) մեկնիչ բազմահմուտ կօրին գրքին մէջ (Կր . 568 . որ . Վէնէ . 1730) : Սանաւանդ թէ այսպիսի արարողութիւն մ'ալ Հռովմայ եկեղեցւոյն մէջ չը գործադրուիր արդեօք , որ ամենայն եկեղեցեաց մայր եւ գատիարակն է : Գուցէ ասիկայ չգիտէին՝ կալանոսի ծառայարար պաշտպանողները եւ հետեւողները : Թող եկեղեցական պաշտամանց ծիսարանները կարդան ու սորվին . մանաւանդ թող ամչնան՝ որ հայազգին 'Երսէս՝ անոնցմէ աւելի իմաստուն եւ հմուտ , հակառակխօս ազգայինս ներուն ծուռ գաղափարներուն դէմ անոր գործածութիւնը կը ցուցնէր : Եսիկայ՝ ասոր ուղղափառութիւնը ապացուցանելէն ետքը՝ որ մէջերնին որքան հինցած էրնէ այնքան ակնածելի էր , որովհետեւ ազգին լուսաւորիչ սուրբ Գրիգորէն կուգար , այսպէս կը շարունակէ . « իսկ » , եթէ ասիցէք եթէ ո՞վ որ յազգաց նախ քան զձեզ եղելոց քրիստոնեայս ունի զայս սովորութիւն , ասացուք եթէ իւրաքանչիւր որ

1) յառաջնորդաց որպէս եւ համեցան՝ եղին իւր-
 2) եանց ժողովորեանն աւանդութիւնս պէս պէսս
 3) եւ զանազանս . . . եւ թեպէտ եւ մեր Վրասա-
 4) սորին աւանդեալքն ընդունելի են՝ որպէս
 5) ՚ի Հոգւոյն սրբոյ՝ բայց նա ոչ ՚ի յանձնե-
 6) եղ զգառինն զենումն զատկին, այլ ՚ի հառ-
 7) մայեցոց եկեղեցւոյն ընկալաւ եւ աւանդեաց .
 8) որպէս եւ այժմ՝ առաւել զգորշութեամբ քան
 9) զմեզ առնեն զայս յամենայն եկեղեցիս վեր-
 10) րանկաց . քանզի խորովեալ զգառն ՚ի զատկին
 11) աւուր՝ դնեն ՚ի խորանն ընդ պատարագաւն .
 12) եւ յետ սուրբ խորհրդոյն հաղորդելոյ բա-
 13) ժանեն զնա քահանայքն եւ տան իւրաքանչիւր
 14) մասն . եւ ՚ի նմին իսկ յեկեղեցւոցն ուտեն
 15) զնա յառաջ քան զայլ հասարակաց կերակու-
 16) րըս . հուրանաօյի գրքին մէջ ալ լատին-
 17) ներուն այսպիսի սովորութեան յիշատակը կայ՝
 18) որ ինչպէս կ'երեւի, 1387 թուին սկսած
 19) է դադարելու : Չարքոսի իր օրերուն համար
 20) այսպէս կը պատմէ . « հիմայ ալ զատկին օրը
 21) հաւկիթ եւ դառին եւ ուլու միս եւ պան
 22) (պօղաշա) եւ հաց եւ կարկանդակ (պէօ-
 23) րէկ) եւ ուրիշ ասոնց նման բաներ սեղանք
 24) կ'երեւեն որ քահանայներն օրհնեն » : Եւ մեր
 25) ժամանակս ալ՝ հոռովեական եկեղեցւոյ հը-
 26) նաղանդող ամեն եւրոպացի ազգաց մէջ չէ՞ մի
 27) որ ամեն տարի այդպէս կ'ընեն . եւ միթէ կե-
 28) բակրոց նկատմամբ ամէն քահանայապետական
 29) տնօրինումներուն, եւ յատկապէս մեծ պահոց
 30) համար արուածներուն մէջ անողջարար եւ վը-

նասակար միսերու զանազանութեան նշան տըր-
 1) ուած չըլլար մի : Եւ այս մատաղի արարողու-
 2) թեան համար Հայոց եկեղեցին հրէութեան
 3) հետեւող ցուցընելու խէր չըներ աղ օրհ-
 4) նելին եւ մատաղցուն մորթելէն առաջ այն
 5) աղն անոր կերցնելին առաջնիս դնելը : Թէ՛
 6) յոյները եւ թէ՛ լատինները կրօնական շատ ա-
 7) բարոյութիւններու մէջ աղ գործածել ունին .
 8) մանաւանդ թէ նոյն իսկ օրհնած ջրոյն մէջ՝
 9) զոր ամէն բան օրհնած ատեննիս վրան սրկելու
 10) սովորութիւն կայ մեր մէջ, աղ խառնուած չէ՞ մի :
 11) Եւ այսպէս կ'ըրնանք ըսել թէ՛ մեր ամէն օրհ-
 12) նութիւններուն մէջ աղ գործ կ'ածուի : Ասորի-
 13) ները՝ որ անոնք ալ կ'աթուղիկէ եւ ուղղափառ
 14) են, նոյն իսկ սուրբ պատարագի գործածած
 15) հացերնուն աղ կը դնեն : Ուստի սուրբն Վեր-
 16) սեա՝ ասորի քահանայներուն գրելով՝ որ հի-
 17) մակուան ամէն կրօնամուլ ընդդիմախօսներուն
 18) պէս Հայոց մատաղը կը պատարակին՝ կերակ-
 19) րոց խտրութիւնը հրէական սեպելով, եւ մա-
 20) տաղի համար աղ գործածելու պատճառով,
 21) այսպէս նեղը կը խօթէ իր փաստերովը : « Ո՞վ
 22) հակառակասիրութեան եւ կուրուսթեան նո-
 23) ցա . մանաւանդ թէ՛ ո՞վ չարին խաբէու-
 24) թեան . զմեռելոտի գեռնովք պղծեալ կե-
 25) րակուրսն եւ զըմպելիսն՝ զորս Եստուած
 26) պիղծս ասաց, նորա քահանայական օրհնու-
 27) թեամբք իւրեանց հաւատան սուրբ լինել .
 28) եւ զգառինս՝ որ յառաջ քան զքահանային ա-

,, զօթելն 'ի վերայ' սուրբ են վկայեալ յԱսա-
 ,, ուծոյ, եւ յետ աղին օրհնութեան ուսելոյ՝
 ,, զոր բանիւ Բստուծոյ եւ աղօթիւք օրհնեն
 ,, քահանայք եւ տան նոցա, պիղծ համարին :
 ,, Եթէ զանուն Բստուծոյ զոր կարդան քահա-
 ,, նայք 'ի վերայ աղին' ասէք անսուրբ առնել
 ,, զկենդանիսն եւ անուտելի, ապա գաղտնի
 ,, գոլով դիւաց էք պաշտօնայք : Եւ եթէ զա-
 ,, ղըն ասէք պղծել զնոսա՝ վասն էր 'ի նշխարն
 ,, ձեր խառնէք աղ, կամ յայլ կերակուրսն :
 ,, Օհ եթէ զգառն՝ որ օրինակ միայն է ճշմարիտ
 ,, գառինն՝ անսուրբ առնէ աղն, եւս առաւել
 ,, ճշմարտութիւն պատարագին, խառնելով ընդ
 ,, նմա , ,

,, Չեմ ըսեր որ մատաղ ընելու մէջ ան-
 պատեհ եւ աւելորդ պաշտական բաներ չեն
 գտնուիր . բայց ասոնք ռամիկ ժողովրդեան եւ
 քանի մի քահանայից կողմէն կը պատահէին .
 եւ կալանոսի ըսածին չափալ չէին : Այն իսկ
 սուրբն Աերսէս հայրապետ մեզի կը ծանուցա-
 նէ, որ ոմանք մորթուած անասնոյն արիւնը
 կտոնէին եւ դռներուն վրայ կը քսէին, եւ կու-
 տէին, եւ ուրիշ ասոնց պէս բաներ կընէին :
 Բայց սահկայ մինակ ռամիկներուն բանն էր . մա-
 նաւանդ թէ հովիւներն ու առաջնորդները խըս-
 տիւ արգիլած էին : Արսէ սուրբ հայրապետը .
 ,, մի որ տգիտաբար զարիւն գառինն ժողովես-
 ,, ցէ կամ կերիցէ . որպէս լսեմք զի առնեն
 ,, տխմարք . . . եւ մի որ իշխեսցէ զսեամս դը-

,, րանց օճանել արեամբ գառինն, որպէս ասեմ
 ,, զտգիտաց ոմանց թէ առնեն . . . եւ որ այնպէս
 ,, առնէ՝ ընդ աիծիբէ, . . . Եյս բանիս վրայ
 սաախօս կալանոսն իր լատիներէն եւ հայերէն
 գրած գրքին մէջ լատիներէն խօսելով կըսէ թէ
 պատուիրած է ասանկ ընելը . եւ 'ի գործադը-
 րութեան է գրե թէ բոլոր հայոց մէջ : Բայց
 անոր զիմացը գրած հայերէնին մէջ՝ " ոմանք
 ,, սովոր էին ,, կըսէ : Ի՞նչ հաւատարմութիւն՝
 պատուաւոր մարդու մը վայելուչ, մանաւանդ
 թէ սահկայ՝ մատաղի սովորութիւնը առաւել եւս
 ծաղրելի ընելու համար իրրեւ վաւերական հը-
 րահանգ կը բերէ անանկ բանմը՝ որ քանի մի
 քահանայից տգիտութիւնը ազգին մէջ մտցու-
 ցած էր, բայց մաշտոցներուն մէջ գրուած չը
 կայ . այն է՝ օրհնած անասուններուն վրայ կար-
 միր շուրջառ մը ձգել, եւ եղջիւրները մոմե-
 ղէններով եւ ուրիշ բաներով զարդարել : Եւ որ
 հակառակ սուրբն Աերսէս ատոր գործածութիւ-
 նը կը պարսաւեր եւ կարգիւէր . որովհետեւ
 չճմարիտ արարողութեանը հակառակ՝ եւ գայ-
 թակղութեան պատճառ էր : " Օայլսն՝ զորս 'ի
 ,, տգէտ քահանայից եղեալն է 'իցուցակին ,
 ,, կարմիր արկանելուով ծածկել զանասունն, եւ
 ,, յեղջիւրս նարօտ ըստ հնոյն օրինի, ամենեւ-
 ,, ՛հին մի առնէք . զի աւելորդ եւ անօգուտ է
 ,, եւ պատճառ գայթակղութեանս , , " Այն եկե-
 ղեցոյ սուրբ վարդապետի մը այսպիսի յայտա-
 րարութենէն ետքը այս յիւթոյս վրայ կալանո-

սի զորացրտութիւններն ի՞նչպէս կըրնան ան-
կեղծութեամբ պաշտպանութիւն : Գրքիս սկիզբէն՝
բարեբախտ յարաբերութեան սկսուած է ճիշտ-
բանին հրահանգները բարդատուելու . եւ հոս
համաստի հմտութիւն մը տալու համար նորէն
բարդատուելը գեղջէ : Զ Աղէմէս Աստուծոս այս
հրահանգը լատիներէնին մէջ այսպէս կը գտնէ .
« նուիրեալ անասունը եկեղեցոյ դրանն առ-
ջը կը բերեն , եւ ճիտը կարմիր լար մը կը
կապեն . եւ կանաչը կարմիր հանգերձ մը կը
ձգեն . եւ եղջիւրին վրայ վառած մոմեր կը
փակցընեն , եւ կը խնկարկեն » : Ըստր տեղ
հայերէնն այսպէս գրուած է . « ածին զնուիր-
եալն ՚ի դուռն ձկեղեցոյն , եւ դնեն կար-
միր հանգերձիւ , եւ լուցանեն մոմ եւ
խառնկ » : Ըստ ո՛չ անասունին ճիտը կապ-
ուած կարմիր լար կայ . ո՛չ կըրնակը կարմիր
հանգերձ ձգել կայ . եւ ո՛չ եղջիւրին վը-
րայ մոմեր փակցընել , եւ ո՛չ ալ առաջը խնկար-
կել : Բայց այս հրահանգս նոյն իսկ Ալաւնոսի
բերած հայերէնին մէջ ալ հարազատ չէ , թէ
եւ այս ալ լատիներէնէն շատ տարբեր է : Ես
յիսունի ջափ՝ այլ եւ այլ ժամանակ եւ իրարմէ
քիչ կամ շատ տարբերութիւն ունեցող ձեռա-
գիր մաշտոցներ բարդատուցի . ածինն ալ Ալաւ-
նոսէն առաջ գրուած . եւ ամէնուն մէջ ալ հը-
րահանգը ճիշդ այսպէս գտայ . « Ընեն զխոս-
տացեալն ՚ի դուռն եկեղեցոյն՝ եւ առաջի խա-
ջին դնեն կարմիր եւ բամբակ . եւ ծածկեն

« կարմիր հանգերձիւ » : Եւ յիսունի կարմի-
րով կը ծածկեն չէ՛ թէ անասունը՝ այլ խառը՝
որպէս զի վրան ախն չպըլըլէ հորթը կամ
գառը մորթած առնորին . « Այն պատճառին հա-
մար խաչին առաջը կարմիր գունով բան մը եւ
բամբակ պատրաստ կըրնեն . որ թէ որ դիպուա-
ծով վրան արիւն ցամկէ նէ սրբեն :

« Ըստ ծէսս բացատրելու համար ցուցակին
վրայ այսպէս սուտով մը սկսելով , զարմանք չէ՛
որ նոյնը նկարագրելու եւ պատարակելու հա-
մար մրոտած քսան եւ վեց երես խօսքերովը
հայերն երբեմն հրէութեան եւ երբեմն հեթա-
նոսութեան հետեւող ցուցընէ : Աուրբ՝ Աերսես
հայրապետին Յամայք եւ Շպղղան գաւառներու
մոլորամիտ քահանայներուն դէմ գրած աստ-
ուածաբանական նամակին երկրորդ գլուխը մի-
այն բաւականէն ալ աւելի է թէ՛ արիկայ եւ թէ՛
անոր հետ միաբանելով հայկական ծէսերը պա-
խարակելու ժամանակ կորսընցընողներուն ը-
սածները հերքելու » :

Արծեմ՝ սիրելի ընթերցող , թէ ասոնցմէ
դուրս բան չ'մնաց . եւ ասով ալ կը հասկընաւ
թէ եկեղեցական արքեպիսկոպոստի վերապատուելի հն-
դինակին՝ արեւու ճառագայթներուն նմանցու-
ցածը ինչ լոյս է եղեր . անանկ լոյս մը որ իրեն
եւ իր ըսածներուն հաւատացողներուն աչքն
առեր է . եւ հոս գրածնիս՝ որոնք մենք մեզնէ
չհնարեցինք , այլ ամէնուն ծանօթ եւ յարգի
հեղինակներուն տպեալ գրքերէն առինք , տես-

նելու կարողութիւննին բըններ է . կամ Աղէմէս
 Ալալանոսին ելերտրականովը շողոցուցած լոյսը ,
 որուն փայլիւնը սաստիկ , բայց տեւողութիւնը
 քիչ . եւ թէ որ գգուշանալ չգիտցուի նէ՛
 վնասն օգուտէն շատ կըլլայ . եւ լուսոյն՝ յա-
 ջորդող մթոյն սաստկութիւնը՝ այն յանկար-
 ծակի լուսոյն փոյլմանը սոստկութեան չափովը
 կըլլայ :

Պուցէ շատ անգամ փորձած ես , փորձ մըն
 ալ այս կըրնայ ըլլար քիզի . որ ժամանակիս ա-
 մէն կարգի իմաստուն կարծեցեալներուն՝ իրենց
 մըտքէն անցած խօսքի մը համար ըսելին թէ
 արեւուն լուսոյն չափ կամ անկէց ալ աւելի
 յայտնի է , եւ թէ՛ ժամանակիս իմաստուններն
 անոնց ըսածը չընդունողներուն վրայ կը խնդան
 եւ տխմարութեանցը վրայ կը ցարին , ասոնք
 ամէնը սնտի ճառատանք են որ կարգացողնե-
 րուն աչքին մոխիր փըչիլէն զատ բան չեն կըր-
 նար ըլլալ : Բանի իսկութիւնը հասկընալէդ
 ետքը դուն անոնց վրայ ծիծաղելով կրնաս ըսել .
 « եթէ լոյսդ որ Դ քեզ է՝ խաւար է . խաւարն
 ,, որջափ եւս ,, : Շատ ժամանակ անցած չէ որ
 մոռցուի տարաշխարհիկ կարծեցեալ իմաստունի
 մը՝ մայրաքաղաքս հրատարակուած պարբերակա-
 նի մը միջոցաւ քարոզել թէ հիմակուան եւրո-
 պացի իմաստունները դիւաց գոյութիւնն ըն-
 դունողներուն վրայ կը խնդան : Լսողները
 պարզմտութեամբ՝ եւ այսպէս քարոզողին հա-
 մար չհաշխարհիկ եւ ձեռք ջանցնելու իմաս-

տուն մ'է ըսողներուն գովաբանութեանցը հա-
 ւատալով՝ եւ խօսքին հետեւութիւնն ուր եր-
 թալը չը կրնալով նկատել՝ դեւ եւ սատանայ
 կայ ըսելու ամբննալ սկսան . չըլլայ թէ իմաս-
 տուն մարդոց ծաղու նշաւակ ըլլան . բայց երբ
 հետեւութիւնը հասկցան որ քրիստոնէութիւնը
 ջնջել կելլէ տակէն , իրենք ասանկ ըսող իմաս-
 տունները ծաղրել սկսան : Սուրբ Ներսէս
 Շնորհալիին եւ իտալացի Քարէլլէդդի քահա-
 նային գրածները կարգացողները կը հասկնան որ
 մատաղի սովորութիւնը սուրբ Լուսաւորչէն մը-
 նացած է ըսելը ոչ ստայօդ յիշատակարաններէն
 մեր մէջ մտած է . ոչ ուրիշ քրիստոնեայ ազգաց
 անծանօթ է . ոչ հրեական աւանդութիւն է եւ
 ոչ ասորիներէն կամ շահասիրութեան համար
 սպրդած է . եւ ասոնցմէ դիւրաւ կը մակարիրեն
 որ վերապատուելի հեղինակին արեւու լոյս
 կարծածը հոնք հոսքէ պատճառած լոյս ալ կըր-
 նայ ըլլալ :

Քարէլլէդդի քահանային գրածներէն ետքը
 մեզի հարկ չէ ըսելը թէ մատաղի արարողու-
 թեանցը եւ սովորութեանը՝ կամ աղ օրհնե-
 լուն մէջ՝ հոովմէական եկեղեցւոյ չհաւնելու
 եւ չընդունելու բան չկայ . զոր կրնայինք ա-
 նով ալ հաստատել , որ վէնէտիկ սպուած հա-
 յերէն մաշտոցին 670 երեսը կը գանձմբ կանոն
 հոգեհանգիստ տանելոյ , կամ յիշարակ մտելոց Ի կեցուածք
 ազատաց : 679 երեսը , կանոն գտան օրհնելոյ ուս-
 ղաւարաց դասիկն . 682 երեսը՝ կանոն հա- օրհնելոյ :

և 686 Երեսը արհեստի մասին յիշեցնել
 պէտք է որ այս մասնացը Լուսինայ գրոց քրն-
 ութի տան ժողովէն անդատապարտելիք է և հիմ-
 նական արքեպիսկոսոսն հեղինակին ատենէն քա-
 տապարտուիլն այն կը ցուցընէ որ արտը և
 Լուսինայ եկեղեցւոյ վարդապետութեանց մէջ
 շատ անհամաձայնութիւններ կան և կարելի
 է որ օր մը Նորոսկանտայի ժողովն այն արտ-
 քերութեանց հաշիւն ուզէ և յայնչոց

որ մասնաց զի զգիցրոց քրն ութի տան
 արտքերութեանց վարդապետութեանց մէջ
 շատ անհամաձայնութիւններ կան և կարելի
 է որ օր մը Նորոսկանտայի ժողովն այն արտ-
 քերութեանց հաշիւն ուզէ և յայնչոց

որ մասնաց զի զգիցրոց քրն ութի տան
 արտքերութեանց վարդապետութեանց մէջ
 շատ անհամաձայնութիւններ կան և կարելի
 է որ օր մը Նորոսկանտայի ժողովն այն արտ-
 քերութեանց հաշիւն ուզէ և յայնչոց

2013

4607

608

608

« Ազգային գրադարան



NL0031966

